Գ(47.925) 29381.
Տ-84 Տոնապետյան, Պ.
Հայաստանը և հայ ժողո-
[illegible]ր դարերի ընթացքում:
30 կ.

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

P. Tonapetean

145, Holland Road

LONDON W. 14

Price 20/.

ՊԵՏՐՈՍ ՏՕՆԱՊԵՏԵԱՆ
(ՎԱՂԻՆԱԿ)

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

ՀԱՏՈՐ Բ.

ԲԱՆՏ ԵՒ ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

IMPRIMERIE H. TURABIAN
227 BOULEVARD RASPAIL
PARIS
1949

ՊԵՏՐՈՍ ՏՕՆԱՊԵՏԵԱՆ
(ՎԱՂԻՆԱԿ)

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Բնական փառասիրութիւն է վսեմ եւ նսեմ նկարիչների համար պանծալ իրենց վրձիններով եւ հրաւիրել նայողների հիացումը իրենց մատների արուեստագործութեանց վրայ: Բայց նայողների ոմանց համար այդ գործերը կարող են լինել զմայլելի, ոմանց համար ոչ յարգելի: Այդպէս է նաեւ իմաստուն եւ իմաստակ գրողների համար: Մէկը իր գրչի շարժումների մէջ տեսնում է Շէքսպիրի շնորհքը, եւ միւսը Սողոմոնի իմաստութեան լոյսը. եւ երկուսն եւս հիմնում են, մէկը համեստօրէն իր գրական արժանիքի վրայ, եւ միւսը գոռոզօրէն իր աննայնարան հանճարի վրայ:

Ես ոչ յաւակնում էի եւ ոչ ակնկալում հիացումն իմ գրչի ընթերցողներից, եւ ոչ եւս անտարբերութիւն այս գրքի կարեւոր նիւթի ուշադրութեան մասին: Բայց ապահով էի, թէ

նրա հրապարակութիւնը եւ ընթերցանութիւնը պիտի ստեղծէր մեծ գնահատութիւն սրանց համար, եւ մեծ դժկամակութիւն այլոց այսօր, եւ գոհունակութիւն յետագայից: Ուղղամիտները պիտի յարգեն նրա գոյութիւնը, իսկ լեզւով հայրենասէրները եւ արհեստով ազգասէրները պիտի ձգեն այն կրակի մէջ, գի մի գուցէ նրա ճրագի լոյսի ճառագայթները լուսաւորեն՝ հերոսալից կեղծարանութեամբ սնւած նրանց մոլեռանդ հաւատացեալների խաւար աչքերը, եւ թափանցեն նրանց ծամածռեալ ուղեղների մէջ:

Երբ ես հնազանդելով իմ երկարամեայ ցանկութեան ձեռք առի գրել մի նիւթի վրայ, որ սերտօրէն հիւսուած էր իմ կեանքի ամենաթարմ թելերի հետ եւ մտածութեանս առարկան էր եղել մինչ այսօր եւ պիտի մնայ մինչեւ մահ, ես խորհրդածում էի, թէ ինչպէս գրէի, որ հեռու չլինէր ճշմարտութիւնից եւ կերպարանուէր ճշդութեամբ: Բառերին յաջորդում էին տողեր, եւ սեւ տողերով վերջանում էին էջեր, եւ ես շարունակում էի տողերն ու էջերը, առանց վերստին կարենալ կարդալու նրանց եւ ուղղելու սխալներն ու զանցառութիւնները. բայց զգում էի, թէ գրութեանս ընթացքում գրչիս տակից արտագրուում էին բառեր, որ իրենց նորաձեւութեամբ կարծես տալիս էին մտքի արտայայտութեան աւելի գոյն եւ նրբութիւն, եւ նախադասութիւններ իւրայա-

տուկ գրական հրապոյրով, որ մասնաւոր հաճոյք էր պատճառում ինձ, եւ զգում էի թէ իմ գրուածքը զուրկ չպիտի լինի ընթերցողի հետաքրքրութիւնից: Շէքսպիրի Յուլիոս Կեսարի եւ նրա այլ գործերում երբեմնակի հանդիպել էի երկու կամ երեք յարակից բառեր՝ սկսած համահնչիւն գրերով: Այս սրութիւնները հմայում եւ հիացնում էին իմ միտքը. զարմացայ, երբ պատահաբար նկատեցի, թէ իմ տողերի մէջ եւս բաւական յաճախ գրում էին նոյն իսկ երեք չորս յարակից բառեր՝ համահնչիւն տառերով: Այս կարողութիւնը անշուշտ ինձ յաւակնութիւն չը ներշնչեց զգալ, թէ կար ո եւ է համեմատութիւն նրա հանճարի եւ իմ ուղեղի միջեւ. բայց մէկ բան անհերքելի էր թւում, որ Համլէթի հեղինակի հոգին գէթ տուած էր ինձ իր գրական շնորհներից մէկը, որով հաւասարէի իրեն, ինչպէս այս երեք հ—ո—յագլուխները վկայում են հպարտօրէ՛ն: Սակայն գրողի մտքի իմաստութեան աստիճանը չափւում է նրա տողերի ու նախադասութիւնների վսեմութիւնից, եւ ընդհակառակն: Եւ տեսնել մէկը կամ միւսը իմ գրուածքի մէջ, կը մնայ իմ ընթերցողների դատողութեան:

Առաջին հատորի 500 օրինակներից մօտ 180 հատ ձրի ղրկեցի զանազան անձերի՝ Հնդկաստանից մինչեւ Քալիֆորնիա, եւ ստացայ գնահատութիւններ ու գովեստներ, որպիսիք թերեւս Շէքսպիր չէր ընդունել ոչ երկրի վրայ, եւ

ու նրա հոգին երկնքի մէջ աստղերով շրջապատուած: Բայց գրպանով գնահատող եւ գնող անձերը եղան ընդամէնը եօթն, այլազան հեռաստաններից եւ այս առաջնութեան կարգով՝ Լիզբոն, Փարիզ, Սան Ֆրանսիսկօ, Լոս Անճելոս, Նիւ-Եորք, Բասրա-Տիգրիս եւ Եփրատի ափերում, եւ Կալկաթա: Այսպէս քաղաքակիրթ ազգերի մէջ ապրող աշխարհացիր հայ հասարակութեանց քաղաքակրթութեան պատուանշանի երկու երեսների վրայ՝ այս տողերի ընթերցողը տեսնում է երկու երեւելի պատկերներ, մէկը՝ մելանահոս, գրչի շնորհաբաշխ շռայլութիւնը. միւս երեսի վրայ՝ դրամալից գրպանի գրքապնական ժանտագծուծ ժլատութիւնը: Լոնդոնում նուէր ստացող բարեկամներից ոմանք ողջունեցին գիրքը ամենաբարձր գովաբանութեամբ. իսկ դրամով գնողներ ոչ մէկը: Յուսախաբ չէի: Նախկին փորձառութիւնից նախապատրաստուել էի ցրուել նոյն իսկ ամէնը ամենուրեք, ուր կային հայեր, որպիսին է ի միջի այլոց Աւստրիոյ Լ. քաղաքից ինձ անծանօթ մի հայ, որ հետեւեալ տողերով խնդրում է գրքից մի օրինակ: «Շատ ու շատ կ՚աղաչեմ որ ազնիւ ըլլաք ձեր վերջին երկասիրութենէն օրինակ մը ուղարկել, զայն կարդալէ յետոյ անվնաս վերադարձնել կը խոստանամ»: Ղրկեցի այս պարոնին մի օրինակ խընդրելով որ ընդունէր իբրեւ նուէր: Մի ուրիշ նամակ Քալիֆորնիայից սա յատկանշական

բաները ունէր. «Կարդացի ձեր գիրքը գերազանց հետաքրքրութեամբ: Յեղափոխութեան քարոզութիւնը Թիւրքիոյ հայութիւնը ոչնչացուց, եւ եթէ կուսակցականները չը յարձակէին ձեր վրայ, բաղդաւոր էք»:

Այդ վախը չունիմ եւ երբէք չեմ ունեցել, բայց բաղդաւոր պիտի լինեմ եթէ յաջողիմ վերջացնել այս երկրորդ հատորի հրատարակութիւնը, եւ աւելի բաղդաւոր եթէ այս գրքերի ընթերցանութեամբ մեր ազգի միջից վերջանային բոլոր յեղափոխականները, որոց գոյութեան պէտք չկար, ոչ Թիւրքահայոց կործանումից առաջ եւ ոչ եւս առաւել նրանց ոչնչացումից յետոյ, զի Մեծ Պետութեանց հակամարտ քաղաքականութեան այս շահախնդիր գործիքները նոյն խելագար ընթացքով 1921ից ի վեր յարձակւում են Սովիետ կառավարութեան դէմ, որը եթէ ունենար Թուրք կառավարութեան ոգին, այժմեան Խորհրդային Հայաստանն էլ ամայացած պիտի լինէր հայերից:

Վիպասանութեան մէջ անձերը հեղինակի երեւակայութեան լուսանկարներն են, եւ խօսքերը նրա մտքի յղացման պտուղները: Այս եւ առաջին հատորի անձերը իրական են, որպէս են այս տողերի ընթերցողները: Բայց նրանց շատերի ո՛չ խորհրդածութիւնները պատկանում են նրանց ուղեղներին եւ ո՛չ խօսքերը նրանց բերաններին, եւ շատ քիչերն են որոց բա-

ռերն ու պարբերութիւնները շատ տարբեր չէին երբ նրանք խօսում էին ինձ հետ։

Հաւանօրէն լինեն ընթերցողներ, որոնք իմ բազմաթիւ քննադատութիւններից եւ հեղինա-բանութիւններից այն տպաւորութիւնը ստանան, որպէս թէ ես լինէի թշնամի իմ ազգին։ Բայց ազգը տարբեր է նրանցից, որոնք խօսում են եւ գործում յանուն ազգի, եւ իրենց ընթաց-քով շարունակ՝ գիտակցաբար կամ անգիտակ-ցաբար՝ աւելի չարիք ու կործանում են յառաջ բերում հայ ցեղի գլխին, եւ ծաղր ու նուաս-տութիւն՝ հայ ցեղի խելքին։

Գ. ՏՕՆԱՊԵՏԵԱՆ

Լոնտոն, 11 հոկտեմբեր 1948

ՅԱՌԱՋԱԲԱՆ Ա. ՀԱՏՈՐԻ

Ես տակաւին երիտասարդ էի՝ լի կենսունակութեամբ, երբ գաղափարակից յեղափոխականներ եւ ոչ-յեղափոխական բարեկամներ ջերմօրէն փափաք էին արտայայտում, որ գրի առնէի յեղափոխական եւ բանտային կեանքիս յիշողութիւնները, մի փափաք, որ անշուշտ առարկայ էր իմ մտածութեան, յանժամ եւ յետ այնու: Այժմ, աւա՜ղ, մօտենում եմ ութսունի, կամ անցնում եմ ութսունը: Նրանք որ, իրենց ունկնդրութեան բովէական տպաւորութեան տակ արտայայտեցին այդ ցանկութիւնը, գրեթէ այլ եւս անյայտ են աշխարհի վրայ: Նրանց տուած խոստումս մնում էր անկատար, եւ մտադրութիւնս անմեռանելի: Այժմ սկսում եմ խորապէս խորհիլ թէ՝ եթէ յարատեւեմ այս անսթափելի ծուլութեամբ, անշուշտ իմ անունը պիտի զրկուի փայլելուց Հայ Յեղափոխութեան փառաւոր հերոսների շարքերում: Զի, թէեւ չեմ հաւատում, բայց հաստատ գիտեմ թէ անսանձելի մահը այլ եւս մեծաքայլ յառաջանում է դէպի ինձ. բայց,

Ե՞րբ պիտի հասնի ինձ, ես չեմ փափաքում իմանալ. նա ինքն միայն գիտէ այդ: Բայց ես զգում եմ թէ՝ վերջին առիթն է այս որ պէտք չէ փախցնեմ, եւ սկսեմ ու աւարտեմ քանի տակաւին ակար աչքերիս յետին լոյսը չէ խաւարել, ձեռքիս շարժումը չէ անշարժացել, եւ մաշուած ուղեղիս մեքենան չէ կանգ առել:

Բայց ի՞նչ կարող եմ գրել իմ յեղափոխականութիւնից, որով պանծամ եւ պարծենամ: Որպէս յեղափոխական, ես երբէք չեմ նկատել ինձ յեղափոխական այն իմաստով եւ մեծութեամբ, որպէս ես եմ երեւակայել յեղափոխական մարդը, իր անբանտարկեալ, ապա ասպարէզում: Եթէ եղել են մարդիկ, որ իրենցից առեղծել են, կամ իրենց կուսակցութեանց գըրիչներով առեղծուել են այնպէս ես թողում եմ նրանց իրենց քաջագործութեանց փառքի մէջ, ուր պանծալի գրեթէ ոչինչ է կատարուել, եւ ողբալի յոյժ շատ: Եւ ես, որպէս անբանտարկեալ կեանքով յեղափոխական, եղել եմ այդպէս փառաւորեալ ոչնչագործներից մէկը: Բայց, որպէս ձերբակալուած եւ բանտարկըւած յեղափոխական թուրք ոստիկանական իշխանութեան առաջ, եւ թուրք բանտերի մէջ, ես զգացի, որ յայնժամ միայն կարող էի արդարացի դատել թէ՝ ես յեղափոխական էի արդարեւ հոգւով եւ յուզմունքով, եւ թէ ունէի իրաւունք պարծենալ ես ինձմով:

Այս երկրորդ տխուր եւ փշալից հայ յեղափոխական ասպարէզի մասին ի զուր չպիտի լինի ի վեր առնել դէպքեր՝ յետագայ հայ ընթերցողների հետաքրքրութեան համար: Բայց որպէս իմ, անշուշտ եւ ինձ նման շատ հայ երիտասարդների մտքերը եւ սրտերը փոքրութիւնից սնուել էին ազգային ազատութեան գաղափարների յուզումներով, եւ որքան մեծանում էինք, մեր յուզումները յեղաշրջւում էին, ե՛ւ երազային յեղափոխութեան, ե՛ւ ազգային անկախութեան օդային դղեակները կառուցւում էին մեր զգացումների վրայ, եւ բարձրանում մեր երեւակայութեան մէջ: Ուստի, որպէս այդպիսիներից մէկը, ես աւելի յարմար եմ համարում գրել ոչ միայն իմ յեղափոխական եւ նրան հետեւող բանտային կեանքիս մասին, այլ սկսելով այն օրից երբ կեանքը ծաղկեց իմ գոյութեան մէջ, մինչեւ այն օրը, երբ կեանքի ծաղիկը անթեւաթափ վիճակի մէջ է, այլ եւս չը ծաղկելու երբէք: Սակայն կեանքի յոյսը այնու ամենայնիւ շարունակում է ապրել անմահութեան հաւատքով, որքան որ զգում ենք թէ տակաւին կանք:

Երբ սկսեցի այս գրուածքը, Յառաջաբանը վերջացրի վերապրեալ ասով եւ բուն գրքից տակաւին չէի սկսել եւ ոչ մի տող, բայց գիտէի թէ պիտի գրէի մի նիւթ, որի ամէն տողերը պիտի լինէին հիւսուած իմ կեանքի դէպքերի

եւ տեսարանների անտեսանելի թելերի հետ: Մտածութիւնը սակայն անսանձ է, նա չունի սահմաններ եւ ուղղութիւններ, եւ մղում է դըրիչը այնպիսի ուղղութեամբ եւ դէպի այնպիսի նիւթեր եւ տեղեր, ուր երեւակայութիւնը չէր երեւակայել նախապէս, եւ որ միտքը չէր խորհել բնաւ: Այսպէս պատահեց իմ գրչին, որին ես չեմ մեղադրում, եւ որի մեղքի եւ յանցանքի համար ես չեմ ցաւում, եւ մեղքը եւ յանցանքը առնում եմ իմ վրայ, եւ պատրաստ՝ ընդունել ամէն պարսաւ եւ դատապարտութիւն որ կարող են անտարակոյս գալ կրօնի կեղծաւորներից եւ պարզամիտներից, եւ միաժամանակ անբուժելիօրէն կեղծաւոր ազգասէրներից:

Այս դրամայի տեսարանների եւ նրանց նկարագրութեանց մէջ կան երկու նպատակներ, ցոյց տալ ճշմարիտ եւ մաքուր կրօնի մարմնի մէջ արմատացած ազատ մտքերը, որոնք միայն յիմարութեան մէջ են պահում մարդոց հոգին եւ որ աւելի կարեւորն է՝ ցուցադրել այն հիւանդոտ ազգասիրութիւնը, որից բուժուել է խորհրդային Հայաստանի ժողովուրդը:

Բայց Հայաստանից դուրս, Թէհրանից մինչեւ Նիւ Եորք, աւանդական հայ հասարակութեանց մէջ, այդ ախտացեալ ազգասիրութիւնը շարունակում է մնալ անբուժելի մաքով

աղքատ եւ դիւրահաւան անհատների եւ նրանց հետ ապրող խորամանկութեան վարպետ մի կարգ ուսեալների մէջ, որոնց համար ազգասիրութիւնը եղել է անուան, փառքի եւ պատուաւոր մուրացկանութեան արհեստի եկամուտներ․ առանց որոց նրանց անունները կը մնան խաւարամած, եւ ստամոքսները կիսակուշտ կամ սովամած։

Որպէս Յիսուսի եւ նրա Գաբրիէլ հրեշտակապետի խորհրդածութիւնները, եւ նրանցից աւելի հեռուն, երկնային պատշգամում նստած Ենովքի եւ Եղիայի հակառակորդութիւնները՝ Հայ ազգի քրիստոնեայ դառնալու օգտակարութեան եւ վնասակարութեան մասին, նոյնպէս եւ Քրիստոսի գրաբառ բանախօսութիւնը Վաղարշապատի երկնակամարից՝ շըրջապատուած բիւրաւոր հրեշտակներով եւ ուղղուած Հայ ազգին եւ լսելի Հայաստանի ամէն վայրերում, նմանապէս Գրիգոր Լուսաւորչի քարոզը Տրդատ Թագաւորի չքնաղափառ պալատի ճակատից, այս ամէնը վերացական են։

Անշուշտ, մեծ աղմուկ պիտի բարձրացնեն մեր փարիսեցիներն ու նրանց յետեւից կուրաբար քայլողները Սուլթան Համիտի երազային ճաշին առթիւ՝ ուղղուած Ներսէս Պատրիարքին Ելդըզի սանիքին վրայ։ Ես գրած եմ այդ ճաշը, որպէս թէ նա ինքն էր մատուցողը, գաւաղը եւ խօսողը որպէս մի խնկական Թուրք վե-

հաղեա թուրք կայսրութեան, իր սկզբնական բարի տրամադրութեան շրջանից մինչեւ իր զայրոյթի եւ կատաղութեան օրերը դէպի Հայ ժողովուրդը։

Անշուշտ կը լինեն կարծողներ թէ՝ ես արդարացնում եմ մէկ կամ հարիւր յանցաւորների համար տասնեակ հազարաւոր անմեղ հայերի ջարդը։

Բնա՛ւ երբէք։

Բայց ես չեմ կարող մեր կեղծ ազգասէրների լեզուն բանել։ Ես գրած եմ, ինչ որ իմ ճանաչողութիւնը, փորձառութիւնը եւ դատողութիւնը թելադրեցին ինձ։

Ես գրում եմ Պատմութեան համար, եւ ապահով եմ, որ մեր աշխարհացիր Թրքահայ ընկերները հաւանութիւն պիտի տան իմ դատողութեան եւ պատմական այս ճշմարտութեան։

Այս գրուածքը Հայոց պատմութիւն չէ, եւ ոչ եւս ինքնակենսագրութիւն, ինչ որ նպատակս էր անուանել։

Կեանքիս սկզբնական տարիները եւ այն ամէն պատկերները Վաղարշապատից մինչեւ Տիգրանակերտ, եւ Տիգրանակերտից մինչեւ Էջմիածին 19րդ դարի վերջին քառորդում, շատ տարբեր չէին հին հին դարերի Հայ ժողովրդի կեանքի շարժման եւ երեւոյթների պատկերներից։

Եւ կրօնական ամէն տեսակ ծէսերն, արա—

րոդութիւնները, նախապաշարումները եւ այլ կեղծիքները, որ իմ եւ իմ նման փոքրերի մէջ բուսնում, աճում եւ դառնում էին հաւատալիքներ, խոր արմատներ էին ձգում մեր մեծերի հետ, եւ Հայ ժողովուրդը իր մտքով եւ հոգւով դարերով անցնում էր կեղծիքների միջով:

Բայց ներկայ դարի Հայ ժողովուրդը, որ ապրում է մի նոր Հայաստանի մէջ, մտքի կրթութեան եւ հոգւոյ ազատութեան մի նոր եղանակաւ գրեթէ խորտակել է, եւ հաւանաբար պիտի իսպառ խորտակէ իր միտքն ու հոգին դարերով շղթայած ամէն կրօնական հաւատալիքներ որ ստեղծուած են խաբէութեամբ:

Գ. ՏՕՆԱՊԵՏԵԱՆ

Լոնտոն, 26 Սեպտեմբեր 1946

ՍՈՒԼԹԱՆԻ ՍԵԼԱՄԼԸՔԻ ԱՂՕԹՔԸ

Յեղափոխութեան բառը երեւակայական իմաստի հոգեզմայլ զգացումների երկնալաց անիւները վեր առան ինձ 1799էն ի վեր ազատակերոյս Վրաստանի անթագաւոր մայրաքաղաքի ողբանուագ Կուր գետի ափերից, եւ վայր բերին այս մեծ մայրաքաղաքը, որի գահակալի Թուրք նախնիքները եւ նախապէս մահմետական արաբներ տիրեցին Հայաստանի մէկ մասին, 760 Թուականին, ապա ուրիշ մասերի, եւ ի վերջոյ Թուրք աշխարհակալ Ալփասլան տիրեց ամբողջ Հայաստանին 1065 Թուականին, եւ յաջորդաբար նաեւ Վրաստանին: Եւ ահա, այս գահակալի անցեալ Թուրք սերունդները այդ օրերից ի վեր, դարէ ի դար կոխոտելով Հայ ժողովրդեան ազատութեան վրայ եւ Հայ ազգասիրութիւնը այդ ժամանակից ողբում է իւր ազատութեան մահը, բայց այս ողբերգութիւնը այնքան հնացել է եւ եղել է այնքան չափազանցեալ եւ արհեստական, որ ազգասէրներ իրենց բերաններով, ձառերով

և գրիչներով ողբում են, բայց այդ ողբերի մէջ չեն նրանց սրտերն ու հոգիները, նրանց զգացումներն ու կսկիծները, այլ ողբում են թութակի պէս:

Ո՞ր տեսակին էին պատկանում իմ պատանեկութեան շրջանի նորածին ազգասիրութեան ողբերի և մռնչիւնների ձայները, ես անկարող էի որոշել:

Ես սակայն իմ տակաւին խակ և անփորձ և անհմուտ կարողութեամբ որքան շատ էի պտտում և նայում, նկատում էի թէ մայրաքաղաքի հայերը խօսում էին, շարժւում և քայլում էին բարձրագլուխ և աննկուն և անվեհեր, որպէս իրենց բնակակից թուրքերն, յոյները և եւրոպացիները, և որպէս Քիւրդիստանի խորքում՝ Տիգրանակերտի մետաքսահիւս պատմուճանաւոր երփնափայլ և սիգաճեմ ագաները, որոց ես տեսել էի փոքրութեանս տարիներում: Ինչպէս այնտեղ չէի տեսնում հայ ողբացողներ և մռնչողներ, նոյնպէս չէի տեսնում հայ ողբացողներ և մռնչողներ Սուլթանի մայրաքաղաքում ապրող հայ հասարակութեան մէջ:

Այնպէս էին և այն հայերը, որ ապրում էին ուր ես էի իջեւանել՝ Մուսթաֆա Փաշա խանի, այսինքն օթեւանի մէջ, որի տէրը Նիկոմիդիայ գաւառի բազմահայ Ադաբազար քաղաքի բնակիչ էր, և մէկ եղբայրը եպիսկոպոս, և օթեւանի մէջ ապրողները նոյն գաւա-

ուից էին, բացի երկու բուլղար ուղեկից սպաները, որ իրենց հետ բերին ինձ այդտեղ, եւ ուր իմ բարեբաղդութիւնից, գտայ իմ ճեմարանի դասընկեր Միհրան Աթանասեանին, որի հայրն էր Նիկոմիդիայ գաւառի գանձապահ, եւ գործակալ Թուրք նաւային ընկերութեան: Խանի մօտաւոր եւ հեռաւոր շրջանակում չկային հայ տուներ կամ կրպակներ, ամէնը Թուրքեր էին, եւ սակայն այդ կեցող եւ այցելող հայերը չունէին իրենց սրտերում եւ մտքերում երկիւղի զգացում եւ ապրում էին սովորական ազատութեամբ, որպէս ամէն ոչ-հայ ապրողներ իրենց շուրջ:

Դժբաղդաբար, հայութիւնը այսպէս չէին երեւակայում Կովկասի այն հակաթուրք հայ երիտասարդները, որոց մտքերից վեր էր բարձրանում օդային վրիժառութեան մուխը, եւ սրտերից դուրս էին ցայտում յեղափոխութեան կայծերը:

Ես չպատմեցի Աթանասեանին թէ ինչ ըզգացումներ աստիճանաբար զարթեցան իմ մտքում եւ գրգռեցին ինձ դէպի Կ. Պոլիս եւ յեղափոխամիտ մտածումներ: Բայց ասեցէ արդեօք ի՞նչպէս կարելի էր տեսնել Սուլթան Համիդին, որի որպիսի էակ լինելը այնքան խորհրդաւոր էր մեր երեւակայութեան մէջ, եւ Ներսէս պատրիարքին, որի անունն եւ անձնաւորութիւնը, այնքան պաշտելի էին մեր սրտերում, եւ սուրբ մեր հոգիներում:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

— Մեր Նիկոմիդիոյ նախկին Առաջնորդին կարող ես երթալ, տեսնել եւ հետը խօսել երբ կամենաս, բայց մեր վեհափառ Համիդին կարող ես վաղն իսկ երթալ տեսնել, բայց ոչ պատիւ ունենալ նրան շատ մօտենալ եւ հետը խօսել: Վաղը ուրբաթ է, եւ ամէն ուրբաթ նա դուրս է գալիս իր աստեղանուն պալատից, գնում է մզկիթ՝ խոնարհիլ եւ երկրպագել, եւ փառաբանել Մէքքէի մեծ Մարգարէի մեծ Աստուածը, որ տուաւ Նազովրեցի Յիսուսին երկրպագող ազգերի ընդարձակածաւալ երկիրները եւ տուեց իր նախնիքներին եւ իրեն եւ Թուրք ազգին, որ յաւիտեանս վայելեն եւ յաւիտեանս հպատակութեան մէջ պահեն Քրիստոսի անուն կրող ազգերին:

Այո՛, սիրելիս, գնա, տես, ո՞ր մէկն է աւելի փառաւոր, Օսմանեան կայսրութեան Սուլթանի ուրբաթօրեայ երթը՞ դէպի Մահամէդի մզկիթը, եթէ ոչ մեր Ամենայն Հայոց Հայրապետ Գէորգ Դ.ի գնացքը իր Վեհարան անուն անփառունակ շէնքից մինչեւ Քրիստոսի իջման տաճարը, որ մենք դիտում էինք հիացմունքով:

Ընկերոջ այս ակնարկութիւնը մաքիս առաջ բերեց այդ կիրակնօրեայ հանդիսաւոր տեսարանը: Եպիսկոպոսներ եւ վարդապետներ իրենց բազմագոյն եւ երփնափայլ շուրջառներով շարւում էին Վեհարանի դրսից մինչեւ Էջմիածնի դուռը: Երկու շաթիրներ հագ-

ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

նուած կարմիր չուխաներ երկար եւ բաց թե-
ւերով եւ ձեռքերում բռնած իրենց բարձր գըն-
տակաւոր գաւազաններ, դուրս էին երեւում
աջ եւ ձախ կողմերից, եւ գաւազանները եր-
բեմն երբեմն թնդացնում քարայատակ ճանա-
պարհի վրայ, ապա երեւում էր Վեհափառ
Գէորգ Դ. ընդարձակ ամպհովանին բարձրա-
ցած նրա սուրբ գլխի վերեւ, չորս սարկաւագ-
ներ բռնած ունէին չորս ձողեր, որոց վրայ
բարձրացած էր եւ ամրացած գունագեղ մե-
տաքսեայ ամպհովանին։ Կաթողիկոսը քայ-
լում էր կամաց եւ վեհաքայլ։ Նա գրեթէ ան-
շարժ էր պահում աղամանդեայ խաչով զար-
դարուած վեղարապատ գլուխը, բայց շար-
ժում էր իր աչքերը, եւ աչքերի սպիտակոյցը
դառնում էր դէպի մէկ կողմ եւ միւս կողմ իր-
բեւ նշան ողջոյնի՝ աջ ու ձախ պատկառօրէն
շարուած եպիսկոպոսներին, վարդապետներին
եւ ժողովրդեան։ Եւ այսպէս նա մտնում էր
այնտեղ, ուր տասն եւ վեց դար առաջ Աստու-
ծոյ միածին Որդին իջաւ ցոյց տալ Գրիգոր
Լուսաւորչին քրիստոնէացեալ Հայ ազգի ա-
ռաջին եկեղեցւոյ լուսեղէն ճարտարապետու-
թիւնը։ Սուլթան Համիդ չէր կարող պարծե-
նալ թէ՝ նա գնում էր այդ օր մի այսպիսի աս-
տուածային աղօթարան։

Հետեւեալ առաւօտ ճանապարհ ընկայ Պէ-
շիքթաշ, կայսերական պալատը տանող նորե-
բեւոյթ ճանապարհով բարձրացայ, ճանա-

պարհը շարունակեցի պալատի առջեւով եւ բարձրացայ աւելի վեր, որտեղից Սուլթանը պիտի անցնէր ասեցին ինձ, որովհետեւ պալատի մօտի մզկիթը դեռ պատրաստ չէր: Իմ կանգնած տեղը պալատի արտաքին մուտքից եւ հասարակական հանդիսավայրից հեռու էր, եւ շատ քիչ մարդիկ կային ուր ես էի:

Մինչ ամէն մարդ կարմիր ֆէսեր գլուխներում սպասում էին պատկառանօք, երկու ձիաւոր բաց կառքեր եկան անցան մեր առջեւից միմեանցից բաւական միջանկեալ հեռաւորութեամբ, նրանք պալատականներ էին, բայց ոչ ոգեւորողներ հանդիսատեսների հետաքրքրութեան համար, եւ նրանց կառքերը դրեթէ անտեսանելի էին, երբ խորհրդաւոր մի շշուկ անցաւ ամէն բերանից:

Ամէն ոք դրեց իր ձեռները իր կուրծքի վրայ, խոնարհեց իր գլուխը խորին յարգանօք առանց հանելու իր ֆէսը, իսկ ես հանեցի ռուսական գլխարկս, որպէս զի Սուլթանը չենթադրէր թէ՝ իրեն դիտողը ցարերի թունաւոր երկրից է: Ես եւս կեցայ համանմանման· յարգանքով, բայց առանց ծռելու գլուխս, որպէս զի լիովին տեսնէի նորին Վեհափառութեան երեսը:

Կառքը շարժւում էր կամաց եւ միայնակ եւ կառքի մէջ կար միայն Սուլթան Աբդուլ Համիդը: Առաջին երկու կառքերը անհետացել էին եւ նաեւից տակաւին բան չէր երեւում,

Հազիւ տասն եւ երկու քայլ հեռու էի, երբ նրա կառքը անցնում էր իմ մօտից: Նա նստած էր անսեթեւեթ եւ անսխղապանծ, եւ չկար դիրութիւն նրա մարմնի վրայ, եւ ոչ ոսկեզարդ նրա հագուստների վրայ. երեսը սպիտակ չէր, բայց ցորենագոյն եւ երկարաձեւ. ընդհանուր երեւոյթը թւում էր լինել մի մարդ բնականորէն առողջ կերպարանքով եւ կազմուածքով, բայց դէմքը ուրախ չէր, եւ մտածութիւնը ես տեսնում էի նրա ճակատի եւ այտերի գծերի վրայ, եւ նրա աչքերի փայլող լոյսերի մէջ, որոց միջից մտովի լսում էի, նրա աղօթքի աղաչաւոր ձայնը, որ բարձրացնում էր նրա վրիժառու բառերի հնչիւնը դէպի երկինք.—

«Ո՜վ Մեծդ Ալլահ, Մեծն Ալփասլան, Վեհապանծ Սուլթան Օսման, Փառապսակն Մուհամմէտ Ֆաթիհ, որ այժմ իրենց փափկամարմին եւ վարդաբոյր հուրիների հետ միատեղ ընկողմանած քո երկնային յաւիտենական զարդարեղ դրախտի մէջ են, ի՞նչ են մտածում իրենց այս աշխարհածաւալ կայսրութեան մասին, նրանք ստեղծեցին սրով եւ զօրութեամբ, որի սահմանները տարածուել էին Եւրոպայի կենտրոնից դէպի Սեւ ծով, Կովկասեան լեռները, Հայաստանի Մայր Եկեղեցին, Նոյեան Տապանը, Պարսից ծոցը, Կարմիր ծովը, Եգիպտոս, Լիբիա, Սահարայի անապատի աւազներին մօտ, Ալժերիայի ափերը, Միջերկրականի արեւելեան կղզիները, եւ հին Յու-

նաստանը, իւր բոլոր փառքերով, մի խօսքով հին աշխարհի բոլոր փառքն ու պարծանք երկիրները։

«Եւ այս ամէնը կամաց կամաց կորչում են մեր ձեռքից, Արեւմուտքից Եւրոպայի աղուէսագայլերը պատառ պատառ յափշտակում են յանուն քաղաքակրթութեան եւ մարդասիրութեան, եւ արեւելքից բեւեռային Սպիտակ Արջն է մռնչում եւ կողոպտում յանուն Քրիստոնէութեան, պաշտպան կանգնելով իմ քրիստոնեաների կեանքին իմ բռնակալութեան դէմ։

«Մէկը յօրինել է արդարութեան օրէնքներ, որոց ոյժով դատաւորները, օրէնսդէտները, փաստաբանները, ոստիկանները եւ ամէն միւս կառավարական պաշտօնեաները դրել են իրենց հպատակներին այնպիսի օրինական ստրկութեան մէջ, սարսափելի ծանր հարկերով եւ այլ անուններով առնելով ժողովրդի ձեռքի եւ խելքի աշխատութեան դրամները եւ դարձնելու իրենց համար հարստութեան աղբիւրներ։

«Եւ այսպէս, այս քաղաքակիրթ անուանուողներ ,իրենց կողոպտարար օրէնսդրութեան առաձգական լարերով մտրակում են իրենց ստիպօրէն հնազանդած հպատակներին, եւ լայնօրէն բաց են անել տուած նրանց լի կամ դատարկ քսակները եւ հարկադրում են նրանց տալ այնպիսի եւ այնքան պետական եւ այլ

այդպիսի հարկեր, որ իրենք հարկ են համարում սահմանել իրենց եւ իրենց պաշտպան պաշտօնեաների հարստացման եւ շռայլութեան համար:

«Բայց իմ հպատակները, փառք քեզ Տէր, զերծ են այդ դժբաղդութիւնից: Նրանք ազատ են այդ վերաբերմամբ: Իմ հպատակները, սերունդից սերունդ, երբէք հարկ չեն տուած, ապրելով լեռների եւ ձորերի մէջ, հեռու հարկահաւաքների եւ ոստիկանների ձեռքից: Ուրիշներ հնարք են հնարում ծածկել իրենց գոյութիւնը, կամ իրենց իրական եկամուտները եւ քանակը, եւ գիւղերից ոմանք հարկ չէին տալիս, առարկելով, ճիշդ կամ անճիշդ, իրենց նիւթական անկարողութիւնը, եւ այսպէս կուտակւում էին նրանց պարտքերը, եւ այսպիսի թոյլտուութեամբ պաշտօնեաների կողմից, եւ թերութիւն հպատակների կողմից, իմ կառավարութիւնը իւր եկամուտների եւ ոչ իսկ չորրորդ մասն էր ստանում:

«Պաշտօնեաները չէին վարձատրւում իրենց արժանի ռոճիկներով, եւ հարկադրուած էին ընդունել, կամայ եւ ակամայ, նուէրներ դրամատէր հպատակներից, ինչ որ իմ պետութեան թշնամիները անուանում են կաշառակերութիւն, եւ եթէ դատաւորներ արդարացնում են մեղաւորներին, նմանօրինակ ակնկալութեամբ, կոչւում են օրէնքի զեղծարարներ, եւ եթէ կառավարութիւնը ի հարկէ ստիպեալ

հարկադրում է գիւղացիներին երբ եւ իցէ վըճարել իրենց հարկերի մէկ մասը, այդ համարում են հալածանք խեղճ գիւղացիների դէմ:

«Մեր ազգը եկած է Ասիայի կեդրոնից, եւ մեր կառավարութիւնը սիրում է պահել մեր այս նահապետական բարի սովորութիւնները: Թող մեր թշնամիները հաչեն եւ թող Հիւսիսի սպիտակ Արջը քարոզէ թէ՝ նա Քրիստոսի սիրոյ համար է որ փափաքում է բռնակալ ձեռքից ազատել իմ քրիստոնեայ հպատակներին: Նա կամենում է ազատել, որպէս զի յետոյ կուլ տայ նրանց ազգով, լեզուով եւ կրօնով, եւ իմ հողը դարձնէ արշաւարան:

«Ով Մեծդ Աստուած, դու որքան պէտք ներես այս անզգամների անիրաւութիւնը իմ սուրբ կայսրութեան դէմ: Միթէ դեռ չէ՞ հասել արդարութեան ժամը, որ փոխ տաս ինձ աշխարհակալ Ալփասլանի, Օսմանի եւ Սուլթան Մուհամմէտի զօրաւոր բազուկները եւ քո ամենակարող երկաթի սուրը, որ երկրի երեսից մաքրեմ քաղաքակրթութեան եւ մարդասիրութեան այս սուտ պաշտպաններին, թագաւորներին եւ կայսրներին եւ նրանց երկիրները Լոնդոնից մինչեւ Պետերբուրգ, Բեռլինից մինչեւ Հռոմ դնեմ քո ճշմարիտ մարգարէի, արդարասէր խալիֆայի արդարադատ իշխանութեան ներքոյ»:

Ես մնում էի կանգնած նոյն տեղում, ուղեղումս տակաւին շարունակում էր հնչել

Սուլթան Աբդ-իւլՀամիդի հնչիւնալից ձայնը, որ նա իր աղօթքով եւ աղերսով բարձրացընում էր իր խնդիրքը առ բարձրեալն Աստուած: Ինչ որ ես երեւակայում էի լսել, դժուար թէ Աստուած տրամադիր լինէր լսել, թէեւ այդ աղօթքը գալիս էր Մարգարէի Թուրք Խալիֆից: Բայց երեւի Խալիֆն ինքն էլ սկսեց խորհել թէ Աստուած դժուար թէ լինէր տրամադիր լսել իր խնդիրքը իր այդպէս անշքեղ ձեւով աղօթագնացութեան համար:

Ուստի նա հետզհետէ այնպէս շքեղացրեց իր ուրբաթօրեայ Սէլամլիքը՝ պալատից մինչեւ մօտի յատուկ նոր մզկիթը, որ նշանաւոր եւրոպացիներ, որոնք այցելում էին իր մայրաքաղաքը, եւ նոյն իսկ դեսպաններ գալիս էին տեսնել թէ՝ Օսմանեան կայսրը ինչ փառքով էր գնում Աստուծոյ տունը՝ իր ներքին խնդրանքի իրականացումը տեսնելու հաւատով եւ յոյսով:

Դեռ չէի հեռացել իմ սկզբնական տեղից, երբ տեսայ Խալիֆը իր պարզ թափօրով վեր էր բարձրանում վարի ճանապարհով: Եւ թափօրը անհետացաւ բարձր պատի մեծ դարբասից ներս, եւ շատ չանցած, պայծառ լուսամուտի առաջ երեւեց Նորին Վեհափառութիւնը, նայեց հանդիպակաց մօտաւոր տների բազմութեան, որոնք բաղդաւոր Թուրքերի տներ էին, անկի հեռուն, միախառնուած նուազ բաղդաւոր հայ հարեւաններով եւ շատ

ուելլ Հեռուն իր աչքերը տեսնում էին պըղտորագոյն Ոսկեղջիւրը իր միւս կողմը բարձրացած, վերամբարձ մինարէներով, որոց վրայ Մարգարէի պաշտօնեաները կանգնած երկրի եւ երկնքի միջեւ, հոգեպարար երկարաձիգ ձայնարկութեամբ, երգում էին Աստուծոյ մեծութիւնը, Մարգարէի ճշմարտութիւնը, եւ Օսմանի անշիջանելի տէրութեան փառքը:

Աբդ–իւլ–Համիդ, լի ոգեւորութեամբ, դուրս երկարեց իր բազուկը դէպի տեսարանը, դէպի արեւմուտք, կարծես ուզում էր իր բռունցքի մէջ առնել համայն Եւրոպա եւ ապա իր չանթահար ակնարկները նետեց դէպի այն կողմ, ուր Ցարի հոգին էր թառամում: Եւ այդ դիրքով նա ընդ երկար մնաց կանգնած, երբեմն ամեհի, երբեմն երազուն:

Երբ հասայ օթեւան, Միհրան Աթանասեան այնտեղ էր՝ վերադարձած իր գործատեղից:

« Դէ ասա, ինչպէս հաւանեցիր մեր սիրելի Վեհապետի երեսը »:

— Բարի է, ինչպէս Թէմուրլանգ բարի էր առաջ եւ գուցէ չար, ինչպէս Թէմուրլանգ չարագործ յետոյ »:

— Սխալւում ես, մեր կայսրը մէկ չարագործութիւն արեց՝ իր եղբայրը իր գահից իջեցնելով եւ ինք նստելով նրա տեղ, եւ այս նա արեց Օսմանեան կայսրութեան համար: Եւ

այս է նրա առաջին եւ վերջին, եւ միակ արդարացի չարագործութիւնը: Այժմ կարգը եկաւ վաղն առաւօտ ուխտի երթաս մեր մեծ Պատրիարքին, իր սուլթանական նուէր բնակարանի մէջ, եւ տեսնենք ի՞նչ տպաւորութեամբ պիտի հեռանաս այդ մարդի մօտից, որ տարիներով մեր հայերիս հիացման եւ հեգնութեան առարկայ եղաւ»:

Հետեւեալ առաւօտ Ղալաթայի նաւամատոյցը երթալով մտայ այն նաւը, որ պիտի տանէր ինձ դէպի Ներսէս Պատրիարքի բնակարանը:

ԴԷՊԻ ՆԵՐՍԷՍ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԲՆԱԿԱՐԱՆԸ

«Հազար ու Մէկ Գիշեր»ի առասպելական տեսարանները այնքան գերազանցօրէն նկարագեղ չեն նրա ընթերցողների երեւակայութեան առաջ, որպէս երեւեց իմ աչքերի առաջ Սուլթանի մայրաքաղաքը իր ծովային եւ ցամաքային իրական, եւ աննման տեսարաններով:

Հին դարերի Յոյն կայսրների Բիւզանդիոնը, եւ յետագայ դարերի Թուրք սուլթանների Ստամբոլը գրկուած Մարմարա ծովի եւ Ոսկեղջիւրի ջրալի թեւերով, հրուանդանաձեւ եւ աստիճանաբար ծփուն ջրերի ափերից վերանում էր դէպի վեր, եւ նրա մէջերից համատարած բարձրանում էին ոչ թէ մարդկութեան փրկիչ Քրիստոսի եկեղեցւոյ գմբէթներ, իրենց վերասլաց փրկարար խաչերով, բայց յաղթական Մուհամէդի երկնաբերձ մինա–

ըէթներով, և նրանց հետ միասին, Քրիստոնէութիւնից Մահմեդականացած՝ Քրիստոնէութեան Մայր Եկեղեցին, Սուրբ Սոֆիա: Ահա այսպէս էր Քրիստոս ապացուցանում իր փրկչական կարողութիւնը Արաբիոյ անապատների Մուհամէդի առաջ:

Այս Բիւզանդիոնի առաջ, Ոսկեղջիւր և Վոսփոր միանում են Մարմարային, և միացման գծի հանդիպակաց կողմում խոնարհաբար կանգնում է լայնատարած թևերով երբեմնի Քաղկեդոնը, ուր խաղաղաբար, և խաղաղուսոյց Քրիստոսի պաշտօնեաները, ներշնչուած Սուրբ Հոգւոյ զօրութեամբ, բաց արին քրիստոնէական կատարեալ ժողովները, հակաճառելով Յիսուսի բնութեան և էութեան մասին, որ ծնել էր Նազարէթի մէջ, և բնութեամբ, կենդանով, և էութեամբ թէև տարբեր չէր, և չէր կարող լինել իր պաղեստինեան հայրենակիցներից և համայն աշխարհի մարդկերից, և սակայն նրանք մղուած մոլեռանդական իմաստակութիւններից, թաղւում էին լեզուաբանական անլուծելի մեկնութիւնների մէջ, այսու ստեղծելով քրիստոնէական սիրոյ կրօնի համար փոխադարձ ատելութեան վարդապետութիւնը: Յիսուսի աւանդած վարդապետութիւնն էր — «Եւ նոքա եղիցին մի հօտ և մի հովիւ»:

Բայց նրա այս Քրիստոսաբան վարդապետները իրենց սովետաարանութեամբ մէկ

հօտի եւ մէկ հովուի տակ ստեղծել տուին հազար հովիւներ: Հովիւները հակառակեցան միմեանց, հօտերի աշխարհները պատերազմեցան միմեանց դէմ: Եւ Աստուած երկնաւոր գայրացաւ իր երկրաւոր Որդու հաւատացողների այս անհաւատարմութեան դէմ եւ նրանց ձեռքից առաւ Քրիստոսի ծննդավայրը, նրա խաչելութեան սրբազան դարձած քաղաքը, Քաղկեդոնը, Նիկիան եւ քրիստոնէական երկպառակութեանց այլ սուրբ ժողովատեղիները, եւ յանձնեց ամէնը իր սիրեցեալ Մուհամմէդի ամենաբարեպաշտ սուլթանների բարեխնամ իշխանութեան պաշտպանիչ ձեռքերին: Այսպէս էի խորհրդածում, երբ Բիւզանդիոնից յետոյ ուշադրութիւնս դարձաւ Քաղկեդոնի վըրայ: Մէկը փոխուած Ստամբուլ եւ միւսը Գատը Քէօյ թուրք կոչումների, եւ խոնարհած նրա ազատօրէն ծածանող կիսալուսնեան դըրօշակի տակ:

Եւ խորհեցայ թէ Որդին Աստուծոյ Յիսուս Քրիստոս եկաւ աշխարհ փրկել մարդկութիւնը Ադամայ մեղքից:

Եւ այդ մեղքից փրկեց այն ժողովուրդներին, որ հաւատացին նրան: Եւ այն ազգերը, որ աւելի կանուխ եւ սիրով հաւատացին նրան, նա դրեց նրանց մարմնոց եւ հոգւոց վրայ աւելի ծանր եւ տաժանելի մեղք, Մահմետականութեան անարգ եւ ստրկական լուծը:

Այսպէս, ինչպէս մեծապանծ Հայ ազգի

փառքազօր թագաւորութիւնը քրիստոնէանալով, դարձաւ հրոյ եւ սրոյ ճարակ՝ անքրիստոնեայ ազգերի եւ ազա, չարունակաբար, Մուհամմէդի աշխարհատարած սուսերամերկ արշաւողների ձեռքով այնպէս եւ աստուածատեղծ բնութեան այս գեղափայլ գոհարի ակնը, նախկին հին դարերի հանճարածին Յոյն ազգը, երկրպագելով Մեծ Փրկչի առաջ եւ ընդունելով նրա անունը, կորցրեց իր ճշմարիտ փրկութիւնը, եւ իր մեծատարած կայսրութեամբ տարածուեց մեծազօր Մուհամմէդի սատանայացուցիչ ոտների առաջ:

Եւ այսպէս, այժմ որ նայում էի նաւից, ալեկոծ ջրերի վրայ մեղմասահ նաւակների, եւ անչափ եւ մանչող մեծ նաւերի ծածանող դրօշակները, եւ բարձրադիր ցամաքի վրայ, տների տանիքներից վեր բարձրացած աստուածային աղօթարանների փառաբանական սրածայր աշտարակները վկայում էին քրիստոնէութեան փրկարար երկնաւոր Թագաւորի գետնատարած տապալումը, եւ աւազու Մէքքէյի Մեծ Մարգարէի հոգեւոր եւ մարմնաւոր տիրապետութեան յաղթանակը:

Բայց այս աղերսութեան մէջ Քրիստոսի խաչը կրող, եւ Մուհամմէդի լուծը քարշող Քրիստոսի զօրութիւնից լքուած այս ժողովրդոց կացութիւնը այնպէս աղերսական չէր: Նրանց մաքի կարողութիւնը՝ ձեռքի ճարպիկութիւնը ստեղծեցին նրանց համար նիւթա-

կան անկախութեան հնարաւորութիւնները, Մայրաքաղաքի եւ գրեթէ Օսմանեան Կայս-րութեան դրամական եւ առեւտրական մեքենայի շարժումը եթէ ոչ ամբողջովին, սակայն մեծ մասամբ, կատարւում էր այդ ժողովրդից յունաց եւ հայոց ձեռքով: Երկու հարիւր հազար, կամ աւելի հայեր, եւ նոյնքան եւ աւելի յոյներ տարածուած էին Կ. Պոլսոյ լաւագոյն ափերի եւ բարձրութիւնների վրայ: Այս երկու ազգերի հազարաւոր բնակարաններ ու կառուց-ներ Պերայի պալատներից եւ վերեւերից, եւ բանաստեղծաշունչ Վոսփորի ջրահամբոյր ափերից, ծաղկապատ քղանցքներից, եւ սոճիազարդ գլուխներից, նայում էին մեր փրփրաբերան Թափառական շոգենաւին, որ երբեմն իր կողը հանգստացնում էր ասիական հողի մի նաւահանգստում, ուր Կ. Պոլսեցիներ ոմանք դուրս էին գալիս, եւ ոմանք ներս մըտնում, եւ այս հեւալով ու սուլելով դարձնում էր իր քիթը դէպի եւրոպական հողը, այնտեղ հաստատուած մի գիւղի հանգստարանից դուրս հանել եւ ներս առնել ուրիշ երջանիկ կամ ապերջանիկ մարդկային արարածներ, տարբեր ցեղերով, եւ տարբեր կրօններով, եւ դաւանութիւններով. բայց անխտիր նոյն յառաջանում էր անխափ, միշտ յառաջ, դէպի Սեւ Ծով որտեղից մի քանի օր առաջ մտել էի Սուլթան Համիդի մայրաքաղաքը: Այս անսովոր կախարդական չքնաղազարդ ջրաշարժութեան դը-

նայցքում, իմ աչքերը անդադար դառնում էին Վոսփորի երբեմն աջ, երբեմն ձախ կողերի վը-րայ, ուր տուներ առանց ընդհատման ծածկում էին հողը, եւ բարձրանում գետնի երեսից փոքր եւ մեծ չափերով, եւ աղքատ ու շքեղ տեսքերով: Նրանց մէջին հեռաւոր աջում, որպէս գոհար ճարտարապետութեան, բարձրանում էր մի ուշագրաւ շէնք, սպիտակաշող, կարծես շինուած լինէր դիւթական մարմարիոնով:

Ես մինչ հիացմամբ նայում էի այդ հմայիչ պալատին, մերձակայ հայը, որ կը սիրէր ճառել ազգասիրութենէ, ասեց ինձ սրտագոհ թէ՝ այդ շքեղ պալատը մի հայ ճարտարապետի հանճարի ճարտարութեան գեղափայլ շնորհքն էր, եւ թէ այժմ այնտեղ դահընկեց Սուլթան Մուրատ իբրեւ խելագար զբօսնում էր բանտարկուած:

Դեռ եւս այս խորհրդաւոր պալատը չը նշմարած, ձախակողմում երկարօրէն տարածուած նաեւ տեսնում էի մի աւելի շքեղ պալատ, աւելի սպիտակ, եւ աւելի հմայիչ. Նրա լայնարձակ փառաւոր երեսը իր բոլոր ժպտալից քաղցրութեամբ նայում էր իր առաջում ծածանող Վոսփորեան ջրերի մթագոյն մակերեւոյթի վրայ: Նրա եւ սրբատաշ քարափի միջեւ գետինը գորգաւորուած էր բազմատեսակ անուշաբոյր ծաղիկներով, կարճահասակ տունկերով, եւ գեղարուեստական բաժանում-

ներով: Շուրջանակի, պալատը երեւում էր փառաւորուած, բոլորաձեւ կոկուած միջահասակ ծառերով, ծաղկապատ մարգագետիններով, եւ ոլորապտոյտ ճեմելիքներով սուլթանական զբօսանքի համար պալատի եւ դրսի աչքերից հեռի պահող բարձր պարիսպների միջեւ:

Այստեղ, այս պալատում, 1876ի Մարտին Աբդ-իւլ-Ազիզ, զուարճասէր անհոգ Սուլթանը, սպանուեց պալատական մեծաւորների դաւադրութեամբ: Հայութեան ապագայ Մեծ Եղեռնագործը, որ այդ ժամանակ ունէր յատուկ համակրութիւն իր հայ հպատակների համար, գուցէ ցերեկի ժամերին, կամ գիշերի երազներում տեսնում էր իր նախորդի արիւնաշաղախ ուրուականը, եւ կամ ամենայն հաւանականութեամբ մտածեց թէ ինքն էր իր մեծատարած կայսրութեան ամենաբարձր մարդը, եւ թէ ուստի այն բնակարանը ուր ինքն պէտք էր ապրել, պարտ էր կանգնէր իր մայրաքաղաքի ամենաբարձր տեղի վրայ, ամենամօտը աստղերին, հետեւաբար, առանց իր աչքից անտեսանելի դարձնելու արիւնաներկ պալատը, նրա ամենատեսանելի բարձունքում բարձրացրեց իր աստեղատունը, Եըլտըզի Քէօշքը, նրա ներքեւում, պարտէզի արտաքին դրան առաջ, իր աղօթարանը ամէն ուրբաթ հանդիսաւորապէս այնտեղ երթալ աղօթելու համար, հեռու մարդկային շարժումն

փողոցներից, եւ չարամիտ եւ վտանգաւոր հրապարակներից: Երբ նայում էի պալատներին, եւ նուազ մեծ, եւ նուազ վեհաշուք հազուադէպ շէնքերի յաճախ խիտ առ խիտ, եւ ցան ու ցիր տուների միջեւ, մտքով անցնում էր թէ այս Աստեղատան միահեծան երիտասարդ վեհապետը, վախենալով իւր հպատակ Հայ հոգեւոր վարդապետից, այդ տեսակի որպիսի պալատով կամ ապարանքով պատուել էր նրան, որ նա կաշառուէր եւ այնուհետեւ ձայն չհանէր իւր դէմ Եւրոպայի մեծ պետութեանց առաջ Հայկական Դատի պահանջի համար, մի զրոյց որ հրատարակուեց Ռուսահայ թերթերում, եւ խօսւում էր հայ ազգասէրների պատրաստակուլ բերաններում:

Պալատները թաղւում էին յետեւում, եւ մեր նաւը հեռանում էր դէպի Սեւ ծով: Ես չեմ յիշում թէ Բէբէք, կամ Բոյաջի գիւղ, կամ մի այլ ինչ տեղ էր ուր պիտի իջնէի ուխտի երթալ համբուրելու մեծ ազգասէրի սուրբ աջը, բայց մտաբերում եմ թէ Վոսփորի միեւնոյն կողմի վրայ էր, ուր ննջում էր նրա նուիրատու Սուլթանը, Աբդ – ուլ – Համիդ:

Դուրս եկայ նաւահանգստից· Վոսփորի ափերի գրեթէ ամէն գիւղերում, նոյնպէս եւ այդտեղ, անպակաս էին հայ բնակիչներ, իրենց մայրենի բարձրաձայն բարբառով: Ամէն մարդ գիտէր նշանաւոր մարդի նշանաւորագոյն բնակավայրը: Կիսափայտաշէն տուներ

քարքարոտ եւ զառիվեր փողոցով մեր քայլելով, հասայ ամենավերին մասը։ Այնտեղ մի տուն, կարծես նորաշէն ցեխային երեւոյթով, եւ վերնամասի փայտապատ կարմրութեամբ, համեստափայլ հասակով կանգնում էր առանձին եւ փոքր ինչ հեռու իրեն շրջապատող խոնարհագոյն տուներով։ Երկիւղածութեամբ մօտեցայ բաց դրան, որի միջով ցուցանելի էր ներքնամասը որպէս դահլիճ եւ հանդստարան, աթոռներով եւ բարձրապատ երկկողմանի թախտերով։

Այստեղից ցածում տեսնում էր օձաձեւ Վոսփորը իր կապոյտ մակերեւոյթով, հեռաստանում բարձրացիր հայրենի Սկիւտար եւ հին Քաղկեդոն քաղաքամասերը, եւ հեռաւորին Մարմարան իր հազիւ տեսանելի կղզիներով, եւ Ստամբոլ իր ծառացեալ մինարէների անհամար ծայրերով, եւ երկայնաձիգ Բարձրագոյն Դուռը, որ ժամանակաւ իրեն մօտաւոր Եւրոպայի ահ ու սարսափն էր։

Այնպէս էր այս տեղից արտաքին հեռանկարը, եւ տան ներսում ձեռները ծալած կուրծքի վրայ վեհօրէն կեցած էր նա ինքն, Մեծն Ներսէս, Հայ ազատութեան Դատի երբեմնի անվեհեր, եւ այժմ վեհերոտ ախոյեանը։ Եւ այժմ ես եւս նմանապէս էի վեհերոտ եւ շուարեալ։

— Ի՞նչ կ՚ուզես տղաս, հարցրեց նա հայրաբար։ Պատասխանեցի թէ գալիս էի Կովկա-

սից, եւ այժմ եկել էի համբուրել նրա սուրբ աջը։

Նա ժպտաց տխուր ժպիտով։ Տխուր էր եւ ձայնը։ Բայց այդ ժպիտի եւ ձայնի տխրութիւնը հաւանօրէն ծնում էր ոչ միայն իր դաւանած դատի յուսախաբութիւնից, բայց նոյնչափ եւ գուցէ աւելի այն մարմնական հիւանդութիւնից, որ լուսանկարուած էր երեսում նրա դէմքի գծերի, եւ աչքերի հայեացքների մէջ։ Եւ պարզ խօսակցութիւնից յետոյ ես հեռացայ ներքնապէս տխուր տպաւորութեան տակ։ Նրա գունատ եւ մելամաղձոտ դէմքը, սակայն, մնում էր անբաժան իմ աչքերից, եւ նրա ճնշուած հոգւոյ հնչիւնները հնչում էին իմ ականջներին, երբ վերադարձիս չառաչող շոգենաւի վրայ էի, երբ ես քայլում էի Ստամբուլի աղմկալից նեղ փողոցներով, եւ երբ Մուստաֆա փաշա խանի սենեակումս տախտակի վրայ տարածուած համեստ անկողնիս մօտ փակեցի մարմնաւոր յոգնած աչքերս եւ մտաւոր լուսափայլ աչքերիս առաջ բացուեց յետագայ երազը։

ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻԴԻ ԵՐԱԶԱՅԻՆ ՃԱՌԸ

Երկինքը թափանցիկ էր անբիծ կապոյտով: Եւ երկիրը ընդունում էր իր երեսի վրայ առաւօտեան նորածագ արեգակի աննիւթական ճառագայթների ոսկեցօղ լոյսը. Ես գտնւում էի կայսերական ամենաբարձր պալատի տափարակ տանիքի վրայ, պատնէշուած երեք ոտք բարձր ճարտարագեղ սիւնազարդ ցանկապատով, եւ տանիքը մի իսկական պարտէզ էր, ուր ծաղիկներ, վարդի եւ նարնջի ծառեր զարդարում էին գետինը աստ անդ ,եւ հանգստաւէտ աթոռներ յարակից փոքր սեղաններով, երեւում էին կտուրի չորս անկիւններում, եւ այլ կէտերում:

Ես յանկարծ տեսայ իմ մօտ կանգնած ամբողջ օրւայ տխուր մտածութեանս առարկայ տխրադէմ մեծ Հայը, եւ մեր դէմ յանդիման արձանացած մի խորհրդաւոր անձ, միջահասակ, կազմով եւ տարիքով, սեւ ասուեղէն մինչեւ ծունկերը իջնող հագուստը ծածկում էր նրա կուրծքը ամբողջովին, եւ կոճակուած մինչեւ վիզը, նա աւելի նիհար էր քան գէր, աւելի տկարակազմ քան քաջառողջ. երեսը

Թուխ էր, եւ գունատ, եւ նրա կեցուածքի մէջ չկար գինուորական յոխորտանք, անձնական գոռոզութիւն, կամ մեծութեան յաւակնութիւն, բայց պարզ եւ հեզադէմ: Անմիջապէս, ես ճանաչեցի նրան: Նա Սուլթան Աբդ-ուլ-Համիդն էր, ճիշդ այնպէս էր նաեւ եղած իմ տպաւորութիւնը, երբ եօթն օր առաջ տեսայ նրան ուրբաթօրեայ սելամլըքին, նստած իր կայսերական կառքի մէջ, բարձրանում էր զառիվերով դէպի Եըլտըզ Քէօշք, եւ ես ոչ բազմաթիւ հանդիսատեսների հետ կանգնած ճանապարհի եզերքին, լիովին տեսնում էի նրան:

Մենք, երկու հայերս, մէկը մեծ եւ նշանաւոր, միւսը փոքր եւ աննշան, խոնարհաբար, եւ ոչ ստրկաբար, ողջոյն տուինք Նորին Վեհափառութեան, եւ նա, գլխի հանդարտ յառաջաշարժ թեքումով փոխարինելով մեր ողջոյնը, բացաւ իր բերանը, եւ բարձրացրեց իր զօրաւոր ձայնը, խօսելով խորհրդաւոր խորհրդածութեամբ.

« Էրմէնի Փաթրիքի՝ Ներսէս էֆէնդի, Դու գիտես միայն մէկ խնդիր կայ, որի համար դու կարող ես այսպէս բացառապէս հրաւիրուել իմ ներկայութեան, եւ բերել քեզ հետ ձեր սերունդի նոր տեսակի խելակորոյս տգէտների նուազագոյն ցնորական այդ լակոտը, ոտքի վրայ միանաբար պատկառանքով խոնարհած, իմ առաջ, եւ իմ ետեւից գողացած

լկտաբերան յոխորտալից հայհոյանքով տո-անձն իմ: Ձեզանից մէկը արդէն հարուածուած անբուժելի հիւանդութեամբ, յամրաբար քայլում է դէպի յաւիտենական կայարանը, եւ միւսը, թէեւ խոստմնալից ապագայով, բայց իր ճառագայթալից կեանքի գահից արդէն ձգտում է ինքն իրեն դուրս մղել դէպի ինքնասպանութեան սպանդանոցը:

« Հայոց Պատրիարք Ներսէս, ես իմացել էի թէ դու տառապում էիր հիւանդութեամբ, եւ ցաւեցայ վիճակիդ, եւ դառնացայ քո ազգասէր ժողովրդեան ընթացքի դէմ: Այստեղ, իմ փառաւոր մայրաքաղաքի մէջ, ապրում են աւելի քան երկու հարիւր հազար Հայեր, որքան գիտեմ նրանց մէջ չկան ապրուստի կարօտ աղքատներ, բայց բարեկեցիկներ, եւ հարուստներ բազմաթիւ: Եւ սակայն, Դու, Ներսէս, նրանց կրօնական եւ քաղաքական պաշտեցեալ գլխաւորը, ունես մի ողորմելի հնաչէն պաշտօնատուն, նեղ փողոցների մէջ, եւ խճողուած աւելի հին տուներով, զուրկ տեսարաններից, եւ ազատաշունչ օդից, եւ այդ բարեկեցիկ հայերը ոչ իսկ մէկ խրճիթ են հայթայթել Վոսփորի ափերի կամ բլուրների վըրայ, իրենց Պատրիարքի համար, որ իր վշտի մէջ սփոփանք գտար քաղցր տեսարանների ի տես: Բայց ես խորհեցայ քո վրայ, ցաւեցայ քո վրայ, եւ շնորհեցի քեզ մի բնակարան գեղածիծաղ բարձրութեան վրայ, ուր քո մար-

մինը կարող է կազդուրուել, եւ հոգին զմայլել, տեսնել բնութեան շքեղութիւնը եւ զգալ իմ կայսերական իշխանութեան զօրութիւնը: Բայց իմ բարիքը ինչպէ՞ս մեկնեցին քեզ մօտից եւ հեռուից մոլեռանդօրէն պաշտողները: Նրանք սարսափեցին եւ հրատարակեցին թէ դու, կաշառուելով ինձանից, ձայնդ կտրել ես պահանջներից խրատունքը չես թնդացնում Եւրոպայի Մեծ Տէրութեանց ականջներին, որ նրանք առնեն ինձանից մեծամասնութեամբ մահմեդական եւ փոքրամասնութեամբ հայաբնակ իմ վիլայէթները, եւ ստեղծեն մի Հայաստան: Եւ որպէս զի լինէր կարելի կորստեան վտանգից փրկել իմ կայսրութեան այս կարեւոր կուսակալութիւնները, եւ հարկադրուեցայ կաշառել քեզ, դու որ իմ մէկ խոնարհ հպատակն ես, եւ ես որ եմ քո Տէրը եւ Թագաւորը ,ես որ վեհապանծօրէն բազմում եմ բնութեան այս հրաշագործ քաղաքի վրայ, ես որ փռում եմ իմ տիրապետական հզօր թեւերը մինչեւ Թունիզիս, Տրիպոլիտանիա, Կարթագէն, Լիբիա, Եգիպտոս, Սիւրիա, համայն Արաբիստան, Հնդկական Ովկիանոսի, եւ Պարսից Ծոցի ջրերը, Միջագէտքը, Միջերկրականի մէջտեղից մինչեւ Սեւ Ծովի գրեթէ վերջերը, եւ Բաղդադի ցածութիւնից մինչեւ Բալկանների բարձրութիւնը:

Այսպէս է իմ ծովածաւալ եւ երկրատարած աշխարհակալութիւնը:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Եւ սակա՛յն, սակա՛յն, խղճալիօրէն խակամիտ քո խելացի ազգասէրները խորհում են թէ ես խոնարհեցայ քո առաջ կաշառել քեզ, որ դու կորես ձայնդ եւ ջանքդ եւ Եւրոպայի Մեծ Պետութեանց ձեռքով առնել չտաս իմ երկիրը եւ նրանք Հայոց համար ստեղծեն մի Հայաստան: Բայց, ո՞վ են Եւրոպայի ձեր ազգի այդ մեծ բարերարները, քաղաքակրթուած կողոպտիչներ, որ մխանում են միմեանց հետ, երբ առիթ ունեն կողոպտել իմ կայսրութիւնը որպէս արին եւ այս անգամ: Անգլիա բարեկամաբար եւ խորամանկաբար կուլ տուեց Կիպրոսը, Աւստրիա յանուն քրիստոնէութեան յափշտակեց Բոսնիա եւ Հերցեգովինա, Ֆրանսա գրգռուած Հաւասարութեան, Ազատութեան եւ Եղբայրասիրութեան վսեմ գաղափարներից, իր հրացանաչէն եւ սուսերաչող հովանաւորութիւնը հաստատեց իմ ամբողջովին մահմետական Թունիսիայ վրայ. եւ Ցարի Ռուսիան իր թնդանօթների ռումբերի, եւ իր սուինների ծայրերի զօրութեամբ, եւ իր բիւրաւոր զինուորների արիւնի գնով առաւ իմ իշխանութիւնից Բաթում, Կարս եւ Արտահան, եւ ուզեց ամրանալ նաեւ Էրզրումի մէջ, պատճառելով իր սէրը իմ Հայ հպատակների պաշտպանութեան համար իմ դէմ: Բայց միւս կողոպտիչները առարկեցին թէ իրենք հաւասարապէս սիրում են իմ հպատակ Հայ ժողովրդին, եւ փափաքում են որ իրենք եւս բաժնեկից լի-

նեն իրենց սիրած հայ ազգի պաշտպանութեան գործերին, եւ այսպէս Ցարին դուրս վռնտեցին Էրզրումից, որովհետեւ նրա Էրզրումի մէջ հաստատուելը վտանգաւոր էր նրանց հաւաքական շահերին, եւ նրանց այս խաղերից յետոյ քո հայ ժողովրդի պաշտպանութեան եւ հոգածութեան խրատները եւ հոգը թողեցին վերստին իմ վրայ, խնդրելով ինձ, որ ես ժամանակ առ ժամանակ բարեհաճեմ ծանուցանել նրանց թէ ինչպէս հոգածութեամբ խնամում եմ իրենց սիրեցեալ եւ ինձ հպատակ հայ ազգին: Իսկ գալով ձեր հինգերորդ բարերար պաշտպանին, Գերմանիայ, նա իր խորախորհուրդ ծրագրով եւ ամենախորամանկ բարեկամութեամբ, նոյն իսկ Բերլինի Վեհաժողովը տակաւին չաւարտած, բանակցում էր ինձ հետ, ձեռք բերելու մենաշնորհներ հանքերու մշակութեան, երկաթուղիների շինութեան, եւ իմ կայսրութեան հարստութեան բնական աղբիւրները դարձնել իր շահագործութեան դաշտերի մէջ:

Ահա, քաղաքակիրթ Եւրոպայի մեծազօր աւազակները, որ իրենց կողոպուտներով Բերլինից վերադառնալուց շատ չանցած, արդէն սկսեցին շուների նման հաչել միմեանց վրայ, խածանել եւ բզկտել միմեանց: Եւ գերման կայսրը առաջինն էր որ պատուիրեց ինձ, մըտիկ չանէի, եւ ոեւէ բարեկարգութիւն չանէի ի նպաստ իմ հայկական գաւառներին, եւ յե-

տոյ Մոսկուի ցարը հեռուից նրա քայլերին, եւ Ֆրանսական թերթեր նուրբ քաղաքավարութեամբ կաշառք խնդրելով եւ ստանալով սկսան գովել ինձ եւ իմ բարուք կառավարութիւնը։ Այսպէս են քաղաքակրթութեան քրիստոնեայ կառավարութիւնները, եւ նրանց մամուլի կաշառակեր խմբագիրներն եւ թղթակիցները, որոց վրայ յոյս են դնում ձեր ապուշ ազգասէրները, եւ նրանց կրքերն են գրգռում, եւ պաշտպանութիւնը խնդրում իմ դէմ, իմ հայրական կառավարութեան դէմ։ Խորհեցէք թէ 1863ից իմ հպատակ հայ ժողովուրդը վայելում է Ազգային Սահմանադրութիւն եւ Երեսփոխանական ժողով, որի անդամները ընտրուած են Միջերկրական ծովի ափերէն մինչեւ Ռուսաց սահմանը բնակող իմ հայ ժողովրդեան քուէներով, ինչպէս է Ֆրանսայի Երեսփոխանական ժողովը, Անգլիոյ փառլամէնտը, եւ Ամերիկայի կոնգրէսը։ Եւ ունէք ձեր ժողովուրդը ազգայնօրէն կառավարելու բոլոր հարկաւոր ժողովները։ Ազատօրէն երգել եւ ճարտասանօրէն ամենաազգասիրական անմեղ երգեր, եւ բոցավառ ճառեր առնելու այնքան սիրահար էք, եւ որոց մէջ վնաս չեմ տեսներ, եւ որոց դէմ բնաւ հակառակ չեմ, որքան որ թունաւոր եւ թշնամական չեն դէպի իմ պետութիւնը։

Այսպէս նա պատմելով դէպքի ինձ հեգնական ժպիտով ասաց.

ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

Ով դու, ամենաողորմած Ցարի ահաւոր ձեռքից դուրս փախած նորսկանակ խառնակիչ եւ կարճատես իմաստազուրկ հայ ազգասէր, լաւ լսիր ասելիքս: Թուրքիոյ ամենամեծ ազգասէրը, մեծահամբաւ Միդհատ փաշա, եւ նրա նման ուրիշ մեծեր դաւադրաբար սպանեցին Սուլթան Ազիզին, որովհետեւ նա մերժեց տալ իր պետութեան սահմանադրական կառավարութիւն, բայց նա շնորհեց իր հայ հպատակներին ազգային սահմանադրութիւն: Ուրեմն իմ Թուրք ժողովրդից գերազանց էք, որ իմ միապետական իշխանութեան ներքեւ իրաւունք ունէք կառավարել ձեր ներքին գործերը սահմանադրական կանոններով եւ ժողովրդային քուէարկութեամբ: Ունէ՞ք միթէ ազատութեան նոյն խակ ստուերը, դուք, ձեր ռուսահայ եղբայրները իրենց ամենահպատակաւէր կայսեր իշխանութեան ներքեւ: Ի՞նչ բարեացակամութիւն, եւ բարեմտութիւն նա ունի իր հայ հպատակների ցեղի եւ կրօնի համար: Առնել նրանց ժողովրդային աղքատ եւ աւելի աղքատ եկեղեցիների ողորմելի եկամուտները եւ կալուածները, փակելու մղել նրանց դպրոցների դռները եւ անճարակ եկեղեցականների ապրուստի աղբիւրները, հետզհետէ դարձնել անկարելի հայ լեզուի սովորութիւնը նրանց բերաններում, որպէս զի հետզհետէ դարձնէ նրանց լեզուով ռուս, եւ հաւատքով եւ կրօնով ռուսադաւան:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Ինչպէ՞ս եմ ես վարւում ձեր կրօնի եւ լեզուի մասին ձեզ հետ: Բաց էք անում դպրոցներ, առանց հրաման անելու իմ կառավարութիւնից ,կազմում էք կրթական ծրագիրներ, որպէս ձեր ուսումնասիրական յաւակնոտութեան հորիզոնը թոյլատրում է ձեր ուղեղներին: Ազատ էք կազմել զանազան ուսումնասէր ընկերութիւններ, հանգանակութիւններ անել, բանալ դպրոցներ Կայսրութեանս ո՞ր մասերում կամենաք կրթութեան կարօտ հայ գիւղերի համար: Եւ ես անում եմ ձեր այպիսի Միացեալ Ընկերութեան տարեկան հանդէսը իմ բարձր հովանաւորութեան ներքեւ, որին եւ նպաստում եմ վեհանձն նուիրատւութեամբ, նաեւ Հայ Տիկնանց Դպրոցասէր Ընկերութեան, որոց դպրոցները կանգուն են ձեր պատմական Հայաստանի հողի վրայ եւ կըրթութեան լոյս սփռում երկսեռ հայ զաւակների մտքերում: Բայց Մոսկովի ցարը ոչ իր արթնութեան ժամերում եւ ոչ իսկ իր երազներում զգում է փափաք՝ տալ գէթ մէկ կոպէկ եւ գործում է ընդհակառակը: Եւ սակայն նրա հպատակ ապուշ հայ ուսեալները չեն նկատում նրա չարիքը իրենց ազգին, եւ չեն տեսնում իմ այս բարիքը որ գործում եմ եւ թոյլատրում նրանց ազգակիցներին իմ հողի վրայ: Նմանապէս, ես իմ օրինակով ամաչեցնում, եւ քաջալերում եմ ձեր դրամապաշտ հարուստներին, առատախօս ազգասէրներին, եւ ձեռնփակ ժը-

լաների ուշադրութիւնը դէպի իրենց ազգային օգտակար հիւանդանոցը եւ անշուք Պատրիարքարանը, որոց նոյնպէս չեմ մոռանում իմ տարեկան նուիրատուութեանց մէջ:

Ասա՛ ինձ, Ներսէս, դու, եւ քո հայ ժողովուրդդ, արդեօք հասկանո՞ւմ էք այն մեծ պատիւը, որ ես շնորհում եմ քեզ ամէն տարի իմ գահակալութեան տարեդարձի օրը, երբ մեծ եւ փոքր պետութեանց դեսպանները գալիս են իմ ոտքը, եւ շնորհաւորում ինձ, նմանապէս եւ դու ես գալիս եւ ընդունում իմ փառապանծ գահի առաջ, որպէս թէ դու լինէիր մի յատուկ պետութեան դեսպան կամ ներկայացուցիչ:

Արդ, քանի՞ անգամ նորին ամենավեհափառութիւն մեծ Ցարը բարեհաճում է տեսնել ձեր Ամենայն Հայոց վեհափառ կոչուած Կաթողիկոսի սուրբ երեսը: Միայն մէկ անգամ, այն եւս կաթողիկոս ընտրուելուց յետոյ, երբ որպէս անխուսափելի պարտականութիւն ըստիպուած էր հարաւից ճանապարհորդել հիւսիս բազմաթիւ օրեր, որպէս զի խոնարհէր սուրբ Ցարի առաջ, երդուէր հաւատարիմ հըպատակութիւն, եւ համբուրէր ազատութեան բողոքի համար տանջուած ռուս երիտասարդների տանջանքներով սեւացած, եւ նրանց անմեղ արիւնով կարմրած ձեռքը: Իմ կառավարութիւնը պարզ աքսորով պատժեց միայն մէկ օրինազանց, սանձարձակ դրչով հայ խմբա-

գէր ,Գէորգ Այվազեան, գրկելով նրան Միտիլլի կղզին, որ նրա ջերմահար գլուխը զովանար Միջերկրականի մեղմաշունչ զեփիւռի փայփայումից: Եւ սակայն, այստեղ ձեր սահմանադրական ազատութեամբ, եւ այնտեղ Կովկասում, բռնակալական թոյլտուութեամբ, երկու կողմերի հայերը իրենց սուր գրիչների շարժումներով աղմուկ հանեցին իմ կառավարութեան դէմ՝ այս խմբագրի համար, որ օդ էր ծծում իր փտած թոքերի առողջութեան համար: Եթէ այս ծանր օրինազանցը լինէր Թիֆլիսի խմբագիր, ոչ մի ռուսահայ գրիչ պիտի յանդգնէր սպառել իր սեւ մելանը՝ նրա պաշտպանութեան համար, եւ նա ինքն կամ պիտի բարձրանար կախաղանի վրայ, կամ գետին պիտի թաւալէր կառափնեայ գնդակների հարուածների տակ, եւ կամ սառնամանի Սիբերիայում պիտի դառնար սառոյց, ինչպէս Ղովտի կինը, միայն թէ մէկը երկնային Աստուծոյ հրամանաւ եւ միւսը երկրային Ցարի հրամանաւ:

Այս՛ ո՜վ Պատրիարք, իմ երկրի Հայոց, եւ, դու, մեծամէտ, երազագնոր հայ ազգ, ասաի, լաւ հասկացէք, թէ իմ պետութիւնը իր բոլոր թերութեամբ, իր ոչ լիովին բարեկարգ կառավարութեան անիւով, իր սակաւին յետամնաց, եւ նահապետական կեանքով եւ պայմաններով, այնուամենայնիւ աւելի լաւ տեղն է ուր հայ ժողովուրդը կարող է ապրել

ապահով, առանց կորցնելու իր հայ անունը, եւ լեզուն, եւ ապագային հետզհետէ մեծանալու, եւ զօրանալու իր Թուրք հայրենակիցներու հետ միասին: Ձեր ռուսահայ գրչի խելացինները արդեօք պիտի խորհի՞ն եւ խորհրդածե՞ն այս խօսքերիս վրայ:

Լաւ իմացէք, որ ես ատելութեամբ ատում եմ Եւրոպայի մեծ եւ անիծեալ տէրութիւններին, թշնամիներ իմ երկրի գոյութեան, եւ վա՜յ նրանց որ յոյս պիտի դնեն այս թշնամիներիս վրայ, եւ թշնամական երես դարձնեն ինձ դէմ: Յայնժամ պիտի դառնամ կատաղի, որպէս եղան իմ առաջին նախնիքները, եւ այնպիսիք իմ բարկութեան առաջ, պիտի պատառուին, որպէս անօգնական մարդը անտառի կատաղի առիւծի առաջ: Արդ, դուք մի յուսացէք այդ տէրութիւններից: Ես առիթ տուի ձեզ, որ տեսնէիք ապացոյցը:

Յորմէ հետէ Սպիտակ Արջն Հիւսիսային ոսկաքայլ շարժումներով իջաւ հարաւային աշխարհը, եւ հաստատեց իր թաւամազ աջակողմեան թաթերը Էլբրուսի ծայրի վրայ, եւ իր ձախակողմեան ծանր թաթերը սրբազան Արարատի գլուխի վրայ ,Նոյեան տապանի կողքին, նա անկեց իր երկու ականջները, եւ քիթը դէպի արեւմուտք, եւ յայնմհետէ նա պտտեցնում է իր սառցային պաղ աչքերը Տրապիզոնից Էրզրում, Բայազիտ եւ Վան, եւ

կուլ տալ ձեր յոյժ սիրեցեալ Հայաստանի վեց նահանգները, եւ այդ բարձրադիր տեղերից ցատկել Տաւրոսի վրայով Միջերկրական ծովի զովաշունչ ջրերի մէջ, որի շուրջ թաղուել են հին քաղաքակրթութիւնները, եւ նրանց գերեզմանների վրայ վաղուց ծնուել եւ զօրացել են նորերը, եւ նա կամենում է չափել իր քաղաքակրթութեան զօրութիւնը, եւ նրանք չեն կամենում ոչ նրա քաղաքակրթութեան եւ ոչ նրա դրացիութեան սէրը: Բայց ես անկարող լինելով բաժանուել նրա աղէտաւոր հարեւանութիւնից, դատապարտուած եմ կրել չարիքը որպէս կրեցի մի քանի տարի առաջ, 1878ին, երբ իմ երկրի մի պատուական պատառը կլանելուց յետոյ, նա կամենում էր կլանել նաեւ իմ թանկագին Էրզրումի նահանգը, որպէս զի այնտեղից իր խեղդիչ թաթերով դուրգուրանօք եւ փայփայանօք պաշտպանէր իր սիրեցեալ Հայ ազգը ինձ դէմ: Ես որ իմ նախնեաց ժամանակից տրուել է եւ տուել եմ ամէն ազգային ազատութիւն ձեր ազգին, եւ նա որ ամէն օր խեղդել է ամէն ազատութեան ձայն ձեր ազգի կոկորդից:

Բայց ես չէի կարող որ Էրզրումն եւս վիճակուէր Կարսի չար բաղդին: Ամենայն իմաստութեամբ իմ իմաստուն գաղափարները սերմանել տուի ձեր դիւրընկալ սրտերում, եւ ազգային անկախութեան ծիլերը սկսեցին բարձրանալ իմ մայրաքաղաքի թերթերի էջերում,

եւ Հայկական փարլամենթի անդամների հաւտարական բերաններում եւ եղաւ ոգեւորիչ խօսակցութեան, եւ խորհրդակցութեան առարկայ, սկսեալ քեզանից, Ներսէս Պատրիարք, մինչեւ իմ յետին հայ հպատակը: Ես սանձ չը դրի ձեր լեզուներում, որովհետեւ ես ստեղծեցի ձեր այդ վիճակը, ինչ որ իբրեւ ձեր վեհապետը իրաւունք ունէի, եւ կարող էի սանձել պատիժներով եւ բանտարկութեամբ, եւ ոչ մէկ մեծ պետութիւն կարող էր եւ իրաւունք կարող էր ունենալ արգիլել ինձ: Ես հրամայեցի իմ կառավարութեան տալ դիւանագիտական անարգել անցագիր ձեր քաղաքագիտական պատգամաւոր Հայ ժողովրդական Խրիմեան մեծ Հայրիկին, որ ազատօրէն դուրս երթար իմ մայրաքաղաքից, բեռնաւորուած բողոքագրերի պարկերով իմ կառավարութեան անկարգութեան, իմ պաշտօնեաների կաշառակերութեան, իմ դատաւորների անարդարութեան իմ հայ հպատակների դէմ, զրկանքների եւ հալածանքների եւ բանար այդ պարկերը մեծ տէրութեանց անձնամոլ եւ շահապաշտ հպատակների հանրային կարծիքին, եւ նրանց շահախնդիր կառավարողների անխիղճ բարեխղճութեան, նրանց Բերլինի Վեհաժողովի առջեւ: Վա՛յ ձեր տխմարամիտ խելացիներին, որ իրենց յոյսը դրին քաղաքակրթութեան սոյն աւազակների վրայ: Եւ վա՛յ ձեր ազգին, եթէ նրա նորաբոյս ազգասէրները

գինովնան եւ կուրանան նոյն ակնկալութեամբ: Ես յատկապէս թոյլատրեցի ձեզ այս ազատ շարժումները, որ փորձով տեսնէիք եւ համոզուէիք Եւրոպայի վրայ յոյս դնելու յիմարութեանը:

Եւ տեսաք: Եւ մի յիմարանաք, միանգամայն փորձել վերստին, զի այդպիսի փորձը պիտի վերջանայ իմ հայ ժողովրդեան մահով, եւ անհետացումով: Ի՞նչ շնորհեց ձեզ բարեսիրտ Եւրոպան: Իրենց աթոռակից Թանձրամորթին այդ մեծերը մերժեցին որ նա ստանձնէր պատուական Հայոց պաշտպանութեան ցանկալի պաշտօնը ,եւ արտաքսեցին նրան իր գլխաւորեալ գլխարանից, եւ այդ պաշտօնը թողեցին ինձ, եւ վստահեցան իմ ղեկավարութեան, եւ ձեր պատուիրակին առանց երեսը տեսնելու, մի ապառաժի ձեռքով տուին մի անպէտք ոսկեզարդ թուղթ վրան գրուած 61րդ յօդուած, մի ունայնութիւն, որ պիտի լցնէ ձեր Ցարահպատակ հայ մելանատէրների դատարկ ուղեղները հայրենասիրական վիպագրութեան եւ բանաստեղծութեան շողացող ըղձացումներով, որոց գոլորշիացող կրակոտ կաթիլները արդէն սկսում են կաթիլ պատրաստակամ գունաւոր երեւակայութեանց վըրայ:

Մեծ Պետութեանց համար կարեւորութիւն չունի, եթէ Հայ ազգ լինի, կամ չ՚լինի աշխարհում: Ահա, տալիս եմ քեզ, Ներսէս,

այս թղթի վրայ գրուած իմ գահիս Անգլիական գեսպան Սըր Հէնրի Լայարդի մի գիրը, ուղղած իւր մեծաւորին, Մեծն Բրիտանիոյ նախարարապետ Գլադստոնին: Այս այն Լայարդն է որ իւր իմաստութեան լոյսով երեսուն եւ հինգ տարի առաջ փնտռեց եւ գտաւ մեծահամբաւ Նինուէ քաղաքը, որ կործանուեց գետնին հաւասար, եւ անհետացաւ ձեր քրիստոնէական թուականից 605 տարիներ առաջ:

Այս խորատես եւ խելացի խոշորակազմ մարդը, 32 տարի յետոյ, որպէս գեսպան Անգլիոյ եւ քաջահմուտ քաղաքագէտ գուշակում է այս գրով թէ՝ ի՞նչ պիտի լինի իմ եւ քո համայն Հայ ժողովրդեան ճակատագիրը, եթէ նա խախտէ իւր դարաւոր հաւատարմութիւնը հանդէպ իմ մեծայաղթ եւ յաւիտեանս անխախտ փառապանծ Գահին: Ուստի, առէք այս գիրը, տպեցէք նրանից միլիոնաւոր օրինակներ, եւ ղրկեցէք ամէն Հայ եկեղեցին, դպրոցի եւ տուն, եւ տուէք ամէն ցարահպատակ հայ խմբագրի, ուսուցչի եւ ուսեալի, որ չըրջանակի մէջ դնեն իրենց գրասեղանների առաջ, կախեն իրենց տան պատերից, եւ իրենց վզերից, եւ թող անեն իրենց «Հայր Մեր»ի պէս եւ փոխանակ «Հայր Մեր»ի, կարդան այս ամէն առաւօտ, եւ ամէն երեկոյ, որպէս իրենց ազգային փրկութեան սուրբ աղօթք: Այս պէտք է յատկապէս Կովկասի հայոց գրագէտների համար, որովհետեւ նրանցից է, որ չա-

րէքի ոգին բարձրացնում է իր աշխատաւոր գը–լուխը, եւ իր լեզուի թոյնով թունաւորում է դիւրահաւանների սրտերն եւ զգացմունքը իմ եւ իմ կառավարութեան դէմ։ Եթէ Լայարդի խրատը գտնայ ձայն բարբառոյ յանապատի, եւ չարեքի ոգին յաղթանակէ, յայնժամ ի դժ–բաղդութիւն Թըքահայ ժողովրդեան, պիտի կատարուի Լայարդի մարգարէութիւնը։ Ինչ–պէս Հերովդէս հրամայեց կոտորել Բեթղեհե–մի երեք տարեկանից ցած բոլոր անմեղ մա–նուկները, որպէս զի նրանց հետ ոչնչանար վտանգաւոր Յովսէփի որդին Յիսուս, ես եւս պիտի հրամայեմ անհունօրէն աւելի ահռելին ու զարհուրելին։ Ինչպէս մշակը իր սուր ման–գաղով հնձում է հասուն ցորենի խոտ ու խոտ ցողունները այնպէս եւ ես իմ անսահման բար–կութեան երկսայրի սուրով հնձել պիտի տամ, ուր եւ կան իմ կայսրութեան մէջ, հայ կեան–քի ցողուններ։ Ամենանոր նորածինից, մինչեւ ամենամահամերձ ծերունին։

Նինուէի հետքը գտնուեց 2500 տարի յե–տոյ, բայց ապագայ Լայարդներ եթէ փնտռեն իրենց իմաստութեան լոյսով պիտի չգտնեն Հայ ցեղի չոր ոսկոր իմ կայսրութեան ոչ գետ–նի վրայ, եւ ոչ հողի տակում։ Եւ այսպէս սա–կաւաթիւ մեղաւորների հետ պիտի բնաջնջւին բիւրաւոր անմեղները։

Ձեր ռուսահայ մեծատանները, դրդուած դատարկամիտ ազգասիրութիւնից, երբ այդ–

պէս անարգում են ինձ, եւ իմ իշխանութիւնը, եւ թշնամացնում իմ հայ հպատակներին իմ դէմ, եւ իմ ատելութիւնը հայ անուան դէմ, Նրանք չեն մոռանում եւ չեն կարդում իրենց ազգի հին պատմութիւնը, եւ սարսափելի աղէտները որ իրենց ժողովուրդները կրել են մահմետական մեծագոր բռնակալների բարբարոսութիւնից: Այդ բռնակալները մեռած են դարեր առաջ, բայց նրանց բարբարոսութեան ոգին մնում է անմեռ ամէն մահմետական տիրապետի մէջ: Բուղա, Էրթողլուր, Ալփասլան, Լէնկթիմուր, Ճինկիզխան, որ արեան լիճերի մէջ լողացրին հայ ժողովրդի սպանուած դիակները:

Լէնկթիմուրի եւ մահմետականութեան մեռած փառքերի կատաղի արիւնը հոսում է միաժամանակ իմ այժմեան բարեգութ երակներում: Եւ երբ կատաղութիւնս պայթի, կենդանի մնացած հայերը ողբան, կեղծաւոր Եւրոպան սարսափի, բնաւ հոգս չէ թէ ինձ պիտի անուանեն Կարմիր Սուլթան, կամ Մեծ Եղեռնագործ: Ես պիտի մնամ իմ գահի վրայ, որպէս եմ այժմ, եւ իմ մահմետական եւ Անգլիոյ մահմետական հպատակները աւելի փառաբանեն ինձ, եւ հայութեան ճափառական բեկորները թող հայհոյեն եւ անիծեն ինձ որքան ուզեն: »:

Ծո՛ Պետրոս, այդ ինչո՞ւ ես լալիս, ինչո՞ւ

ես դողում, ի՞նչ ես տեսնում երազումդ, որ այդպէս սարսափահարուել ես»:

Խօսողը Միհրանն էր: Բայց Սուլթան Համիդի ձայնը դեռ հնչում էր ահարկու, տալով արձագանգներ, որ սասանեցնում էին համայն էութիւնս: Սիրտս տրոփում էր, ջիղերս ցընցըւում էին, եւ մարմինս պատուած էր քրտինքի արտասուքներով:

«Այո, տեսնեմ, այժմ որ աչքերդ բաց են, եւ խելքդ գլուխդ, տես, այդ ո՞ր սատանայ դահիճն էր, որ ուզում էր քեզ խեղդել կամ կախել»:

—Այսպիսի սարսափ պիտի չազդէր իմ վըրայ, եթէ իմ տեսածս լինէր Բեհեզզերուզը, կամ դահճապետը: Բայց իմ տեսածս այս մայրաքաղաքի վեհափառ արքայ Սուլթանն էր, որի առաջ պատկառանքով կանգնած էր Ներսէս Պատրիարքը, եւ ես անմեհեր կանգնած նրա կողքին: Նախ, նա երեւեց աչքերով շրջահայեաց, երեսով լըջախոհ, խօսակցութեամբ մեղմաբարբառ, եւ ձայնով անվրդով, եւ կեցուածքով ուղիղ, անշարժ որպէս արձան ըղգեստաւորուած: Բայց որքան յառաջանում էր այլափոխւում էր աւելի եւ աւելի: Կարծես կայծակներ էին փայլատակում աչքերից, թոյն էր թափւում երեսից, շանթեր էին որոտում կոկորդից, եւ զարհուրանքի բոցեր բարձրանում էին նրա կարմիր լեզուից, եւ ձայնը մռնչում էր՝ կեդրոնական Աֆրիկէի

խաւար անտառներում անօթութիւնից գալարւող օրհասական առիւծի նման. եւ նրա մարմինը ստացել էր այնպիսի մի ձեւ, որ նմանում էր վագրի, պատրաստ ցատկել եւ պատառ պատառ անել մեզ, եւ ահռելի աչքերը ուղղած Ներսէսի վրայ, եւ աջ ցուցամատը շարժելով դէպի ինձ, եւ մէկ ոտը տրոփելով գետնին՝ փրփրալից կատաղութեամբ թնդացնում էր օդը գոչելով թէ՝ իր գահին թշնամի մէկ յանցաւոր հայ անհատի համար պիտի փճացնէր իր տան եւ հարիւր հազար անմեղ հայ հպատակներին, այնպէս սարսափելի, որ նրանց ոչ իսկ հետքերը պիտի երեւէին, եւ գտնուէին նրանց ծնուած եւ ապրած հողի վրայ. եւ հողի տակ: Երազս զարհուրելի էր, թէեւ երազ, բայց որքան յանչափս զարհուրելի պիտի լինի այն, եթէ դառնայ իրականութիւն:

—Պետրէ ջա՛ն, նորին վեհափառութիւնը երեւի երազումը կարդացել է մեր Գամառ Քաթիպայի ոտանաւորները եւ Րաֆֆիի վէպերը, եւ գայրոյթից իր թոյնը թափեց ձեր վրայ քո երազում: Ինչպէս որ այդ գրուածները որպէս բանաստեղծութիւն եւ վիպասանութիւն պիտի մնան թուղթի վրայ, այնպէս եւ քո երազը պիտի մնայ որպէս երազ, եւ մեր Թուրքիոյ ժողովուրդը որ դարերով թէեւ անբաղդ, բայց անկորուստ կարողացել է ապրել Օսմանեան երբեմն ծանր, եւ երբեմն թեթեւ լուծի տակ, անտարակոյս այսուհետեւ եւս պիտի կարո-

ղանայ շարունակել ապրել լաւագոյն յոյսերի երազներով: Վաղը մեր Ազգային Սահմանադրութեան Տարեդարձն է, պիտի տանեմ քեզ, որ տեսնես այդ տարեդարձի տօնախմբութիւնը, եւ ինձ հաւատաս թէ մեր ազգային ազատութեան յոյսերի երազները իրականութեան ճանապարհի վրայ են: Այդ ազգային տօնախմբութիւնը որ պիտի տեսնես, կատարւում է ոչ միայն այստեղ, Կ. Պոլսում, բայց նաեւ Կայսրութեան ամէն հայաբնակ քաղաքներում»:

ՏՕՆԱԽՄԲՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Հետեւեալ առաւօտ ես մտայ Միհրանի սենեակը, ուր գտայ նրա սենեկակից եւ հայրենակից վայելուչ մի երիտասարդ Գրիգոր անուն, իրաւագիտութեան թէ՞ բժշկութեան ուսանող Բէյրութի մասնագիտարանից, որ նա անուանեց Համալսարան Բէյրութի: Երկուսն եւս հագնուած էին իրենց լաւագոյն հագուստներով, եւ կուրծքերը կպցուած գունաւոր ժապաւէնիկներով:

«Այսօր ազգային մեծ տօն է մեզ համար, ուստի եւ զարդարուած ենք ըստ այնմ: Դուք ալ պիտի տեսնէք թէ արդարեւ ազգային մեծ տօն է, եւ լցնում է մեզ ցնծութեամբ, եւ ապագայ մեծ յոյսերով, ասեց իրաւագիտութեան ժպտուն ուսանողը:

Իմ լաւագոյն հագուստն այն էր ինչ որ կար իմ վրայ ,եւ նրա վրայ միայն կարող էի աւե-

լացնել գունաւոր ժապաւէնի կտորը, որով Միհրան իբրեւ Սահմանադրութեան շքանշանը կպցրեց կուրծքիս: Եւ դուրս ելանք սենեակից եւ խանից, եւ նեղ փողոցներով, եւ Թրքական խանութների եւ մարդոց միջով քայլելով, յառաջացանք դէպի Սիրքէճի երկաթուղիի կայարանը, մի վայր եւ տարածութիւն, ուր աւելի քան այլ ուրեք, հին դարերում շարժւում էին Բիւզանդական կայսրերը՝ շրջապատուած իրենց աւագանիներով եւ զօրավարներով: Կայարանը պզտիկ շէնք էր, ներսը եւ դուրսը զարդարուած էր հայազգի մարզերով, երիտասարդ եւ տարեց, եւ եկած Ոսկեղջիւրի երկուստէք կողերից, եւ Ղալաթիոյ ստորոտներից, եւ Պերայի մօտաւոր եւ հեռաւոր բարձրերից:

Այդ օր երկաթուղիի ընկերութիւնը անօրինել էր սովորականից աւելի գնացքներ մինչեւ Եդի Գուլէ, այն է պատմական Եօթն Աշտարակները, որ մայրաքաղաքի վերջն է, եւ որ մօտ է Հայոց Սուրբ Փրկչի Հիւանդանոցին: Մենք մտանք կառքերը եւ գնացքը դանդաղօրէն շարժուեց հին Բիւզանդիոնի ստորին մասերով, եւ Մարմարա ծովի ափերով յառաջացանք եւ կանգ առանք բազմահայ Կէտիկ Փաշա քաղաքամասի կայանում, ուր Ենի Գափու, ուր էր Հայոց Պատրիարքարանը եւ յետոյ երեւելի Սամաթիոյ մասը, ուր հայ բնակիչները յոյժ բազմաթիւ էին եւ նշանաւոր որպէս ձկնորսներ, կարիճներ եւ հայհոյիչներ:

ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

Երջանկութեան զգացումներով սրտագեղ ուխտաւորները ծածանում էին դրօշակներ՝ կառքերի լուսամուտներից, եւ երգում էին Ազգային Սահմանադրութեան փառաբանութեան երգեր, եւ կայարաններում սպասողներ շտապում էին միանալ նրանց հետ։ Իմ հոգին զըւարճանում էր այս զուարթաբեր տեսարանի ազատաշունչ քաղցրութիւնից, եւ իմ մտածումը շրջում էր այն ցանկութիւնների շուրջ, որոցմով մենք կովկասածին կրթութեամբ ոգեւորեալ պատանիներ եւ նորահաս երիտասարդներ երազում էինք այս ցնծացող հայ մարդկութեան ազատութիւնը՝ չար Սուլթանի լուծից։

«Արթնցիր Մուկուկցի, այս մեր Սամպոլցիների այս ուխտագնացութեան միակ ճանապարհը չէ, ասեց Գրիգոր, բերկրութեամբ։ Կայ անդին ծովի ճանապարհի տեսարանը, որ դու եւ մենք չենք տեսնում։ Վոսփորաբնակ հայ եղբայրներ ընկերաբար վարձած են Շիրքէթի Խայրիէ Թուրք շոգենաւային ընկերութեան մի նաւը, որ զարդարուած դրօշակներով եւ մեզ նման հայորդիներ, սկսեալ Սեւ ծովի մօտակայ Ենի Մահալլէ եւ յետագայ Վոսփորեան երկու կողմերի գիւղերից կը մտնեն նաւի վրայ, եւ սագի խենթ հայերն են, որ երգում ու նուագում են տօնելու իրենց Սահմանադրութեան տարեդարձը, երգել պարել, ճառերով փառաւորել իրենց սահմանադրական

ազատութիւնը եւ առանց իմ հրամանին, բայց կամովին. նրանք իրենց բոցավառ ատենաբանութեանց պերճալից եւ շքեղ բառերով բարձրացնում են ինձ մինչեւ եօթներորդ երկինքը, թէեւ այդ Սահմանադրութիւնը Սուլթան Ազիզը տուեց եւ ոչ ես, բայց իմ կամքից կախւած է պահել կամ ջնջել: Անվնաս ազգասիրութիւն է, թող երգեն, պար գան նրա շուրջ որքան կ'ուզենան».

Ես ապահով եմ Սուլթանը այսպէս է խորհում մեր այս տօնախմբութեան մասին եւ այն փառաբանութիւնը որ մեր կոկորդալից ճառերում այնքան շռայլօրէն թափում ենք նրա կայսերական գահի առաջ, պիտի տեսնես երբ հասնենք հանդիսավայրը»:

Իջել էինք երկաթուղիից, եւ քայլում էինք բազմութեան հետ ցրուած բաց տարածութեան միջով դէպի հանդիսավայրը՝ Ազգային Հիւանդանոցի պարտէզը:

Առաջին եւ վերջին անգամ եղայ այդ տեղում եւ յիշողութիւնս փոքր ինչ որոշ է նրա երեւոյթներով եւ անորոշ՝ Հիւանդանոցի ընդհանուր երեւոյթի, բայց աւելի անորոշ նրա ներքին մանրամասնութեան վերաբերմամբ: Շէնքը լայն էր եւ ընդարձակ, եւ շուրջը ազատ եւ առանց աների, շէնքի եւ պարտէզի միջեւ կար լայն ճանապարհ լի շարժուն ամբոխով: Դրօշակներ զարդարում էին պարտէզը ամբողջ երկարութեամբ, եւ նմանապէս պարտէզի ծա-

ռերը։ Այս ու այն ուղղութեամբ կլոր սեղաններ երեւում էին ցիր ու ցան, որոնք գլխաւորապէս իրենց վրայ կրում էին պատրաստի անհեղուկ ուտելիքներ, օղի եւ գինի։ Եւ պարահէգի մէջտեղում մի համեստ բեմ ճառախօսների համար։ Օշարակավաճառներ իրենց խոշոր ապակեայ անօթների մէջ ունենալով գոյնզգոյն օշարակներ, լցնում էին օդը իրենց բացականչութիւններով, եւ հանդխաղակններ իրենց զըւարթ ձայներով եւ սրտառուխ ծիծաղներով, եւ երբեմն երբեմն մանուկի կամ խմբովին երգեցողութեամբ։

Ամբողջ ժամանակ մարդիկ շարժման մէջ էին ,պարահէգի մէջ՝ այցելելով Հիւանդանոցի ներքին բակերը եւ բաժանմունքները, եւ անօթի դրացողները ժամանակ անժամանակ յագեցնում էին իրենց ստամոքսը կամ ծարաւի կոկորդը։

Եկաւ ատենաբանութեանց ժամը ,երբ հռետորները ցոյց պիտի տային իրենց խելքի իմաստութիւնը եւ լեզուի շնորհքը։ Լուսաւորուած ազգասիրական զգացումների շողերով։ Բեմի ճակատում կախուած էր Սուլթան Համիդի պատկերը, մէկ կողմի վրայ Ներսէս Պատրիարքի եւ միւս կողմի վրայ Գազազ Արթին Ամիրայի, նախկին գաւառ ազգային մեծ բարերարը, որ հիմնեց Մայր Եկեղեցին, Պատրիարքարանը, եւ երեւի այդ հիւանդանոցը. ժողովուրդը բոլորած մօտից, եւ ցրուած հեռ-

ւում, լսում էին միմեանց հետեւող հառաչ-ներին, նրանց ձայները հնչում էին օդի մէջ, եւ ունկնդիրները ծափահարում էին եռանդա-գին, եւ կոկորդալից աղաղակում էին, «Կեցցէ Սուլթան Համիդ Խան, կեցցէ մեծ ազգասէրը, Ներսէս Վարժապետեան»:

×

Կէս գիշերը վաղուց էր անցել, եւ ես տա-կաւին անքուն թաւալում էի իմ փոքրիկ սեն-եակի աղքատ անկողնի մէջ, մէկ կողմից մը-տածում էի ցերեկուան տեսարանի եւ նրա մէջ երջանկօրէն շարժուող հայ բազմութեան մա-սին, եւ նրանց ցնծալից «Կեցցէ Սուլթան Հա-միդ» աղաղակները արձագանքում էին ականջ-ներիս, եւ միւս կողմից տեսնում էի երազիս պատկերը, կանգնած մեծ Պատրիարքի հետ Ըլդըզի տանիքի վրայ, եւ Սուլթանի հան-դէպ, որ դիւային աչքերով եւ օձային լեզուով փշշում էր, «Ես այնպէս պիտի ոչնչացնեմ իմ հայ հպատակներիս, որ նրանց ոսկորներն ան-գամ չպիտի գտնուին ոչ գետնի վրայ եւ ոչ գետնի տակ»:

Ի տես այս երեւոյթին, ես մտածում էի թէ միթէ՞ այս ինքնակալը մի օր արդեօք կա-րող էր դառնալ մի նոր Թըմերլանգ իւր հայ հպատակների գլխին:

Հեռաւոր դարերում նրա նախահայրերը

արշաւեցին Կենտրոնական Ասիայից դէպի Արեւմուտք, երկար մազերով, կանանց նման, բռնած սուրեր իրենց աջ ու ձախ ձեռներում, մտան Հայաստանի հողի վրայ, եւ վայրագ, եւ կատաղաբար կռուելով եւ կոտորելով անցան Փոքր Ասիա, տիրեցին եւ հաստատուեցան այնտեղ, հետզհետէ ստեղծելով աշխարհի ամենամեծ կայսրութիւններից մէկը: Նրանցից առնուազն քանի մը դար յետոյ, միեւնոյն տեղի վրայ, 1350ի միջոցներին, այդ հեռաւոր ցեղի մնացեալ սերունդից ծնեց Լէնկ Թիմուր, որ չարագործութեան ձեռնարկելուց առաջ մի բարի ինքնակալ էր, բայց երբ սկսեց չարագործութեան, նա դարձաւ մարդկութեան ամենազարհուրելի չարագործը: Նա արշաւեց Չինաստան, հասաւ մինչեւ Մոսկուա, տիրեց Հնդկաստանին, սուր եւ հուր տարածեց Պարսկաստանում. երկու հազար մարդիկ ողջ ողջ ծեփելով շարեց միմեանց կողքին, եւ միմեանց գլխին եւ շինեց մի բարձր աշտարակ: Եւ մի այլ տեղում քսան հազար մարդիկ գլխատեց, եւ նրանց գլուխներից կազմեց մի մեծ բլուր, որ մարդիկ տեսնէին եւ սարսափէին նրա զօրութիւնից, եւ մի ուրիշ տեղում հարիւր եօթանասուն հազար դիակներով ծածկեց երկիրը:

Չարագործութեան այսպիսի կատարելագործութիւնից յետոյ, նա իր երեսը դարձրեց դէպի Հայաստան. Օսմանեան Կայսրութեան

մտան էր յաճախ, թէ նա ի՜նչ գործեց Հայաստանում, այդ թողնում եմ ժամանակի հայ պատմագիրներին, բայց նրա բուն նպատակն էր կործանել Օսմանեան Կայսրութիւնը: Հասաւ Անգորա եւ այնտեղ մի ահեղ եւ արիւնալից պատերազմի մէջ խորտակեց Սուլթան Բայազիտի բանակը, եւ բռնեց նրան, բանտարկեց եւ վերջացրեց նրան չարաչար մահով, եւ վերադարձաւ, անցնելով Հայաստանի եւ նրա ժողովրդեան կեանքի վրայով: Բայց այդ Հայաստանի հայ ժողովուրդն այնու ամենայնիւ չոչնչացաւ, եւ շարունակեց իր գոյութիւնը իր հողի վրայ: Եւ ես մտածում էի, արդեօք Սուլթան Համիդ պիտի դառնա՞ր մի նոր Լէնգ-Թիմուր իր հայ ժողովրդի դէմ, ինչպէս արտայայտում էին նրա ահռելի աչքերը:

Զարմանալի չէ որ այդ երազը այսպէս խոր տպաւորութիւն գործեց իմ վրայ: Կան երազներ որ տեսել եմ քառասուն եւ նոյն իսկ յիսուն եւ աւելի տարիներ առաջ, ինչպէս որ տեսայ Կ. Պոլսի բանտում, եւ Աքեայի բերդում, որոց տպաւորութիւնը մնում է, եւ կարող եմ պատմել որպէս երէկուայ մի երազ: Այդ երազն էր գուցէ Կ. Պոլսի իմ առաջին օրերի մեծ դէպքերից մէկը, կամ տեսածներիցս մէկը: Սուլթան Համիդ, Ներսէս Պատրիարք, եւ Սահմանադրութեան հանդէսի տեսարանները, որոնք ունենալով կապ իմ յուզող գաղափարների եւ յեղյեղուկ զգացումների հետ, բնականաբար

յեղաշրջում էին մտածութեան ուղղութիւն-ները:

Սահմանադրութիւնը 1863ին Հայ ժողովուրդին տրուած մի ընդարձակ ազատութիւն էր: Նրա մայիսեան տարեդարձը այնքան ժողովրդային ոգեւորութեամբ, փառքով պարծանքով եւ հանդէսով տօնելու շարժառիթը ես կարողացայ նշմարել եւ ըմբռնել աստիճանաբար: Այն պարունակում էր ազգային ինքնավարութեան բոլոր հիմնական տարրերը: Կ. Պոլսի Պատրիարքը ընդհանուր Թրքահայոց ինչպէս կրօնական, նոյնպէս եւ քաղաքական պաշտօնական ներկայացուցիչն էր: Նա ունէր 42 եկեղեցական ներկայացուցիչներ, առաջնորդներ եւ յաջորդներ, գլխաւոր հայաբնակ գաւառներում, ընտրուած ժողովրդից եւ հաստատուած Պատրիարքից, եւ կրօնական եւ քաղաքական իրաւասութիւններով. իրենց ժողովրդի ոեւէ քաղաքային զրկանքի եւ գանգատի համար իրաւունք ունէին խնդիրը մատուցանել տեղական կառավարութեան, եւ անդամ էին իրենց նահանգների կամ գաւառների կառավարական ժողովներին, եւ ամէն ինչ կարող էին տեղեկագրել Պատրիարքին, եւ սա իր կարգին անձամբ կարող էր ներկայացնել Արտաքին Գործոց Նախարարին կամ Նախարարապետին: Նա ունէր երկու կամ երեք այսպէս ասած գործակատարներ եւ թարգմաններ, ինչպէս ունէին օտար պետութիւնների դեսպան-

ները, որ այցելում էին Արտաքին Գործոց Նախարարութեան՝ երկրորդական խնդիրների համար, նոյնպէս էր անում եւ Պատրիարքը իր Թարգմանների միջոցով, եւ կամ ղրկում էր ծանուցագիրներ, թաքրիր, Ներքին Գործոց Նախարարին: Եւ Սուլթանի գահակալութեան տարեդարձի օրը Պետութիւնների դեսպանները ներկայանում էին նրան իրենց շնորհաւորութիւնները յայտնել ի դիմաց իրենց Պետութիւններին, նոյնպէս եւ Պատրիարքը արտօնուած էր ներկայանալ Թագաւորին եւ յայտնել նրան Հայ ժողովրդի շնորհաւորութիւնը եւ հաւատարմութիւնը:

Պատրիարքի քաղաքական իշխանութիւնը իր էութեամբ նմանում էր մի պատկերի, որպէս պետութիւն պետութեան մէջ. իւրաքանչիւր հայաբնակ կենտրոն, բացի իր կրօնական ժողովից, ունէր ժողովրդից ընտրուած քաղաքական ,կրթական, կալուածոց, կտակների եւ այլ նմանօրինակ հանրային մարմիններ, որոնք ուղղակի կամ Առաջնորդի միջոցաւ հաշուատու էին իրենց յարանուն կենտրոնական ժողովներին: Այսպէս, կային Կենտրոնական Քաղաքական Վարչութիւն, Կենտրոնական Կրթական Վարչութիւն, եւ այլն, առանձին ատենապետներով: Բացի այս կար Ազգային Երեսփոխանական ժողով, որ ունէր իր մէջ 42 անդամներ ընտրուած հայաբնակ գաւառներից, առանց հաշուելու Կ. Պոլսի աշխարհա-

կան եւ եկեղեցական անդամները: Այս մարմինը Թրքահայոց Փառլամէնթն էր, եւ գերագոյն իշխանութիւնը որ ունէր իրաւունք ընտրել եւ արձակել Պատրիարք, Քաղաքական Վարչութիւն եւ այլն:

Ազգային կեանքը բարձրացնելու այս թոյլատրեալ ազատութեան շնորհիւ, Կ. Պոլսի ուսումնասէր երիտասարդութիւնը պարբերաբար յաջողած էր նիւթական նպաստներ ձեռք բերել մայրաքաղաքի հարուստ հայերից, այսպէս բազմաթիւ դպրոցներ հաստատել եւ պահել գաւառներում: Այդ Միացեալ Ընկերութիւնն էր եւ Դպրոցասէր Տիկնանց Ընկերութիւն, եւ կային նաեւ մի կամ երկու այլ նմանօրինակ ձեռնարկութիւններ: Միացեալ Ընկերութիւնը ամէն տարին մէկ անգամ կազմում էր մի շքեղ պարահանդէս՝ իր նպատակի նիւթական օժանդակութեան համար: Գըրեթէ ամէն անգամ Սուլթան Համիդ ընդունում էր, որ պարահանդէսը լինէր իր կայսերական հովանաւորութեան ներքեւ, եւ իր կողմից նուիրում էր 1000 ոսկի, եւ 500 ոսկի Դպրոցասէր Տիկնանց պարահանդէսի համար: Նա նոյնպէս սովորութիւն ունէր ամէն նոր տարին 250 եւ 500 ոսկի նուիրել Հայոց Պատրիարքարանին եւ Ս. Փրկչի Հիւանդանոցին: Որքան յիշում եմ 1886ին կամ 1887ին էր, երբ Նիկոմիդիոյ գաւառ հայաբնակ փայտաշէն Արսլանբէգ մեծ գիւղը գրեթէ ամբողջովին այրը-

ւեց, Սուլթան Համիտ 5000 ոսկի նուիրեց գիւղացիների օգնութեան եւ գիւղի վերաշինութեան համար:

Նրա ընդարձակ արքունական Գանձերի խառնակ վիճակի բարեկարգութեան, եւ առաջին նախարարը եղաւ մի հայ, Յակոբ փաշա Գազազեան, նրա եղերական մահից յետոյ, Սուլթան Համիտ դարձեալ ընտրեց մի հայ, Միքայէլ Փորթուգալ փաշա, որին ապա նշանակեց իբր Կայսրութեան Ելեւմտական նախարար, եւ նրա տեղ կրկին մի հայ, ընտիր հայագէտ Յովհաննէս Սաքըզ: Սուլթան Համիտի անձնական բժիշկներից մէկը նոյնպէս հայ, Տիգրան փաշա Փէշտիմալճեան:

Բացի այս պետական պաշտօնատարներից, կային առաւել կամ նուազ դիրքերով հայեր, ոմանք շատ բարձր դիրքերի մէջ: Այսպէս Արթին փաշա Տատեան, նախ Արտաքին Գործերի Նախարարի օգնական էր, ապա եղաւ նախարար: Նոյնպէս եւ բաւական ժամանակ յետոյ, Գաբրիէլ Նորատունկեան. Յովհաննէս Նուրեան լինելով Պետական Ժողովի անդամ, միանգամայն մասնակցում էր ազգային ամէն գործերի եւ Ատենապետ Ազգային Երեսփոխանական ժողովին, որ ուրիշ խօսքով Թրքահայոց Փարլամէնթն էր: Կային նոյնպէս դեսպանական խորհրդականներ, որպէս Պաղտատլեան եւ Ազարեան, որոնք յետոյ եղան դեսպաններ:

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻ՞ՒՆ ԹԷ ՈՉ-ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

Այդ ժամանակ թէեւ հասկանում էի թէ՝ յեղափոխութիւն նշանակում էր ապստամբութիւն կառավարութեան դէմ պատիժ եւ բանտ, բայց ո՛չ արիւն եւ սպանութիւն, եւ այս ամէնը անըմբռնելի էին իրենց իրականութեամբ, այլ զգալի էին իբր զուարճալիք, եւ առարկայ պարծանքի: Եւ սիրում ու մղւում էինք նկատուել յեղափոխական յաչս մտերիմ ընկերների:

Իմ եւ իմ նման կովկասեան գաղափարականների յաւակնոտութեան վրայ երբեմնակի ծիծաղում էի, երբ ման էի գալիս մեր նշաւակելի առարկայ Սուլթանի մայրաքաղաքի փողոցներում եւ տեսնում էի խիզախ ձիերով սեւափայլ կառքեր, ներփակելով լրջադէմ բարձրաստիճան Թուրք փաշաներ, կամ գոռոզաքայլ զինուորականներ, կախընկած զարդարուն

սուրերով եւ կամ հրացանակիր սուինաշող թուրք զօրագունդներ, որ քայլում էին շարայար զինուորական նուագների քայլերգով: Նայում էի եւ մտածում, թէ ուրեմն սրանց էր որ Գալուստը, Ծատուրը եւ ես, եւ իմ նմանները մեր երկաթեայ կամ օդային սուրերով պիտի դուրս քշէինք մեր աւերեալ Հայաստանի սուրբ հողից:

Այս տեսարաններին մէջ ընդ մէջ, առաւելապէս կէս օրերից յետոյ, կարելի էր տեսնել «Արեւելք» մեծ օրաթերթը, եւ ուրիշ հայ թերթերի ծրարներ լրագրավաճառներ թեւերի տակ բռնած, բացագանչում էին Ղալաթիոյ շարժուն փողոցներում, եւ անցորդ հայեր, գրպանից հանելով իրենց փարաները, գնում էին հետաքրքրութեամբ, Մասիս, Հայրենիք (Մելիքեանի), Արեւելք, եւ երկու թէ երեք ուրիշ այսպիսի թերթեր, հայերէն տառերով եւ թուրքերէն բառերով, թրքախօս հայերի համար, եւս առաւել կեսարացիների համար:

Ղալաթիոյ կամուրջի գլխին, դէմ առ դէմ գալիս էր մի փողոց, որ Պերայից, այն է եւրոպական մասից, հայ, յոյն եւ շատ հարուստ թուրք փաշաներ եւ դեսպանատների պաշտօնեաներ, ոտքով կամ կառքերով, շարունակ երթեւեկում էին, անցնելով կամուրջը դէպի Ստամպուլ, ուր էին Պետութեան բոլոր պաշտօնատները, ասիական ոճի մեծ շուկան, եւ գործատեղիներ: Այդ կարեւոր փողոցը վեր-

ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

ջանում էր կամուրջից փոքր ինչ առաջ եւ գտանում մի փոքրիկ հրապարակը, երկու կողմից դուրս ընկած տների պատճառաւ: Ես կանգնած այդտեղ, եւ նայելով մարդոց եւ կառքերի շարժումին, աջ կողմի անկիւնում, մի փոքր խանութի վերեւ խոշոր գրերով կարդացի Մարգար Գույաճըրգեան: Խանութի մէկ կողմը՝ աջ կողմի վրայ կանգուն շարուած էին հովանոցներ եւ ձեռնափայտեր, եւ երեւում նըստած էր մի չաղլիկ թարմ երիտասարդ եւ ձախի վրայ կանգնած մի ամրակուռ սեղան, նըմանելով մի շրջափակ սնտուկի, եւ առաջին նստած մի մեծագլուխ, հաստավիզ, լայնակուրծք եւ մեծափոր մայլից մարդ: Նրանցից հեռու կեցած երկու հոգի խօսում էին հայերէն եւ մէկը ցոյց տալով իր մատով հանդիսաւորապէս բազմած հսկան, ասեց — «Ահա, այս լումայափոխն է Սափաճի Ազգային Երեսփոխան, որ փառաւորապէս գաւազանահարեց Ազգային ժողովի երեսփոխաններից մէկին, որ քննադատում էր Ներսէս Պատրիարքին իր Հայկական Հարցի քաղաքականութեան վերաբերմամբ, բայց արդէն Պոլսում, բերանացի եւ մամուլի մէջ էլ, յաճախ քննադատել են եւ քննադատում են, եւ այս պատճառաւ խեղճ Պատրիարքը շատ անգամ հրաժարական է տըւել վճռացած, բայց Ազգային ժողովը, քուէների մեծամասնութեամբ, մերժել է եւ խնդրել է ետ առնել իր հրաժարականը:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

—Էս մարդը շատ լաւ է արել, պաշտօնահա-րելով շան սատակ անելու էր այդ խայտառակ երեսփոխանին, եւ նրա պէս խմբագիրներին: Պատրիարքը իր արարքով ուզում էր լաւու-թիւն անել հայ ազգին, բայց, եթէ Բեռլինում մեծ պետութիւնները թագաւորութիւն չտուին հայերին, ինչպէս տուին բուլղարներին, նա ինչ մեղք ունի: Արի գնանք էս մարդու մօտ, ես մի հովանոց տանեմ, դու էլ մէկ գաւազան, եւ խնդրենք իրեն գալ անգամ էլ Ներսէսին քննադատող մի խմբագրի գլուխը ջարդէ, որ խելքի գան էդպիսիները:

Ես կանգնած էի նրանց ետեւում, եւ նրանք չէին տեսնում ինձ, բայց տեսայ որ ռուսահա-յեր էին, եւ անցի.

— Բարեկամներ, լսում էի ձեր խօսակցու-թիւնը: Ինչպէս երեւում է, այս բռնակալ Թուրք երկրում, մեր հայերը իրենց Փարլա-մենտում ունեն լեզուի ազատութիւն եւ խմբա-գիրները գրչի ազատութիւն, եւ անսանձները գանահարելու ազատութիւն, ուստի աւելի խելացիութիւն է զգոյշ լինել եւ չը գործածել անսանձ լեզու որ Ներսէս Պատրիարքի քննա-դատներից մէկն էլ իր գաւազանով ձեր գլու-խը չը փայփայէ»:

Նրանք Կովկասից եկել էին տեսնել Սուլ-թանի մայրաքաղաքը եւ ուսումնասիրել Հայ-կական Հարցի վիճակը: Երեւի դիտողութիւնս անհաճելի էր, զի նրանք հեռացան, առանց մը-

նաս բարեւի, եւ մեկնեցան ուղղակի Սոփաճի Երեւփոխանի դրամատունը: Մեկնեցին իրենց ձեռները ջերմ շնորհակալութեան շարժումով յայտնապէս ի փառաբանութիւն նրա հերոսական արարքին:

Ես թէեւ յարգող Ներսէսի, չէի կարող լինել յարգող եւ հիացող այդ հերոսին: Ուստի դարձայ կամուրջի կողմը, կամուրջից անցնելու 10 փարա տուրքը տալով՝ կանգնած դրամահաւաքներից մէկին, անցայ արգիլեալ գծից ներս եւ կոշտ ու կոպիտ տախտակամածների վրայ քայլելով հասայ Ենի ճամիի հանդէպ, մտայ դէպի ձախ Բահչէ-Գափու փողոցը, միակ ճանապարհը՝ որտեղից դեսպաններ եւ եւրոպական դիւանագէտներ կարող էին անցնել երթալու Բարձրագոյն Դուռը, այն է թուրք կառավարութեան մեծ պաշտօնատունը:

Փոքր ինչ անդին, ձախ կողմի վրայ, աննըշան խանութների շարքի մէջ տեսայ մէկը ճակատում ոսկէ տառերով գլխագրեր ԶԱՐԵՀ ԹՈՐՈՍԵԱՆ, եւ խանութի շուրջ կողերը ծածկուած հայերէն օրագիր, շաբաթաթերթ, ամսագիր եւայլն, նրանց մէջ «Խիկար» ամսագիրը գրաւեց ուշադրութիւնս. նրա խմբագիրը՝ Յակոբ Պարոնեանը, ինձ համար աւելի հետաքրքրական էր տեսնել քան Սուլթան Համիդը: Թիֆլիսում Արգար Յովհաննիսեանի «Փորձ» ամսագրում կարդում էի Հոսհոսի Յիշատակագրէն գաւեշտական յօդուածները, որ գը-

ւարթութիւն էր պատճառում ամէն ընթերցողի՝ իրենց ակնարկներով Կ. Պոլսի այլ եւ այլ նշանաւոր հայերի, որ ակնկալում էին մեծ մեծ պաշտօններ ունենալ, ապագայ Հայկական կառավարութեան մէջ, եւ հեղինակն «Մեծապատիւ Մուրացկաններ» գրքին: Մինչ այսպէս նայում էի այս հայկական թղթահանդէսին խանութին ոտքը ներսից տեսնելով ինձ, քաղցրաբար հրաւիրեց ներս; Թերեւս նկատեց որ օտարական էի, եւ հարցրեց թէ արդեօք զարմանո՞ւմ էի հայ թերթերի շատութեան թէ բազմազանութեան վրայ: Ես պատասխանեցի թէ թէ՛ մէկի՛ եւ թէ միւսի, բայց թէ ինձ համար հետաքրքիր էր տեսնել հայ հեղինակներ, որոնցից գիտէի միայն երկու մարդոց անուններ, Հայկակ եւ Յակոբ Պարոնեան: Նա պատասխանեց Հայկակը ոչ մի յարգ չունի լուրջ մարդոց աչքում: Նա Հայաստանի դպրոցներու Միացեալ Ընկերութեան անդամ էր, եւ Ընկերութեան դրամը ուտելուն համար արտաքսուեց: Հիմա էջմիածին է, «Արեւելք»ի թղթակից՝ Կաթողիկոսական ընտրութեան համար: Երբ վերադառնայ, կը տեսնաս զինքը: Իսկ Պարոնեան ուղիղ եւ պարկեշտ մարդ մ'է ինքը կը գրէ, ինքը կը շարէ ,եւ ինքը իր «Խիկար»ները թեւին տակ առած, խանութէ խանութ տանելով կը ցրուէ; եւ կսպասէ դրամին որ մենք ծախելէ վերջ իր դրամը տանք իրեն: Յաճախ կու գայ հոս, եւ քեզ կը ներկա-

յացնեմ անոր։ Այդ ազնիւ մարդը աղքատ է գրեթէ, եւ չկայ մի հարուստ որ դրամապէս գնահատէ անոր գրիչը եւ օգնէ անոր թերթին։ Բայց ազնիւ գրիչը գնահատելու եւ օգնելու բարեսրտութիւնը ունեցող չկայ մեր մէջ»։

Թորոսեան ապա ծանօթութիւններ տուաւ այլ եւ այլ խմբագիրների եւ գրողների մասին, եւ յայտնեց թէ նրանցից շատեր գալիս էին եւ անցնում էին իր խանութով եւ պիտի ծանօթացնէր ինձ նրանց, եւ առաջարկեց որ երբ ուզենայի, կարող էի երթալ եւ նստել իր խանութում։ Եւ այսպէս մի օր երբ այդտեղ էի, եկաւ Պարոնեան «Խիկար»ի ծրարներ թեւին տակ։ Նրա դէմքի վրայ, եւ շարժման մէջ չկար զուեշտ եւ ժպիտ։ Նա խաղաղ էր եւ լրջադէմ, աւելի մաշուած քան քաջառողջ, բնաւորութեամբ հանդարտ, եւ խօսակցութեամբ եւ ձայնով մեղմ։ Ես ինքս անորոշութեան ծովի ծփուն ալիքների վրայ ծփացող մի անապաւէն արարած էի յայնժամ, եւ ի հարկէ խորհելու եւ մեղքանալու եմ ինձ, բայց մեղքացայ այդ մարդին, որի գրիչը այնքան սիրելի էր ինձ։ Սակայն այժմ կը մտածեմ, թէ արդեօք նոյնքան սիրելի պիտի լինի թէ ոչ եթէ պատահի որ կարդամ այդ գրչի նոյն արտադրութիւնները։

Այդ ազնիւ նորածանօթի գրախանութը, այլեւս ինձ համար եղաւ մի տեսակ ընթերցարան։ Ես դիտեցի որ թերթեր եւ գրքեր առ-

ուած էին ազատ, առանց գրաքննիչի արտօնութեան, եւ նրանց վրայ չկար տպուած «թոյլատրուած գրաքննիչից», Հրամայական բառերը, որպէս էին Թիֆլիսի հայերէն թերթերն եւ գրքերը: Եւ մի օր դարձայ եւ ասեցի Զարեհ Թորոսեանին, թէ ռուսահայ վէպեր եւ բանաստեղծութիւններ ներկայացնում են Թրքահայերին զրկուած եւ հալածուած հպատակներ Թուրք իշխանութեան տակ, այդ գաղափարով անել է ինձ նման Կովկասում կրթուած նոր սերունդը, եւ հարցրի իրեն, թէ այս բաները ամենեւին չէին կարող սուտ լինել, եւ նրանում անշուշտ կայ մի ճշմարտութիւն, եւ կ՚ուզէի իմանալ ի՞նչպէս, ի՞նչ բաներում, եւ ո՞րտեղ էին գործւում այդ զրկանքներն եւ հալածանքները հայ ժողովրդեան դէմ: Նա պատասխանեց թէ ինք Ակնցի էր, Հայաստան հողի վրայ ծնած մի հայ, եւ կարող էր մի գաղափար տալ ինձ այդ մասին: Եւ ասաց.

— Այդ բաւական խրթին հարց մ՚է, որու բացատրութիւնը շատ երկար կրնայ ըլլալ: Ես իմ կարողութենէն վեր. օրէնսգէտ մը եւ քաղաքագէտ ըլլալու է մարդ, որ աղէկ հասկնայ եւ աղէկ բացատրէ: Միայն երեւոյթէն դատելով, հայ ժողովուրդը Օսմանեան բոլոր քաղաքներու մէջ այնպէս ազատ եւ բաղդաւոր երեւոյթ ունի, ինչպէս կը տեսնէք հոս Պոլսոյ մէջ, բայց թէ՛ Պոլսոյ եւ թէ՛ գաւառներու մէջ Թուրքը ինքզինքը կը համարէ աղա եւ մի իշ-

խող ցեղ, եւ քրիստոնեաները ռայեա, այս-
ինքն հպատակ, եւ հայերս, ինչպէս նաեւ միւս
բոլոր քրիստոնեայ ցեղերը բնազդաբար կը
զգանք մեզ որպէս հպատակներ, բայց այս տի-
րող ցեղի զգացումը Թիւրքեր երեւան չեն հա-
ներ կեանքի սովորական ընթացքին, բայց երբ
դժտութիւն մը, կռիւ մը կը ծագի Թուրքի մը
եւ Հայու մը միջեւ, ռասայականութիւնը գործին
կը խառնուի, խնդիրը կ'երթայ դատարանի:
Հոն է որ, թէեւ ոչ միշտ, հայը կամ ուրիշ քը-
րիստոնեայ, հպատակը կզգայ որ Թուրքը աղա
է եւ ինքը ռայեա: Անկէ զատ կայ կրօնի զգա-
ցումներէն ծնած չարիքը, որ կը պատճառէ
այս խտրութիւնը: Թուրքը մահմեդական է եւ
կը հաւատայ թէ իր կրօնը ճշմարիտ կրօնք է,
եւ հայը կամ յոյնը անհաւատներ են: Ինչպէս
ըսի, այսպիսի խտրականութեան զգացումնե-
րը, եւ մոլեռանդութեան նշանները երեւան
կու գան, կ'արտայայտուին, եւ կը ներգործը-
ւին անհատական դէպքերու ընթացքին եւ ոչ
թէ հայ հասարակութեան ամբողջի եւ կամ ա-
նոր մէկ մասի հանդէպ: Այդպիսի անհատներ
եթէ չգտնեն արդարութիւն տեղական կառա-
վարութիւնից, կարող են ներկայացնել իրենց
խնդիրը տեղական Հայ կրօնական առաջնոր-
դին, որ իր քաղաքական ժողովի հետ խորհըր-
դակցելէ վերջ, եթէ խնդիրը կարեւոր է, կը
դրկէ Պատրիարքին եւ նա կը ներկայացնէ Ազ-
գային Երեսփոխանական ժողովին, եւ Կեդրո-

նական Վարչութեան համաձայնութեամբ կը տեղեկագրէ Ներքին Գործոց նախարարին՝ ի տնօրինութիւն:

Եթէ այս խնդիրն կամ գանգատները չեն մնար Ներքին Գործոց նախարարութեան բարձերու տակ, կամ չեն նետուիր վառարաններու մէջ, եւ կը դրկուին պատկանեալ գաւառական իշխանութեանց՝ վերաքննելու եւ պատժելու համար քիւրդ կողոպտիչները, կամ մարդասպանները, եւ տեղական կառավարութիւնները կամ կը վարուին նախկին թուլութեամբ, քիւրդ անօթի կողոպտիչները եւ ի սէր կողոպուտի սպանողները կամ կը բռնուին, կամ չեն բռնուիր եւ այսպէս խնդիրը կը վերջանայ, եւ ընդհանուր կեանքը կը շարունակուի Օսմանեան տէրութեան վարչական կեանքի մէջ, եւ ժողովուրդը կը շարունակէ եղբայրաբար ապրիլ միմեանց հետ, ինչպէս ապրած էին դարերէ ի վեր, մինչեւ որ օր մը Թուրք կառավարութիւնը հրաշքով փոխէ իր ասիական կերպարանքը եւ առնէ կատարեալ եւրոպական կերպարանք: Առիկա ոչ մենք՝ հպատակ հայերս եւ ոչ հպատակ յոյները կարող են ընել իրենց չնչին ուժերով: Բայց բազմաթիւ իշխող Թուրքը իր բազմաղբիւր ուժերով: Մինչեւ այն ատեն սպասելէ զատ ուրիշ հնար չկայ:

Սուլթանի Սէլամլըքի աղօթքից եւ այս Հայ Թղթավաճառի պարզաբանութիւնից ըսկսեցի ըմբռնել ինչ որ մեզանից շատ շատեր

չէն կարողանում ըմբռնել թէ՝ ինչո՞ւմն է կայանում թուրք կառավարութեան վարչական թերութիւնը, որից ծագում է չարիք եւ պատճառում դժգոհութիւն եւ հակապետական շարժում եւ ապստամբութիւն, եւ թէ այդ չարիքի միակ դարմանն է իշխող ցեղի զօրաւոր մի կազմակերպութեան միջոցով այդ վարչական ձեւի յեղաշրջումը եւ տապալումը: Եւ խորհեցայ մի անգամ եւս թէ ի՞նչպէս կարելի էր կարողազուրկ հայ հպատակների ձեռքով յառաջ բերել եւ գործել այդպիսի պետական յեղաշրջումն, եւ հարկաւ եւ ոչ եւս ազատել ինքն իրեն այդ պետութեան իշխանութեան տակից, եւ դառնալ ազատ ժողովուրդ:

«Զար Սուլթանի ոսկի գահը ջարդուեցաւ
վար ընկաւ,
Գահի տակից հազար ազգաց ազատութիւն
ծագեցաւ»

ցնծագին երգեց Նոր Նախիջեւանի հազարաչեայ հայ բանաստեղծը ի լուր ունկնդիր հիացողներին: Եւ 1878ի այդ մեծ օրից ի վեր հայ ազգի ազատութեան յոյսի ճառագայթներն եւս սկսեցին ծագել հայրենասէրների երեւակայութեան հորիզոնի վրայ: Բայց այժմ, վեց տարի չանցած, հայ երիտասարդութիւնը այդ կէտից արդէն սկսել էր անդատող զգացումների յեղափոխական հոսանքը, որի մէջ ընկնողներից մէկը ես եղայ: Ընկայ մէջը, եւ ուզում էի մնալ մէջում, եւ դուրս մէջից, եւ լինել յե-

ղափոխական, բայց հակասական հակապետական ցույցերի, եւ արարքների որ կարող էին պատճառել աղէտներ եւ արիւնհեղութիւն, այսինքն լինել յեղափոխական եւ միանգամայն հակայեղափոխական։ Չի եթէ «հազար ազգեր» ազատուեցան Սուլթանի գահի տակից, նրանք ապրում էին եւրոպական հողի վրայ, եւրոպական դրացիներով եւ կից Եւրոպայի մեծ պետութիւններին, իսկ իր պատմական հայրենիքի հողի վրայ ապրող Թրքահայ ժողովուրդը ապրում էր եւրոպական ազգերից իսպառ անջատ եւ հեռու, եւ քրիստոնեայ կըրօնն անարգող եւ հետեւաբար քրիստոնեայ ժողովուրդներին արհամարհանօք նայող մահմետական Թուրք եւ քիւրդ ժողովրդոց մէջ, եւ տակաւին չը մաքրուած բոլորովին վայրենի բնաւորութեան սերմերից, եւ կից Պարսկաստանին՝ աւելի ասիական մի անկարգ Թուրքիա, եւ Ռուսիոյ մի ցարական քրիստոնեայ կառավարութեան, որի քաղաքական ձգտումն էր հայ ցեղի ազգային գոյութեան անհետացումը։

Մտքի այս չփոթութեան մէջ թաղուած, անուշադիր քայլերով ուղղուեցայ դէպի բնակավայրս, Մուսթաֆա փաշա խան։ Պատմեցի ընկերոջս, Միհրան Աթանասեանին՝ Զարեհ Թորոսեանի ասածները.

—Գլուխդ մի՛ յոգնեցներ խնդիրներով, որ դու չես տեսնում թէ այնտեղ Հայաստանի հո-

ղի վրայ հազարից քանի՞ հոգի են անիրաււում եւ ինչ չափերով: Բայց ես մի քանի օրից գնում եմ Նիկոմիդիա, քեզ եւս տանելու եմ. ապրիր մեր տանը որքան կ'ուզես: Մեր Նիկոմիդիոյ գաւառում կան աւելի քան 60,000 հայեր եւ 30 կամ աւելի հայ գիւղեր, ոմանք զուտ հայաբընակ, եւ ոմանք թրքախառն, կամաց կամաց ման արի ամէն գիւղերում եւ տես ինչպէս է նրանց կեանքի վիճակը, եւ ամէն գիւղերում կը նկատես մեր անզուգական հոգեւոր Առաջնորդ Ստեփանոս Եպս. Յովակիմեանի զարմանալի գործունէութիւնը, որ պիտի ցոյց տայ թէ մի հայ կրօնաւոր ի՞նչեր անելու ազատութիւն եւ կարողութիւն ունի ժողովրդի համար եթէ ունի կամք եւ պարտաճանաչութիւն, եւ եթէ ճշմարիտ հովիւ է իր հօտի: Թողէ՛նք, թողենք մեր ժողովուրդը թո՛ղ ապրի, ինչպէս ապրել է դարերով նա չի մեռնի իր մանաւորների կրած անիրաւութեամբ եւ կորուստներով: Ուշ կանուխ այս թուրք ազգը իր բըռունցքով պիտի հարուածէ եւ տապալէ իր այս անբարբառ կառավարական ռէժիմը: Եւ նրանից ծնած նոր պետութեան մէջ թուրքը պիտի լինի առաջին սիւնը, եւ հայը երկրորդ սիւնը, որի հիմքը պիտի հաստատուի ոչ թէ միայն մեր պատմական հայրենիքի հողի վրայ բայց ամենուրեք ուր կան հայեր այս կայսրութեան մէջ, սկսեալ այս մեծ մայրաքաղաքից: Հայը թուրքի հետ միասին հաւասարապէս

պիտի իշխէ այս մեծ կայսրութեան վրայ»։

Կեցցես, Միհրան, որ տեսնում ես ցարդ-ոտնակոխ, մեր նախատուած եւ իշխանազուրկ ազգի համար այդպէս մի պանծալի ապագայ։ Ի՞նչ գեղեցիկ երեւակայութիւն, մի արեւելեան Անգլիա, ուր Անգլիացի Թուրքը, Սկովտիացի հայը, եւ Գալեացի քիւրդը ձեռք ձեռքի բռնած պիտի քանդեն ապականութեամբ կանգուն այս մեծ կայսրութիւնը, եւ միասին շինեն եւ շքեղացնեն ազատութեան մայր հայրենիքի նման մի բաղդաւոր երկիր։

— Ճիշդ այդպէս։ Եւ դրա համար, ի շահ մեր ազգին ներկային եւ ապագային, իմաստութիւնը պահանջում է համբերութիւն, եւ խոհեմութիւն։ Տանեմ քեզ բուն հայ հայրենիքից հեռու մեր այս օտար հայրենիքը, եւ նրան տեսնելով պիտի համոզուես թէ մեր հայ ժողովուրդը այս մոլեռանդ Թուրք ազգի մէջ, մեռնող ազգ չէ, եւ կարող է անմահօրէն ապրել նոյն իսկ բազմապատիկ դժուարին պայմանների մէջ, եւ աւելի ծանր լուծի տակ։

Միասին մտանք նաւի մէջ եւ մեկնեցանք նրա գովելի ծննդավայրը։

ՍՏԵՓԱՆՆՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

ՆԻԿՈՄԻԴԻՈՅ ՀԱՅ ԳԻՒՂԵՐԸ ԵՒ ՍՏԵՓԱՆՈՍ ԵՊՍ. ՅՈՎԱԿԻՄԵԱՆ

Մեր նաւը նաւարկեց Ղալաթիոյ կամուրջից եւ մռնչալով այն ջուրերի միջով, որ կազմում են Վոսփորի, Ոսկեղջիւրի եւ Մարմարա ծովի խառնարանը, աջ կողմից սկսեց հեռանալ մզկիթներով եւ մինարէներով բանաստեղծական տեսարանից եւ Մարմարայի ափերից, ուր երկայնաձիգ բլուրների գլուխները, եւ մեղմաթեք կողերը ծածկուած էին խիտ առ խիտ փայտաշէն տուներով, կարծես ներկայացնում էին մի անտառ եւ տարածւում դէպի հեռուն, եւ այդ տուներից շատերի մէջ երջանկաբար բնակւում էին հայ ընտանիքներ։ Ձախ կողմի վրայ նա ընթանում էր Գատը Գիւղի, հին Քաղկեդոնի կողերով, ուր այժմ փոխանակ հին դարերու կղերների մոլեռանդ վիճաբանութեանց Քրիստոսի բնութեան, եւ մարմ-

նի մասին եւ նզովելու միմեանց եւ կամ այլոց, այժմ ապրում էին մեծահարուստ յոյներ եւ հայեր, որ գիշերային ճրագի ներքեւ իրենց հանգստաւէտ տներում, խորհրդածելով այդ-օրուայ շահած դրամի քանակութեան վրայ, կամ խորհելով հետեւեալ օրուայ աւելի նպաս-տաւոր շահագործութեան շուրջ եւ կամ գը-ւարճանալով թղթախաղով թէ իրենցից ո՞ր մէկը աւելի յաջող պիտի լինի թղթախաղի մէջ ,եւ աւելի դրամ հանէ միւսի գրպանից, եւ կամ երազում էին իրենց չքնաղ խաղողի այ-գիների մասին, որոց ծայրերը երկարում էին մինչեւ Նիկոմիդիոյ Վասփորաձեւ ծոցի սկիզ-բը, որոց մէջ գեղատեսիլ խաղողի ողկոյզնե-րի հմայիչ հատիկների համեղութիւնը հակա-մէտ էին հրապուրել իրենց տէրերի սեղանա-կից հիւրերի ախորժակները, եւ նրանց մէջի հեղուկ հիւթերը արդէն պատրաստ էին գու-նաւորել գինիի նրանց ,հաստափոր կարասների մէջ բնակելու համար:

Այգիների ամենավերջում, եւ Ծոցի ըս-կզբում մեծ գիւղը կարծեմ կոչւում էր Քար-թալ, Թուրք, յոյն եւ հայ բնակիչներով: Ծո-ցի հանդիպակաց կողմում երկիրը աւելի տա-փակ էր, բայց յետոյ բարձրանում էր բլրա-շար: Այդ կողմ բաւական ճամբորդներ վայր իջան նաւից, շատեր հայ գիւղացիներ էին: Բլուրներից անդին կային բազմահայ Ջինկի-լէր, Մեծ Նոր գիւղ, եւ այլ զուտ հայաբնակ

գիւղեր, իսկ ծովեզերեայ տարածութիւնը, ուր նաւը կանգնեց, կոչւում էր Երուսաղէմատան Ագարակ, ունէր մասնաւոր երկրագործ, եւ մշակութիւնն էր հատիկներ, եւ յատկապէս ծխախոտ, եւ լաւ եկամուտ էր բերում Երուսաղէմի վանքին: Տեսարանը Ծոցի այս կողմի վրայ գեղեցիկ էր. գետինը ափերից բարձրանում էր վեր, եւ կազմում հաճոյալի բարձրութեան բլրաշղթայ պատուած երբեմն խոտ, երբեմն ցանցառ ծառաստաններով, որոց մէջ տեղ տեղ երեւում էին գիւղեր, ոմանք հայկական: Հասանք վերջապէս Ծոցի ծայրը, երկու կողմերն եւս տուներով: Աջում, ափերից շատ վեր, բարձրութեան վրայ, եւ հարիւրաւոր տուների մէջ կանգնում էր մի հսկայ շէնք, որի համեմատութեամբ, միւս բոլոր տուները երեւում էին որպէս ոչխարի հօտը իր մէջ ունենալով մի հսկայ եզ:

«Այս ի՞նչ զօրանոց է, զարմանքով հարցրի Միհրանին:

—Այս գիւղը, մեր հայ կարիճ Պարտիզակցիների գիւղն է եւ այս շէնքը նրանց տղայոց եւ աղջկանց կրթութեան զօրանոցն է, որ մեր հրաշագործ Առաջնորդը Ստեփանոս եպիսկոպոս շինեց, գրեթէ առանց դրամի, ժողովրդի աշխատութեամբ եւ իր գլխաւորութեամբ եւ Պարտիզակի հայ ճարտարապետների եւ որմնադիրների ղեկավարութեամբ: Նախապէս գիւղի դպրոցը եկեղեցւոյ բակի մէջ էր, շատ

հին եւ խարխուլ տանիքը փլելու աստիճան վտանգաւոր:

Առաջնորդը ի զուր աշխատեց ցոյց տալ այս վտանգը քարոզներով՝ զուսակաւէր Պարտիզակցիներին: Ուստի ի վերջոյ Զատկի նախատօնակին գնաց այնտեղ, պատուիրեց գիւղի հինգ քահանաներին, որ հետեւեալ առաւօտ, Զատկի ժամերգութիւնից առաջ, բահերով եւ բրիչներով եւ մուրճերով զինուած գային եկեղեցի: Եւ երբ եկան այնպէս, ինքն առաւ գործիքներից մէկը, եւ հրամայեց նրանց որ իր հետ միասին քանդեն դպրոցի շէնքը: Երբ յետոյ բարեպաշտ հայ մարդիկ եւ կանայք եւ երեխայք գալիս էին եկեղեցի՝ լսելու Քրիստոսի յարութիւնը մեռելներից, տեսան որ իրենց եկեղեցականները մեռցնում եւ թաղում էին իրենց կենդանի դպրոցը: Եպիսկոպոսը հրամայեց ապշած ժողովրդին ուղղուել դէպի եկեղեցւոյ ներսը եւ հետեւել իրեն, բարձրացաւ սուրբ սեղանի վրայ, եւ գոչեց. «Դուք չը դիտէք ձեր զաւակների յարգը, եւ կ'ուզէք որ նոքա մեռնին այդ աղէտաւոր շէնքի տակ, քան թէ մի նոր դպրոցի շինութեան համար ձեր դրամներից դրամ դուրս գայ: Հիմա, ես ինքս պիտի կանգնեմ գործի գլուխ, պիտի անձամբ առնեմ դրամ ձեզանից, որքան պէտք է՝ դրամով գնելիք նիւթերի համար, իսկ միւս ամէն աշխատութիւն պիտի կատարենք ձրիաբար, աշխատանքի դերին ո՞վ կարող է մասնակցել

կիրակի օրեր եւ կամ ամէն օր: Եւ ահա այսպէս կանգնեց այս մեծ շէնքը, ուր 500 աղայք, եւ 300 աղջիկներ են ուսանում, եւ ունեն ներսում թատերաբեմ, եւ դպրոցի տեսուչն է Եղիշէ վարդապետ Դուրեան, վաղամեռիկ բանաստեղծ Պետրոս Դուրեանի կրտսեր եղբայրը:

Եթէ Ստեփաննոս եպիսկոպոս չլինէր այսպիսի կամքի եւ ազդեցութեան մի մարդ, այդ մեծ շէնքը գոյութիւն պիտի չունենար Պարտիզակի մէջ, եւ նրա բնակիչները պիտի մնային իրենց նախկին դրամասիրութեան առաքինազուրկ բնութեան մէջ:

Մեր նաւը դարձրեց իր երեսը այդ բարձրադիր զուտ հայ գիւղից, որոյ նախնիքները ծնել էին հարիւրաւոր կամ հազար մղոն հեռու երբեմնի ազատ Հայաստանի մէջ, եւ ուղղուեց հանդիպակաց կողմը, ուր շէնքերը սկսում էին գրեթէ ջրի ափերից եւ նախ մեղմ, ապա աստիճանաբար, բարձրանում էին: Պատմական Նիկոմիդիա քաղաքն էր այս: Նրա կէս բարձրութեան վրայ տարածութիւնը փոքր ինչ տափակ էր, եւ այդ բարձրութեան վրայ կանգնում էր Հայոց եկեղեցին, դպրոցը եւ առաջնորդարանը: Երեւում էին նոյնպէս յունաց եկեղեցին, եւ թրքական աղօթարաններ իրենց բարձրասլաց մինարէներով, նշան թէ այս երեք ցեղերն էին, որ այժմ ապրում էին երբեմնի զուտ յունական քաղաքում: Եւ Միհրան նաւի վրայից ցոյց էր տալիս ինձ ամէն

ինչ որ նշանաւոր էին խառն ի խուռն տուներն ելեւէջ բազմութեան մէջ, տանից թերանալու մատնացոյց անել փոքրիկ նաւահանգստի տախտակամածի վրայ ուղիղ կանգնած բարձրահասակ նիհարակազմ մի մարդ, կանգուն եւ լրջադէմ, որպէս թէ լինէր իւր ետին կեցած մարդոց հրամայելու տրամադրութեամբ: Նա շոգենաւային ընկերութեան գործակալն էր, Միհրան հպարտ էր, որ իւր հայրը ունէր այդպիսի մի բարձր պաշտօն:

Հետեւեալ օր ընկերոջս հետ իջանք շուկան քաղաքի ցածր եւ տափակ մասի վրայ, ուր մի լայն փողոց ներկայացնում էր մի մեծ ճանապարհի շարունակութիւնը, որ սկսում էր Կ. Պոլսի ասիական մասից, անցնում էր Նիկոմիդիոյ այս մեծ փողոցով, եւ գնում էր դէպի Փոքր Ասիոյ խորքերը: Փողոցի ձախ կողմը բարձր դիրք ունէր, ուր շարուած էին փայտաշէն տուներ, որոնցից շատերը տեղւոյն հայ բարեկեցիկներին էին պատկանում: Փողոցի աջ գծի վրայ զանազան աւելի եւրոպական ճաշակի խանութներ էին, որոց մէջ երկու հայապատկան դեղարաններ կային, եւ նրանց յետին կար ընդարձակ բազարը, զուտ ասիական եւ փողոցները ծածկուած կտուրներով, խանութպանները մեծ մասամբ էին հայեր եւ թուրքեր, եւ տեղ տեղ լումայափոխի սեղաններ, այսինքն սեղանաւորներ, կամ հին ձեւի բանկերներ, որոց ամէնը հայեր էին:

ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

Իմ հետաքրքրութեան առարկան էր տեսնել սքանչելի եկեղեցականը, բայց նա բացակայ էր: Ըստ լսածիս տարուայ տասնեւերկու ամիսներից հազիւ երկու երեք ամիսը մնում էր Առաջնորդարանում, եւ մնացեալը անցնում էր գիւղերում, կամ բաղնիք շինելով, կամ դպրոց, կամ եկեղեցի, եւ կամ ծառեր էր տընկել տալիս, կամ հեռուից մաքուր ջուր էր բերել տալիս գիւղերը, կամ դաշտում ջրաղացք շինելով եւ հետաքրքրւում թուրքերի մզկիթներով: Քաղաքացիներից ոմանք զմայլում էին այս Առաջնորդի վրայ եւ ուրիշներ դժգոհ, մանաւանդ մի քանի մտաւորականներ, որովհետեւ նրանք անընդունակ էին դատել այդ մեծ մարդի գործունէութեան մեծութիւնը: Երկու օր յետոյ, քաղաքի մեծաւորներից մօտ տասնեւերկու անձինք մի խնջոյք պատրաստեցին Միհրանին եւ ինձ համար, Զմիւռնիացի Աղասեանի տան մէջ: Նա կայսրանապեան էր երկաթուղին, որ երկարում էր Օսմանեան մայրաքաղաքից դէպի ապագայ Թուրք հանրապետութեան մայրաքաղաքը, եւ այդ ժամանակ դրեթէ միակ երկաթուղիի գիծն էր, որ գոյութիւն ունէր կայսրութեան հողի վըրայ, ուստի զարմանալի չէր, որ Աղասեան նշանաւոր մի անձ էր համարւում Նիկոմիդիոյ մէջ: Եւ Միհրան եւ ես, Ս. Էջմիածնայ երեսը տեսնելու համար, արժանի էինք նկատւում մեր փոքր դիրքով վայելել այդ մեծ մարդոց հիւրասիրութիւնը:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Առաջնորդը բացակայ էր քաղաքից, եւ ըստ սովորութեան, գտնւում էր իր գեղջուկ ժողովրդի խոնարհ տուների մէջ, այդպէս պիտի լինէր Նիկոմիդիոյ այս բնակիչ անհատների հետ այդ երեկոյ, որոնք նրա արժանաւոր գործունէութեան ուղիղ հասկացողներն էին։

Միւս բազմահայ քաղաքն էր Ադաբազար։ Երեկոյ էր երբ հասանք այնտեղ. արեւը դեռ հորիզոնից բաւական բարձր էր, եւ մենք անցնում էինք մի լայն փողոցով, որ յայտնապէս գլխաւոր փողոցն էր։ Բաց պատուհաններից դուրս էին հնչում տեղ տեղ մեղմահնչիւն կանացի ձայնով եւ այլուրեք ռազմաշունչ եղանակներով երգեր։ Հայ աղջիկներ էին որ տաք ցերեկից յետոյ իրենց սրտերը զովացնում էին ազգային քաղցր երգերով, երեկոյեան մեղմ օդի զեփիւռի մէջ։ Մեր ջորիները կանգ առան այդպիսի երգատուներից մէկի առաջ։ Ստեփան աղա Թամբուլեանի տունն էր, տեղւոյն գլխաւոր հայերից մէկը։ Որքա՜ն քաղցր, որքա՜ն երջանիկ զգացի լսելով թարմ հայուհիների այդ գեղանոյշ ձայները, ըն ազգասիրական զգացումների բանաստեղծութեան նուագներով, հեռու այն ազգային երկրից որ երբէք չէին տեսել, եւ ապրած օտարազգի մի մթնոլորտով, բայց հոգով եւ սրտով վերացած դէպի պատմական Հայաստանը։

Ներսէս Պատրիարք, երբ Նիկոմիդիոյ Առաջնորդ էր, յաճախ գալիս էր Ադաբազար,

իր վարդապետի հետ, որ սիրում էր այդ քաղաքի հայ հասարակութիւնը, ուր կային եօթն քահանաներ եւ երկու կամ երեք եկեղեցիներ: Նա յոյժ նախանձախնդիր էր որ հայ կանայք զերծ մնային Թուրքաց Թաղերի միջով բաղնիք երթալուց ,եւ աշխատեց համոզել Ադաբազարի աղաներին, որ դրամ հանգանակէին եւ իրենց համար մի զուտ հայկական հանրային բաղնիք շինէին: Նրա երկար քարոզները եւ յանդիմանութիւնները կարող եղան միայն քառասուն ոսկի հանել աղաների գրպանից, եւ առանց իր նպատակին մէջ յաջողելու, յաջողեց դառնալ Պատրիարք Թրքահայոց: Նրան յաջորդ ընտրուեց իր վարդապետը, Ստեփանոս Յովակիմեան: Նա եւս իր մեծի նման քարոզներով ջանաց իրագործել Ներսէսի նպատակը, բայց ի զուր: Աւելի դիւրին էր երեւում, ժայռից ջուր բղխեցնել, քան դրամ դուրս բերել իր հաւատացեալ հայ քրիստոնեայ հարուստների կակուղ քսակներից: Վարդապետը մի կիրակի օր պատարագի ժամանակ ծանուցանեց թէ հետեւեալ հինգշաբթի, ըստ սովորութեան, կանանց յետ կէսօրեայ ժամերգութեան ինք քարոզ պիտի տար, ուստի հրաւիրում էր քաղաքի բոլոր կանանց եւ քահանաներին ներկայ լինել Ս. Կարապետ եկեղեցին եւ լսել իր քարոզը:

Երբ եկեղեցին լի էր, նա պատուիրեց քահանաներին կողպել եկեղեցւոյ դռները, եւ

իր երեսը սեղանից դարձրեց դէպի կանանց բազմութիւնը: «Ես կանչած եմ այստեղ ձեզ ձեր պատուի համար: Ձեր ամուսինները ինչպէս կը տեսնեմ, չեն հասկնար ձեր կանացի պատուի կարեւորութիւնը, բայց դուք կը հասկնաք: Ձեր նախկին առաջնորդը, եւ իմ հոգեւոր հայրը, այժմ Ներսէս Պատրիարք, շատ անգամ դիմեց ձեր ամուսիններուն, որ բաղնիք մը շինեն ձեզ համար, հայ թաղերու մէջ, որ չստիպուիք թուրք թաղերով անցնիլ, ես ալ այնուհետեւ դիմեցի, բայց ի զուր, քառասուն ոսկիէ աւելի հաւաքել կարելի չեղաւ, ըսելով թէ՝ դրամ չունին: Անոնք չունին, բայց կը տեսնամ որ դուք անոնցմէ աւելի հարուստ էք, ձեր ճակատները, վզերը եւ ձեռները զարդարուած են ոսկիի շարոցներով: Բաղնիքը ձեզ համար է ,եւ դրամը դուք պիտի տաք: Եկեղեցւոյ դուռները կողպուած են եւ չէք կրնար դուրս փախչիլ. հիմա կարգաւ գալու, եւ անցնելու էք իմ մօտէն, ով որ յօժարութեամբ տայ իր ոսկիներէն, օրհնեալ լիցի, եւ ով որ յօժարաբար չտայ, քահանան մօտս կանգնած, մկրատով պիտի կտրէ առնէ, որքան ես պատուիրեմ»:

Աստուծոյ պաշտօնեայի այս աւազակային կողոպուտը աստուածային տան մէջ, մեծ հաճոյք պատճառեց անակնկալ ունկնդրուհիներին ,եւ ամէնը սրտագին ձայնով հաւանութիւն տուին եւ մի քանի հազար ոսկի գոյացաւ

եւ դուռները բացուեցան, եւ կանայք զուարճութեամբ շտապեցին իրենց տուները: Եւ ամէն տուն լցուեց ծիծաղով Ստեփանոս վարդապետի այս բարեգործական հնարագիտութեան համար: Եւ ագահ ագաները վազեցին Առաջնորդի մօտ շնորհաւորելու նրա հնարամտութիւնը: Բաղնիքը շինուեց, սկսեց տարեկան 600 ոսկի եւ աւելի եկամուտ բերել, եւ եկամուտը նա յատկացրեց դպրոցի զարգացման:

Որ մեծ հայ գիւղ որ գնացի, հեռուից տուների մէջ բարձրանում էր մի մեծ շէնք, գիւղի հայ դպրոցն էր, շինուած այս ժողովրդանուէր անձի եռանդով եւ ջանքով եւ հնարամտութեամբ: Հասել էի Մեծ Նոր Գիւղը, ուր բնակիչները հայ էին հազար տունէ աւելի: Ուրախ էի, զի այնտեղ պիտի գտնէի Առաջնորդին բարձրահասակ, սեւ, խոր եւ խոշոր աչքերով, Թուխ երեսով եւ ածուխի պէս սեւ հսկայ մօրուքով. եւ բարձրահասակ երբ կանգնեց ընդունել ինձ հայրական ողջունիւ: Նրա հետ նստած էին երկու գիւղացիներ, եւ ամէնքը ծալապատիկ բոլորած մի կլոր սեղանի առաջ, ամէն ինչ պատրաստ բացի տաք կերակուրը: «Հայր սուրբը մեր հիւրն է, եւ մենք Հայր սուրբի հիւրն ենք», ասեց տարեց գիւղացին, եւ յարեց, «Հայր սուրբը չի սիրեր մինակ կերակուր ուտել, եւ ոչ ալ ուտել Թագական Խորհուրդի գանձէն: Առաջ երբ առաջնորդներ այ-

ցելութեան կու գային, Թաղականները ծախքերը կ'ընէին գիւղի դրամէն: Հայր սուրբ մի օր դրքերը քննելով տեսաւ որ երբ ինք կուգար Ներսէս Սրբազանի հետ, տեսաւ որ ամէն այցելութեան համար Թաղականները 40–50 ոսկի ծախք են անցուցեր տետրակին մէջ: Թաղականներու գողութիւն: Ասոր վրայ մեր Հայր սուրբը ըսաւ անոնց, եւ ամէն գիւղերու Թաղականներուն, թէ ինք չուզեր որ Թաղականները գիւղի գանձէն ծախք ընեն իր համար, բայց ամէն գիւղացի մէկ օր կերակուր պատրաստէ եւ բերեն իրեն, եւ իր հետ նստած միասին ուտեն, եւ եթէ չտան, ինք կը գոհանայ անօթի մնալ: Ասկէ աւելի մխիթարութիւն չէր կրնար ըլլալ գիւղացիներուս համար: Այսօր կարգը իմս է, եւ ես ու մեծ որդիս մեր Հայր սուրբի պատուական հիւրերն ենք մեր տան մէջ պատրաստած կերակուրներով եւ դուք ալ կը միանաք մեր սեղանին եւ կը տեսնաք ինչքան մեծ սիրով եւ ուրախ սրտով կը մեծարենք մեր թանկագին Հայրը: Անիկա, սանկով կը ճանչնայ ամէն տեղացի հարուստ եւ աղքատ, ամէնի անունը եւ արհեստը, ամէնի ուրախութիւնը եւ ցաւը»:

Արդարեւ խորտիկները եկան, բազմատեսակ եւ առատ, ինչպէս գինի շիշերով: Մարդը հարուստ գիւղացիներէն չէր, բայց կերակուրները հարուստ տանտիրոջ կերակուրներ էին, եւ այսպէս գիւղի ամենաաղքատը սրտով եւ

Պկացումով հարստանում էր, երբ կորդը գալիս էր իրեն հիւրասիրել իր հոգեւոր հայրը: Եւ այսպէս ժողովրդի այս առաջնորդը ճանաչում էր իր թեմի աւելի քան 60000 հայոց հայրերն եւ անունը եւ վիճակը: Մեծ Նոր Գիւղը հարուստ էր եւ բարգաւաճ, երկար տարածութեամբ շրջապատուած բազմաթիւ այգիներով եւ տատատաբեր այգիներով:

Բայց կար մի աղքատ գիւղ, որ ունէր առատ ջուր, սակայն ոչ ջրաղաց: Գիւղացիք ստիպուած իրենց ցորենի բեռները էշերի եւ ջորիների վրայ բեռցրած, կը տանէին 8 ժամ հեռու գիւղ՝ աղալու համար: Այս գիւղը այցելելու համար նա պարտ էր անցնիլ մի հաւասարապէս աղքատ թուրք գիւղի միջով: Եւ նա այսպէս անցնելիս, մահմեդական թուրքերը կանգնած յարգալից ողջունում էին քրիստոնեայ հայ եկեղեցականին, եւ նրա սարկաւագին՝ Աղաւնունի, ապա Արքեպիսկոպոս Երուսաղէմի միաբանութեան: Գիւղի մօտ կար մի աւերակ մզկիթ եւ աւերակների մէջ երեւում էին պատուական քարեր, յոյժ յարմար ջրաղացի քարի վերածուելու, բայց անշուշտ սրբապղծութիւն պիտի լինէր խնդրել մահմետականներից, որ այդ քարերից մի քանիսը տային աղօրիքի համար: Ուստի մի օր անցնելիս վայր իջաւ իր ձիից եւ հարցրեց գիւղացիներից թէ ինչո՞ւ նրանց երեխայք այդպէս միշտ փողոցներում են եւ ոչ դպրոցում. Նրանք

պատասխանեցին թէ դպրոց չունէին, մզկիթը խարխուլ էր եւ անապահով իբրեւ դասարան գործածուելու համար: Ստեփանոս եպիսկոպոս ուզեց տեսնել մզկիթը, որի պատերն եւ առաստաղները զարդարուած էին սարդի ոստայններով, պահանջեց որ մի աւել բերէին իրեն, եւ նա վերարկուի փեշերը քշտելով մաքրեց մզկիթը, եւ իր հարցումներից իմացաւ, որ նրանք շատ աղքատ էին, ծանրաբեռնուած հին տուրքերով, առանց մէջից ազատուելու, որ կարենային դպրոց եւ մզկիթ կառուցանել, թէ բազմիցս դիմել էին Բրուսա՝ կուսակալին, եւ Կ. Պոլիս, բայց ի զուր:

«Ես ձեզ կ՚ազատեմ,», պատասխանեց հայ հոգեւորականը: Գնաց շրջանի կառավարիչին, ապա նահանգի կառավարութեան, եւ անյաջող դառնալուց յետոյ, մեկնեց Կ. Պոլիս: Սուլթան Համիտի պալատի դրան մօտ պահակներին ասեց թէ ինք Նիկոմիդիոյ հայոց հոգեւոր Առաջնորդն էր եւ մի մեծ խնդիր ունէր, եւ խնդրում էր ներկայանալ Նորին Վեհափառութեան: Երբ իրեն ազդարարուեց թէ անկարելի էր· նա պատասխանեց թէ օր ու գիշեր մինչեւ ուրբաթ այնտեղ կը մնայ մինչեւ որ տեսնէ Թագաւորին աղօթարան երթալիս, Թոյլտուութիւնը եկաւ, եւ կայսերական հրամանաւ, այդ գիւղացիներ ներուեցան իրենց տուրքերից:

Եկաւ ժամանակ որ նա անցնէր այդ գիւ-

ղից․ իր հայ գիւղն երթալու: Նրա հեռուից գալու լուրը տարածուեց Թուրք գիւղի մէջ, վազեցին ընդ առաջ, սկսան քղանցքները համբուրել, եւ աղաչել որ ցած իջնէր իր ձիից, եւ խնդրեցին թէ ի՞նչ կը փափաքէր եւ ի՞նչպէս ցոյց տալու էին իրենց երախտագիտութիւնը: Նա խնդրեց մի քանի քար աւերակների միջից, որ եթէ համաձայնէին, իր հայ գիւղացիները սայլեր պիտի բերէին տանելու ջրաղացքի համար: Մեծ բարիք պիտի լինէր երկու եւ ուրիշ հարեւան գիւղերի համար: Թուրքերը լծեցին իրենց սայլերը, եւ ջրաղացքի համար քարերը տարին հայոց գիւղը, հետեւելով Ստեփանոս եպիսկոպոսի ձիի քայլերին:

Այս դէպքի լուրը տարածուեց մօտակայ գիւղերում, եւ Քրիստոսի վարդապետը եղաւ յաչս Թուրք գիւղացիներին աւելի մեծարելի, քան Մուհամէտի մոլլաները:

Այս տարիների մէկի դեկտեմբերին էր, եւ Յովհաննէս Մկրտչի տօնախմբութեան օր: Սրա անուանակիցը Պարտիզակցի Յովհաննէս աւագ քահանայ Մկրեան ինքն իրեն իրաւամբ համարում էր մի մեծ մարդ, որովհետեւ լինելով մի պարզ քահանայ, պատիւ էր ունեցել Մեծն Ներսէս Պատրիարքի պատրիարքական փոխանորդի պաշտօնը վարել, եւ բնականաբար ամէն Յովհաննէսներից աւելի պարծանքով իրաւունք ունէր տօնել իր տօնը: Բայց այդ երեկոյեան խնճոյքին կային նաեւ երեք

հիւրեր. Տրապիզոնի առաջնորդ Գարեգին Սրուանձտեան, Կարնոյ առաջնորդ Մաղաքիա Օրմանեան՝ ապագայ Պատրիարք Թուրքիոյ հայոց, եւ ես:

Շատ շատ փոքր էի զգում ես ինձ այս մեծերի միջեւ: Գաղտնիքը նրանումն էր, որ ես լինելով «Արեւելք» թերթի խմբագրութեան մէջ եւ միաժամանակ թղթակցելով Թիֆլիսի «Արձագանք» թերթին Վաղինակ կեղծ անունով, այդ թերթում գրել էի այս Առաջնորդի մասին, ասելով թէ եթէ Թուրքիոյ Հայոց ամէն առաջնորդներ անէին այսպիսի գործեր, Հայ ժողովուրդը կարող էր բաղդաւոր լինել նոյն իսկ առանց ազգային անկախութեան, եւ յայտնել էի թէ Տրապիզոն եւ Կարին ունէին լաւ ուսեալ առաջնորդներ, բայց նրանց գոյութիւնը կայանում էր նստել իրենց առաջնորդարանների քաղաքներում, գործել խօսելով իրենց քաղաքական ժողովների մէջ եւ այցելելով հարուստների տները եւ պաշտօնական թղթակցութիւն կատարելով Կ. Պոլսի Պատրիարքարանի հետ: Օրմանեան բացի այս ունէր մի անզուգական գործունէութիւն: Կարինից պարբերաբար տպւում էին թղթակցութիւններ «Արեւելք»ի մէջ: «Արեւելք»ի վարչութեան անդամները թողել էին իրենց անդամակից Արփիար Արփիարեանին (Թիֆլիսի «Մշակ» թերթի թղթակիցն Հայկակ), որ կարդար թերթին եկած թղթակցութիւնները եւ պահէր նոյնութեամբ, կամ ջնջէր ուր հարկ էր ջնջել:

ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

Կարինից ստացուած թղթակցութիւններ միշտ գովասանքալից էին Առաջնորդ Օրմանեանի մասին: Ես կարդում էի ձեռագրերը, եւ Լեւոն Փաշալեան ուղղում տպագրական սխալները: Մի անգամ երբ գովասանքը չափազանց էր, նա կոկորդալից պոռաց «է՜, է՜ այ էսէպսկոպութիւն է ըրածը»: Նա սկզբից «Արեւելք»ի մէջ էր եւ գիտէր թէ ո՞վ էր թղթակիցը, եւ այսպէսով գաղտնիքը բերանից փախցրեց, եւ ես զարմացայ որ Արփիարեան թոյլատրում էր, որ Օրմանեան այսպէս գովաբանէր ինքն իրեն իւր յօդուածներով: Երբ նա եկաւ Կ. Պոլիս եւ այցելեց մեր խմբագրատունը, Հայկակ ներկայացրեց մեզ նրան, եւ նա անմիջապէս յետոյ հարցրեց «Ո՞վ է «Արձագանգ»ի Վաղնակը»: Արփիարեան մատը տնկեց իմ վրայ: «Կը շնորհաւորեմ ձեզ, շատ լաւ կը գրէք. միշտ կը կարդայի ձեր թղթակցութիւնները «Արձագանգ»ի մէջ»: Օրմանեան վարդապետ կաթոլիկ եկեղեցիից էր դարձած, եւ ես հասկացայ իւր քաղաքավարութեան ներքին իմաստը:

«Արձագանգ»ում գրում էի նաեւ Թ.րքահայոց Ազգային Երեսփոխանական ժողովի նիստերի մասին, եւ մի դէպքում յառաջ էի բերել Մկրեան քահանայի ճառը ընդարձակօրէն մի կարեւոր հարցի նկատմամբ, որքան որ ես կարող էի մտքումս պահել նրա խօսքերը: Ես բնակւում էի նրա յարակից տան մօտ. մի օր հարցրեց զարմանքով թէ ինչպէ՞ս կարողացել

էի մտքումս պահել նրա ձայնը, որովհետեւ «Արձագանգ»ի մէջ յառաջ բերածս բառ առ բառ նրա ձայն էր: Եւ այն օրից Տէր Հայրը դրեց ինձ իւր մեծ բարեկամների շարքում. ուր ես նստել էի այդ երեկոյ, երկու եկեղեցականները բնաւ չը յիշեցին եւ չը յանդիմանեցին ինձ իմ յանդգնութեան, որ այնպէս պախարակել էի նրանց առաջնորդական անգործունէութիւնը: Բայց մինչ յառաջանում էինք ախորժահամ կերակուրների ընթացքում, եւ զօրաւոր գինիի բաժակները յաջորդում էին միմեանց, երկու վարդապետների փոքրիկ աչքերը աւելի էին փայլում կարճ ու կլոր միրուքից դուրս՝ Երեւանի ծեծած մսի քուֆթայի նման ուռած այտերի եւ կանաչ բիբեռի նման երկարած քթերի միջեւ:

Նրանք բարբառում էին ոգեւորութեամբ: Սրուանձտեան բնութեամբ էր հանդարտաբան եւ ծանրաշարժ, իսկ Օրմանեան արագաշարժ, արագախօս եւ բարձրաբարբառ: Ես տեսնում էի որ նրանք իրենց աչքերի տակից երբեմնակի նայում էին հանդիպակաց պատի վերեւում կախուած մի մեծադիր լուսանկարին, Ստեփանոս Յովակիմեանն էր. ճակատի պատի վրայ Ներսէս Վարժապետեան, եւ աջ պատի վրայ Մկրեան: Օրմանեան երբ արդէն կորցընելու վրայ էր իւր կարմիր լեզուի շարժումների աշխոյժութիւնը, ձեռքը վեր բարձրացրեց եւ մարմինը ուղղեց դէպի լուսանկարը, դինե-

լից անարգանքով գոչելով իմ բառերը, որոցմով գովել էի այդ Առաջնորդին «Արձագանգ»ի մէջ, «Հովիւ քաջ որ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց իւրոց»: «Բաղնեպա՛նը»:

—«Այո, հովիւ անձնուէր, որի նման առաջնորդ չէ եղել եւ չկայ հայ ժողովրդի ոչ մէկ թեմի մէջ» պատասխանեցի ես կիսագինով Հոգեւորականին:

Մկրեան քահանային եկաւ խօսքի կարգը:

« Ճշմարտապէս հովիւ անձնուէր իւր հօտին »:

Այս իսկ հոկտեմբերին նա հրաւիրուեց Կ. Պոլիս, որ կատարէր իւր հոգեւոր հօր եւ մեր ազգի սիրեցեալ Պատրիարքի Հոգեհանգստեան տարեկան պատարագը, բայց մէկ օր առաջ լուր առաւ թէ իւր թեմի մի գիւղը ամբողջովին կաթոլիկ էին դարձած: Հակառակ ամենուս խնդրանքին, մերժեց մնալ եւ մեկնիլ հոգեհանգստեան արարողութենէն յետոյ ,բայց ըսելով թէ Ներսէսի համար ամէն եկեղեցական կարող էր պատարագել, բայց անոր հոգին աւելի ուրախ պիտի լինէր եթէ ինք երթար փրկել իւր մոլորեալ ժողովուրդը: Եւ գնաց: Իւր ձեռնասուն Աղաւնունիի հետ միասին հասաւ գիւղը երեկոյեան դէմ, բարձրացաւ զառի վայրէն վեր ,մտաւ հոն եղած գերեզմանատան մէջ, եւ կանգնեց գերեզմանատան եզերքը ճանապարհի վերը, եւ հոն կանչեց արտերէ եւ

գործերէ վերադարձող գիւղացիները: Լուրը տարածուեց եւ գիւղի մէջ մարդ, կին եւ երեխայ հետաքրքրութենէ եկան, հաւաքուեցան գերեզմանատուն: Ամէն ոք չուարած էր թէ Առաջնորդը ինչո՞ւ էր կանգնած գերեզմանատան մէջ, եւ ի՞նչ պիտի խօսէր: Նա վերջապէս խզեց իր լռութիւնը թնդացող ձայնով·

«Նայեցէք ո՞ւր կը գտնուիք· նայեցէք այս քարերուն ,եւ հողերուն· ասոնց տակ թաղուած են ձեր նախնիքները, մեծ հայրերն ու մեծ մայրերը, ձեր հայրերն ու մայրերը, ձեր քոյրերն ու եղբայրները, եւ ձեր զաւակները: Ասոնք ամէնը մկրտուեցան Լուսաւորչայ սուրբ եկեղեցւոյ աւազանին մէջ, ամուսնացան մեր եկեղեցւոյ մէջ, եւ մեռան մեր եկեղեցւոյ հաղորդութեամբ, եւ անոնց ճակատները եւ ձեռները օծուեցան Ս· Էջմիածնայ օրհնեալ մեռոնով եւ հայ քահանաներու ողբանուագ շարականներու օրհնութեամբ, վար իջան այս սեւ գետնի տակ: Բաժնուելով Հայ եկեղեցիէն կը բաժնուիք ասոնցմէ այս երկրի վրայ, եւ երկնքի արքայութեան մէջ, յաւիտեանս յաւիտենից: Ասոնց հող դարձած մարմինները, եւ անմարմին ոսկորները կ'անիծեն, եւ կը պոռան ձեզ գետնի տակէն եւ կ'ըսեն ձեզ՝ «Հեռացէ՛ք հոսկէ ո՛վ հաւատուրաց անարժան զաւակներ, դուրս կորսուեցէք ասկէ, եւ ալ ձեր պիղծ ոտքերը մի՛ դնէք այս սուրբ հողի վրայ եւ մեր գերեզմաններուն վրայ»: Եւ ես ալ ա-

նոնց կողմէն կը հրամայեմ ձեզ՝ կործանեցէ՛ք անկէ դուք հաւատուրաց եւ ազգուրաց հայեր»:

Այսպէս խօսեց Առաջնորդը, անեց Մկրեան, Օրմանեանի անարգալից ակնարկին ի պատասխան, եւ աւելացրեց թէ Ստեփանոսի այս դրամատիկ խօսքերի վրայ բազմութեան մէջից բարձրացան լացի եւ հեծեծանքի ձայներ, եւ աղաղակներ «Մեղա՛յ Հայր սուրբ, մեղայ, մենք կը դառնանք մեր սուրբ հաւատքի մէջ»:

Հաւատափոխութեան պատճառն էր իրենք հին տուրքեր ունէին, եւ կառավարութիւնը ստիպում էր նրանց վճարումները: Նրանց խնդիրները կուսակալին, եւ Պատրիարքարանին ի զուր էին անցել. մի կաթոլիկ հայ եկեղեցական համոզել էր նրանց թէ՝ եթէ դառնային կաթոլիկ, կաթոլիկների Պատրիարք-Կաթողիկոս Ազարեան խոստանում էր ազատել նըրանց տուրքերից:

«Լաւ, թողէք Ազարեան հեթանոսներուն քրիստոնեայ դարձնէ եւ ոչ թէ ձեզ նման բարի քրիստոնեաներուն կաշառելով: Ես հիմա կ՚երթամ Պոլիս, եթէ չը յաջողիմ, այն ատեն գացէք եւ պաշտեցէք Հռոմայ Պապը»:

Նա եկաւ Պոլիս, գնաց Բարձրագոյն Դուռը, եւ նախարարապետի եւ նախարարների դուռները զարկեց, մինչեւ որ հասաւ իր նպատակին:

Այս մի օրինակ է, որ ցոյց է տալիս թէ

այդ անբարենորոգեալ Թիւրքիայում մի հայ Թեմական Առաջնորդ որքան անարգել ասպարէզ ունէր իւր գործունէութեան համար, եւ որքան բարիք եւ բարենորոգումներ կարող էր անել իւր ժողովրդի համար, եթէ ունենար օգտակար լինելու հասկացողութիւն եւ գործելու կամք նաեւ չարիքների բժշկութիւն: Այսպիսի չարիքներից մէկը ես տեսայ միեւնոյն գաւառի մի հայ գիւղի ժողովրդեան մէջ, որ պատկերացնում է թէ որքան ողբալի թերութիւններ կան մեր ցեղի բնաւորութեան մէջ:

Արսլանբէգ բազմահայ գիւղը այրուել էր, եւ կարդացինք թէ Սուլթան Համիդ 5000 ոսկի էր նուիրել նորոգութեան համար: Ծնունդի ժամանակ Միհրանի հետ գնացի իւր հիւրասէր հօր տունը: Լսեցինք Առաջնորդը Ծնունդը անցընում էր կիսաւեր Արսլանբէգի սգասիրտ բնակիչների մէջ: Ծնունդի կէսօրը անցել էր, երբ Միհրան եւ ես նստանք ձիերի վրայ եւ ձիւնապատ եւ դժուարին ճանապարհով մեկնեցանք ուր էր ժողովրդանուէր հոգեւորականը: Գիւղի ցածից անկարելի էր ձիերով վեր բարձրանալ, այնքան որ գետինը լպրծուն էր: Այդտեղ երեւում էր մի հողաշէն ցած երկար անարուեստ հաստատութիւն: Ժամանակաւոր եկեղեցին էր ,եւ ասեցին ժողովուրդ եւ Առաջնորդ այնտեղ էին: Մտանք ներս, տեղը լի էր աղօթողներով, եւ Ստեփաննոս Եպիսկոպոս կանգնած սեղանի վրայ քարոզում էր: Երբ

նայեցայ այդ տեսարանին եւ միտքս սաւառնեց այն երկիրը, ուր այս հաւատացեալների աստուածային տէրը տասն եւ ութ դար առաջ քարոզում էր իր աշակերտներին եւ հաւատացողներին եւ մտածեցի թէ արդեօք պատահե՞ց որ քարոզէր այսպիսի դժբաղդութեամբ հարուածուած մի ժողովրդին, որպէս եկել էր այդտեղ, եւ քարոզում էր նրա այս հայազգի պաշտօնեան:

Ժամերգութիւնը վերջացաւ, ժողովուրդը ցրւում էր, ոմանք գլխիկոր: Առաջնորդը տեսաւ մեզ, ժպտեց եւ ողջունեց, եւ օրհնեց մեզ, մեր մտածութեան համար, ինչ մտածումով որ նա էր եկել այնտեղ: Եկեղեցւոյ ներսում կային երկու թէ երեք քուէտուփեր, գրուած թուղթեր պատի վրայ, ցոյց տալով որո՞նք էին ընտրուել գիւղի վարչութեան անդամներ եւ որքան քուէներով, քուէարկողների թիւը հասնում էր շատ հարիւրների, եւ քուէարկութիւնը կատարուել էր Առաջնորդի եւ քահանաների հսկողութեան տակ, եւ ներկայացուցիչների մասնակցութեամբ:

Առաջնորդը տարաւ մեզ, ուր ինքն էր իջեւանել եւ առաջարկեց մեզ մի երկու օր մնալ եւ տեսնել գիւղի վիճակը:

Մինչ նստած էինք իր բնակատեղիում, որ եւ մերն էր, եւ նմանում էր Թիֆլիսի եւ Երեւանի բալկոնաւոր տուներին, մի սոսկալի կրաւաձայն դղրդաց, լսուեց ցածից, բարձրա-

նալով դէպի վեր: «Նորէն այն անզգամ եւ անմիրտ մարդիկը», ասեց Եպիսկոպոսը, ցաւալի սրտով:

— Հայր սուրբ, մենք չենք ուզեր ադ մարդիկը ըլլան գեղի գլխաւորները: Նոր ընտրութիւն կը պահանջենք, մեր ուզած մարդիկը կ՚ուզենք որ ըլլան գեղի մեծաւորները» :

« Զաւակներս, աս քանի անգամ է կուգաք եւ ասանկ ազմուկներ կը հանէք, կը համոզւիք խօսքերուս, եւ գառնուկի պէս հեզաբար կ՚երթաք, եւ կատաղած առիւծի պէս կը վերադառնաք: Ամբողջ գեղը մասնակցեց քուէարկութեան, իմ եւ ձեր քահանաներու եւ գեղի մեծերու ներկայութեամբ: Ալ անկէ զատ կանոնաւոր եւ արդար ընտրութիւն չի կրնար ըլլալ: Գացէք տուներնիդ եւ մտածեցէք ձեր դժբաղդ վիճակի վրայ, եւ շինեցէք ձեր այրուած գիւղը »:

Մարդիկը գնացին, բայց հետեւեալ օր նորէն եկան աւելի բուռն բարկութեամբ եւ մի այլ նոր ընկերով, եւ գոռալով Առաջնորդին:

Համբերատար եպիսկոպոսը ոտքի ելաւ, բռնեց երկուքի թեւերից, եւ հրամայեց իր մօտ եղած անձերին, եւ պայրոյթալից ձայնով գոչեց՝ բանեցէ՛ք այդ անզգամներուն, եւ կոխեցէք աս սենեակի մէջ, եւ կողպեցէք դուռը, եւ դառնալով խառնակիչներին, գոչեց՝ «դուք թշուառականներ, աս քանի անգամ կ՚ըլլայ ձեր ըրածները. ասանկ ադ սենեակի մէջ բանտար-

կուած պիտի մնաք, մինչեւ որ խոստովանիք, եւ ըսէք ինձ թէ ո՞րոնք են որ կը սորվեցնեն ձեզ ատանկ խառնակութիւն ընէք աս անբաղդ-գեղի խաղաղութիւնը տակն ու վրայ ընելու համար»:

Ամբողջ գիշեր բանտարկեալ մնացին, եւ հետեւեալ օր յուսահատ խոստովանեցին: Առաջնորդը կանչեց բուն գլխաւոր եւ անյաջող աղաներին, եւ նրանց ներկայութեամբ հրամայեց բանտարկեալներին խոստովանել եւ իրենց գրգռող այդ մարդոց անունները:

Եւ այսպէս Արսլանբէգի տուների հրդեհից յետոյ նա իջեցրեց, եւ մարեց Արսլանբէգի մարդոց կրքի եւ ատելութեան հրդեհը: Մի յատուկ կիրք եւ ատելութիւն եւ խառնակութիւն, որ նուազ կամ առաւել չափով անսովոր չէ մեր ազգի նշանաւոր կամ աննշան վայրերի եւ հասարակութեան մէջ, մանաւանդ, ուր կայ եկեղեցի, եւ փոքրոգի փառասէրներ ձըգտում են դառնալ անդամ հոգաբարձութեան եւ դրա նման մի ողորմելիօրէն բարձր դիրքի, կամ ներկայացուցիչ մի չնչինաթիւ հասարակութեան ազգային գործիչ, ուր ազգային գործ չկայ էապէս:

Այս մեծութեան ձգտումով փոքրոգի բնաւորութեան տէր հայեր ուր եւ երթան նոյն իսկ մինչեւ հեռաւոր Ամերիկա, տանում են իրենց մէջ այդ ախտը: 1911ի նոյեմբերին հետեւեալ

օրուայ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Գէորգ Ե․ ասեց ինձ․

«Այս Ամերիկայի հայերը ապրում են լու-սաւորեալ ազգերի մէջ, բայց մնացել են իրենց խաւարամած Անատոլիի գիւղերի վայրենի-ներ կռուելով իրար հետ վարդապետի եւ եկե-ղեցւայ խնդիրներով, եւ միմեանց դէմ հեռա-գիրներ եւ նամակներ ղրկելով Նիւ Եօրքից մինչեւ Էջմիածին, եւ չեն ամաչում իրենց ա-րարքներով»:

Եթէ Նիւ Եօրքի հայեր այսպէս էին եւ դեռ չէին ամաչում, ինչո՞ւ մեղադրելի համարուէ-ին խեղճ Թիւրքիոյ Արսլանբէգի նման ոգիով հայ փոքրոգի եւ ողորմելի փառախնդիր ազ-գային գործիչները:

Այսօրինակ բնաւորութեամբ, բայց Անա-տոլիի հայ գիւղերի Արսլանբէգի այս գիւղա-ցիների նման անկիրթ եւ խաւարամիտ ոգինե-րը, յաճախ շատ շուտով մոռանում են թշնա-մութիւնը միմեանց հանդէպ: Բայց Նիւ Եօրքի լուսաւոր փողոցներում քայլող կրթուած հա-յեր այդ առաքինութիւնից էլ զուրկ են:

Երբ հեռացանք այրուած գիւղից, ըստ ե-րեւոյթին ատելութեան հրդեհը մարել էր, նրանց այրուած գիւղի հրդեհի նման:

ՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ ԵՒ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՆԴԷՍՆԵՐ

Վերադարձանք Կ. Պոլիս, եւ այժմ մի քանի այցելութիւնից յետոյ, ես տեսել էի Նիկոմիդիոյ գաւառի բոլոր կարեւոր հայ գիւղերը, եւ գաղափար էի կազմել թէ հայրենիքից հեռու այդ հայերի կեանքը եւ վիճակը ինչպէ՞ս էր եւ խորհում էի թէ ուրիշ ինչո՞վ կարող էր տարբեր լինել բուն Հայաստանի հայ ժողովուրդի վիճակը, որ միեւնոյն տէրութեան տակ էին ապրում եւ կառավարւում էին միատեսակ Թուրք պաշտօնեաներով:

Իմ ամենահետաքրքրական տեսարաններից մէկն էր Ազգային Երեսփոխանական Ժողովը, որի Սամսոնի շրջանի անդամ Յովհաննէս Արշակունի անուան փայլուն երիտասարդին ծանօթացայ նաւի վրայ, որ հրաւիրեց ինձ երթալ Թրքահայոց այս փարլամենտը, եւ տեսնէի իրեն եւ լսէի իրենց ճառերը:

Որքան մտաբերում եմ այդ փարլամենտը

կամ Ղալաթիոյ եկեղեցւոյ մէջ էր կամ կից սըրահում, եւ բաւական ընդարձակ՝ տեղաւորել անդամներին, եւ ունկնդիրներին։ Բոլոր երեսփոխանական աթոռները գրաւուած, եւ տեղը լի հանդիսականներով։ Պատրիարքական աթոռը պարապ էր, եւ ծածկուած սեւ շղարշով, նրա շուրջ նստած էր ժողովի ատենապետը, կարծեմ Սիմոն Մաքսուտ բէյ, ապագայ յանուն յեղափոխութեան գործող դրամաշորթների գլխաւոր զոհը։

1885ի յունուար ամիսն էր եւ այդ օր կատարւում էր ընտրութիւն մի նոր պատրիարքի, նստելու Ներսէս Վարժապետեանի թափուր աթոռի վրայ։ Եւ ընտրուեց Յարութիւն արքեպիսկոպոս Վեհապետեան, անունի որպէս թրքասէր, այսինքն Թուրքիոյ սուլթանական գահին հաւատարիմ լինելու ջերմ կողմնակից։ Ժողովը յուզմնալից էր, եւ բուն պատճառը անհետացած իմ յիշողութիւնից։ Արդիւնքը ողջունուեց մեծ ծափահարութեամբ։ Յայտնապէս Ազգային ժողովի նպատակն էր այս ընտրութեամբ ցոյց տալ Թուրքիոյ Հայոց պաշտօնական աւանդական հաւատարմութիւնը դէպի Օսմանեան տէրութիւնը։

Այս ժողովը նման չէր Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրութեան, ուր ես մասնակցեցայ 1911ին, որ կատարուեց փակ եկեղեցւոյ մէջ, եւ ռուս կառավարութեան երկու պաշտօնեաների ներկայութեամբ եւ հսկողութեան

ներքեւ ,եւ ոչ եւս 1932ի ընտրութեան, ուր Մոսկվայի Սովետ պետութեան ներկայացուցիչը թէեւ չկար, բայց Պատգամաւորական ժողովի ատենապետը երեքօրեայ ժողովների ընթացքին, իւրաքանչիւր գիշեր գնում էր անտեսանելի պետական ներկայացուցչի մօտ եւ տեղեկագրում նրան օրուայ ժողովների խորհրդակցութեան մանրամասնութիւնները, այլ ամէն ինչ ազատ էր, անկաշկանդ եւ բնական:

Հանդիսականներ եւ երեսփոխաններ շարժման մէջ էին թէ ատեներով եւ թէ լեզուով: Եւ ես եւս շարժում էի աչքերս երեսփոխանների վրայ գտնելու համար վայելչակազմ Արշակունին, երբ աչք աչքի հանդիպեցանք, եւ նրա փայլուն աչքերը ժպտեցան եւ ես մօտեցայ նրա կողմը: Նա արդէն դուրս էր գալիս Հայ անմահների շրջանակից:

— Է՜հ, ինչպէ՞ս գտար մեր փարլամենտը, կըտեսնաս որ լեզուի ազատութիւն ունինք, եւ կ՚ընտրենք մեր ուզած մարդը: Այս անգամ չընտրեցինք ուսեալ եւ ազգասէր Խորէն արքեպիսկոպոս Նարբէյին, որ իբրեւ Հայկական Խնդրի պատգամաւոր ղրկեցինք Ցարի մօտ, եւ չոր ու ցամաք ետ եկաւ, բայց ընտրեցինք հայհոյանքի մէջ վարպետ եւ ազգասիրութիւնը թրքասիրութեան մէջ օգտակար համարող Վեհապետեանին: Նա գիտէ թէ եթէ թուրքին կասկածող դարձնենք, կը դառնայ կատաղող, եւ գիտէ ինչ պիտի լինի հետեւանքը:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

— Երանի թէ Թուրքիոյ Հայոց այս Ազգային ժողովի տեղը լինէր բուն Հայաստանում, Կարինում, կամ Վանում, ասեցի ես։

— Ոչ, Պոլիսն է ամենալաւ տեղը, հոս մեր ձայնը մօտ է կառավարութեան ականջներուն եւ երեսփոխանները միայն Հայաստանի հայութիւնը չեն ներկայացներ, բայց Կ. Պոլսոյ եւ եւրոպական եւ ասիական հայ հասարակութիւնները, եւ հոս են մեր ուսեալ եւ ազդու մարդիկը, եւ բոլոր հայ լրագիրները։ Հոս է մեր ազգային թագաւորութիւնը, եթէ կրնանք թագաւորութիւն անուանել։

Մեծ պատերազմի 1914ի դեկտեմբերին գընացի Նիւ Եորք Բրիտանական Թանգարանի էդուարդ Թագաւորի բաժնի կառավարիչ եւ Անգլիոյ գլխաւոր քնարերգակ բանաստեղծ Լօրանս Բինեոնի հետ, մի երեկոյ մի բարեկամի հետ, երբ նստած էինք մի հայկական ճաշարանում, նա ցոյց տուեց հեռու անկիւնում նստած մի տարեց եւ հաստակազմ մարդ եւ ասեց·

— Նայի՛ր հոն, տոքթոր Յովհաննէս Արշակունի, երբեմնի երեսփոխան Թրքահայոց Ազգային ժողովոյ»։

Նայեցայ, որքա՜ն տարբեր էր երբեմն տեսած Արշակունիից։ Յեղափոխութեան կոտորածների ահ ու սարսափը քշել էին նրան Վոսփորի ափերից Հըտսընի եզերքները, եւ նրա պանծալի հայկական փարլամենտը ոչն-

չացած իր գոյութեամբ: Եւ մեծ պատերազմի 1915ի աւելի մեծ կոտորածը եւ ոչ խիկ վեց հայ Թաղուց Նիկոմիդիոյ աւելի քան վաթսուն հազար իմ տեսած բաղդաւոր ապրող հայ գիւղացիներից, եւ նրանց անձնուէր հովիւը, ըՍտեփանոս ծերունի Արքեպիսկոպոսը հետեւեց նրանց մահուան անդառնալի քայլերին, մերժելով կառավարութեան առաջարկը որ մնար եւ ապրէր Կ. Պոլսում:

Երբ այնպէս 1885ին խօսակցում էինք Արշակունիի հետ Թուրքիոյ Հայ ազգի այդ մխիթարար ազատութեան խօսարանի մէջ, մեզանից ոչ մէկն էր երեւակայում իր եւ իր ազգի խաւար եւ արիւնալից ապագան:

Պատեհութիւնը ձգել էր ինձ գլխաւոր հայ օրաթերթ «Արեւելք»ի մէջ, ուր հայ լիահասուն եւ կիսահասուն գրողներ ուխտի էին գալիս իրենց յօդուածներով՝ Կ. Պոլսի ընթերցողներին եւ ընթերցուհիներին հրապուրելու եւ հիացնելու: Մեր խմբագրութեան վերջին անդամներից մէկն եղաւ Երուանդ Սրմաքէշխանեան ապա լաւ գրող, լածիս նայելով, եւ 1915ի կոտորածների գրագէտների խմբի զոհերից մէկը: Երբէք չեմ մոռանում նրա խոշոր քիթը եւ համարժէք դէմքը. նրան նայելով ես յիշում էի մեր էջմիածնայ ճեմարանի բարձրագոյն դասարանի ընկեր Մանուկ Աբեղեանի երեսը եւ քիթը, որին մեր ամենալաւ հայագէտ Ստեփան Կանայեան անուանում էր Աստաքա-

թի էշ, տանից գուշակելու թէ այդ էշը մի օր պիտի դառնար իրենից շատ աւելի մի մեծ մարդ. Խորհրդային Հայաստանի ամենաանուանի պրոֆէսորը եւ աւագ ակադեմիկոսը եւ մահից յետոյ փառաւորուէր բարձր գնահատութեան յիշատակով: Նրա զուգատիպը, եւ Կ. Պոլսի ընկերակիցս Երուանդ սիրում էր երթալ թաղական դպրոցների քննութեան հանդէսներին որ միշտ փայլուն էին դրօշակներով, երգերով եւ ճառերով: Ես սիրում էի երեք մասնաւոր դպրոցները, որ արտադրում էին Կ. Պոլսի եւ Կ. Պոլսից դուրս հայութեան լաւագոյն մտաւորականները, Գուրգէնեան եւ Պէրպէրեան տղայոց, եւ Մեզպուրեան աղջկանց դպրոցները: Վերջին երկուսի հանդէսները գերազանցում էին ամենին՝ թէ Պէրպէրեանի եւ թէ Մեզպուրեանի հանդէսները լի էին քաղաքի կրթեալ այցելուներով, եւ նախագահութեան աթոռի վրայ միշտ երեւում էր Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեան, պահպանողական կուսակցութեան պետը Ազգային ժողովին մէջ, եւ Ազգային ժողովից դուրս, Երկաթէ Պատրիարքը յետոյ, եւ ապագայ Կաթողիկոս Ամենայն Հայոց: Պէրպէրեան իւր հռետորական ճառերով եւ հիանալի գրաբարեան աշխարհաբարով կախարդում էր ունկնդիրներին, եւ գնահատւում էր ծաղկեփունջերով: Նրա աշակերտներից մեծ մասը կեանքի մէջ լաւ դիրքերի էին հասած: Իզմիրլեան նոյնպէս

բացակայ չէր լինում իր տարեց բարեկամ Մեղպուրեանի նմանօրինակ հանդէսներից։ Կ. Պոլսի կրթեալ մայրերից շատեր դուրս էին եկած Նիկոմիդիոյ Զէնդիլէրցի Մկրտիչ Մեղպուրեանի այս պատուական կրթարանից, ուր հանդէսների ժամանակ այնքան համեստ եւ քնքոյշ աշակերտուհիներ ցոյց էին տալիս իրենց երեսները իրենց հանդիսատես ծնողներին եւ հայրենիքին։ Ի՞նչ եղան այդ տեղերից դուրս եկած կրթեալները, եւ նրանց կըրթիչները։ Երբեմնի կարմրաթուշ եւ զուարթերես Ռէթէոս Պէրպէրեանին եւ իր գեղանի կնոջ, փոխանակ իրենց լայն եւ արձակ հանգստաւէտ տան եւ դպրոցի մէջ լինելու, տեսայ նրան 1898ին թէ առաջ, ժնեվում վշտահար երեսով եւ անժպիտ աչքերով։ Նաեւ իր օրիորդէմ կինը զաւակներով միասին, նստած էին մի սենեակի մէջ, մահուանից փախած թըշուառների նման։ Հայկական կոտորածները կործանել էին նրա դպրոցը, եւ կեանքը, եւ քշել նրան այդ հեռաւորութեան մէջ։ Ես Փարիզում երբ լսեցի Մեղպուրեանի այնտեղ լինելը գնացի տեսնել նրան, որի տան մէջ շատ անգամ եղել էի հիւր եւ անցրել գիշերները։ Երկուսն էլ մտերիմ անձեր էին եւ սիրելի իմ սրտին։ Մանուկ, անդրանիկ որդին, արգիլեց ինձ տեսնել իր հայրը, «Շատ հիւանդ է, անցեալը յիշելով սիրտը լի է վշտով, եւ եթէ հիմա քեզ տեսնէ, կարող է սրտի կաթուած ունե-

նալ»։ Եւ ես չտեսայ նրան եւ նա թաղուեց յաւիտենականութեան մէջ ինչպէս թաղուել էր իր սիրելի դպրոցը։ Ապագայի այս ցաւալի տեսարանները ոչ Երուանդն էր երեւակայում եւ ոչ ես, երբ ուրիչ հանդիսականների հետ միասին ծափահարում էինք հայ ուսուցիչների ճառերը եւ աշակերտների երգերը։ Այդ ժամանակից եւ ոչ իսկ տասն տարիներ առաջ անցընում էինք մեր օրերը խմբագրատան մէջ խօսելով ազգային խոշոր խնդիրների վրայ, կամ վիճելով երթեւեկ գրողների հետ, կամ երթալով Ազգային ժողովի նիստերին եւ մտիկ ընել երեսփոխանների ճառերը։

ՀԱՅ ՄԱՄԱՒԼԸ Կ. ՊՈԼՍՈՒՄ

ԵՒ ԹԻՖԼԻՍՈՒՄ

«Արեւելք»ի խմբագրատունը Բարիզ եւ Կ. Պոլիս ուսած թարմ երիտասարդութեան, եւ հանրային գործիչների այցելարան էր։

Այս թրքահայ ինտելիգենցիան, որ ամէն առիթ ունէր տեսնել եւ վիճել Օսմանեան

Կայսրութեան հայ ժողովրդի ճշմարիտ վիճակը, բնաւ վրդովուած եւ բորբոքուած չէր երեւում Թրքահայոց վիճակով, ինչպէս բորբոքուած էին երեւում Ռուսական Ցարի երկաթեայ լախտի տակ ապրող մի կարգ ռուսահայ երեւակայօրէն ազգասէր մտաւորականներ, որ անպատճառ ուզում էին փրկել իրենց հալածուած եւ տանջւող Թրքահայ եղբայրներին բռնակալ Սուլթանի դաժան լուծի տակից:

Եւ զարմանալի չէր որ Թրքահայ այս մտաւորականները անվրդով եւ խաղաղ էին իրենց գրով, որովհետեւ խօսքի եւ մամուլի ազատութիւնը անկաշկանդ էր. Ազգային Երեսփոխանական ժողովի մէջ անդամները ազատ էին խնդրի առարկայ անել ո եւ է զրկանք որ տեղի էր ունենում Կայսրութեան ո եւ է մասում ոեւէ հայի դէմ, քիւրդի, Թուրքի եւ նոյն իսկ ո եւ է կառավարական պաշտօնեայի կողմից, եւ խնդիրը Պատրիարքի միջոցով ներկայացնել Ներքին Գործերի Նախարարի նկատողութեան:

Այսպէս, մի միապետական տէրութեան մէջ Թրքահայերը վայելում էին մի տեսակ սահմանադրական ինքնավարութիւն:

Մինչդեռ Ռուսաստանում հայ մամուլը, որպէս միշտ, խիստ գրաքննութեան տակ էր, կառավարական ոչ մի արարք եւ ընթացք, ոչ մի պաշտօնեայ եւ ոչ իսկ ամենահասարակ ոս-

տիկան կարող էին քննադատութեան առարկայ լինել մամուլի մէջ: Եւ ով որ բերանացի համարձակուէր անել այդպիսի մի քննադատութիւն, նկատւում էր հակապետական, յեղափոխական եւ պատժւում էր բանտարկութեամբ կամ աքսորով: Եւ սակայն Թիֆլիսի «Մշակ» թերթը իր էջերում հրատարակւող յօդուածներով եւ վէպերով իր հայ երիտասարդ ընթերցողների համար մի կատարեալ յեղափոխական բոցալից զգացումների վառարան էր ընդդէմ Թուրք պետութեան, նկարագրելով Թրքահայ ժողովրդի զրկանքներն եւ հալածանքները այդ պետութեան ձեռքից: Չէինք խորհում հարցնել մենք մեզ թէ ինչո՞ւ ռուս պետական գրաքննութիւնը որ այնքան ամենախիստ էր իր պետութեան ո եւ է արարքի աննպաստ հրատարակման, այդքան թոյլատու եւ ներողամիտ էր Հայ ժողովրդի միւս մասի վրայ իշխող հարեւան պետութեան նըկատմամբ, եւ թունաւորում ռուսահպատակ երիտասարդութեան միտքը այդ պետութեան դէմ: Թիֆլիսի միւս գլխաւոր թերթերը, Մեղու Հայաստանի, Նոր Դար, եւ Արձագանգ, հակառակ էին այդ ուղղութեամբ յօդուածներ հրատարակել եւ գրգռել իրենց ընթերցողների զգացումները Թուրքիոյ դէմ:

1888ին, Ս. Սպանդարեան, «Նոր Դար»ի խմբագիրը, մտերմաբար յայտնեց ինձ թէ՝ ինքն գրաքննիչից թոյլատւութիւն ունի յօդ-

ուածներ հրատարակել Թուրքիոյ դէմ, բայց թոյլատրուած չէր ո եւ է նպաստաւոր բան գրել Թուրք պետութեան մասին, կամ նոյն իսկ հերքել «Մշակ»ի մէջ հրատարակուած հայ ժողովուրդը գրգռող ո եւ է հակաթուրք յօդուած: Ռուս կառավարութեան նպատակն է, աւելացրեց ինձ «Նոր Դար»ի խմբագիրը, ռուսահայ երիտասարդներից այսպէսով ստեղծել յեղափոխականներ Թուրք պետութեան դէմ, խառնակութիւն ստեղծել տալ Թուրքահայոց մէջ, զայրացնել տալ Թուրք կառավարութիւնը կոտորած ստեղծելու իր հպատակների դէմ որպէս զի Թուրքիոյ այդ ընթացքով ինքն Ռուսսիա մի այլ պատրուակ գտնէր յանուն քրիստոնեայ ժողովրդի պաշտպանութեան գրաւելու այդ տէրութեան հայկական սահմանակից նահանգները:

Ռուսահայ խմբագիրը պարտ էր ամէն անգամ իր թերթի բոլոր տպագրուած նիւթերը տանել գրաքննիչի տունը, եւ գրաքննիչը ջընջում էր ինչ որ գրաքննական օրէնքով պարտաւորուած էր եւ մնացեալը արտօնագրում էր հրատարակման: Խմբագիրը ստիպուած էր նոր նիւթ գրել գրաքննիչի թոյլտուութեան՝ ջնջուած պակասի տեղը լցնելու համար: Բայց ռուս գրաքննական բռնակալութիւնը եւ նենգամտութիւնը չէր վերջանում այդտեղ: Եւ այստեղ յառաջ եմ բերում մի օրինակ որ գաղափար է տալու թէ քաղաքական հալածանքի

ծրագիրը որքան ամենամանր հարցերի, եւ անձերի շուրջն իսկ էր ցանցաւորուած:

1885ին, երբ Մելքիսեդէկ արքեպիսկոպոս Մուրատեան կաթողիկոս ընտրուեց Հայ ազգի կողմից, Ցարը մերժեց նրա ընտրութիւնը, որովհետեւ իր երիտասարդ տարիքում հարկադրուել էր Կովկասից փախչել Թուրքիա՝ իր հակապետական գաղափարների հետեւանքով: 1890ին Կ. Պոլսից գնացած էի Թիֆլիս, երբ «Մշակ» թերթի մէջ կարդացի մի յօդուած Մուրատեանի դէմ իրականութիւնը գլխովին աղաւաղուած մի փաստի մասին, յայտնապէս ամբողջ նպատակը լինելով վարահամբաւել հայ ժողովրդի աչքին այդ գերազանցօրէն արժանաւոր անձի անունը:

Ճշմարիտ իրականութեանը լիակատար ծանօթ լինելով, գրեցի մի յօդուած, ուր յիշել էի Խրիմեան Հայրիկ, հայ ազգի ամենայարգուած եւ ամենաժողովրդական եկեղեցականը, որ այդ խնդրի ճշմարտութեան ինձ հետ միասին վկայ էր, եւ յօդուածը յանձնեցի «Մըշակ» թերթի խմբագիր Գրիգոր Արծրունիին, որ խոստացաւ ի նկատի առնել: Այդ միջոցին իմ ճեմարանական ընկեր եւ յայնժամ յայտնի վիպասան Վրդանէս Փափազեան «Մշակ»ի խմբագրութեան անդամներից մէկն էր, եւ ինձ հետ միասին գալով մտերմաբար ասեց. «յօդուածդ չեն հրատարակի», Մելքիսեդեկի դէմ եղած յօդուածը խմբագրութեան մէջ

պատրաստուեց»: Արդարեւ մերժուեց: Գնացի «Նոր Դար»ի խմբագիր Սպանդար Սպանդարեանին, որ պատասխանեց. «Չը նայած իմ մեծ յարգանքին Մելքիսեդէկ սրբազանի հանդէպ, անկարող եմ հրատարակել յօդուածդ, ցենզուրից հրաման ունեմ չը հրատարակել ոչ մի տող նրան նպաստաւոր, բայց հրատարակել ամէն ինչ նրան աննպաստ»: Եւ ես նրա խորհուրդով գնացի գրաքննիչի մօտ, որ հայ էր եւ անունը կարծեմ Խարախանով: Յայտնի եղաւ որ այս անձը իր փոքր տարիքում Գարեգին Մուրատեանի աշակերտն է եղել, եւ այդ տարիքից ի վեր պահել էր իր սէրն եւ յարգանքը իր ուսուցչի հանդէպ. «շատ եմ ցաւում որ անկարող եմ թոյլատրել ձեր նպաստաւոր յօդուածի հրատարակութիւնը. այսպէս է իմ հըրամանը Մելքիսեդէկ Սրբազանի նկատմամբ»:

Ռուսիոյ բռնակալական ռէժիմից այս առաջին փախստականի՝ Մելքիսեդէկ Արքեպիսկոպոս Մուրատեանի՝ հանրային կեանքի քաղաքական նշանաբանն էր իր Թրքահայ ունկնդիրներին հասկացնել թէ հայ ազգը գըտնւում է երկու մեծ տէրութիւնների միջեւ, որոնցից մեր չնչին ուժով չենք կարող ազատել մեր պատմական երկիրը եւ ստեղծել անկախ Հայաստան: Թէ ռուս տէրութիւնը աստիճանաբար սպանում էր իր հայ ժողովրդի ազգային լեզուն, դպրոցները եւ կրօնը, մինչ Թուրք տէրութիւնը թոյլատրել էր իր հպատակնե-

րին իրենց լեզուի, դպրոցների եւ կրօնի անկաշկանդ ազատութիւն: Եւ երբ 1887ին տարի նրան առաջին յեղափոխական թերթ Հնչակի առաջին թիւը, որ ստացել էր ռուսական փոստով, որով յայնժամ բոլոր մեծ պետութիւնները ունէին իրենց առանձին փոստաները Կ. Պոլսում, Մելքիսեդէկ Մուրատեան, յեղափոխութեան ծրագիրը կարդալուց յետոյ ասեց· «Այս յեղափոխական մտքերը Ցարի կառավարութիւնը մշակեց Կովկասի հայ երիտասարդութեան մէջ, որ պիտի ծառայէ Ցարի կառավարութեան նպատակին, պիտի գրգռութիւն եւ ատելութիւն ստեղծէ Թուրք կառավարութեան դէմ, եւ քայքայէ այն պարտաւոր վստահութիւնը որ Թուրք Սուլթանները ունեցել են իրենց հայ ժողովրդի մասին, որպէս իրենց ամենահաւատարիմ հպատակները. եւ թէ հետեւանքը կարող էր լինել դժբաղդութիւն եւ կոտորած»:

Այս համոզմունքի եւ հաւատքի Հայ մարդը որ մարմնով արդէն առ նուազն քառասուն տարիից ի վեր հալածական փախստական էր Ռուսիայից, սակայն դարձեալ երբ բարձրացաւ հանրային մեծ արժանիքի մարդ եւ ընտրուեց Կաթողիկոս Ամենայն Հայոց, իր անցեալը չէր մոռացուած եւ մերժուեցաւ Ցարից, եւ անունով եւ պատւով հալածանքի եւ անարգանքի առարկայ եղաւ նրա գրաքննական անողորմ խստութեան ձեռքում:

ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

Կ. Պոլսի մէջ հայ հեղինակը եւ խմբագիրը ազատ էին այս սեւ սատանայի սարսափեցնող երեսից: Խմբագիրը ինքն էր իր թերթի ամբողջ պարունակութեան գրաքննիչը, եւ գրիչը ազատ էր գրել եւ քննադատել ազգային եւ հանրային ամէն խնդիր, իրեն մնալով ուղիղ դատողութեան եւ խոհեմամտութեան սահմանը: Հայ լրագիրը ազատ էր գրել գաւառների մէջ հայ անհատների դէմ կատարուած զըրկանքների եւ նոյն իսկ գաւառական դատարանի արած վճիռների դէմ, ժողովրդային բողոքներ եւ ցոյցեր անել Կ. Պոլսում, ինչպէս զոր օրինակ մի բան ինքեան տխմար ցոյց որ ահագին աղմուկ հանեց ամեն ուրեք, նաեւ մամուլի մէջ: Մուսա բէկ անուն մի քիւրդ ցեղապետ առեւանգեց Գիւլիզար անուն մի հայ կին: Մուշի հայերը եւ Առաջնորդը բողոքեցին. խնդիրը գնաց դատարանի. դատարանը գտաւ որ կինը կամովին էր առեւանգուել, եւ որոշեց որ Մուսա բէգ պահէր կինը իր հետ եւ չը յանձնէր ամուսնին: Կ. Պոլսի հայ թերթերը եւ Մշեցի բեռնակիրները ահագին աղմուկներով խնդիրը այն ծայրայեղութեան տարին, որ կառավարութիւնը Կ. Պոլիս բերել տուաւ Մուսա բէկին եւ Գիւլիզարին վերաքննելու խնդիրը, դատարանը որոշեց յանձնել կինը իր ամուսնին: Մի քանի ամիս յետոյ, Գիւլիզարը թողեց իր ամուսինը եւ գնաց ապրել Մուսայի հետ, եւ այսպէսով վերջացաւ այդ

ազգային մեծ խնդիր դարձած ազատուելու խընդիրը, որ ծաղրելի պիտի թուէր Անգլիոյ կամ Ֆրանսայի մէջ ապրող ո եւ է հայի, որ առիթ ունի լսել կամ կարդալ կիների առեւանգումների մասին, տարբերութիւնը իսկապէս այնտեղ է որ մէկի ձեռք կոչւում է հրապոյր որովհետեւ զոյգերը ապրում են յառաջացեալ քաղաքակրթական շրջանի մէջ, եւ միւս զոյգերը ապրում են սանձահարուած եւ ասիական նահապետական կեանքի մէջ:

Ռուսիոյ եւ նոյն իսկ Եւրոպայի մէջ աններելի էր անել մամուլի եւ հասարակութեան այսպիսի ցոյցեր մի դատապարտական վճռի դէմ ,բայց Թուրք կառավարութիւնը վերաբերւում էր թոյլատրաբար՝ եւրոպական ազդեցութեան տակ:

ԿՈՍՏԱՆԴԻՆ ԽԱՏԻՍԵԱՆ Կ. ՊՈԼՍՈՒՄ

Հայ ժողովուրդը Թուրքիոյ անհանդուրժելի լուծից ազատելու եւ նրա համար Նոր Հայաստան ստեղծելու ազգասիրական նորաձեւութեան զգայնական ոգեւորութիւնը սփռուել էր Կովկասից մինչեւ հեռաւոր Մոսկվայի եւ հեռաւորագոյն Պետերբուրգի համալսարանական հայ ուսանողների սրտերի մէջ: 1885ի ամրան մէջ էր կարծեմ Պետերբուրգից

եկաւ Կ. Պոլիս մի ուսանող, որ շատ քիչ գիտէր հայերէն խօսել, եւ հայերէն կարդալ ոչ ամենեւին: Նոր Հայաստան ստեղծելուց առաջ փափաքել էր ուրանալ հայ լեզուին եւ գրին, եւ միակ յարմար տեղը ընտրել էր Կ. Պոլիսը, ուր յոյս ունէր պիտի չը գտնէր ռուսերէն խօսող, եւ ի հարկէ ստիպեալ խօսելու էր միայն հայերէն:

Անսահման ոգեւորութեամբ այս աշխոյժ սեւահեր երիտասարդն էր Կոստանդին Խատիսեան Թիֆլիսցի, որի հայրը, Յովհաննէս Խատիսով, Կովկասի կայսերական կալուածների կառավարիչն էր: Իր բնակած տան մէջ պայման դրեց որ եթէ տան անդամները Թուրքերէն բառ գործածէին իրենց խօսակցութեան ընթացքին, տասը փարա, այն է մէկ կոպէկ տուգանք պիտի տային, եւ եթէ ինք գործածէր ռուսերէն բառ, քառասուն փարա տուգանք պիտի տար, եւ այս գումարները պիտի դրուէին իր յատկապէս գնած մի տուփի մէջ, եւ գոյացած գումարը պիտի յատկացուէր Հայաստանի ազատութեան համար: Փողոցներով ուր որ երթալու լինէր, Մայրենի Լեզու դասագիրքը անբաժան էր իրենից, բռնուած կամ ձեռքում կամ գրպանում:

Յետագայ այցելութեան ժամանակ, տինամիտ շինելու փորձեր էր կատարում: Մի անգամ այս փորձը արեց երկու Վանեցի երիտասարդների բնակարանում, Թերզիպաշեան

եւ Թէրլէմէզեան, որոց հայրերը ապրում էին Կ. Պոլսում եւ ունէին առեւտրական սենեակներ, ուր Խրիմեան Հայրիկ, ժամանակի ամենաանուանի ազգասէրը յաճախ այցելում էր, երբ ուզում էր յագեցնել իր հայրենիքի կարօտը:

Յեղափոխական զգացումներով խմորուած երիտասարդները մղել էին Խրիմեան Հայրիկին տեսնել Խատիսեանի տինամիտ շինելու փորձը: Ամէնքս պատկառանքով նայում էինք մեծ քիմիագէտի շարժումներին, որ վերջացաւ մեզ համար անհասկանալի արդիւնքով, որ պայթիւնի էինք սպասում: Խրիմեան Հայրիկ ծիծաղելով ասեց «Հա՛, հիմա կը հասկնամ. այդ տինամիտի ռումբով է որ ռուս նիհիլիստներ կ՚ուզեն սպանել ամենազօր Ցարը, եւ դու ալ ատով միտք ունիս սպանել մեր ամենագութ Սուլթանը»:

Այդ օրից Խրիմեան յատուկ համակրութիւն զգաց Խատիսեանի հանդէպ. բայց չեմ յիշում թէ այլ եւս տեսայ երկու Վանեցի երիտասարդներին: 1932ի նոյեմբերին, երբ Խորհրդային Հայաստանումն էի, առաջին անգամ լինելով ծանօթացայ օրուայ նշանաւոր նկարիչ Թէրլէմէզեանի հետ, եւ չը խորհեցի հարցնել թէ արդեօք մեր երիտասարդական օրերի անկախ Թրքա—Հայաստան ստեղծելու համար տինամիտի պատրաստման ականատեսներից մէ՞կն էր:

ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

Նոյն կիրակի երեկոյեան մենք երկուքս, Յատիսեան եւ ես, գնացինք Սկիւտարի եկեղեցին, ուր Յրիմեան պիտի քարոզ տար: Ժողովուրդը ամենամեծ մասամբ նստած էին ծալապատիկ. եկեղեցին լի էր բազմութեամբ, եւ մենք տեղաւորուեցանք մուտքի մօտ: Յատիսեան ընաւ վարժ չը լինելով ծալապատիկ նըստելու, հարկադրուած էր նստել բարեպաշտաձեւ ծնկաչոքութեամբ եւ ես մնացի կանգնած: Քարոզը հնչում էր կրօնի եւ հայրենասիրութեան գաղափարների խառնուրդներով: Քարոզի նախավերջին աւելի եւս բարձրացնելով իր ձայնը, աւարտեց իր խօսքերն իրեն յատուկ մի սրամիտ դիտողութեամբ.

«Եթէ փաշայի մը կամ Թագաւորի մը տունը երթաք, նոցա ներկայութեամբ կը նստէք պատկառանքով եւ երկիւղածութեամբ, այստեղ Աստուծոյ տան մէջ նստած էք այնպէս, որպէս թէ կը գտնուիք ախոռի մը մէջ կովերու եւ գոմէշներու ներկայութեան: Նայեցէք ետեւնիդ դրան առջեւ թէ ռուսահայ ազնուականի մը զաւակը ինչպէս պատկառանքով ծընրադրուած է, եւ անկէ օրինակ առէք»:

Ամէն ոք յետ դարձաւ տեսնելու ո՞վ էր այդ բարեպաշտ քրիստոնեան: Նորակնակ յեղափոխականը, որ այդ ժամանակի գրեթէ ամէն ռուսական ուսանողի պէս հրաժարուած աստուածային գոյութեան հաւատալու, կաս կարմիր դարձաւ Յրիմեանի ակնարկութիւնից·

եւ հարիւրաւոր դիտողների դէմքերից: Բայց այդ դէմքերը չէին կարող երեւակայել թէ այդ կրօնաւորը չէր եկած այնտեղ մղուած Աստուծոյ տան սէրից, այլ մեծ ազգասէրի երեսը տեսնելու եւ ձայնը լսելու փափաքից:

Թէեւ մեր կեանքերում միշտ ապրած հեռու միմեանցից, բայց ջերմութեամբ եւ մտերմութեամբ մնացինք ընդ միշտ կապուած միմեանց հետ: Պետերբուրգ վերադարձին, իր միւս գործակից ընկերների հետ, 1886ից ըսկսած ձեռնարկեց թարգմանել հայերէնի «Բուլղար Աւազակապետ» եւ այլ յեղափոխական գրքոյկներ, որ պարբերաբար ծրարներով ղըրկում էր Կ. Պոլսի ռուսական Նամակատան հասցէով, եւ ես բաշխում էի մայրաքաղաքի զանազան հայ թաղերում որոշ անձերի, որոնք եւս բաժանում էին տեղական երիտասարդների եւ գաւառացի համալների մէջեւ:

ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԾՆՈՒՆԴԸ
Ռ. ԽԱՆԱԶԱՏ Կ. ՊՈԼՍՈՒՄ

Այս կամ հետեւեալ տարուայ ընթացքին, մի այլ ռուսահայ եկաւ Կ. Պոլիս: Մի օր երբ վերադարձայ խմբագրատուն, Ա. Արփիարեան, «Արեւելք»ի վարչութեան անդամներից եւ խմբագիրներից մէկը, ասեց ինձ. «Կուզէկ

ռուսահայ երիտասարդ մը եկաւ. քեզ նման խենթ չէ. վերջապէս խելքը գլուխը ռուսահայ մը տեսանք: Քեզ փնտռեց, եւ ուզեց անպատճառ երթաս զինքը տեսնես այս երեկոյ»:

Եկողը Ռուբէն Խանազատեանն էր, աղա Խանազատ, եւ նոյնպէս Ռուբէն Կարապետեան տարբեր անունով, եւ ապագայ Հնչակեան Կուսակցութեան հիմնադիրներից մէկը: Նա յայտնեց թէ գալիս էր Ժնեւից, ուր մի խումբ ռուսահայ ուսանողների ընկերակցութեամբ ուսումնասիրել եւ յօրինել են մի յեղափոխական ծրագիր Թրքահայոց ազատութեան համար, եւ դրա համար սկսել յեղափոխական Մասնաճիւղ կազմել նախ Կ. Պոլսում, եւ հետզհետէ գաւառներում, այսպէսով ստեղծել յեղափոխական շարժում հայկական գաւառներում՝ Թուրք կառավարութեան դէմ, ուստի յանձնարարուել էր տեսնել ինձ որ աջակցէի իրեն այդ նպատակի իրականացման համար:

Տպաւորութեանս երկու տարուայ շրջանում տեսած լինելով Տիգրանակերտի գաւառի եւ քաղաքի հայ գիւղացիների եւ քաղաքացիների բարեկեցիկ եւ ազգայնապէս ազատ կեանքը, դրանք թողել էին անմոռանալի տպաւորութիւն իմ մտքում:

Միւս կողմից, այժմ Կ. Պոլսի մէջ տեսնում էի անգրաքննիչ հայ մամուլ, ազատութիւն խօսքի, բացարձակ ազատութիւն դպրոցական կրթութեան, ազգային կեանքի ըն-

թացքներին, եւ կրօնական, ազգային, քաղաքական ընդարձակ իրաւասութիւններ:

Այս ամէնը երբ առիթը գալիս էր մտածելի մի բան էր այդ պայմանները վայելող մեր հպատակ ազգին համար:

«Մեր ձեռնարկի նպատակն է խաղաղ ազատել մեր ազգը Թուրք իշխանութեան տակից. եւ այդ միայն կարելի է գործնական յեղափոխութեամբ, այսինքն արիւն թափելով», պատասխանեց կորաքամակ, փոքրամարմին մեծարանը ինքնագոհ հպարտութեամբ:

Ի պատասխան ասեցի թէ այդ պարագային հարկաւոր էր լաւ մտածուած եւ գործնական մի յեղափոխական ծրագիր:

Նա գիտել տուեց թէ յեղափոխութիւնը յեղափոխութիւն էր, եւ ամէնի ծրագիրը նոյն էր, եւ իրենք իրենց օրինակ ունէին Իտալիոյ յեղափոխութիւնը:

Ասեցի թէ ես շատ տեղեակ չէի Իտալիոյ յեղափոխութեան պարագաներից, բայց գիտէի թէ Իտալիա մի հպատակ ազգ չէր, եւ նրա յեղափոխութիւնը չէր կարող լինել իր վրայ իշխող մի օտար տէրութեան դէմ, եւ թէ մենք ո եւ է յեղափոխական ծրագիր յօրինելուց առաջ պարտ էինք ընարել մի քանի կարող անձեր, որ առանձին ճանապարհորդէին Թուրք-Հայաստան, ուսումնասիրէին երկիրը եւ ժողովուրդը, եւ Ժենեվ վերադառնալով իւրաքանչիւրը կարդար իր տեղեկա-

գիրը, եւ ընդհանուր եզրակացութեան հիման վրայ պատրաստել մի համապատասխան ծըրագիր:

Խանապատ հաւանութիւն տուեց այդ գաղափարին, թէեւ գիտեց թէ այդ երկար բարակ խնդիր էր: Խորհուրդ տուի որ երթայինք այս մասին խօսակցելու Բերայի եկեղեցւոյ քարոզիչ Գարեգին Եպիսկոպոս Սրուանձտեանի հետ, Խրիմեան Հայրիկի աշակերտը, ժողովրդային բարբառի հեղինակ, եւ անձամբ լաւատեղեակ Հայաստանի հայաբնակ տեղերին:

Նա ասեց, ինք կողմնակից է բարենորոգումների Օսմանեան իշխանութեան ներքեւ, բայց իւր կարծիքով անհնարին էր ազատուել այդ իշխանութիւնից յեղափոխութեամբ եւ ապստամբութեամբ: Փոքր ինչ կենալուց եւ ուրիշներ եւս տեսնելուց յետոյ վերադարձաւ Ժենեվ:

Այդ տարուայ սեպտեմբերի սկզբին Կ. Պոլիս եկաւ Ալեքսանդր Մելիք Ազարեան, Թիֆլիսի հարուստ անուանի անձերից մէկը, եւ մի ու ժամանակ բնակեց Մարմարայի Պրինկիպօ կոչուած Մեծ Կղզիի մի հիւրանոցում: Ամառները ես ապրում էի այդտեղ մեր «Արեւելք» թերթի վարչական ժողովի ատենապետ Արթին Նորատունկեանի ամարանոցում, եւ ծանօթացայ Մելիք Ազարեանի հետ, որ վերադառնում էր Կարլսբադի հանքային ջրերից: Մի օր կարդաց ինձ մի նամակ իւր քրոջ որդիից որ

ուսանում էր Ժնեւում: Իր նամակում նա գրում էր թէ ինք, իր եղբայրը, եւ ուրիշ քան քան երկու ռուսահայ ուսանողներ որոշել են ճանապարհորդել Թուրքիա, եւ յատկապէս Թրքա-Հայաստանի գաւառները, եւ խնդրում էր որ այդքան գումար ճանապարհածախս ղրկէր իրեն:

«Այս տղաները, ասեց Մելիք Ագարեան, պարզապէս յիմարացել են: Կարծում են թէ՝ Թուրքիան էլ Եւրոպայի պէս է, ամէն տեղ հանդիստ երկաթուղիներ, լաւ ճանապարհներ կառքերով ճանապարհորդելու համար, եւ մաքուր հիւրանոցներ իջեւանելու համար: Չը գիտեն թէ Թուրքիայում ճանապարհորդելու են ջորիների եւ էշերի վրայ նստելով, եւ իջեւանելու են եւ քնելու խաների մէջ կովերի եւ գոմէշների հետ նոյն յարկի ներքեւ: Բացի այդ, ի՞նչ խելքով կարծում են թէ թուրք կառավարութիւնը կը թոյլատրէ որ այդքան ռուսահայ տղաներ միասին ճանապարհորդեն Թրքա-Հայաստանում, մանաւանդ որ արդէն այնքան կասկածանքով է նայում ռուսահայերին: Ես որոշել եմ մէկ կոպէկ էլ չը ղրկել այդ նպատակով»:

Մելիք Ագարեանին այդ նամակ գրող քեռորդին էր Աւետիս Նազարբէկեան, ապա Հնչակ թերթի եւ Հնչակեան Կուսակցութեան պարագլուխը: Խանդապարը երեւի կամ սխալ բացատրել էր իրենց ժողովում, կամ հայ յե-

ղափոխութեան այդ ռահվիրաները հարկ չէին տեսած առանձին եւ ծպտեալ կատարել իրենց ծրագրի ուսումնասիրութիւնը, բայց հաւա-քաբար եւ բացայայտօրէն: Սակայն վերջ ի վերջոյ ոչ ծպտեալ եւ ոչ բացայայտ դրին ի-րենց ոտքերը Թրքա–Հայաստանի հողի վրայ, որի փրկութեան համար սակայն ստեղծեցին իրենց կուսակցութիւնը:

Մի ժամանակ յետոյ, Խանազատեան գրեց թէ արդէն սկսել էին առաջին հայ յեղափոխա-կան թերթը Հնչակ, եւ օրինակները պարբե-րաբար ծրարներով պիտի գրկէր ինձ բառ կար-գադրութեան ուսանական նամականը, որ-պէս դի ցրուել տայի Կ. Պոլսում: Ծրարներից ոմանք գալիս էին առանց նամակադրոշմի, ե-րեւի Կուսակցութեան գանձի աղքատութիւ-նից կամ դատարկութիւնից դրդուած, բայց յոյսերով լի թէ պիտի գար օրը, երբ գանձը պիտի հարստանար ոսկիով, եւ Կուսակցու-թիւնը բազմացած բանակներով պիտի խոր-տակէր Թուրքի ծանրացած շղթան թշուառ Թրքահայերի վզից:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

ԳԱՄԱՌ ՔԱԹԻՊԱ Կ. ՊՈԼՍՈՒՄ

Չեմ յիշում 1886ին էր թէ քիչ յետոյ, երբ «Հիմի է՞լ լռենք»ի հեղինակը յանկարծ երեւեց իւր բահերով չանաստակ անելէք Սուլթանի բռնութեան տեսարաններով ամենագեղեցիկ, մայրաքաղաքը: Եթէ նա լինէր Թրքահայ գըրող եւ այդպէս բանաստեղծէր Ցարի եւ նրա կառավարութեան դէմ եւ հրաշքով յաջողէր ներս մանել ցարական հողի վրայ եւ երեւէր նրա մայրաքաղաքում, նրա հիւրանոցը պիտի լինէր Պետրոպավլովսկի բանտը եւ պիտի դառնար անգլուխ: Բայց Թուրքի Սուլթանը վախեցաւ նրա բանաստեղծական բահերից, եւ լռեց նրա համարձակ քայլերի ձայնի սարսափից: Բայց Սուլթանի հպատակ ստրուկ հայերը չը վախեցան: Խմբագիրները, որոց մէջ կային եւ կառավարական հայազգի պաշտօնեաններ, մեծ հացկերոյթ տուին ի պատիւ Գամառ Քաթիպայի: Հայ թերթեր աներկիւղ եւ անարգել, որովհետեւ արդէն գրաքննութիւն գոյութիւն չունէր մամուլի վրայ, ուս-

տի եւ ազատօրէն հրատարակեցին խնճոյքի նկարագրութիւնը եւ ներկաների անունները:

Եղանակը ամառնային էր, եւ հարուստ հայեր իրենց Պէօյիւք Տէրէյի Վոսփորային ամառանոցներում, եւ այնտեղ ռուսական դեսպանատան ամարանոցին կից Խասյեան եղբայրների ծովահայեաց եւ պարտիզազարդ ամարանոցում բազմաթիւ հայ երեւելիներ ախորժալի կերակուրներով եւ Ֆրանսական ընտիր գինիներով ոգեւորութեամբ մեծարեցին այն հայ բանաստեղծին, որ «շուն» էր անուանել Սուլթանին եւ նրա կենաց բաժակ պարպողները էին այդ շունի հայազգի հպատակները:

Երկրորդ յարդալից խնճոյքն ի պատիւ Գամառ Քաթիպայի տեղի ունեցաւ Իշխանաց Կղզում, ուր կղզիի կատարները եւ կողերը զգեստաւորուած էին մշտականաչ ծառերով եւ ուր Հին Յունաստանի մահկանացու աստուածները մի ժամանակ զուարճանում եւ զուարթնում էին Մարմարա ծովի ալիքների վրայ եւ աստեղազարդ երկնքի տակ:

Մայրաքաղաքի հայ մեծաւորներից անուանի Յարութիւն Նորատունկեան, հօրեղբօրորդի ազգային արտաքին գործոց նախարար Գաբրիէլ Նորատունկեանի, մէկն Կեդրոնական Վարժարանի հիմնադիրներից եւ խնամակալ, եւ ատենապետ «Արեւելք» թերթի վարչական ժողովոյ, իր ծաղկազարդ եւ մար-

մարխնապատ ամարանոցում ուզեց կազմել այդ ճաշկերոյթը։ Եւ այնտեղ սեղանակից էին ի մէջ այլոց Ազգային Երեսփոխանական ժողովի ատենապետ Տիգրան Եուսուֆեան, իր փեսան եւ Բուքրէշի յետագայ օսմանեան դեսպան Ազարեան, եւ ապագայ Օսմանեան Ծերակոյտի անդամ, Մաղաքիա Օրմանեան, ապագայ հակայեղափոխական Պատրիարք, Մինաս Չերազ՝ Խրիմեանի աջակիցը Բերլինի հայ Պատուիրակութեան եւ ուրիշներ, եւ ես, որ թէեւ շատ հեռու էի հասնելու այդ մեծերի բարձրութեան, բայց յայնժամ լինելով «Արեւելք»ի խմբագրութեան անդամ, ամառնային եղանակին վայելում էի Նորատունկեանի ընտանիքի անդամակցութեան հաճոյքն եւ պատիւը։

Հիւրընկալը ինձ իր հիւրին ներկայացընելով տուեց իմ իսկական անունը, բայց Մինաս Չերազ ընդհատեց իր սովորական ժպտալից զուարճաբանութեամբ ասելով «Այսինքն, ձեր Թիֆլիսի խաւարամիտ «Արձագանգ»ի լուսամիտ թղթակից Վաղինակը»։

Ռափայէլ Պատկանեան, առնելով ձեռքս իր երկու ձեռների մէջ, ասեց՝ «Ես չեմ գովում քեզ, որ Չերազը չը կարծէ թէ շողոքորթում եմ, բայց Րաֆֆին իր կեանքի վերջին տարիներում նախադասեց հեռանալ լուսամիտ «Մշակ»ից եւ մտնել «Արձագանգ»ի խաւարամիտ միջավայրի մէջ, այնպէս եւ ես ձեր Պոլ-

ոի Հայոց կեանքը եւ վիճակը տեսնելուց յետոյ մտածում եմ հետեւել Րաֆֆիի օրինակին, թողուլ խաւարամիտ լուսամտութիւնը եւ դառնալ լուսամիտ խաւարամիտ, ինչպէս են «Արձագանք»ի քաղաքականութեան հետեւողները: Պատուական Ջերազ, յուսամ հասկանում էք անհասկանալի դարձուածքներիս իմաստը, որովհետեւ շատ իմաստուն մի երիտասարդ լինելու էք, որ Ներսէս Պատրիարք Խրիմեան Հայրիկին եւ քեզ վստահեց Հայկական Խնդրի դատը պաշտպանել Բերլինի Վեհաժողովի դիւանագիտական դատարանի առաջ»:

—«Այո, բոցավառ բանաստեղծ, կարծեմ կը հասկնամ ձեր անհասկանալի լուսախաւար խօսքերու մանուածապատ իմաստը: Մեր քաղաքականութիւնն եղած է, եւ է, գործել դիւանագիտօրէն, բայց ձեր ռազմագիտութիւնը այժմ ուշ է փոխել ձեզ համար եւ առաջքը առնել ձեր զինուորներու, որոնք Կովկասի ամէն կողմերէն երգելով ձեր պատերազմաշունչ բանաստեղծութիւնը, եւ զինուած երկաթակուռ բահերով, սրտովին թռչում են դէպ յառաջ»:

—«Նրանք զգացմունքի զինուորներ են սրտի թռիչներով: Նրանց բահերը թղթից են, եւ բահերի կոթերը հաւի փետուրներով էին մելանաւորուած իմ բանաստեղծութիւնները»:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Ճաշի ժամը վերջ դրեց երկու ազգասէրնե–րի նրբամիտ բանադարձութեան։

Եւ ամէն ոք որպէս թեւեր կազմած երկու կողմում, եւ խնճոյքի մեծ հիւրը մէջտեղում, յառաջացան սեղանատուն, ուր պատուական կերակուրներ չինական պնակների վրայ, եւ ոսկեգոյն եւ կարմրագոյն գինիներ բիւրեղա–նման բաժակների մէջ հմայեցնում էին նրանց ախորժակները, եւ ոգեւորում նրանց սրտերը եւ գլուխները։ Գամառ Քաթիպա իր երջան–կութեան գերագոյն կատարի վրայ էր, երբ ա–մէն ոք ոտքի ելաւ եւ բարձրացրին իրենց բա–ժակները իրենց գլուխներից աւելի վեր, եւ նրա կենաց բաժակը դատարկեցին կեցցէների սրտագին ձայնով եւ ջերմագին ծափահարու–թեամբ։ Նա աչքերի մէջ ցնծութեան ժպիտնե–րով նայում էր ամէնի վրայ, եւ իմ վրայ, կար–ծես զարմանքի հարցական նշաններով։

Կերուխումից յետոյ հիւրերը ցրուած խօ–սակցում էին միմեանց հետ։ Մեծերի մեծու–թիւնը զգալով ես ինձ պահում էի աւելի քաշ–ուած, ամօթխած։

Այդ անմոռանալի խնճոյքից յետոյ, երբ Գամառ Քաթիպա բաժանուեց իր խմբից եւ մօտեցաւ ինձ, եւ թեւս մտաւ եւ կարծես ան–լսելի լինելու փափագով մեղմաձայն, զար–մանքով ասեց.

— «Այս ի՞նչ տարօրինակ երկիր է, այս ի՞նչ զարմանալի անտարբեր աէրութիւն է,

ուր ես ափաշքարա ման եմ գալիս եւ հայերը առանց կառավարութիւնից վախի զգացում եւ մտածութիւն ունենալու, այսպէս ճաշեր ու պատիւներ են անում ինձ»։

«Այսպիսի բան անշուշտ չի կարող պատահել Պետերբուրգում, բայց եթէ հրաշքով պատահէր մեր ամենաողորմած Ցարի ոստիկանները կը կախէին ինձ Նեւայի կամուրջի վրայ եւ այս հայերին էլ կը թափէին Նեւայի մէջ, որ ձուկերի կերակուր լինէին»։

Ինչ որ բահերի բանաստեղծը ասեց ինձ այդտեղ, ես արդէն մտածում էի ճաշի ժամանակ, երբ նայում էի նրա երջանկաշող աչքերին եւ զուարթերես սեղանակիցներին, որ խըմում էին կենաց բաժակները մէկը միւսի ետեւից նրա պատուական ներկայութեան համար։

Յաջորդ տարին, կարճ ժամանակաւ Թիֆլիսում էի եւ իջեւանած մի երրորդական կարգի հիւրանոցում համաձայն գրպանիս թեթեւութեան, բայց նա իր դիրքով էր առաջին կարգի։ Սեւերնայա Նոմերոն կազմում էր քաղաքի գլխաւոր փողոց Գոլովինսկի պրոսպեկտի ճակատը, ձախի վրայ փոքր ինչ անդին Կովկասեան կառավարչապետի պալատը, եւ աջի վրայ աղջկանց գիմնազիան եւ աւելի անդին քաղաքի մատենադարանը։

Հետեւեալ առաւօտեան այցելուների ցուցակին նայելիս տեսայ Ռափայէլ Պատկանեանի անունը. հրճուեցայ ուրախութեամբ որ պի-

տի նորէն տեսնէի Կ. Պոլսի ցանկալի հիւրին զգացումների մեծ բանաստեղծի գրպանը իմ գրպանից երեւի աւելի մեծ չէր, որ խոնարհել էր իմ հաւասարութեան: Խնդրանքիս վրայ հրաւիրուեցայ նրա սենեակն անմիջապէս: Նա չէր սպասել որ բոլորովին հագնուէր եւ ապա երթայի իւր մօտ: Տակաւին փանթալօնը չէր հագած, եւ սպիտակ փոխանով էր երբ ներս մտայ, եւ նա արագաքայլ յառաջացաւ եւ երկու թեւերով փակեց ինձ իւր գրեթէ մերկ կուրծքի վրայ, այս խօսքերով «Մեր երկրի բանաստեղծները այսպէս են ընդունում իրենց սիրած այցելուներին» եւ հագնուելը շարունակելով ասեց «Կ. Պոլիսը միտքս եկաւ իւր բոլոր երջանիկ օրերով, որի նմանը չէի տեսել եւ զգացել հայ եղբայրներիս մէջ: Ան ի՛նչ սէր, ինչ սրտագին ընդունելութիւններ էին որ ես վայելեցի հոնտեղ, եւ տակաւին կը զարմանամ թէ ի՞նչպէս էր որ չէին վախենում թուրք կառավարութիւնից: Այնտեղ թրքահայոց ջերմալից սրտերում հնչում էր իմ անձի ներկայութիւնը ,այստեղ ռուսահայոց դպրոցներում, այգիներում, դաշտերում եւ ձորերում արձագանգում են իմ բանաստեղծութիւնները, բայց ոչ իմ անձի ներկայութիւնը»:

Եւ այսպէս ես բաժանուեցայ շանթահարող ոտանաւորների հեղինակի սիրելի ներկայութիւնից, եւ նրա ողջոյնները տուի Կ. Պոլսում նրանց որոց անունները այնքան խոր տպաւորուած էին նրա սրտի եւ հոգւոյ խորքերում:

ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄԵԱՆԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԸ

Ազգասիրութեան զգացումների բոցավառիչ բանաստեղծից յետոյ, Կովկասից եկաւ Պոլիս այս անձը: Նա չեկաւ այցելելու, բայց վերադառնում էր իր ծննդավայրը: Նա Ռաֆայէլ չէր իր վրձինով, եւ ոչ Շէքսպիր իր գրիչով, բայց նկարչութեան շնորհքը շողում էր նրա աջ ձեռքի մատների վրայ, եւ բանաստեղծութիւնը ցոլանում էր նրա ոսկրապատ ուղեղում: Այս երկու յատկութիւնները իրենց գեղեցկութեամբ հմայիչ էին իր աչքերում եւ զմայլանում իր բարեկամների բերաններում: Եւ այդ սահմաններից դուրս, որքան յիշում եմ, նրանք չէին գրաւում ոչ դրուատ եւ ոչ ծափ:

Եւ սակայն ոչ մի հայ բանաստեղծ, վիպասան, զօրավար եւ հերոս գրաւել էին Կովկասի հայերից այնպէս ջերմ եւ այնքան շատ որոտալից ծափեր եւ կեցցէներ, որպէս Պետրոս Ադամեան, Կուր գետի Թատերական թեմի

վրայ Շէքսպիրեան Համլէթի եւ Օթէլլոյի խաղերում, որպէս գրաւում էր բուն ինքն Շէքսպիր նրանից երեք հարիւր տարիներ առաջ, Թէմզի ափերի իր «Գլոբ» թատրոնի բեմի վըրայ իր իսկ յօրինած խաղերի դերերում ոգեւորեալ անգլիացի հանդիսատեսների առաջ:

Նրանից առաջ հայը չէր ունեցել մեծագոյն դերասան, եւ ոչ էլ նրանից յետոյ մինչեւ այս օր: Նա ոչ միայն եղաւ հայ բեմի վրայ, այլ նաեւ հայ դերասան ռուս բեմի վրայ, ռուս դերասաններով, որոնք «Համլէթ»ի միւս դերերը արտասանում էին ռուսերէն, եւ Ադամեան որպէս Համլէթ հայերէն: Պետերբուրգի, Մոսկուայի, Քիեվի եւ Օտեսայի բեմերի վրայ, եւ ռուս ունկնդիր հանդիսականները հասկանում էին հայ դերասանին, հայերէնը կարդալով նրա հայերէն բառերից, նրա աչքերի ճառագայթների մէջ եւ նրա շրթունքների ելեւէջերի վրայ, եւ երբ նա իր դերն աւարտած դուրս էր գալիս մեկնելու հիւրանոցը, դրսում սպասող հանդիսականների ոգեւորեալներից ամենաոգեւորեալ ռուսերը իրենց ուսերի վրայ բարձրացրած մարմնաւոր կառք էին դառնում նրա սիրեցեալ անձի համար:

Այդ տեղերի ռուս թերթերում քննադատական գովասանքները դերազանց էին, եւ իրենց դատողութեամբ յատկապէս Համլէթի եւ Օթելլոյի դերում չկար ուրիշ դերասան Եւրոպայում, որ հաւասարէր Ադամեանին: Եւ մի քըն-

նադատ իր չափազանցութեան մէջ այնքան էր ոգեւորուած, որ գրեց թէ Աստուած միայն կարող էր խաղալ Համլէթը այնպէս կատարեալ, որպէս Ադամեան:

Արդ այս մարդ տառապածն էր որ վերադարձել էր իր հայրենիքը, բայց մերկացած իր կախարդիչ յատկութիւնից, մարմնի կայտառութիւնը թուլացած, թոքախտը բոյն դըրած նրա երբեմնի ամրակուռ կուրծքում, եւ հիւծախտը արմատ էր դրել նրա անհասանելի կոկորդի խորքում եւ քայքայել նրա քաղցր ձայնական թելերի զօրութիւնը: Նրա գալուստը արձագանք չտուեց մայրաքաղաքի հասարակութեան ո եւ է դասի մէջ: Մի քանի հին բարեկամներ ջանացին եւ յաջողեցան հետաքրքրութիւն շարժել տալ, նախ կազմակերպելով մի քանի ներկայացումներ, եւ ապա յոբելեանով:

Ինձ վիճակուեց գրել նրա կենսագրականը եւ ռուսական թերթերի քննադատական գովասանքներից գլխաւոր մասերը: Նա ներկայացրեց Համլէթը Կ. Պոլսի մեծ թատրոնում, որ հայ եկեղեցւոյ սեփականութիւնն էր. զարդարուած էր եւ լի հայ հասարակութեան ամենաերեւելի ներկայացուցիչներով: Իմ գրքերից 500 օրինակ ծախուեց հանդիսականների մէջ ներկայացման ընթացքին: Եւ դերասանը արժանանում էր յարգանքի բազմաթիւ պսակների: Որքան անհունօրէն երջանիկ զգաց այդ

փառասէր տեսարանը տեսնելով այդ գիշեր ի պատիւ իրեն եղած հանդէսը, նոյնքան անհունօրէն դառնացաւ նրա սիրտը եւ հոգին այդ յոբելեանի կոմիտէի արարքից: Կոմիտէի մէջ կային կարեւոր դիրքի տէր մարդոց անուններ եւ հարուստ մարդիկ, այնուամենայնիւ նրանց մէջ կային եւ ուրիշներ որ գանձապետի եւ քարտուղարի պաշտօններ ունէին եւ ամէն բան իրենց ձեռքն էր եւ անտարակոյս կոմիտէի ականաւոր անդամները անտեղեակ էին իրենց արածին: Բաւական ժամանակ յետոյ Ադամեան ստացաւ սպասելիք դրամը եւ հաշիւը: Ադամեան խելագարի նման էր երբ ցոյց տուեց հաշուեցուցակը: Գումարը ապշեցուցիչ աստիճանի քիչ էր. բայց ինչ որ աւելի զայրոյթով շատ աւելի բորբոքել էր յուսախաբ Ադամեանին, այդ այն էր որ այն պսակը որ կոմիտէն իւր կողմից հանդիսաւորապէս նուիրել էր յոբելեարին, անցուած էր ծախքերի մէջ ի հաշիւ Ադամեանի:

Ո՞վ կարող էր երեւակայել որ իրենց տուած պսակի փողը ինձանից առնեն: Ի՞նչ լրբութիւն ինչ խայտառակութիւն, ի՞նչ անպատիւ մարդիկ »: Խեղճ մարդը երբէք չմոռացաւ այս, եւ յաճախ յիշում էր մինչեւ որ մեռաւ: Եւ ո՞վ կարող էր մոռանալ:

Ադամեան զգայուն էր, ուսեալ եւ բարեկիրթ, եւ յայտնապէս շատ կարդացած մի մարդ եւ պաշտող Շէքսպիրի անունին եւ հան-

ճարին: Նա ապրում էր Վոսփորի Պէօյիւք Տէրէ գիւղում իր երկու մօրաքոյրերի տան մէջ, ուր կենակցում էին նրանց երկու եղբայրները Անտոնեան Միաբանութեան կաթոլիկ արքեպիսկոպոսներ, չորսն եւս մէկը միւսից աւելի պառամեալ:

Նա յաճախ գնում էր նրան այցելութեան: Մի օր տխուր ծիծաղով ասեց. «Եթէ թոքախտաւոր էլ չը լինէի, այս տեսարանը բաւական էր ինձ թոքախտաւոր դարձնել, երբ մտքիս առաջ են գալիս այն երջանիկ զուարթ բազմութիւնը որ տեսնում էի թատերական բեմերից, եւ այն ցնծալից կեանքը որ անցնում էի Թիֆլիսի եւ այլ ռուսական քաղաքներում թարմ եւ զուարթ կերուխումի ընկերութեանց մէջ:»

Մի ուրիշ անգամ ասեց թէ լաւ էր որ եկել էի իրեն այդ օր, թէ նա այդ օր սպասում էր մի դպրոցական ընկերոջ՝ Յովսէփ Ագնաւուրէին, որ այժմ երեւելի ճարտարապետ էր, եւ սքանչելի ոգեխօս: Ես շատ գաղափար չունէի ոգեխօսութեան մասին, բայց միայն այնքան թէ յիմարները կարող էին հաւատալ այդպիսի ցնորականութեան, եւ երբ յայտնեցի կարծիքս, նա փոքր ինչ բորբոքուեց «Ի՞նչ ես ասում, ոգեխօսութիւնը բնութեան գաղտնիքի արտայայտութիւններից մէկն է, ոչ թէ ես բայց ինձանից հազար անգամ խելացի մարդիկ հաւատում են բնութեան այս անլուծելի գաղտնիքին, եւ նոյն իսկ Շէքսպիր հաւատում

էր այս ճշմարտութիւն, եւ դու էլ շուտով ան-
քերովդ պիտի տեսնես»:

Յովսէփ Ադնաւուրը եկաւ, իր երեսի գոյ-
նի նրբութեամբ, եւ միրուքապատ այտերի
գեղեցկութեամբ եւ անմեղուկութեամբ ար-
ժանի էր համարուել Յովսէփ գեղեցիկ: Նստե-
ցինք երեքս մի քառակուսի սեղանի շուրջ,
դրուա սպիտակ թուղթի մի լայն թերթ Յով-
սէփի առաջ, եւ սուր մատիտը նրա ձեռներում:
Խորհրդաւոր արարողութիւնը սկսեց.— Որո՞ւ
հոգին կանչեմ, հարցրեց Յովսէփ: Շէքսպիրի
ոգին, մրմնջեց Ադամեան: Յ. Ադնաւուրի մա-
տիտ բռնած ձեռքը շարժուեց անդլիր թուղթի
վրայ եւ գրեց — Ո՞վ ես Վիլեամ Շէքսպիր·

—Ես այստեղ եմ, ես Վիլեամ Շէքսպիր·

—Ասա՛ թող գծէ իր իսկական դէմքը, ո-
րովհետեւ եղածները շատ տարբեր են իրարից:

Ճարտարապետի ձեռքի մատիտը շարժուեց
անհրեւակայելի արագութեամբ երկու երեք
երկվայրկեան, առանց թուղթի երեսից ան-
ջատուելու, եւ կանգնեց. Թղթի վրայ տեսանք
մի դէմք, մազ, ճակատ, քիթ, աչքեր, երես,
եւմօրուք, եւ գրուած «ահա իմ դէմքը»:

Ադամեան զմայլումից աչքերը մնացել էին
յառած, եւ բերանը լայնօրէն բացուած.

—Ադնաւուր, հարցրու, հարցրու, Շէքս-
պիրիս ոգիին, քանի՞ անգամ եմ եկել ես այս
աշխարհի վրայ:

Յովսէփի մատիտը մի քանի րոպէ մնաց

կայուն եւ ապա գրեց. «Երեք անգամ, առաջին անգամ Փրանսացի, ծնած Ֆրանսայի հիւսիսային քաղաքում, այժմ աւերակ, հազար երկու հարիւր տարի առաջ: Աւերակներից երեւում է միայն գերեզմանատան մի մասը, ուր թաղուած էր Ազամեան Պետրոս, որ արհեստով դերասան էր. երկրորդ անգամ նա ծնաւ հինգ հարիւր տարի առաջ, իտալացի, դերասան եւ նկարիչ, եւ այս երրորդ անգամին հայ, դերասան, նկարիչ եւ բանաստեղծ:

Շէքսպիրի ոգին դադարեց այլ եւս ուրիշ պատասխաններ արտայայտելուց, եւ մեր ոգեխօսական նիստը վերջացաւ: Եւ Ազամեան շատ ուրախ էր, որ իր անցեալ կեանքերում եղել էր երկու մեծ եւ գեղարուեստասէր ազգերի որդի, եւ այժմ մի հայ ազգի, որի անդամները յոբելեան էին սարքում իր համար եւ իրեն նուիրած պսակի դրամը առնում էին իր գըրպանից:

Ես բանաստեղծութիւնը հասկանալու կարողութեան մէջ շատ մասնագէտ չեմ, բայց Շէքսպիրի ոգին քանի որ Ազամեանին համարում էր բանաստեղծ, ուստի մենք չենք կարող ուրանալ այդ արժանիքը մեր մեծ դերասանից, եւ այստեղ պատշաճ եմ համարում յառաջ բերել մի քնքոյշ ոտանաւոր որ նա գրել է Թիֆլիսում երբ նա իր դերասանական փառքի կատարում մեծարւում էր հարուստ հայերի տներում, եւ այսպէս գրեց ռուսահայոց լաւա-

ծանօթ եւ իմ Փարիզի սիրեցեալ հանգուցեալ բարեկամ Յովհաննէս Շատինովի մասին երբ նա փոքրիկ Թաշկուն տղայ էր իւր հարուստ հօր տան սենեակներում եւ պարտէզում որպէս Ադամեան պատկերացնում է նրան այս տաղերով·

1880

ԱՌ ՎԱՆԻՉԿԱՅ ՇԱՏԻՆՈՖ՛

Ա.

Խընձոր երես, վարդ շըրթներով Վանիչկայ
Վազէ տան մէջ ուրախ զուարթ թըռչնոյ պէս
Երբոր ասեմ, ինչո՞ւ փախչես, ու ի՞նչ կայ,
Նա աւելի շուտ հեռանայ իմ գըրկէս·

Բ.

Երբ ժըպտում է գինւոյ բաժակն ի ձեռին,
Մենք ծիծաղից մեռնինք: Երբոր կը խօսի,
Կարծես քընքոյշ պուլպուլն երգէ պարտիզին
Երբ ծըռելով ասէ մընջիկ, օ մէրսի:

Գ.

Հօրը միակ հըրեշտակն է Վանիչկան·
Այլ չը գիտեմ թեւերն ուրտեղ է թողած·
Երեւի նրանց կըտրել է մայրն սիրական,
Որ չի փախչի թէ տան դըռներն գըտնէ բաց:

ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

Եթէ հայ իմաստուն բանաստեղծագէտներ ուրանում չը տեսնեն Ազատմեանին որպէս բանաստեղծ, յանցանքը իմս չէ եւ կարող են մեղադրել Շէքսպիրի ոգին:

Էր ժամանակ որ այս տողերի բանաստեղծը այս Վանիչկայի ապագայ նուէթատէրի նմա, թռչկոտօրէն զուարճանում էր իր համեստ հօր տան անզարդ սենեակներում եւ ծաղկազարդ պարտէզում եւ գեղածիծաղ Վօսփորի կենդանաբույր ափերում: Բայց երբեմն երբեմն թեթեւ տխրութիւն էր տիրում Ազատմեանի մեծապանծ զգացումների վրայ, որ ազգութեամբ ծնել էր աւելի խոնարհ քան իր նախկին Փըրանսական եւ իտալական մարմնացումներով: Բայց ցնծութիւնը ճառագայթում էր նրա յաւիտենական հոգու մէջ, երբ զգում էր թէ գէթ կրօնքով նա ծնել էր այնպէս որպէս իր նախորդ «ես»երը, եւ երկրպագու Հռոմայ սրբազան Պապին: Բայց երբ ես տեսայ Ազատմեանին իր կեանքի վերջին տարիներում, Հռոմայ Պապը կորցրել էր իր սրբութիւնը նրա սրտից, եւ իր սիրտը եւ հոգին միմեանցից բաժանւելու եւ միմեանց կորցնելու ընթացքի մէջ էին կամաց կամաց: Եւ նրա մարմնի մկանունքները եւ միսը նմանապէս հալւում էին նրա մաշկի ներքեւից եւ ձեռների վրայ, եւ երեսի եւ ճակատի վրայ ոսկորները արտացոլւում էին մեռելագոյն մաշկի տակից, եւ թէեւ տակաւին քառասունի շրջանում էր, ձիւնափայլ թե-

լերը երկարում էին նրա երկայն մազերի միջով. եւ խոշոր աչքերը իրենց շարժուն հայեացքներով կարծես հայցում էին գթութիւն խօսակից բարեկամից՝ անխօս բառերով:

Սիրեցեալի այս վիճակը Թիֆլիսի «Արձագանգ»ի միջոցաւ պատկերացրի նրան սիրող ռուսահայ թատերասէրներին: Մօտ երեք շաբաթ յետոյ, հեռագրով ստացայ 500 ռուբլի Մոսկվա Մամիկոնեանից յանձնել Ադամեանին: Ո՞վ էր այդ Մամիկոնեանը, չը գիտէի: Եւ երբ հեռագիրը եւ գանձը դրի թառամող դերասանի ձեռքի մէջ, նա նուաղօրէն բացագանչեց. «Օ՜հ Ստեփանից, իմ պաշտելի Ստեփանից. Օրհնեալ բարեկամ, այս գանձը մեծ օրհնութիւն է իմ այս ներկայ վիճակիս մէջ»:

Այս ժամանակի օրերից մէկում, միասին քայլում էինք այսպէս ասած եւրոպական քաղաքամասի՝ Բերայի, գլխաւոր փողոցի նեղ մասով եւ շատ հեռու չէինք ռուսական դեսպանատունից, երբ հանդիպակաց կողմից յառաջացող ռուսական զինուորական համազգեստով մի վայելչակազմ մարդ յանկարծ կանգնեց մեր առաջ, կարծես ապշահարեալ նայեց Ադամեանի վրայ, եւ զարմացմամբ հարցրեց.

—«Ներողութիւն, խնդրեմ ասէք, միթէ՞ արդեօք դո՞ւք էք հայ դերասան Ադամեանը, Շէքսպիրի հռչակի խաղացողը, որին տեսայ Օտեսայում.

— Այո, ես եմ Ադամեանը, բայց ոչ եւս

այդ օրերի Ադամեանը— այժմ, պատասխանեց Ադամեան, բեկբեկուած ձայնով, եւ կարծես ձայնը խեղդւում էր կոկորդում:

— «Աստուած իմ այս որքա՞ն փոխուել էք: Այն ժամանակ բեմի վրայ զօրաւոր Օթէլլոյի դերում ձեր աչքերի կայծերը վառում էին ձեզ նայող հանդիսականների սրտերը, եւ նրանց ձեռների ծափերը փառաւորում էին ձեր հան–ճարը իրենց հիացմունքով: Եւ դրսում ձեզ սպա–սողները բարձրացնում էին ձեզ իրենց թեւերի վրայ եւ յաղթական դիւցազնի նման տանում էին ձեզ ձեր օթեւանը:

— Այո, ես այդ Ադամեանն եմ, բայց չեմ այսօր, ինչպէս տեսնում էք ինձ, եւ այլեւս չը պիտի լինեմ այնպէս ինչպէս որ ինձ տեսաք յայնժամ: Բայց ո՞վ էք դուք, ազնիւ բարեկամ որ տեսաք ինձ երջանիկ օրերում», եւ տեսնում էք եւ ճանաչում էք ինձ մահամերձ:

— Ոչ, մի՛ յուսահատուէք, երջանիկ օրերը կը վերադառնան: Դուք խնամքի, բժիշկի եւ մշտական հոգածութեան պէտք ունիք»:

Օտարականը որ ռուս դեսպանատան զին–ւորական կցորդն էր, առաջարկեց Ադամեա–նին ,եւ պնդեց որ անյապաղ տեղափոխուի ռուսական հիւանդանոցը, եւ ինք հրահանգ կը տայ որ առանձին սենեակ պատրաստեն նրա համար:

Ամէն կարգադրութիւն եղաւ, եւ գնդա–պետ Կալինին դուրգուրանօք սեղմեց Ադամ–

այդ օրերի Ադամեանը— այժմ, պատասխանեց Ադամեան, բեկբեկուած ձայնով, եւ կարծես ձայնը խեղդւում էր կոկորդում:

— «Աստուած իմ այս որքա՜ն փոխուել էք: Այն ժամանակ բեմի վրայ զօրաւոր Օթէլլոյի դերում ձեր աչքերի կայծերը վառում էին ձեզ նայող հանդիսականների սրտերը, եւ նրանց ձեռների ծափերը փառաւորում էին ձեր հանճարը իրենց հիացումով: Եւ դրսում ձեզ սպասողները բարձրացնում էին ձեզ իրենց թեւերի վրայ եւ յաղթական դիւցազնի նման տանում էին ձեզ ձեր օթեւանը:

— Այո, ես այդ Ադամեանն եմ, բայց չեմ այսօր, ինչպէս տեսնում էք ինձ, եւ այլեւս չը պիտի լինեմ այնպէս ինչպէս որ ինձ տեսաք յայնժամ: Բայց ո՞վ էք դուք, ազնիւ բարեկամ որ տեսաք ինձ երջանիկ օրերում», եւ տեսնում էք եւ ճանաչում էք ինձ մահամերձ :

— Ոչ, մի՛ յուսահատուէք, երջանիկ օրերը կը վերադառնան: Դուք խնամքի, բժիշկի եւ մշտական հոգածութեան պէտք ունիք»:

Օտարականը որ ռուս դեսպանատան զինւորական կցորդն էր, առաջարկեց Ադամեանին ,եւ պնդեց որ անյապաղ տեղափոխուի ռուսական հիւանդանոցը, եւ ինք հրահանգ կը տայ որ առանձին սենեակ պատրաստեն նրա համար:

Ամէն կարգադրութիւն եղաւ, եւ գնդապետ Կալինին զուրգուրանօք սեղմեց Ադամ-

տօնութիւն տուեցաւ որ ես իրաւունք ունենայի երբեմն քնել Ադամեանի սենեակում:

Այսպէս գնդապետը ամէն ինչ նկատի առաւ մեր Ադամեանի կեանքի դառնութիւնը քաղցրացած պայմանների մէջ դնել, սենեակը մեծ էր, եւ ես երբ գիշերում էի այնտեղ, անկողինս նրա հանդիպակաց անկիւնումն էր: Առաւօտեան երբ զարթնեցի, նայեցայ հանդիպակաց անկիւնը. նա պառկած էր կիսաթեք, մի թերթ թուղթ մասամբ ծալուած սրունքների վրայ, բռնած ձախ ձեռքում եւ մատիտ աջում եւ մազերը խառնակուած գլխի եւ ճակատի վրայ: Երբ տեսաւ ինձ սիրօրէն ժպտեց եւ ասեց ցաւագին. «Երանի քեզ Պետրէ, ինչպէս մտար անկողին երէկ գիշեր, այնպէս էլ գերմանական սուձուխի պէս մնացիր անշարժ մինչեւ այժմ, եւ ես նայում էի վրադ, նախանձում էի կեանքիդ եւ երանի տալիս, իսկ ես չը կարողացայ փակել աչքերս ամբողջ գիշեր: Տանջանք եւ յիշատակների մտածութիւններ տանջում էին մարմինս եւ մի քիչ զուարճացնել ուզեցի միտքս եւ հոգիս, բանաստեղծութեամբ, եւ պատկերացնել այն տեսարանը երբ դու դեռ մի երկու շաբաթական երեխայ էիր, եւ հասկացողութիւն չունէիր սրբութեան եւ պղծութեան մասին, եւ ոչ յարգանք այն սուրբ աւազանին, ուր տէրտէրը կոխել էր քեզ որ լողանալով մկրտուէիր, եւ սուրբ մեռոնը աղաւնիի կտուցից թափուէր մարմնիդ վրայ, եւ

դառնայիր բարի քրիստոնեայ: Արդ մտիկ արա որ կարդամ ոտանաւորս»:

—Այդ սրբապիղծ բանաստեղծութիւնդ եթէ հրաշքով ընկնէր սուրբ Պապի ձեռքը, նա պիտի պատուիրէր Պետրոս Առաքեալին՝ արգիլել երեսդ արքայութեան դուռը տեսնել:

—Ականջ կախիր, թէ՛ դու թէ՛ ես Պետրոսներ ենք, եւ անզուգանակից Յիսուսի գլխաւոր առաքեալին, եւ նա աւելի հաւանական է, որ փակէ երկնքի երեսը Պապերի առաջ, որոնք ներսում անտեսանելիօրէն մեղանչող են եւ դրսում տեսանելիօրէն անախալ եւ ըստ սովորութեան արդար են:

Մի կէս օրից յետոյ գնում էի Պանկալթիի փողոցով եւ հասել էի գրեթէ քաղաքի ծայրը, եւ մօտ էի ռուսական հիւանդանոցին, երբ Մեծ Եպարքոսի, այսինքն Թուրքիոյ Նախարարապետի կամ Սուլթան Համիդի հարէմների փակ եւ փայլուն կառքերի նման մի կառք անցաւ իմ առաջից եւ կանգ առաւ դռան մօտ, եւ ներսից դուրս եկաւ հայ կաթոլիկ կղերական տարազով մի անձնաւորութիւն մի ուրիշ անձի սպասաւորութեամբ, եւ ձեռքում զգուշութեամբ բռնած բազմագոյն ծաղիկներով յօրինուած մի գեղեցիկ փունջ: Ճանաչեցի նրան, կաթոլիկ Թրքահայոց Կաթողիկոս Պատրիարքն գերապայծառ Ազարեանն էր, թէեւ արդէն կային սպիտակ մազեր նրա կարճ միրուքի մէջ, բայց մարմնով աշխոյժ էր եւ արագաշարժ, եւ

ընտրութեամբ յոյժ ընկերական եւ հաճելի, եւ վայելած էի նրա ծանօթութիւնը։ Կարծեցի թէ իր նշանաւոր հաւատացեալներից մէկը պառկած էր այդ հիւանդանոցում; եւ նա իր դիրքի բարձրութիւնից բարեհաճել էր իջանել եւ այցելութեան գալ նրան։ Տեսնելով ինձ, նա ասաց բարեսրտօրէն «Մեր սիրեցեալ որդի Աղամեանի ծանր վիճակը իմանալով, եկայ տեսնել զինքը, եւ աստուածային մխիթարութիւն հայցել անոր տխուր սրտին։ Իմ այցելութեան մասին նախօրօք իմաց էր տուած, ուստի հիւանդը ակնկալում էր այդ զարմանալի այցելութեան, երբ Կաթողիկոսը մտաւ ներս եւ ես նրա ետեւից։ Երբ հոգեւոր հայրը հեռացաւ, տառապեալ հիւանդը դառն աչքերը լայն բացած իմ վրայ ասաց.

— Ի՞նչ ես ասում այս զարմանալի այցելութեան։ Առաջին անգամ է որ խաւարող աչքերս պատիւ են ունենում տեսնել նրա սրբազան երեսը, եւ նրա լուսաւոր աչքերը, իմ մահադոյժ դէմքը։

— Այս վսեմ այցը ցոյց է տալիս թէ քո մըթագնեալ մեծութեան մայր մտած աստղը ընկնում է վերստին երեւիլ սեւամած ամպերի ետեւից եւ լուսաւորել կեանքդ երջանկատու ճառագայթներով։ Գնդապետ Կալինին ձգտում է փրկել թանկագին կեանքդ, որ մարմինդ վերակենդանանայ իր երբեմնի աշխուժութեամբ որ Համլէթի, Օթէլլոյի եւ Արքայ Լիրի կեր-

պարանքներով եւ ճայներով զմայլեցնես նոր հանդիսատեսներիդ զգացումները եւ կախարդես նրանց. իսկ Գերապայծառ Կաթողիկոսն Ազարեան հոգ է տանում փրկել քո հոգին որ իր այլ եւս անպէտք մարմնից բաժանուելուց յետոյ, չը կորցնէ պապական եկեղեցւոյ արքայութեան ճանապարհը, եւ չ'ընկնի Գրիգոր Լուսաւորչի հերետիկոսական դժոխքի մէջ:

Միթէ չե՞ս կարծում որքան տարօրինակ է Քրիստոսի պաշտօնեայի արարքը որի փափկատեսիլ եւ հարուստ երկու եղբայրները, Ժոզէֆ եւ Անտոնեան, երկուսն եւս մայրաքաղաքի նշանաւոր հարուստներից, իրենց հոգեւոր եղբօր նման, մինչեւ հիմա երբէք չեն մտածել քո մասին, որոնք հաւանօրէն այս միջոցին կամուրջից մեկնած նաւի վերնայարկի վրայ նըստած երկայնաձիգ թիկնաթոռի մէջ, եւ սըրունքները միմեանց վրայ վեր անկած, ծծում են Մարմարայի զովաշունչ զեփիւռը, միմեանց նման պատուական հագուստներ հագած յոյն լեւանտեան եւ հայ հարուստների հետ, խօսակցելով, ծխելով, կամ մտածելով գնում են դէպի Իշխանաց Կղզին, ուր նաւահանգստի դէմ, Կալիպսօ հիւրանոցի առաջ փարթամ բաց կառքեր կեցած էին, եւ նրանց կապուած մարմնափայլ ձիերը անհամբեր սպասում էին իրենց վսեմափայլ տէրերի փայփայուն մտրակներին՝ քառասմբակ պարելով տանելու ի-

րենց աւլուած եւ ջրուած հովասուն փողոցով, երկուստեք զարդարուն ծաղկապատ պարտէզների մէջ կանգուն հրապուրիչ վիլլաներով: Եւ երկու եղբայրները վար են իջնում աջի վրայ իրենց յարակից ամարանոցների առաջ, որոց պարտէզները ետեւի կողմից զառիվայր երկարում են եւ իջնում խաղաղ Մարմարայի մեղմածուփ ալիքներով մեղմակոծ ափերը: Այս երկու երջանկալից դաւանակիցներդ արդեօք անցեալում մտածեցի՞ն, կամ այժմ մտածո՞ւմ են ի՞նչպէս էր կամ ի՞նչպէս է ապրում երանելի Ազամեանդ. բայց միայն նրանց հոգեւոր եղբայրն է որ այժմ խորհում է քո վրայ եւ այն եւս ոչ թէ ի՞նչպէս ես ապրում, այլ ի՞նչպէս է ապրում քո հոգին անմոլար եւ անկորնչելի Հռոմայ սրբասուրբ փարախում»:

— Սիրելիս, այդ էլ մի մխիթարութիւն է: Գիտեմ որ անկեղծ սրտի այցելութիւն չէ: Գիտեմ հոգիս որսալու համար է, բայց այնուամենայնիւ, նա չէ գալիս նետով խոցելու սիրտս այլ եկաւ ժպիտով եւ ծաղիկներով անմահութեան ուրախութեամբ պատելու հոգիս: Մինչեւ այժմ գրեթէ ոչ մի անուանի հայ բարեկամ չեկաւ ծաղիկներով կամ առանց ծաղկի իր երեսի ժպիտը եւ աչքերի ցաւակցութեան լոյսը ցոյց տալ ինձ գերեզմանատար ճանապարհիս վրայ»:

Կաթողիկոս Ազարեան շաբաթը մէկ եւ երբեմն երկու անգամ այցելեց իր ծաղկեփուն-

ջերով, բայց Ադամեանի վրայ եթէ երբէք մնացած կար փոքր ինչ ժպիտի կենդանութիւն, այն եւս խամրում էր աշնան վերջին տերեւների նման: Մահի երկիւղը տիրում էր վրան, եւ ուզում էր վերադառնալ տուն, զի մահը թափառում էր իր չորս կողմը այդ հիւանդանոցում, որ այլ եւս անկարող էր զգալ եւ տոկալ: Գնդապետի եւ բժշկի խորհուրդ եւ խընդրանք անկարող եղան համոզել Ադամեանին որ միայն հիւանդանոցում բայց ի դուր հիւանդանոցը մահ էր իր համար:

Նա գնաց. երկու ուսերը ցուեցան, բայց չը զըկեցին իրենց հօգածութիւնը: Երբեմն երկուսը, եւ երբեմն բժիշկը ինձ հետ միասին նստում էինք նաւ կամուրջից եւ գնում էինք մէկ ժամ Պէօյիւք Տէրէ Բօրժաքի փողոցի փայտաշէն տունը քննելու հիւանդի վիճակը: Նա երթալով փոքրանում էր, եւ դառնել էր իր նախկին մեծութեան կէսը. թոք չէր մնացել, եւ ոչ եւս միս, եւ սոսկալի չարչարւում կոկորդի ցաւից:

Մի օր երբ մտանք նրա ննջարանը, գտանք երկու կամ երեք մեծ եւ ամրակուռ սնտուկներ, բաց եւ ծածկուած թատերական զգեստներով:

— Բժիշկ, ասեց նա, վշտի եւ մահուան ժպիտով, աչքերը դարձնելով նրա վրայ, Սրանք իմ թատերական զգեստներ են, բերել տուի այստեղ, եւ իմ հաւատարիմ Մովսէսին

տեսել, որ բաց անէր, որ տեսնէի թէ ի՞նչպէս էին Համլէթի, Օթէլլոյի, Արքայ Լիրի Շէքսպիրեան խաղերիս սիրելի հագուստներս: Կեանքիս երազն էր երթալ Անգլիա, Ստրատ-Ֆորդ, Մեծ Հանճարի ծննդավայրը, եւ խաղալ նրա գերեզմանից ոչ-հեռու Շէքսպիրեան թատրոնում, երբ հոգիս պիտի փառաւորի. ի՞նչ ես կարծում, սիրելի բժիշկ, միթէ կարո՞ղ եմ ճանապարհորդել, ես կարծում եմ թէ կարող եմ:

— Հարկաւ, հարկաւ կարող էք, անտարակոյս կարող էք ճանապարհորդել ասեց Պըլեսկով քաղցրութեամբ:

Մովսէս՝ տասնեւեօթնամեայ անձնուէր սպասաւորը կանգնած էր դրան մօտ, եւ տեսայ որ աչքերը թաց էին եւ արտասուքի զսպուած կաթիլներ կաթում էին դէպի վայր:

Երբ հրաժեշտ տուինք յուսալից դժբաղդին եւ տունից դուրս գալով մի առժամանակ լռելեայն իջնում էինք քարքարոտ փողոցով, Պլեսկով խզեց լռութիւնը.

— Թէեւ խոստացայ վերստին գալ վաղը, բայց գալս աւելորդ է, մինչեւ վաղն այս ժամանակ խեղճ Ադամեանը արդէն ճանապարհորդած պիտի լինի, ոչ թէ Շէքսպիրի հայրենիքը, այլ մեռեալների հայրենիքը»:

Նոյն օր մինչեւ հետեւեալն միտքս շրջում էր Ադամեանի կենաց ողբերգութեան շուրջ, թէ

արդեօք տակաւին շնչո՞ւմ էր թէ կանգ առած էր գոյութեան շունչից։

Հետեւեալ օր այս մտածումներով պաշարուած նստեցի նաւ առանձին եւ մեկնեցայ դէպի ուր մտածութիւնը մղում էր ինձ։ Վերնամասի վրայ կանգնած կարող էի տեսնել շուրջանակի Սուլթանի մայրաքաղաքի բնութեան առեղծուածութեան ջրային եւ ցամաքային զմայլելիքները եւ մարդկութեան ձեռակերտ ճաշակաւոր եւ անճաշակ ելեւէջերը հաստատուն գետնի վրայ, եւ ծփծփուն ջրերի մակերեւոյթի երեսին։ Ոսկեղջիւրը մեր առեւում իր հեռուղհեռէ անհետացող ափերից բարձրացող դէզ առ դէզ շէնքերով եւ վերամբարձ մինարէներով, Ստամբոլը արծուի նման թեւատարած կազմով եւ նրան ընկերացող անհամար աղօթարաններով, որոց երկնաթուիչ բարձունքներից Մուհամէտը ցոյց է տալիս բարձրանիստ Աստուծոյ՝ թէ ինք որքան գերիվեր է Աստուծոյ Որդի Յիսուս Քրիստոսի վրայ։ Նայելով Մարմարայի բերանից դուրս տեսնում էի միայն ջրերի անսահման տարածութիւնը, որի մէջ հեռաստանում ծովից վեր էին ելնում Իշխանաց կղզիները իրենց յարականաչ անտառներով։ Այս ամէնը ոմանք անհետանում էին տեսքից եւ ոմանք մնում։ Այժմ նաւը նայում էր ուղղակի օձապտոյտ Վոսփորին, եւ տեսնում էի Վոսփորը իր բոլոր երկարութեամբ որքան կարելի էր տեսնել իր ոլորուն մարմ-

ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

նով: Նրա կապոյտ երեսի վրայ նաւեր, շոգե-
նաւակներ, եւ նաւակներ շոգիի եւ թիակների
զօրութեամբ շարժւում էին ետ եւ առաջ կամ
շեղակի մէկ կողմի ափերից հանդիպակաց ա-
փերի ուղղութեամբ. ոմանց միջից լսելի էին
մարդկային ձայներ մեքենաների շոգիի փրփրա-
լից շառաչումներ, եւ երկուստեք ափերից վեր
մեղմաթեք կողերի վրայ տուներ եւ տուներ,
միախառնուած առատ անդ ծառերի եւ պարտէզ-
ների կանաչութեամբ: Բայց եթէ Վոսփորը
ապատատաւորուած չը լինէր այս մարդկային
ձեռքերի շինուածներով, նա աւելի վսեմ եւ
հրաշալի պիտի լինէր իւր բնական գեղեցկու-
թեան մէջ: Բայց երկինքը բաղդ է շնորհել
մարդոց որ ծնին, ապրին այդ դրախտի մէջ եւ
վայելեն նրա տեսարանի գեղեցկութիւնը եւ օ-
դի քաղցրութիւնը դարերից ի վեր: Եւ այդ
միլիոնաւորներից մէկը ես էի այդ միջոցին:
Ինձ նման նախապէս եւ Ադամեան, որ այլ եւս
երբէք պիտի չը տեսնէր եւվայելէր, եւ մտա-
ծում էի թէ այդ րոպէին կար թէ չկար, եւ թէ
հիւանդութեան տանջանքը արդեօք դեռ շա-
րունակո՞ւմ էր թէ վերջ էր տուել նրա պատ-
ուական կեանքին:

Նուազ կամ աւել մէկ ժամ տեւեց մին-
չեւ նաւը հասաւ Պէօյիւք Տէրէ: Նաւահան-
գստից դուրս գալով մտայ ձախակողմեան
փողոցը եւ քիչ յետոյ աջակողմեան զառիվեր
փողոցը: Տան տանտէրկու տուն վեր դրան ա-

առաջ կանգնած էին կանայք եւ նրանց մէջից դուրս եկաւ մի պատանի, որ գլուխը բաց բա-կաւ փակել դէպի վայր: Հաւատարիմ գեղացի Մովսէս ապաստաւորն էր: Աչքերը արտասուա-լից էին, եւ ձայնը խառնուած հեկեկանքով:

— Այո՛, դուռը փակեր են եւ թող չեն տար ներս երթամ տեսնամ տղաս: Հառաչեցայ: Ա-դամեան այլ եւս դադարել էր գոյութիւնից երկրի երեսին, եւ նրա հաւատացեալ հոգին արդէն սկսել էր սաւառնել աստեղազարդ ա-եղերքի անհունութեան մէջ, մինչեւ որ դար ժամանակ որ մի անգամ եւս գայ երկրի վրայ, մարմնանալ, մարդանալ, եւ դառնալ դե-րասան, բանաստեղծ, եւ նկարիչ: Երբ իր ցա-ւերի մէջ յարգանքը կարող էր սփոփել նրա վիրաւոր կեանքը, նա ունեցաւ շատ քիչ յար-գանք, գրեթէ ոչինչ իր ցեղակիցներից: Բայց երբ չէր կարող տեսնել եւ զգալ յարգանք եւ պէտքը չունէր, այն ժամանակ բազմաթիւ ցե-ղակիցներ յարգանքով բոլորած էին նրա շուրջ մինչ նա իջնում էր գերեզման, եւ դառնալու հող:

Այս յարգողների բուռն ցանկութեան գո-հացումն տալու համար կաթողիկ եկեղեցա-կանը արտօնեց որ նրանք բանային երկաթա-պատ դագաղը, լուսանկարէին սիրեցեալ մեռ-եալի դէմքը եւ նկարիչը գծէր նրա երեսի գի-ծերը, որպէս զի նրա կերպարանքը մնար ան-մոռանալի նրա յարգողների մտքերում, մինչ

վերեւ օդի մէջ անկենդան մարմնի կենդանի
հոգին թեւատարած նայելով ծաղրում էր եւ
անարգում այդ կեղծ յարգանքի այս հայա-
յատակ ցուցասիրութիւնը:

Այս էր 1888ին կամ 89ին, եւ ես ի կենդա-
նութեան չարունակեցի իմ մտքում լուսանը-
կարուած պահել նրա վիշտով եւ ժպիտով գու-
նաւորուած կերպարանքը:

Վեց տարիներ յետոյ, հեռու այդ տխուր
վայրից, եւ Վասփուրի ազատապատուարթ մթնո-
լորտից, փախուած էի Աքիայի ամեհի միջնա-
բերդում, եւ հառաչում էի ազատութեան հա-
մար մի քանի տասնեակ դժբաղդակիցների
հետ միասին: Նրանց մէջ կար Վենետիկի Մը-
խիթարեան դպրոցում ուսած մի անդորրամիտ
բարեկիրթ Տրապիզոնցի Պետրոս Մարիմեան,
ընտիր ուսումնադէտ: Նա ի մէջ այլոց կարդա-
ցել էր աստեղագէտ նշանաւոր Ֆրանսացի Քա-
միլ Ֆլամարիոնի բոլոր գործերը, «Անմահու-
թիւն», «Յաւիտենականութիւն», «Ուրանիա»
եւ այլն, որոց մէջ, հոգւոյ գոյութեան երե-
ւոյթներն են արդարացւում ,եւ նա եղել էր
Ադամեանի հոգեխօսութեան հաւատացող,
բայց Ադամեանի նման նոյնպէս անկարող ըլ-
նել մեդիում, այն է ուղղակի խօսող կամ մաս-
նակցող հոգիների հետ: Սակայն բարեբաղ-
դաբար մեր մէջ կար մի ուրիշը, Միացեալ Ըն-
կերութեան դպրոցների Մշոյ շրջանի տեսուչ
Սիմակ Գուլումճեան, որ ցոյց տուեց թէ իր

ձեռներում ունէր այդ ոգեխօսական կարողութիւնը: Բայց հոգիների անտեսանելի աշխարհից աւելի ինձ համար կարեւորն էր մեր ապրած սեւ աշխարհի վախճանը գիտենալ, ուստի Սիսակ, իմ խնդրանքի վրայ սրեց իւր մատիտը եւ շարժեց թղթի վրայ հետեւեալ հարցումով.

— Սիրեցեալ մարմնաւոր Ադամեանի անմահ եւ անշօշափելի հոգի, ասա ինձ, արդեօք պիտի գա՞յ մեր այս դաժան կեանքի ստրկութեան վերջը, եւ ստանանք մարդայատուկ ազատութիւնը, որի համար անձկութեամբ մեր արթուն ժամերում երազում ենք գիշերային անարթուն հոգեյուզութեան րոպէներում:

— Դու վհատուող չէիր երբէք եւ մի վհատիր այդ դաժան կեանքումդ, որ դու ստեղծեցիր քեզ համար քո իսկ անխոհեմութեամբ: Չես մոռացել անշուշտ, երբ մենք երկու խոնարհ արարածներս, եւ մեզ նման ուրիշ բայց հարուստ հայեր, ման էինք գալիս գեղեցիկ Պէօյիւք Տէրէյում, անուշ Վոսփորի ափերի վրայ, ուր մենք, եւ միւսներ ազատ քայլում էինք աստուածաշէն հողի վրայ, եւ ազատ ներշնչում էինք եւ շնչում երկնային անապակ օդը, եւ ես երբեմնակի խրատում էի քեզ՝ զգուշութիւն նորափայլ եւ հոգեպրգիչ ազգասիրութեան հրապուրիչ հիւանդութիւնից: Դու մտիկ չարիր խրատիս, եւ կորցրիր ազատութիւնդ, ուստի սպասիր ստանաս, պիտի ստանաս Բիւ-

գանդիոնի յաղթականի հրամանով, բայց պիտի ստանաս փրկութիւնդ այնպիսի ձեռներից, որոնք յետոյ իր գահից տապալեն եւ իր գահից զրկեն Օսմանեան Կայսրութեան միապետին: Ինչպէս ես ու դու ազատ եւ արձակ էինք Կ. Պոլսում, այնպէս էին մեր ազգի մարդիկը երկրի ամէն մասերում: Ինչպէս ես դու եւ ձերայինք ազատազուրկ եւ կալանաւոր Պտղոմայիսի այդ քաղաքում, նոյնպէս են ձեր նըմաններ ուրիշ հեռաւոր բերդերում եւ երկրի բանտերում, այնպէս են եւ ձեր բոլոր հայ ազատ ցեղակիցները իրենց քաղաքներում եւ գիւղերում. սակայն ուր որ երթան ամենուրեք երկիւղի բանտը ընկերանում է նրանց սրտերին եւ հոգիներին: Դուք շատ հեռու էք նրանցից եւ չէք տեսնում, եթէ տեսնէիք, պիտի մեղքենայիք նրանց: Ազգերը յառաջանում են երջանկութեան, կամ յետադիմում ապերջանկութեան մէջ ,իրենց բնաւորութեան, վարմունքների եւ արարքների արդիւնքներով: Ձեր ցեղը իր ապերջանկութեան պատասխանատու պիտի մնայ իր այդ երեք յատկութեանց մէջ: Ձեր ցեղի իմաստունները չեն տեսնում իրենց թերութիւնները, եւ չեն խոստովանում, եւ չեն դարմանում, եւ ընդհակառակն այն համարում են կատարելութիւն»:

Գույումճեան վեր առաւ իր նրբածայր մատիտը թուղթի երեսից: Ոգին վերացել էր աներեւութեան միջից: Ես նայեցի թուղթին,

ուր ստորագրուած տեսայ, «Պետրոս Ադամեան»․ ձեռագիրը աննման էր Գույումճեանի գրին: Եւ ապշեցայ երբ յանկարծ մտքիս մէջ զարթնեց Ադամեանի ստորագրութիւնը որ իր նմանութեամբ այս իսկ ստորագրութեան պատկերն էր, ինչպէս եւ ամբողջ գրուածքը նմանում էր նրա այժմ փտած ձեռքի, երբեմնի կենդանի ձեռքի շարժումներին համանման: Ի՞նչ էր բնութեան այս երեւոյթի այս գաղտնիքը․ նրա մեկնութիւնը ոմանց համար մեկնելի է, եւ ոմանց համար անմեկնելի: Բայց Ադամեանի ոգին իր անտեսանելութեան կերպարանքով հետեւում էր ինձ ուր եւ լինէի, եւ երբ եւ լինէր առանց տարիների միջոցները նըկատ ունենալու:

1909ին երբ Լոնդոնից գնում էի Կովկաս՝ հարաւային Ռուսիոյ գծով, եւ մեր գնացքը կանգնած էր մի ռուսական կայարանում, լսեցի թերթավաճառի ձայնը, որ աւետում էր Սուլթան Համիդի միահեծան իշխանութեան տապալումը, հետեւաբար որոշեցի վերադառնալ Անգլիա Կ․ Պոլսի վրայով: Եւ մինչ այդտեղ էի, Ադամեանի ոգին երեւեց ինձ աներեւութօրէն, յիշեցնելով ինձ թէ ես գրել էի նրա փառաբանական կենսագրութիւնը, որ տարածուեց նրա յոբելեանի օրը հանդիսականներին, որոնք նայում եւ լսում էին նրա Համլէթի խաղը, եւ ասեց թէ այդ գրքից ես կարող էի գտնել միայն Զաբէհ Տիչմանեանի,

այժմ թաղուած գրատան փոշոտած դարակ-
ներում: Շիշմանեան այդ շրջանի նախընթաց
տարիների անուանի գրադէտ Ծերենցի եղբօր-
որդին էր, եւ էր ինձ լաւ ծանօթ: Գտայ գոր-
ծատեղին, բայց նրա փոխարէն գտայ մի ու-
րիշին, որ յայտնեց թէ Զարեհի կրտսեր եղ-
բայրն էր: Հարցրի թէ արդեօք ունէ՞ն Ադամ-
եանի կենսագրութիւնը: Փոխանակ պատաս-
խանի «այո, կամ՝ ոչ», նա մի դրական հար-
ցական ոճով ասեց.

— Դուք Պետրոս Տօնապետեանն էք, ա-
նանկ չէ՞:

— Ինչպէ՞ս իմացաք, որ ես եմ, հարցրի
զարմանքով:

— Որովհետեւ քսան երկու տարիէ ի վեր
ուրիշ ոչ ոք է հարցուցեր մեր սիրելի Ադամ-
եանի մասին: Անոր գործունէութիւնը ռուսա-
հայոց մէջ է եղեր, եւ մեր Պոլսեցիք անոր մա-
սին բան մը չգիտեն բացի հին դպրոցական ըն-
կերները, որոնք ամէնքը ունեն ձեր գրքէն ա-
նոր յոբելեանի օրէն:

Այս բացատրութիւնը փոքր ինչ մեղմա-
ցրեց նուաստութիւնս, որ քսան երկու տարի-
ներից ի վեր ոչ ոք էր հետաքրքրուած թէ ես
մի գիրք էի գրել աշխարհի վրայ, նկատողու-
թեան արժանի: Գլխաւոր սփոփանքս այն ե-
ղաւ, որ գիրքը սպառուած չէր, եւ մի օրինա-
կը առայ: Եւ կարդալով զգացի հպարտու-
թիւն անցեալի հայագիտութեանս համար, եւ

նուաստութիւն այդ ժամանակի հայագիտութեանս եւ սահմանափակ բառագիտութեանս համար: Գէորգեան ճեմարանում հայերէն լեզուի ուսուցումը երեւի բաւական լաւ էր, որ այնքան կարող էի եղել իւրացնել մեր գրական լեզուի մեծահարուստ մի փոքր մասը, որ բաւական օգնել էր իմ մտածումների արտայայտութեան բազմապիսի ձեւերին լրագրական ասպարէզում, իմ կարճ կամ ընդարձակ գրութեանց մէջ, եւ կամ Տոլստոյի, Մոպասանի եւ այլ օտար վէպիկների հայերէնի թարգմանութեանց գործում:

Այս մտածումները արթնացան իմ մէջ, երբ կարդում էի Ազգամեանի տաղանդի արժանիքները նկարագրող իմ տողերը: Բայց 1892 մարտի բանտարկութիւնը վերջ դրեց գրչիս յառաջդիմութեան ընթացքին, գրիչս ժանգոտեց եւ հայագիտութիւնս եւս գիտցած բառերով սկսեց աղօտանալ եւ ցնդել յարաճուն անգիտութեան մէջ:

Երկար տարիների բանտ եւ աքսորից յետոյ, հայ ժողովրդի կեանքից անջատուած մի կեանքի մէջ, ես բնականաբար եղայ անջատուած եւ գրական կեանքից: Միայն տարուայ ընթացքում, մի կամ մի քանի լրագրական յօդուածներ եւ երբեմն եւ ոչ իսկ մէկ, բացի 1902ին Լինչի «Արմենիա»յի Համառօտագրութիւնը, 1916ին Խրիմեան Հայրիկի Թագաւորաց ժողովը, եւ 1922ին Ձայն Տառապելոցը:

ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

Այսու ամենայնիւ զգում էի թէ իմ նախաբանտարկութեան շրջանի բռնադատական եւ շարադրական կարողութիւնը ենթարկուած էր ապիկարութեան եւ զգում էի թէ իմ յիշողութիւնը այլ եւս չունէր արտայայտութեանց զէնքի պաշար, որով զօրանայի եւ նկարագրէի իմ երկար կեանքի մտածութիւնները, պարտուներն եւ գովասանութիւնները, Հայ ժողովրդեան եւ նրա իմաստունների, իմաստակների եւ մերկիմաստների վերաբերեալ, բայց չաբանակ յաջողեցայ այս փափաքիս մէջ, եւ չը ձեռնարկեցի գրել երբ կարող էի տեսնել, եւ սկսեցի գրել երբ այլ եւս չեմ կարողանում տեսնել: Եւ կարծեմ սիրեցեալ Պետրոս Ադամեանի անտեսանելի ոգին է որ բռնում է գրիչս, եւ շարժում յառաջ գրելով ինչ որ իմ մտածութիւններն են թելադրում նրան: Եւ իմ մտածութիւնները, ուր որ լինէի, յաճախ դառնում էին այն տեղը, ուր բազմութիւնը կանգնած էր դիտարաց, եւ նրա գլուխը դագաղի մէջ բանտարկուած ուղեւորւում դէպի սեւ հողը:

ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՇԸԳԵԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ

Մինչ մի ազնիւ կեանք ոչնչանում էր անյայտութեան մէջ, մի ուրիշ կեանք բարձրանում էր այն գիրքին, որից յետոյ Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնն էր: Նա Նիկոմիդիոյ մօտակայ Արմաշ վանքի վանահայրն էր, դէմքով վայելուչ, բնութեամբ քաղցրաբարոյ. ծնած նոյն գաւառի մի համեստ հայ գիւղում, որ նշանաւոր էր պուլտմա չինելը:

Սեպտեմբեր ամսին, երբ բազմահայ Մեծ Նոր Գիւղ, Զինկիլէր եւ ուրիշներ իրենց բազմածաւալ այգիների տատատատունկ ողկոյզներից ձեռնարկում էին պատրաստել գինի, վանահօր գիւղացիները իրենց ճմլած խաղողներից արտահոսած հեղուկը դնում էին պղնձէ մեծ կաթսաների մէջ, եւ իրենց անտառի փայտերի կրակներով, առաւօտից մինչեւ երեկոյ, եռացնում էին շիրան, եւ իրենց խորհրդաւոր մի նիւթով թանձրացնում էին, եւ դարձնում էին թանձր, մեղրի նման, եւ առանց հաշուելու աշխատութեան ժամերը եւ այրուած փայ-

անրը, նրա համար գործածուած խաղողը եթէ գործածուէր գինիի, երեք անգամ աւելի շահ պիտի բերէր գիւղացիին, քան ինչ որ բերում էր նրա շինած պուլաման որ հաճոյքով այդ գիւղացիք տանում էին Կ. Պոլիս ծախելու: Նրանց Առաջնորդը՝ Ստեփանոս եպիսկոպոս, որ իւր ժողովրդեան ոչ միայն հոգեւոր, բայց մարմնաւոր եւ մտաւոր զարգացման աւելի էր հոգ տանում, վանահօր խելացի գիւղացինե-րին խելք սովորեցրեց ասելով, որ խնայէին իրենց անտառի փայտերին եւ իրենց ժամանա-կին եւ խաղողի եռապատիկ կորուստին, եւ շի-նէին գինի շահաւոր ծախելու, փոխանակ ի-րենց գրպաններին կորստաբեր պուլամային:

Այս յեղափոխական քարոզի լուրը հասաւ Արմաշի Վանահօր, որ երկար խրատատու նա-մակով իւր հայրենակիցներին գրեց — «Գինի մի՛ շինէք, պուլամա շինեցէք»: Նա եւս Օր-մանեանի պէս ծուռ աչքով էր նայում Ստեփա-նոսի ժողովրդասիրական ձեռնարկներին, ուս-տի եւ երկուսն եւս դարձան Պատրիարք Կ. Պոլսոյ:

Ես ինչպէս եղել էի Նիկոմիդիոյ գրեթէ ամէն գիւղերում, նոյնպէս եղայ Արմաշում, Միհրան Աթանասեանի հետ հիւր եղանք վան-քի գործերի կառավարիչ Ներսէս վարդապետի բնակարանում: Եւ կենացս մէջ առաջին եւ վերջին անգամ լինելով ունեցանք մի խիստ երկրաշարժ. ամէն մարդ դուրս փախաւ եւ ես

ծուլաբար անկողնիս մէջէն չը շարժուեցայ: Եկեղեցիի ներսից պատի մէկ մասը ճեղքուեցաւ բաւական երկայն: Վանահօրը չը տեսանք երբեւէ բացակայ էր, բայց ինչ որ կարողացայ իմանալ այն էր թէ նա մի ապիկար մարդ էր, թէեւ վանքը բաւական լաւ կալուածատէր, բայց կառավարւում էր վատ: Դպրոցը փակուած էր: Նա յաճախ այցելում էր Կ. Պոլիս, եւ շատ բարեկամներ էր շահել հարուստ դասի մէջ եւ Երեսփոխանական ժողովի անդամների եւ լրագրական մարդոց հետ:

1886ի աշնան պատրիարքական ընտրութեան խնդիր էր յուզւում լրագրութեան մէջ: «Արեւելք» ջերմապէս պաշտպանում էր Խորէն արքեպիսկոպոս Աշըգեանի թեկնածութիւնը, ես չէի կարող հակառակը ասել իմ աշխատած թերթի մէջ, ուստի Թիֆլիսի «Արձագանգ»ի մէջ գրեցի նրա վանահայրական ապիկարութեան մասին, յայտնելով թէ այդպիսի մի եկեղեցականի թեկնածութիւնն էր որ «Արեւելք»ը գովում էր: «Արեւելք»ի վարչութեան գլխաւոր անդամներից Յովսէփ Եուսուֆեան, կառավարութեան բարձրագոյն Մուլքիէ դպրոցի մաթեմատիկայի ուսուցիչ, եւ Թուրք Մախսուսիէ նաւային ընկերութեան հաշուակալ, մի օր կանչեց առանձին, ասելով թէ Արփիարը (Հայկակ), յայտնեց ժողովին թէ ես ռուսահայ թերթի մէջ էի գրում «Արեւելք»ի եւ Աշըգեանի դէմ, եւ հարկ էր որ յանդիմա-

նէին ինձ: Եուսուֆեան միայն ազնուաբար խրատեց որ այդպէս չը վարուէի:

Աշըրդեան ընտրուեց պատրիարք: Սեպտեմբերի վերջին կամ հոկտեմբերի սկիզբն էր եօթանասուն հայազգիներ, եպիսկոպոս, վարդապետ, երեսփոխաններ, լրագրական աշխատակիցներ եւ ազգասէրներ նստան Մախսուսիէի մի փոքր շոգենաւ, զարդարուած դրօշակներով եւ ճամբայ ընկան դէպի Նիկոմիդիա, ցնծութեան խօսքերի եւ աղաղակների մէջ:

Կէսօրը բաւական անցել էր եւ մեր նաւը մօտենում էր Նիկոմիդիոյ նաւահանգստին: Տեղական հայեր չգիտէին թէ ի՞նչու էր այդ բացառիկ նաւի երեւումը նրա աննաւ եւ խաղաղ ջրերի վրայ. եւ դրօշափայլ կերպարանքը շատացրել էր մարդոց հետաքրքրութիւնը: Նաւահանգստի մօտ, մերձաւոր եւ հեռաւոր բարձրութեանց վրայ կանգնած նայում էին դէպի ուր մենք յառաջանում էինք, եւ մենք եւս նայում էինք նրանց կողմը եւ նրանց աստիճանաւոր քաղաքի վրայ: Իմ մօտ կանգնած խումբի բարեկամներից մէկը ձեռքը ուղղելով դէպի հանդիպակաց բարձրութեանց կողմերում տարածուած բազմաթիւ մանր տուների մէջ վեր ելած մի ահագին շէնք, ասեց ծիծաղելով ի՞նչ է այս հսկան թզուկների միջեւ: Ես տուի պատասխան նրա հետաքրքրական հարցումին, թէ այդ Պարտիզակ զուտ հայկական գիւղի դըպ-

րոցն էր չինուած Առաջնորդի առաջնորդութեամբ, եւ իր ժողովրդի անձնուէր աշխատութեամբ, եւ թէ դպրոցի տեսուչն էր Եղիշէ վարդապետ Դուրեան, վաղամեռիկ բանաստեղծ Պետրոս Դուրեանի կրտսեր եղբայրը՝ եւ ասեցի թէ ով որ սիրում էր տեսնել ժողովրդեան ձեռքի այս շէնքը, եւ իրենց սիրած բանաստեղծի դէմքի նմանութիւնը, թող վաղն առաւօտ միանանք եւ միասին երթանք այցելել հեռաւոր Հայաստանից հեռացած հայ գաւակների այս թոռները եւ նրանց պարծանքի այդ երկու առարկաները:

Հետեւեալ առաւօտ կանուխ կրօնական, քաղաքական, եւ Ազգային ժողովի պաշտօնական ներկայացուցիչները, եւ նրանց կիսապաշտօնական եւ անպաշտօն շատ անձեր, ճանապարհ ընկան դէպի Արմաշ՝ ողջունելու ազգի ընտրեալը, եւ առօք փառօք դուրս բերելու անշուք վանքից եւ տանելու եւ բազմեցնելու Թուրքիոյ Հայոց ամենաբարձր պաշտօնի վըրայ: Եւ մեր փոքր խումբը դէպի Պարտիզակ, եւ ուրիշներ լաւագոյն համարեցին մնալ Նիկոմիդիոյ մէջ, հաճոյք զգալ խօսակցել տեղական ծանօթների հետ, սուրճ խմել եւ թաւլու խաղալ, կամ զբօսնել նայելով խանութներին, եւ քաղաքի այլ համեստ տեսարաններին: Ես արդէն տեսել էի, եւ նրանք եւս տեսան եւ համոզուեցան թէ իրենց երկրի մէջ մի թեմական առաջնորդ եթէ ունի օգտակար լինելու հա-

կացութիւն եւ փափաք, եւ գործելու կամք, ինչե՞ր կարող էր անել իր ժողովրդի համար, եւ ժողովրդի հետ միասին:

Կէս օրէն անց էր երբ վերադարձանք Նիկոմիդիա: Իմ հիւրընկալը, բժիշկ Աշոտ Պարտիզպանեան ասեց թէ ինք գնում էր Առաջնորդի մօտ, ուր պիտի լինէին վարչական ժողովի միւս անդամները, եւ առաջարկեց որ ես եւս գնայի միատեղ, եւ թէ միւսները սիրով պիտի ընդունէին ինձ որպէս անդամակից եւ լինել հաղորդակից նրանց վարչական եւ քաղաքական գաղտնիքներին: Ամէնը արդէն լաւածանօթ այնտեղ էին, եւ նստած Առաջնորդի շուրջը, եւ Վարդան ադան պատրաստում եւ բերում էր իր պատուական սուրճը, որ մի ապուրի դգալի պարունակութեան չափից աւելի չէր նրա մանր բաժակների մէջ: Եւ մենք մինչ կաթիլ կաթիլ խմում էինք սեւ հեղուկը, որ շուտով չսպառէր:

Միւս կողմից ազգընտիր Պատրիարքը առօք փառօք Նիկոմիդիա էր մտնում՝ շրջապատուած ազգի ներկայացուցիչներով եւ պատկառելի հանդիսատեսներով:

Եկեղեցւոյ մօտի մեծ եւ երկայն սրահի մէջ պատրաստուած էր խնճոյքի սեղանը, հրաւիրեալների մէջ էին Նիկոմիդիոյ գաւառապետ Թուրք փաշան, զինուորական հրամանատարը, գաւառի մահմետական կրօնապետը:

Առաջին բաժակը ջերմ կեցցէների մէջ

դատարկուեց Վեհափառ Սուլթան Աբդ–ուլ–Համիդի կենաց, ապա Ամենապատիւ Տէր Խորէն Արքեպիսկոպոս Պատրիարքի, եւ ապա յաջորդաբար միւսների կենաց, ամէն բաժակը ընկերանում էր ճառերով եւ վերջանում ջերմագին ծափերով: Եւ այս ցնծալից հացկերոյթը տեւեց ընդ երկար, եւ Պատրիարքը իւր լայն աչքերի փայլով եւ հրապուրիչ դէմքի ժպիտներով ցոյց էր տալիս այն երջանկութիւնը, որ զգում էր իրեն նուիրուած գովասանքների առատութիւնից եւ առաւելութիւնից:

Խնճոյքից յետոյ, սեղանակիցները, ոմանք կէս գինով, ոմանք լիագինի չարժումներով բաժանուեցան միմեանցից, եւ հեռացան անձնիւր իրենց հանգստարանը:

Բժիշկ Աշոտ դեռ հանգստի պէտք չէր ըզգում, եւ առաջարկեց որ երթայինք փոքր ինչ ժամանակ անցընել Առաջնորդի մօտ, մեզ հետ միասին կային իւր անդամակիցներից ոմանք: Նա գոհ էր մեր այցելութեան համար: Աւելի մտածկոտ էր քան ուրախ: Խօսքը ինձ ուղղելով ասեց, «Է՛ Պետրէ, տեսաք մեր պատուական խնճոյքն ի պատիւ մեր արժանաւոր Պատրիարքին, եւ այն գովասանքները եւ փառքերը, որ տրուեցան նորա: Վաղը, դուք ալ ձեր գրիչով այս տեսարանը պիտի փառաբանէք «Արեւելք»ի մէջ, եւ հայ ժողովուրդը կարդալով պիտի ուրախանայ ,եւ պիտի պարծենայ:

Ես պատասխանեցի թէ այդ պատիւից եւ

բարեբաղդաբար զուրկ պիտի մնայի, որովհետեւ «Արեւելք»ի կողմից աւելի մի մեծ մարդ կար եկած, որ այդ փառքը ինքը պիտի յափշտակէր ինձանից:

Նա նայեց դէպի վեր եւ բացագանչեց «վայ քեզ Հայ ազգ, վա՜յ քեզ, որ այսպիսի մի ապիկար արարած պիտի նստի քո գլխուն»:

Այս Պատրիարքի ժամանակ սկսեց Թուրք կառավարութեան վստահութեան խախտումը հայ ցեղի նկատմամբ, եւ նրա կասկածի եւ ատելութեան սերմերի աճումը, որոնք յետագային սաստկացան, եւ բացին հետզհետէ զարհուրելի անդունդը, որի մէջ աստիճանաբար ընկան հայութեան ամէն գաւառների հասարակութիւնները, եւ կորան աքսորի թշուառութեան մէջ: Սակայն Աշըգեան Պատրիարք այս եղերական վիճակի ստեղծման եւ զրգռման համար յանցաւոր չէ ոչ իր անձնական ապիկարութեան, եւ ոչ իր պատրիարքական գործունէութեան պատճառաւ:

ՄԵՐԺՈՒՄՆ ՍՈՒԼԹԱՆԻ ԱՌԱՋԱՐԿԻ

Այդ շրջաններում տեղի ունեցաւ մի դէպք, որն հաւանօրէն մեծ դեր ունեցաւ Թրքահայոց յետագայ դժբաղդութեան համար:

Եըլդըզի պալատի ցամաքային կողմի լուսամուտները նայում էին մերձակայ մի հայ գերեզմանատան վրայ, ուր վաղուց մեռեալներ չէին թաղւում այլ եւս: Սուլթան Համիդ փափաք յայտնեց Պատրիարքին, որ մեռեալների ոսկորները դուրս հանուէին գերեզմաններից եւ կրօնական արարողութեամբ փոխադրուէին մի այլ տեղ ուր ինք մի պատշաճ հող յատկացնէր այդ նպատակին, եւ այսպէս հին գերեզմանատունը ինքն վերածել տար պարտէզի: Խնդիրը շատ փափուկ էր եւ ոմանց կողմից թագաւորի խնդրանքի մերժումը համարւում էր ծանր սխալ: Բայց մերժման ոգին զօրաւոր էր յատկապէս եկեղեցականների մէջ, առարկելով թէ գերեզմանները կնքուած մնալու են մինչեւ վերջին դատաստանը: Այսպէս էր կրօ-

նական ժողովի տրամադրութիւնը, եւ նրանից կախուած խնդրի վճիռը։

Յովհաննէս Նուրեան, Պետական Խորհրդի անդամ, եւ յայնժամ քաղաքական Ազգային կեդրոնական վարչութեան ատենապետ, սաստիկ վրդովուած էր Կրօնական ժողովի վճռականութեան վրայ, փաստաբանելով թէ ծանր անարգանք պիտի լինէր Կայսեր անձին դէմ, մերժելով նրա խնդիրը, բայց ի զուր։ Մերժումը տեղի ունեցաւ. թէ Սուլթանը ի՞նչ զգաց, իրեն եղած այդ անարգանքին, դժուար չէ գուշակել։

Սրանից մէկ տարի կամ քիչ յետոյ, խաղաղ յեղափոխութեան մի թերթ սկսեց երեւիլ Մարսիլլիայում, եւ մարտաձայն յեղափոխութեան Հնչակ- Ժնեւում, ընդդէմ գազան Թուրքին, բայց քսան եւ հինգ տարի յետոյ երբ Սուլթան Համիդ այլ եւս չկար Հայ յեղափոխութեան վարիչները Կ. Պոլսի մէջ եղբայրաբար գործակցում էին Երիտասարդ Թուրքերի հետ, եւ այս Երիտասարդ Թուրք կառավարութիւնը չը խնդրեց Հայոց Պատրիարքին, եւ ոչ եւս հարցրեց նրա կամքը բայց գրաւեց Բանկալթիի ընդարձակ եւ մեծ գերեզմանատունը, եւ հայ մեռեալների փտած ոսկորները կամ թողելով կամ դուրս հանել տալով իրենց ընդերկրեայ բնակարաններից, հաւասարեցրեց գերեզմանմանները հողին եւ տիրացաւ այդ գետնին, որ այդ քաղաքամասի ամենալաւ մասն էր, գըլ—

խաւար փողոցի վրայ, եւ ետեւից ներկայացընում էր Կ. Պոլսի եւրոպական մասի ցամաքային եւ ծովային ամենագեղեցիկ տեսարաններից մէկը:

Հայ եկեղեցականները արհամարհեցին բռնակալի երկիւղը եւ խնդիրը, Հայ յեղափոխականները լռութեամբ խոնարհեցան սահմանադրական Թուրք իշխանութեան բռնակալութեան առաջ: Կրօնական ժողովի ընթացքը երկար ժամանակ խօսակցութեան առարկայ էր, այդ ընթացքի մղողներն եւ քաջալերողները համարում էին այդ արարքը ազգային պարծանք, ուրիշներ դատապարտում որպէս ազգային յիմարութիւն եւ չարիք:

Այս խնդրից շատ ամիսներ առաջ, Զմիւռնիոյ մէջ Սփարթալի, մի տեղացի հարուստ, ուզեց շինել մի հիւանդանոց եւ հիմքը դրուելով եկեղեցւոյ բակի վրայ, գետնի տակից մեռեալների ոսկորներ դուրս եկան եւ Առաջնորդի կարգադրութեամբ ոսկորները տեղափոխուեցան գերեզմանատուն կրօնական արարողութեամբ, եւ եղելութիւնը հրատարակուեց տեղական «Արեւելեան Մամուլ» ամսագրում պարզ լուրերի շարքում:

Առաջնորդն էր Մելքիսեդեկ Արքեպիսկոպոս, որ 1885ին, Հայ ազգի պատգամաւորների միահամուռ քուէներով ընտրուեց Կաթողիկոս, բայց մերժուեց Ցարի վեթոյով: Ուստի

կային հայեր որ Ցարի նման վեթոներով հալածում էին այս ճշմարիտ հայ ազգասէրին, եւ այսպէս աղաւաղելով ճշմարտութիւնը, որի բացատրութիւնը տուի նախորդ էջերում։

Թիֆլիսի «Մշակ»ի Կ. Պոլսի թղթակիցը Հայկակ (Արփիար Արփիարեան) հրատարակեց այդ թերթում թէ Մելքիսեդեկ Արքեպիսկոպոս մասնաւորապէս արեց այդ պեղումը, եւ ոսկորների տեղափոխութիւնը որպէս զի ցոյց տար Սուլթանին թէ Կրօնական ժողովը հարակամութիւնից մղուած մերժեց նրա փափաքը, թէեւ լաւ գիտէր թէ այդ պեղումը տեղի էր ունեցել Սուլթանի առաջարկից շատ ամիսներ առաջ եւ Զմիւռնիոյ կրօն. ժողովի որոշմամբ։ «Մշակ»ի համար այս մի նոր զէնք եղաւ հալածել եւ անարգել այդ մեծ եկեղեցականին, ինչ որ ցարական քաղաքականութիւնն էր։

Իմ անխորաթափանց ընթերցողներ գուցէ խորհին թէ ինչ կարեւորութիւն ունի ինձ համար այսպէս յառաջ բերել այսպիսի անկարեւոր եւ իմ նիւթի ուղղութիւնից դուրս մի խնդիր, բայց ես յառաջ եմ բերում ներկայացնել թէ որպիսի՛ նկարագրի գրողներ կային մեր մէջ իմ ապրած ժամանակում, եւ թէ ինչպէս մեր յեղափոխութեան մէջ մուտք էին գործել այսպիսի մարդիկ եւ յաջողել էին դառնալ դերակատարներ եւ մտատիպարներ։

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Թերեւս մեր յեղափոխութիւնը ունենար տարբեր ուղղութիւն եւ Թուրքիոյ հայ ժողովրդեան ճակատագիրը ոչ դժբաղդ, եթէ յեղափոխութեան մէջ ներմուծուած չը լինէին այդպիսի չարամիտ մտաւորականներ եւ անխելք եւ անհեռատես վեղարաւորներ:

ՀԱՐԻՒՐ ՔՍԱՆ ՏԱՐԻ ԱՌԱՋ

ՅՈՎՍԷՓ ԷՄԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մի հայրենիք կարող է տիրապետուել օտար թշնամիից եւ դառնալ մեռեալ իբր հարազատ սեփականատէր ազգի վայելման համար. բայց հայրենասիրութիւնը անմեռանելի է, եւ որքան ժամանակ որ այդպիսի հայրենիք ունի որդիներ, հոգ չէ սակաւաթիւ, նրանց երեւակայութեանց եւ զգացումների մէջ հայրենիքի սէրը եւ նրա ազատութեան յոյսը մնում են մըշտավառ նման անշէջ ճրագի: Բայց խնդիրը այնտեղ է թէ կարո՞ղ է հնարաւոր համարուել այդպիսի յոյսի իրականութեան օրը:

Այս խնդրին պատասխանում է այսօրից հարիւր ութսուն տարի առաջ Հայաստանի Խընուս աւանի մի պարզ քահանան՝ Լոնդոնից Հայաստանը ազատելու երազով եւ ծրագրով այնտեղ գնացած մի Համադանցի կրակ ու բոց յեղափոխականի, Էմին Յովսէփի, որ անգլի-

րէն ինքնակենսագրութեան գրքին մէջ, Էմին պատմում է այդ դէպքը: Մտնում է Խնուս գիւղ զին-եալ անգլիական զէնքերով եւ արտասովոր ըզ-գեստաւորուած, եւ նստած արաբական ձիի վրայ՝ զինուորական խրոխտանքով:

Հայ գիւղացիները կարծեցին թէ նա մի թուրք փաշա էր եւ ամենայն յարգանքով ընդ-առաջ գնացին, բայց երբ նա հայերէն բացա-գանչեց.— եղբայրնե՛ր, նրա բերանից հայերէն ողջոյնը լսելով նրանք փոխեցին իրենց յարգա-լից ձեւերը, եւ գաւազանները եւ ձեռները ըս-պառնալից շարժելով գոռացին.—

« Հայտէ՛, դուրս կորսուէ մեր գիւղից »: Եւ քիչ էր մնացել քարկոծելով նրան հեռացը-նէին գիւղից: Էմին փոխեց լեզուն, եւ գոռաց թուրքերէն.— « Դուք թշուառական կեավուր-ներ, ի՞նչպէս էք համարձակում այդպէս վար-ուել իմ դէմ: Հիմա գիտէ՞ք ինչ կ՚անեմ ձեր ա-մէնիդ, ես օսմանլի մեծաւոր:

Հայ գիւղացիները յանդգնութիւնից փոխ-ուեցան ստրկաձեւութեան.— «Հազար ներո-ղութիւն, աղա՛, մենք կարծեցինք դուք հայ էք, չը գիտէինք թէ ճշմարիտ օսմանլի էիք ե-թէ ոչ ի՞նչպէս մենք խոնարհ - հպատակներս էդպէս պիտի վարուէինք մեր փառաւոր հիւ-րի հետ:

Եւ առօք փառօք իջեցրին կեղծ օսմանցի մեծաւորին իրեն ձիուց, տարին գիւղապետի տունը, մի գառն մորթեցին, եւ բիլաւ եփե-

ցին մեծ հիւրի համար: Նա նստեց, եւ գիւղապետն եւ որդիները սպասաւորութեան կանգնած ոտքի վրայ: Էմին կերակուրին չը դպաւ, եւ ասեց գիւղապետին, — Ես Հայ եմ եւ հայ քրիստոնեայ, այսօր չորեքշաբթի է եւ պահք, վերցրէք այս ուտիքի կերակուրը եւ բերէք ինձ պահոց կերակուր, անշուշտ պատրաստ ունենալու էք ձեզ համար, քանի որ այսօր պասի օր է: Յետոյ կանչեցէք իմ առաջ գիւղի մեծաւորին եւ տէրտէրին, անբաժան իւր սուրբ Աւետարանից, բայց մի՛ ասէք թէ ես հայ եմ, այդ թողէք ինձ: Եւ եկան մէկը միւսի ետեւից եւ շարուեցան նրա առաջ:

—Նստեցէք տէրտէր եւ դուք հայ աղաներ: Մի շատ մեծ ասելիք ունեմ: բայց այնպէս վարուելու չէք, ինչպէս վարուեցաք, երբ ասեցի թէ հայ եմ:

Խոստացան միաբերան:

—Այդ բաւական չէ: Դու տէրտէր ծոցից դուրս հանէ քո Քրիստոսի գիրքը եւ դուք ամէնքդ երդուեցէք ձեր պաշտած Աւետարանի վրայ, որ հաւատարիմ պիտի մնաք ձեր միաբերան խոստումին, պիտի ապացուցանէք ձեզ, ոչ որպէս ստրկաբարոյ հայեր այլ քաջ, անվեհեր ձեր երբեմնի ազատ Հայաստանի սխրապանծ որդիների նման: Ինչպէս տեսնում էք, ես իմ մէջ կրում եմ այդ յատկութիւնները շընորհիւ Անգլիոյ մեծ թագաւորի հովանաւորութեան: Ես ուզում եմ որ դուք եւս շնորհւէք

այս մարդկային ամենաարժանի յատկութիւն-
ներով շնորհազարդ Հայ Թագաւորի ազատու-
թիւնով, որ ես սրտաբորբոք փափաքում որ
ձեր եւ իմ ձեռներով ստեղծուի մեր ստրկաց-
եալ Հայրենիքի համար: Իմացէք, որ ժամա-
նակաւ մենք ևս ունեցել ենք թագաւորներ,
որ իշխում էին այս երկրի վրայ, ուր Ստամ-
բուլի մեծ մահմետական Թուրք Սուլթանն է
իշխում, եւ այս Թուրք փաշաների տեղ հայ ժո-
ղովուրդը կառավարւում էր հայ իշխանների
հայրական ազնիւ ձեռքերով, թէ գոռոզ, եւ
տգէտ եւ մոլեռանդ ոստիկանների եւ զինուոր-
ների տեղ հայ հայրեր եւ եղբայրներ էին
պաշտպանում մեզ եւ մեր հայրենիքը, որպէս
արի զինուորներ օտար թշնամիի դէմ, եւ այդ-
պիսի սիրեցեալ հարազատներ էին որ հսկում
էին մեր կեանքի եւ մեր ինչքի ապահովութեան
վրայ: Ինչո՞ւ մի անգամ եւս չստեղծենք այդ
երջանիկ վիճակը մեզ համար: Առաջ մեր մէջ
եւ մեր շուրջ միայն կային հայեր, եւ լսուած
լեզուն մեր լեզուն, մեր պապական Հայ լեզուն
էր: Այժմ մեր շուրջ եւ մեր մէջ Թուրքեր եւ
քիւրդեր են շրջում բարձրագլուխ, եւ նրանց
լեզուներն են որ հնչում են մեր ականջներին
իշխանաբար, եւ մենք երկիւղօրէն խոնարհում
ենք նրանց առաջ, եւ ստրկանում նրանց բար-
բարոսական հնչիւնների առաջ: Ժամանակ է,
որ մենք եւս փշրենք դարաւոր գերութեան շղ-
թան եւ գոչենք՝ «Կեցցէ՛ Հայաստան»:

ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

Գիւղացի ծերերը մօտիկ էին անում ապշահար։ Քահանան քմծիծաղով Աւետարանը բռնած աջ ձեռքում, ասեց ծանրօրէն.

— Մեր գիւղի պատուական հիւր, դու գալիս ես մի աշխարհից, որ մեր աշխարհը չես ճանաչում։ Մենք քեզանից դաս առնելու պէտք չունենք, հասկանալու համար ազատութեան պատուականութիւնը։ Ես լաւ հասկանում եմ ասածդ ազատութիւնը, եւ եթէ մօտիկ անենք քո ազգասիրական խելքին եւ կանգնենք ոտքի, Թուրքի թուրի անարգել հարուածով կը դառնանք անոտ եւ անգլուխ եւ Հայաստանն անհայ, եւ սակայն ձեզ նման վսեմաբարբառ հայրենասէրները գտնուելով երկրից դուրս, եւ Թուրքի սուրից հեռու, կարող են պարծենալով բղաւել «Կեցցէ՛ Հայաստան»։ Մեր պատուական հայ զաւակ, սուրբ Աստուածաշունչի մէջ գրուած կայ թէ՝ 666 տարի յետոյ մէկը պիտի գայ՝ մեր գլուխը պիտի անցնի եւ ազատէ մեզ Օսմանլիի իշխանութիւնից։ Դու այդ մէկը չես, շատ կանուխ ես եկել, գնա՛ ետ այն երկիրը, որտեղից որ եկար։ Երբ գայ ժամանակը, որ լինենք պատրաստ, եւ լինենք վստահ մեր զօրութեան, այն ատեն եկէք եւ միասին ջնջենք Թուրքն եւ նրա իշխանութիւնը մեր սուրբ հողի երեսից եւ դառնանք ազատ տէրը ցանկալի Հայաստանի։

«Արդ, բարի գիշեր եւ երթաք բարով»։

Այդ ժամանակից աւելի քան հարիւր տա-

ըլլներ յետոյ, նոյն գիւղի եւ Թուրքիոյ ամէն գիւղի եւ քաղաքի հայ հասարակութիւնները, նոյնքան անընդունակ, ապիկար եւ անդամալոյծ էին ոտքի կանգնելու Թուրք իշխանութեան դէմ եւ ստեղծել հայ իշխանութիւն, որքան էին Խնուսի տէրտէրի յայտարարութեան ժամանակ, ի բաց առեալ եթէ իրենց ոտքի կանգնումով յօժար լինեն դառնալ անոտ եւ անգլուխ Թուրքի կատաղութեան եւ գազանութեան առաջ:

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՍՏՈՒԵՐԸ

Արիւնհեղութեան զօրութեամբ է որ բռնակալութիւնը բարձրացնում իւր աղետաբեր գլուխը: Նոյնպէս արիւնհեղութեան զօրութեամբ է որ ազատութիւնը շղթայակապւում է: Սակայն բարձրագլուխ բռնակալութիւնը գլխատւում է ժողովրդանուէր անսանձելի ուժերի անձնուիրութեամբ եւ ազատութիւնը շղթայազերծւում է հեռատես գործիչների իմաստութեամբ եւ մեծազօր աջակիցների զէնքի կամ անզէնք պաշտպանութեամբ: Ո՞ւր էր այն իմաստութիւնը, որ պիտի ընդունակ լինէր խորտակել Թրքահայ ժողովրդի ազատութեան շղթան, եւ ո՞ւր էին այն մեծազօր աջակիցները, որոնցից կարելի էր ակնկալել եւ կամ որոց կարելի էր հաւատալ հայ ազգի պաշտպանութիւնը զէնքով կամ առանց զէնքի:

1870ից յետոյ ռուս ամենատես ոստիկանութեան բարեացակամ հովանաւորութեան

ներքեւ բացուեց Բուլղար յեղափոխութեան դատարանը, ռուս ուսուցիչների դաստիարակութեամբ, եւ բուլղար երիտասարդների աշակերտութեամբ: Նորահաս ազգասէր յեղափոխականներ, եւ յեղափոխական գրքոյկներ ռուս ղեկավարներով աստիճանաբար թափանցում էին Բուլղարիոյ մէջ, յոյսերով լեցնում ազգային անկախութեան երազները, եւ բոցավառում ժողովրդի զգացումները, եւ այսպէս սկսեցին ցոյցեր, եւ դէպքեր որ մղեցին փոքր եւ մեծ սպանութեանց, եւ հետզհետէ կոտորածների, թէեւ համեմատաբար շատ աննշան Հայկական յետագայ կոտորածներին:

Եւրոպական թերթերը լցուեցան այս բարբարոսական արարքների լուրերով, եւ Անգլիա, Եւրոպայի միակ երկիրը, որ սիրում է հանրային կարծիքի սովորութիւնը կամ արհեստը գործածել, այնտեղ մարդիկ իրենց միտինգների ճառերով թնդացրին օդը, եւ լորդների սրտերը, եւ նոյն իսկ Գլադստոն, որ յայնժամ կառավարութեան գլուխը չէր, վեհսրտօրէն որոտաց թէ այլ եւս ժամանակ էր որ այդ բարբարոս Թուրք կառավարութիւնը խուրձինով եւ կապոցով դուրս վռնտուէր Եւրոպայից:

Այս խօսքերը հաճելի էին յուզեալ մարդոց, եթէ նրանք յուզեալ էին էապէս եւ ոչ ձեւապէս. բայց Գլադստոն իրապէս պիտի չը

կամենար կատարել իր խօսքը, Եթէ այդ միջոցին ինքն լինէր Մեծն Բրիտանիոյ նախարարապետը:

Գերմանիա եւ միւս մեծ պետութիւնները դիտէին թէ այդ բուլղար յեղափոխութեան նախահայրը Ռուս կառավարութիւնն էր, իր ազդեցութիւնը եւ իշխանութիւնը տարածելու այդ երկիրների, նաեւ Կ. Պոլսի եւ Դարդանելի վրայ: Ուստի Մեծ Պետութիւնները չը թոյլատրեցին որ Ռուսիա յաջողէր իր քաղաքականութեան մէջ: Բայց նրանք հիմնուելով կապիտուլասիոնների տրամադրութեան վրայ, իրաւունք համարեցին միջամտել Թուրքիոյ քրիստոնեաների վիճակին, կազմեցին մի հաւաքական յանձնախումբ՝ քննել դէպքերը եւ ճշդել յանցանքները: Թուրք իշխանութիւնը մեղադրում էր բուլղարներին որպէս յանցաւոր եւ հակապետական ապստամբներ: Պետութիւնները չէին համաձայնում միմիանց հետ, եւ տեղի էին ունենում նորոնոր կոտորածներ: Եւ թէեւ Բուլղարիա կից էր Եւրոպային, եւ Պետութիւններից երկուսը երկու քայլով կարող էին ցատկել տալ իրենց զօրքերը սահմանից ներս, եւ միւսները մէկը միւսի ետեւից, բայց ոչ մէկը չը շարժեց իր զօրքերը ո՛չ թէ Եւրոպայից այլ նոյն իսկ Բուլղարիայից դուրս քշել Թուրքին տոպրակով եւ կապոցով, եւ ազատել կոտորւող բուլղարներին: Բայց շարունակեցին դիւանագիտական սպառնալիքներով

Թուրքի դէմ, եւ դիւանագիտական պայքարներով Ռուսիոյ հետ։

Այդ ժամանակի կամ յետագայ հայ գրողներ եւ բանաստեղծներ եթէ կարդային, ուսումնասիրէին եւ քննէին այս իրականութիւնը, եւ խորհրդածէին նրա վրայ, արդեօք միեւնոյն ինքնավստահութեամբ պիտի արտայայտէ՞ին այն, ինչ որ արտայայտեցին յոյս եւ հաւատ ներշնչելով իրենց երազող հաւատացողներին։

Եւ ինձ նմանները, եւ Պետերբուրգի, Մոսկուայի, Թիֆլիսի, Ժենեւի կամ Լոնդոնի իմաստունները արդեօք պիտի զգայի՞ն իրենց անիմաստութիւնը, մտածելով թէ բուլղարները որ երկրի բնակչութեան մեծամասնութիւնն էին, եւ նրանց յեղափոխականները մերայնոց նման չէին զբաղւում եւ ղեկավարում իրենց փրկելիք ժողովուրդին հազարաւոր մղոններով հեռու օտար քաղաքներից, բայց իրենց սեփական ժողովրդի հետ եւ մէջ, եւ սակայն մնացին բոլորովին ապիկար Թուրք զինուորների զօրութեան առաջ, մինչեւ որ մեծազօր սլաւ Ռուս տէրութիւնը պատերազմ յայտարարեց փրկելու իր սլաւ ցեղակիցներին Թուրք բարբարոսութիւնից. եւ նա յաջողեց միայն տասնեակ կամ հարիւր հազար ռուս զինուորների անկումով։ Բուլղարիոյ լեռների եւ դաշտերի վրայ, եւ Մարիցա գետի առատահոս յորձանք-

ների մէջ: Բայց նա փրկեց բուլղար ազգն ոչ թէ որպէս եւ ինչ ձեւով ինքն էր կամենում, կամ իւր քաղաքականութեան ծրագիրն էր: Ռուսիոյ քրիստոնեայ բանակալի յաղթական եղբայրը հազիւ թէ քսան մղոն հեռու էր մահմեդական բանակալի պալատից, եթէ Մեծ Բրիտանիոյ պատերազմական նաւերը չը յառաջանային Կ. Պոլսի առաջ, եւ Մեծ Պետութիւնները չազդարարէին Ցարին, կանգ առնել ուր որ էր, եւ չը մերձենալ Վոսփորին եւ Դարդանէլին: Եւ այնտեղ, Սան Ստեֆանօ գիւղում Մեծ Իշխան Նիկոլայ կանգ առաւ ըստ ասութեան Կ. Պոլսի նշանաւոր Տատեան հայ ընտանիքի ամարանոցում . . եւ այդտեղից նա թելադրեց Թուրքին Սան Ստեֆանոյի մեծահամբաւ դաշնագիրը, ուր փայլում էր Հայոց յօյսի 16րդ յօդուածը: Թէեւ Սան Ստեֆանօ միայն մէկ երկու տասնեակ մղոն հեռու էր Հայոց Ազգային ժողովից, եւ Պատրիարքարանից, բայց Ներսէս Պատրիարք կամ իւր Վարչութիւնը չունեցան ոչ մէկ պաշտօնական յարաբերութիւն, եւ դիմումն Մեծ Իշխանին հայ դաւառների բարենորոգութեան կամ ինքնօրինութեան համար: Ներսէս գիտէր թէ նա լինելով Պատրիարք, երդուել էր հաւատարմութիւն իւր Թագաւորին, եւ թէ եթէ դիմէր ռուս կառավարութեան՝ ընդդէմ Թուրք իշխանութեան՝ պիտի լինէր երդմնազանցութիւն եւ դաւաճանութիւն իւր եւ իւր հայ ժողովրդի

վրայ իշխող տէրութեան, եւ նրա պետի հանդէպ:

16րդ յօդուածով ցարի կառավարութիւնը, ճապէս շնորհք էր անում ինքն իրեն եւ օդապէս Սուլթանի մնացեալ հայ հպատակներին, մինչեւ որ յետագային նորից առիթներ շնորհէր ռուսահայ գրողներին եւ նրանց ոգեւորեալ ընթերցողներին ու դառնալ յեղափոխականներ եւ ազատել իրենց հալածեալ թրքահայ եղբայրներին բռնակալ Սուլթանի ձեռքից, որով դարձեալ կոտորածներ, եւ դարձեալ առիթ ցանկելու Կարինից Վասպուրականի վրայ, եւ մնալ այնտեղ Սուլթանի մնացեալ հայ հպատակների բարենորոգութեան համար եւ այսպէս հետզհետէ մինչեւ որ դար, Արեւմուտքից Միջերկրական ծովը, եւ հարաւից մինչ աշտարակն Բաբելոնի, ուր դրախտաբուխ Եփրատ եւ Տիգրիս իրենց պղտոր ջուրերով թաղւում են անծայր ծովերի կապտագոյն շղարշի տակ:

Բայց խորամանկ Ալբիոնը, եւ նեւս առաւել խորամանկ Գերմանը լաւ գիտէին Հիւսիսային Արջի խորագէտ նպատակը թէ Սան Ստեֆանոյի դաշնագրով նա հաստատել էր իւր մէկ թաթը Հայաստանի վրայ եւ միւսը Բալկանեան թերակղզիի եւ երկու նեղուցների վրայ, եւ այս երկու կողմերից պինդ բռնած Քրիստոնէութեան չարագործի կոկորդից աստիճանաբար սեղմել եւ խեղդամահ անել նրան, եւ այս-

պէս իր ամենաողորմած հովանաւորութեան ներքեւ առնել նրա երկիրը եւ ժողովուրդը։ Բայց միւս Մեծ Պետութիւնները հասան օգնութեան Թուրք գաղանին եւ նախընտրեցին որ իրենց հալածական հաւատակից քրիստոնեաները կոտորուէին Թուրքի սրածայր Թուրերի հարուածներով, քան թէ փայփայուէին սպիտակ արջի փափուկ թաթերով։ Ուստի ժողովուեցան Բեռլինում, ուր գոռոզօրէն բազմում էր Եւրոպայի Երկաթեայ Մարդը, եւ այնտեղ կանչեցին յաղթական Ցարի յաղթուելիք Նախարարապետը։ Եւ Կ. Պոլսի մէջ ամէն Հայ սիրտ լցուեց ազգային յոյսերով եւ ոգեւորութեամբ։ Հայ լրագիրները համարձակօրէն իրենց գրութեամբ ներշնչում էին այդպիսի յուսալից խոստումներ, եւ ազատօրէն ճառում էին հայկական նահանգների բարենորոգութեան, կամ ինքնօրինութեան մասին, եւ թելադրութիւններ եւ քննութիւններ անում։ Թրքահայոց Երեսփոխանական ժողովին մէջ երեսփոխաններ վեհօրէն ճառում էին նոյն առարկաների շուրջ՝ որպէս թէ իրենց մի անկախ երկրի մէջ լինէին եւ վիճաբանում էին այն յիշատակագիրի մասին որ հայկական պատուիրակը պիտի տանէր իր հետ եւ ներկայացնէր Մեծ Պետութեանց Բեռլինի Վեհաժողովին՝ Հայկական պահանջների առթիւ։ Ներսէս Պատրիարքը եւ իր Կեդրոնական Վարչութիւնը հաւասարապէս զբաղուած էին նոյն հարցերի

ուսումնասիրութեամբ եւ պատրաստութեամբ: Ներսէս եւ իր վարչական մարմինները չէին խորհում թէ այս ընթացքով երդմնադրուժ, անհաւատարիմ եւ դաւաճան էին համարում իրենք իրենց՝ իրենց Վեհապետի եւ Պետութեան դէմ, եւ ոչ եւս Վեհապետը եւ Պետութիւնը համարում էր նրանց այդպէս: Մինչեւ իսկ տէրութեան հայ պաշտօնեաներ խորհուրդ էին տալիս Պատրիարքին եւ նրա գործակիցներին իրենց գործունէութեանց մէջ:

Խրիմեան իր երիտասարդ թարգման Մինաս Չերազի հետ եւ իր հակա—Թուրք պաշտօնագրերը ծոցում դրած ներկայացաւ Թուրքիոյ Արտաքին Գործոց Նախարարին, թուղթերը ծոցից ցոյց տուեց նրան, եւ ասեց թէ ինք գընում էր Մեծ Պետութիւնների մօտ եւ Բերլինի Վեհաժողովի առաջ այդ թուղթերով պահանջելու բարենորոգումներ եւ ինքնօրինութիւն Հայկական նահանգների համար, Էրզրումի նահանգի հետ միասին, եւ անցագիր խնդրեց Եւրոպա գնալու համար:

Նախարարը ժպտեց եւ ասեց. «Դուք Հայ ժողովրդի խելացի մեծաւորներ, շատ լաւ էք անում եթէ ձեր յոյսը չէք դնում 16րդ յօդուածի վրայ: Եթէ դնէք, Ռուսը կ՚առնէ Էրզրումը ինձանից եւ դուք եւս բարենորոգութեան երես չէք տեսնի մեզանից, եւ այսպէս կը զրկուէք թէ ծաղկալից Էրզրումից եւ թէ ազատաբեր ինքնօրինութիւնից: Ձեր ազգի տարեցներէ

մէջ խելացի մէկը չը գտաք, երեւի դրա համար եւս ձեզի խորհրդական տուին այս ջահել տըղան: Բարի ճանապարհ: Ապահով եմ վարպետորդի մեծ տուները կ՚առնեն Էրզրումը Ռուսի ձեռքից, եւ ձեզ եւս կ՚առնեն իրենց սուսերի տակ եւ կը վստահին մեր խնամքին»:

Հայ ազգի բոլոր աշխարհական եւ կրօնական ժողովականները եւ մեծ բազմութիւն ժողովրդեան կանգնած կայարանում, «կեցցէ»-ների եւ ուրախագին ծափերի մէջ ողջունում էին վեհափառ Խրիմեանին եւ նրա Թարմատեսիլ ուղեկցին: Երբ այս երկու դէմքերը անհետացան եւ «կեցցէ»ները թաղուեցան հեռաւորութեան մէջ, երկու ճամբորդները մի առժամանակ երեւում էին խորասուզուած խորհրդածութիւնների մէջ: Խրիմեան մտածում էր թէ ինչ համար ասպարէզ չկար լինելու թագաւոր Հայոց, իսկ Ձերազ վստահ էր թէ՝ իրեն էր վերապահուած ճառագայթափայլ Հայաստանի վսեմաշուք նախարարապետութիւնը:

Մէկը այնպիսի օրօրուն երազներով, միւսը կնճռոտ մտածմանց փոթորիկների մէջ տարուբերուելով իր ժողովրդեան յուսադրական բաղդի մասին, հասան Փարիզ, «Ազատութեան Եղբայրութեան եւ Հաւասարութեան» նշանաբանի մայրաքաղաքը: Թէ ի՞նչ գործ կատարեցին նրանք այդտեղ, ես երբէք չը խորհեցայ հետաքրքրուել եւ հարցնել մէկին կամ միւսին,

թէեւ երկուսին եւս լաւածանօթ էի տարիներով եւ տեսնում յաճախ: 1903ին եղայ էջմիածնում մի երկու շաբաթ: Խրիմեան էր յայնժամ Կաթողիկոս Ամենայն Հայոց: Նա փափաք յայտնեց որ ամէն օր երթայի իր մօտ, որքան ժամանակ որ չէի բաժանուել Քրիստոսի իջման վայրից: Մի երեկոյ ծիծաղելով հարցրեց·

— Այն մեր Զերազը տակաւին ո՞ղջ է թէ մեռած է:

— Ողջ է, կէս քաջառողջ, կէս վատառողջ բայց զուարթ, քաղցրաբարոյ կատակներով:

— Կը զարմանամ որ տակաւին կը կարողանայ ապրել եւ կրել իր մարմինը իր անմիս, եւ անմկանունք սրունքներու վրայ: Նաեւ Գրիգոր Օտեան կը թողէին ինձ առանձին երեկոները, եւ կ՚երթային դուրս զուարթանալ գիշերային զուարճութեամբ: Մի առաւօտ շատ ուշ էր, եւ Զերազ դեռ չէր եկած սենեակս ըստ սովորականին, ես գացի իր սենեակը, դուռը զարկի· ձայն չեկաւ, ներս մտայ, եւ տեսայ, Զերազ մեռելի պէս պառկած էր անկողնի մէջ, եւ մէկ ոտքը մերկ սրունքով անկողնից դուրս կախ ընկած: Սրունքը բարակ էր եւ ճերմակ, եւ միայն կաշի եւ ոսկոր: Ես ասացի թէ կայ չկայ մեր Զերազը անպատճառ հոգին փը-

շած լինելու է, գիշերային զուարճութիւնը առել է իրենից իր արիւնն եւ միսը եւ շնչաստեղծ հոգին։ Արդարեւ, երկրային հրաշք է որ նա տակաւին շարժւում է երկրի վրայ այդ անկեանք սրունքների շարժումներով»։

Խրիմեան Հայրիկ գրեթէ չը գիտէր իր հայրենի աքսորութեան Թուրքերէնը, ու՞ր մնաց որ գիտենար հեռաւոր Ֆրանսայի բարբառը եւ եթէ աշխատէր բարբառել կարող էր ունենալ ձախորդ նշանակութիւն. եւ այսպէս եւս արդիւնք յառաջ բերեց իր Փրանսաբանութիւնը։ Ինչպէս որ նա պատմեց ինձ մի ուրիշ օր Զերաղը դարձեալ չկար, եւ ինք մենակութիւնից ձանձրացած իր սենեակում, դուրս ելաւ փոքր ինչ օդ առնել Փարիզի փողոցներում, եւ հաճոյք զգալ դիտելով կաքաւող բազմութեան, բայց իր շրջագայութեան մէջ սթափուելով նկատեց թէ ուր լինելը չը գիտէր, ոչ եւս գիտէր իր փողոցի, եւ ոչ իր հիւրանոցի անունը։ Մոլորած էր, չը գիտէր ի՞նչ անէր եւ ի՞նչպէս գտնէր իր տեղը։ Կանգ առաւ եւ սկսեց կանչել անցնող կառքերին, «քոշո՛ն քոշո՛ն» ձայնարկութեամբ։ Նա լսել էր թէ այսպէս էին կառապանները կոչում, բայց կառապանները ծուռ ծուռ նայելով, եւ ձեռները շարժելով եւ առանց կենալու շարունակում էին իրենց արշաւը։ Բարեգութ կառապաններից մէկը հաճոյք զգալով իր նոր անուանակոչութիւնից, եւ իր կնքահայրի երկայնամօրուս, երկարա-

զգեստ եւ վայելչակազմ երեւոյթից հարցրեց թէ ի՞նչ էր ուզում։

—«Արմենիան», պատասխանեց Խրիմեան։

Կառապանը ի զուր աշխատեց բառ ձեռք բերել իր խօսակցի բերանից, եւ տեսաւ որ Ֆրանսական լեզուին այս անգէտ մասնագէտի Ֆրանսագիտութիւնը քոշոն *բառից անդին չէր անցնում եւ տարաւ նրան մօտակայ ոստիկատունը, ուր շնորհիւ նրա* Արմենիա *բառի արտասանութեան, հասկացան որ նա Հայ էր եւ կառապանը մտրակեց իր ձիերը եւ ուղղեց կառքը դէպի Հայոց եկեղեցին, ուր քահանան եւ ուրիշ հայեր իրեն մօտեցան եւ համբուրեցին Խրիմեան Հայրիկի եւ քաղաքական Պատուիրակի ձեռքը մինչ նա դեռ չէր վայր եկել կառքից։ Կառապանը ապշեց եւ տեսաւ որ իր կնքահայրը իրաւամբ մի մեծ մարդ էր, ուստի ինքն եւս հանեց իր գլխարկը, եւ համբուրեց Խրիմեանի աջը, եւ նա օրհնեց նրա գլուխը։ Այս արարողութիւնից յետոյ Խրիմեան պատմեց իրեն պատահած փորձանքը եւ թէ ինչպէս իր Ֆրանսագիտութեան մէկ բառի շնորհիւ ազատուեց կորչելուց Փարիզի անյայտութեանց մէջ։ Ներկաները ծիծաղեցան, երբ կառապանը զուարճաբանութեամբ պատմեց եղելութիւնը, եւ այս անգամ ծիծաղը աւելի մեծ էր եւ բարձրաձայն, եւ Խրիմեան եւս միացաւ նրանց առանց գիտնալու ծիծաղներուն շարժառիթը, որ* քոշոն *բառը կը նշանակէ* խոզ,

գերազանցեց նրանց իւր քահքահով, եւ ասեց. «Եթէ այդպէս է, ուրեմն բաղդաւոր արարած, մահմեդականները նրա միսը չեն ուտի»:

Երրորդ անգամ երբ այնտեղ էի, Հայրիկը դարձաւ իւր եղբօրորդիին.

«Խորէն, այստեղ բեր այն խաղողի ափսէն: Եւ Խորէն բերեց ափսէն եւ դրեց սեղանի վրայ մեր առաջ. դիզուած էր խաղողի բազմաթիւ երկգունանի ողկոյզներով: Կե՛ր Հայաստանի այս օրհնեալ առատ խաղողից. ձեր Լոնդոնում խաղող չկայ, մինչեւ անգամ հարուստ Լորդերը աղքատ են խաղողից: Մի անգամ մի մեծ Լորդ հրաւիրեց ինձ կերակուրի, սեղանի վրայ մի մեծ բիւրեղեայ ամանի մէջ հանգչում էր սաթի գոյնով, եւ շատ խոշոր խաղողի մի մեծ ողկոյզ: Ես խորհեցայ թէ՝ այդ ողկոյզը ինչ օգուտ ունէր այնքան հիւրերի համար, եւ համարեցի թէ ես լինելով գլխաւոր հիւրը, ամբողջ ողկոյզը ինձ համար էր. բայց երբ կարգը եկաւ խաղողին, Լորդը մկրատը առաւ ամանից, եւ կտրատելով մէկ մէկ կտոր բաշխեց ամէն մէկկիս պնակի վրայ, մեր նշխարների նման: Որով ճաշակեցինք եւ հաղորդուեցանք: Ուրեմն այնքան կեր, որ երբ վերադառնաս Լոնդոն, տասն տարի խաղողի կարօտ չը քաշես:

— Հայրիկ, ծիծաղելով պատասխանեցի, Դուք երեւի միայն դիւանագէտների եւ լորդերի տուները գնացիք, եւ ներս չը մտաք Լոնդոնի խանութները, ուր տարին տասնեւերկու

ամիս բազմատեսակ խաղողներ դիզուած տեսնըւում են, բերուած աշխարհի ամէն ծայրերից, մատչելի գներով հասարակ ժողովրդեան համար:

Զորրորդ եւ վերջին պատմութիւնն էր թէ Բեռլինում Կայսրուհին ընդունեց նրան իւր ներկայութեան, հետաքրքրուեց Հայոց վիճակով եւ յաջողութիւն մաղթեց Հայաստանի բարեկարգութեան համար:

Եւ այս Խրիմեան պատասխանեց.

—«Ո՛վ ազնուափառ Կայսրուհի, եթէ Հայ ազգի խնդրի լուծումը կատարուի ձեր այս մայրաքաղաքին մէջ, իմ ժողովուրդը պիտի մոռնայ Երուսաղէմը, եւ իւր երեսը պիտի դարձնէ ձեր Բեռլինի մայրաքաղաքը, որպէս իւր Նոր Երուսաղէմը»:

Աստուած չը կատարեց Գերման Կայսրուհիի մաղթանքը, եւ Քրիստոս չուզեց, որ իւր սուրբ գերեզմանի քարը գրկուէր իւր հաւատացեալ հայ ժողովրդեան բարեպաշտ աղօթողների ջերմեռանդ շրթունքների երկիւղած համբոյրներից: Եւ կատարուեց ընդհակառակն: Կայսրուհիի թոռը, Վիլհելմ Բ. գնաց ուխտի Սուլթան Աբդիւլ Համիդի, երբ նրա կայսրութեան հողերը ամենուրէք դեռ նոր էին ներկըւած հարիւր հազարաւոր ողորմելի հայոց անմեղ արիւնով, այն Սուլթանին, որ մկրտուեց «Մեծ Եղեռնագործ» անունով:

Խրիմեան Հայրիկ այդ ժամանակ անշուշտ

չէր երազում ապագային գալիք աղէտները, բայց երազում էր եւ սպասում միայն փայլուն երջանկաբեր իրականութիւն, բարի քրիստոնեայ տէրութեանց վեհոգի Վեհաժողովից: Այսպէս էր նա յուսում եւ հաւատում երբ դըրսում կանգնած նայում էր այն փառաւոր շէնքին, որի ներսում բազմած էին Եւրոպայի դիմագարձ դիւանագիտութեան անտեսանելի դէմքերը, եւ վեհազդեցիկ ջոջերը:

Խրիմեան եւ Զերազ հանդիսականների հետ կանգնած նայում էին Պալատի բարձր դրան եւ պատերին, եւ դռնից ներս ու դուրս երթեւեկողներին: Այս տեսարանի նկարագրութիւնը արեց Խրիմեան մի քարոզում բազմերամ աղօթողների առաջ երբ վերադարձաւ Բերլինից ի Կ. Պոլիս, այս խօսքերով.—

« Ուրիշ ազգերու ներկայացուցիչներ ներս կը մտնէին սիգաճեմ եւ զինեալ, բայց մենք զինեալ մի թղթի կտորով, եւ կանգուն վեհերոտ »:

Նրա թուղթի կտորը գնաց ներս, բայց արդեօք նա կարդացուե՞ց բուն մեծերի առաջ թէ ոչ, յայտնի չէ, բայց այսքանը ճիշդ է որ Խրիմեան եւ Զերազ այնտեղ չէին, եւ չեղան որ տեսնէին, սակայն ինչ որ այնտեղ էր, եւ բաց այդ ջոջերի առաջ, այն Սան Ստեֆանոյի դաշնագրի 16րդ յօդուածի բաց էջն էր, եւ հինգ խոշոր գլուխներ ծռուած, բացասական շարժումներով եւ թթուած երեսներով կարդում էին եւ

մրթմրթում էին «անկարելի է, անկարելի է»:

Իսկ իշխան Գորչակով այդ ժամանակ խըմբից հեռացած Նապոլէոն Բոնապարտի նման ձեռները ծալած կուրծքի վրայ, ընդարձակ դահլիճիմէջ պատի երկայնութեամբ մեծաքայլ երթեւեկելով երբեմնակի աննկատելի ակնարկներ էր չանթահարում միւսների վրայ. մինչ այդ միւսները աւելի բռնկուած կրկնում էին «անկարելի է, անկարելի է» եւ ելան ոտքի վրայ, եւ յառաջացան դէպի Ցարի ներկայացուցիչը, որ քայլում էր վրդովուած: Գերմանիոյ Երկաթեայ նախարարապետը բերանը բանալով ասեց.

«— Իշխան Գորչակով, ձեր կայսրութեան հիւսիսակողմը լի է սառնամանի երկիրներով, հարկ չկայ որ Վեհափառ Ցարի հարաւային սահմանն եւս պարապապատուի ձիւնի եւ սառոյցի ամբոցներով, ուստի մենք միաձայն յարմար դատեցինք որ ձեր կայսերական ոյժերը բարեհաճէին հեռանալ Էրզրումից եւ անդամփոփուէին պարտեալ Սուլթանի հողից դուրս, Կասպից ծովի տաք կլիմայի ներքեւ: Ամենաողորմած Ցարը թող շատ չմտածէ վեհափառ Աբդ—իւլ Համիդի քրիստոնեաների վըրայ, եւ նրանց պաշտպանութեան սիրոյ համար իր ձեռքում չպահէ Էրզրումի անպէտք նահանգը: Վերջապէս ո՞վ են այդ քրիստոնեաները որոց կեանքի եւ բարօրութեան համար ձեր կառավարութիւնը այնքան հոգածու է:

ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

Հայե՛ր, հայե՛ր, մի ազգ որ Ադամ Նոյի ժամանակից ի վեր գոյութիւն ունի, եւ չէ անհետացել իրենից յետոյ ծնած եւ իրեն հարեւան ասորեստանցիների եւ քաղդեացիների նման: Շատ երկար ապրեց այդ ազգը աշխարհի վըրայ: Աւելի լաւ է թողնենք նրան Սուլթանի իշխանութեան տակ, ինչպէս դարերից ի վեր մնացել եւ ապրել է: Բայց ձեզ ի գիտութիւն ասեմ թէ գերման եւ թուրք ցեղերը սերել են երկու հարազատ երկւորեակ եղբայրների ծընունդներից, Մեծափառ հրաշագործ Սամարղանդի երկրից թուրք հրաշագործ ազգը, դաշոյնով նիզակով եւ սուրով զինուած, խաղաց ընդ յառաջ Կասպեան ծովի հարաւով, խուժեց ի Պարսկաստան եւ Հայաստան ոտից կոխան արեց Հայկազեան երկիրը, եւ նրա ժողովրդեան ցորենի ցողունների նման խոնարհեցրեց իրենց քայլած հողին երկրպագելու հաւատարութեան: Այսպէս արեց նաեւ իր քայլերի առաջին կանգնած Փոքր Ասիոյ ժողովուրդներին, եւ երկարեց իր ձախ ոտքը մինչեւ Մաւրիտանիա եւ աջը մինչեւ Աւստրիա եւ իր սըրունքներից կազմեց մի կամուրջ Միջերկրական ծովի վրայ, մէկ ծայրը Աֆրիկեան եւ միւսը Եւրոպեան ցամաքների վրայ ամրացած: Որքան եւ նրա երկնաբերձ աստղը խոնարհի, նա պիտի չկորնչի: Կէս դարից ի վեր նա տակաւին կը խոնարհի, բայց յանուն գերման ամենազօր ազգին յայտարարում եմ հան-

դիտաւորապէս թէ նա պիտի չը թոյլատրուի որ կորնչի, եւ ոչ եւս թոյլատրուի որ նա խոնարհի երկնասլացութիւնից:

Այս մեծայաղթ ցեղի նախահօր երկւորեակ եղբօրից ծագում է մեր գերման աշխարհատարած հսկայ ազգը, եւ զինուած աւելի ահաւոր, շարժուեց Կեդրոնական Ասիոյ անապատներով Ասիան Եւրոպայից բաժանող Կասպից ծովի հիւսիսով, Եւրոպայի տափաններով, դաշտերով, խիտ անտառներով եւ անանցանելի գետերով դուք ռուսներդ էք այժմ եւ ուր չկայիք յայնժամ եւ հասան եւ կանգ առան եւ հաստատուեցան Եւրոպայի սրտում: Չկայ Եւրոպայում մեծ կամ փոքր մի պետութիւն, որ առած լինի եւ տիրէ իր հարեւան ազգի մի երկիրը· ձեր եւրոպական պետութիւնը միակն է որ բռնագրաւել է հարեւան երկիրների հողն ու ազատութիւնը: Նոքա թափառում են աշխարհի շուրջ եւ խուզարկում են խաւարակուռ երկիրների խորերը եւ լոյսի ճանապարհը բաց են անում նրանց միջում վայրենի կեանքով ապրող խաւարամիտ մարդկութեան անլուսաւոր աչքերի առաջ, դուրս հանում նրանց իրենց գետնաթաղ կամ եղեգնահիւս բոյներից եւ բարձրացնում են նրանց այնպիսի մարդավայել բնակարանների մէջ, եւ այնպիսի կեանքի մէջ, որ ստեղծում է նրանց մի կացութիւն որպիսին վայելում էք դուք եւ մենք եւ մեր քաղաքակրթուած ազգերը: Այո, մենք եւրոպական պե-

ութիւններս մշակում ենք նրանց անմշակ հողի մակերեւոյթը, եւ պեղում եւ վեր հանում նրանց հողի ներքեւ ծածկուած հանքային գանձերը: Եւ այդպէս երբեմնի վայրենի երկրների վրայ բարձրանում են եւրոպական գեղեցկութեան եւ ճաշակի քաղաքներ, եւ նրանց երեսի երբեմնի կիսամերկ եւ կիսասով վայրենիները կերպարանափոխւում են քաղաքակրթուած արարածների: Մինչդեռ ձեր աշխարհակալութեան սահմանը շրջում է մեր պետութեան սահմանների շուրջն. ձեր հրացաններով հարուածում էք ձեր հարեւան անզօր ցեղերին, գրաւում նրանց երկիրները, եւ երբեմնի քաղաքակիրթ ազգերի այդ մնացորդներին զարգացնում էք ցարական քաղաքակրթութեան երկիւղահար զգացումով:

Կանգնեցէք այդ սահմանների շրջաններում ուր որ էք, եւ ջնջեցէք նրանց միջում բնակող անուս ցեղերին նոր մտքեր եւ սրտեր:

Եւ հարկեր հազարաւոր որդեկորոյս մայրերի լալագին հառաչանքների ի վարձատրութիւն եւրոպական պետութիւններն մեր սիրեցեալ Օսմանեան վեհապետի հողերը, Կարս, Արտահան, Բաթում շնորհում ենք Վեհափառ Ցարին եւ աւելի ընդարձակում իւր արդէն ամենաընդարձակ կիսամշակ կայսրութիւնը: Այս վերջին հողն է որ նա պիտի ցյաւիտեան ունենայ Թրքական ձեռքից: Ուստի մեր այս մայրաքաղաքի մէջ եւ մեր ձեռքով այս օրից

ջնջում ենք Սան Ստեֆանոյի դաշնագրութիւնը եւ նրա հետ ձեր անյագ աշխարհակալութեան յոյսերը պէտք ջնջուած համարէք, քանզի եթէ այդ դաշնագրութիւնը մնայ անջնջելի իր աղէտալի ոգիով, նա յուսատու ոգեւորութեան մէջ պէտք պահէ Մոսկովեան բռնակալութեան խայծերը հաւանաբար յառաջանայ վերջ ի վերջոյ եւ ջնջել մեզ եւրոպական տէրութիւններէն, եւ նրանց թանկագին քաղաքակրթութիւնը եւ անգին ազատութիւնները: Որպէսզի այդ յոյսը սրբեն եւ նրանց զօրավարները իրենց երեւակայութեանց մէջ իսկ անկարելի դառնան երեւակայել, մենք այսօր պատառում ենք Սան Ստեֆանոյի դաշնագրութիւնը եւ նրա փոխարէն մատուցանում ենք ձեր միջոցաւ ամենայն Ռուսիոյ վեհափառ Վեհապետին Բեռլինի անոչնչելի դաշնագրութիւնը»:

Յայնժամ Գերմանիոյ Երկաթեայ Նախարարապետը եւ նրան հետեւելով միւսները օդի մէջ բարձրացրին Բեռլինի դաշնագիրը որի նոր աշտարակի վրայ երազատես հայ ազգասէրի աչքերում սկսեց ցնորասքանչ ծածանիլ մեռեալ Հայաստանի վերակենդանութեան յոյսի եւ հաւատի ոսկեղէն դրօշակը:

Իշխան Գորչակով հեգնօրէն առաւ իրեն մատուցուած գրութիւնը, եւ ասեց եւս աւելի դառն հեգնութեամբ.

«— Այս վերջինը պէտք հաւանօրէն լինի

համանման որպէս առաջինները: Բայց մեծազօր Ռուսաստանը կը մնայ միշտ եւ աւելի մեծազօր Ռուսաստան: Դուք հակառակ ձեր բոլոր հաւաքական զօրութեան երբէք կարող պիտի չը լինէք խոնարհեցնել մեր վեհաբերձ կայսրութեան բարձրութիւնը: Նորա բանակալութեան սեւ ամպերի ետեւից պիտի ծագի ճշմարիտ ազատութեան արեգակը, եւ ինչպէս մահմետականները դարձնում են իրենց երեսները դէպի Մէքքէ, եւ քրիստոնեաները դէպի Արեւելք, իրենց հաւատոյ երկրպագութեան համար, այնպէս եւս ձեր քաղաքակրթական բանակալութեան ձեռքում լծուած եւ ստրկացած մարդկային խոնարհ դասակարգերի միլիոնաւոր անհատներ պիտի բարձրացնեն իրենց գլուխները եւ դարձնեն իրենց դէմքերը դէպի այն ազատութեան Արեգակը որ մեր մեծ հայրենիքից պիտի ծագի նրանց յաւիտենական փրկութեան համար. ոչ Երուսաղէմ եւ ոչ Մէքքէ եւ ոչ այլ սրբատեղի այսպէս սուրբ եւ պաշտելի պիտի լինի ընդհանուր աշխարհի մարդկութեան համար»:

Ճրագները մարեցան. վեհաժողովը փակուեց: Լիազօրները ցրուեցան դէպի իրենց մայրաքաղաքները: Խաւարի վարագոյրը իջաւ Դաշնագրի վրայ, բայց նրա 61րդ յօդուածի սեւ տողերը հայ ազգի համար վերացան մինչ վերին երկինք եւ դարձան երկնակամար ամենադիւթական համաստեղութիւնը որ իւր խա-

բուսիկ եւ խուսափիկ ճառագայթներով շլացրեց հայ-ազգասէրների ծռատեսիլ աչքերը թէ Եւրոպա ահա որքան համակիր եւ յարգող էր հայ դիւցազնական զարմին (ցեղին), եւ որքան հիացող նրա հնադարեան հազուագիւտ քաղաքակրթութեան: Բայց աւելի հասուն հայրենասէրների հեռատեսիլ հայեացքներ այդ խաբուսիկ համաստեղութեան մէջ դիտեցին եւրոպական տէրութեանց նենգութիւնը հայ թանկագին ազգի դէմ:

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Անցեալ դարի ընթացքին, ո՛չ մէկ Հայ չէր ստացել այնպիսի սիրալիր ժողովրդականութիւն որպէս այս անձնաւորութիւնը, եւ կարծեմ արժէ որ գրութեանս ուղղութիւնից շեղուեմ եւ իմ ընթերցողների ուշադրութեան յանձնեմ Խրիմեանի մեծութիւնը: Ես կամենում եմ անել այդ ոչ թէ իմ, այլ «Արմենիա»յի հեղինակի գրիչով: Այս պատկերը որ տեսնում էք լուսանկարեց Լինչ՝ Խրիմեանի կաթողիկոսական օծման ժամանակ, եւ այս լուսանկարը Հայրիկի ստորագրութեամբ տասնըմէկ տարի նա պահում էր իւր ընդարձակ մատենադարանի կրակարանին մարմարեայ վերնակալի անկիւնում եւ մօտ իւր գրասեղանին, մինչեւ իւր մահը, 24 նոյեմբեր 1913, որից յետոյ փափաքեց որ ես ունենայի այդ լուսանկարը Արարատի պատկերների հետ միասին, որոց վերարտադրութիւնները հանուած կան «Արմենիա»յի առաջին հատորում եւ նրա զգացումների արտայայտութիւնները առաջ եմ բերում արտագրուած նրա պատուական գրքի նշանակուած էջերից.

հատուածներ նրա չքնաղ գործի առաջին հատորի էջերից.—

«... Ուր եւ լցէ եղանք հայերի ընկերութեան մէջ՝ խօսակցութիւնը կենտրոնացած էր Նորին Սրբութիւն Մկրտիչ Խրիմեանի յաղթական ճանապարհորդութեան եւ մօտալուտ օծման վրայ: Լոկ վաղեմի արարողութիւնը չէ, եւ սակ պատգամաւորաց Հայ աշխարհի ամէն մասերից համախմբումն չէ որ հրապուրում եւ գգւում է ազգի սիրտը: Մարդի անձնաւորութիւնն եւ համբաւն է: Ժողովուրդը մոռանում է, բայց չէ փոխւում: Ցեղի երեւակայութիւնը տակաւին տեսնում է հայրապետական պաշտօնն ունողի մէջ ոչ միայնակ կամ այնչափ մի արքեպիսկոպոս կամ կաթողիկոս — վէմ անկեան շինութեան Եկեղեցւոյ — որչափ մի բարձր քահանայ հին Ս. Գրոց իմաստով: Խրիմեան մտատիպարն է մի բարձր քահանայի: Նա մի կերպարանք է որ դուրս է քայլում ուղղակի հին կտակարանից աստուածաշնչային բոլոր կրակովն եւ բոլոր բանաստեղծութեամբը: Նորա օծման հանդէսին թւում էր որպէս թէ Արարատի ստորոտին հնադարեան ոգին դեռ եւս կենդանի էր, եւ թէ ոսկեղէն աղաւնոյ կտուցից այդ պատկառելի գլխի վրայ իջնող սուրբ իւղն օծում էր մի օրէնսդիր այն իսկ ժողովրդի համար որ ունեց Աստուածային Խօսքը: Այս տպաւորութիւնն մասամբ ծագում էր նորա դէմքի սեմական տիպարից: Երկար եւ թաւագարդ մօրուքն ի վեր խոշոր թուխ աչքերն եւ արծուային քիթն այնպիսի յատկանիշներ են որ մենք զուգորդում ենք հրեայ ազգի հետ, եւ որ անսովոր չեն հայոց մէջ: Ինչ որ աւելի սակաւ է այս ժողովրդի մէջ այն հոգեղինութիւնն եւ նրբութիւնն է որ գրուած է այս վայելչագեղ երեսի ամէն մի գծի վրայ: Բայց Մարդի ամբողջ բնաւորութիւնը թւում է ձուլուած լինել առաւելապէս Ս. Գրոց կաղապարի քան թէ քրիս-

տոնէական դաստիարակութեան կաղապարի վրայ: Նա այն փորձեալ քաղաքագէտն է ում ժողովուրդն ակն ունի ղեկավարման համար՝ առ ի չգոյէ Թագաւորական պաշտօնէին. Նորա հետ կրօն եւ հայրենասիրութիւն հոմանիշ բառեր են...» (էջ 236).

Խրիմեանի ընդհանուր կեանքի վրայ յետադարձ ակնարկ նետելով՝ «Արմէնիա»ի հեղինակն այսպէս է գըրում. — «Այն ինչ ոլոր մոլոր բարձրանում էինք Վարագլեռան պարիսպներով դէպի հին վանքն, ուր նա ապրած էր այնքան ընդերկար, ուսուցանելով նորա պարսպի ներսն իւր կառուցած դպրոցում եւ յաճախ բանելով այս խուլ ուղին մենաստանից գնալ քարոզելու Վանայ Ցանկուներաց եկեղեցին, մեր ուշադրութիւնն հրաւիրուեցաւ մի կէտի վրայ ուր թշնամիներից ազդուած մի ոճրագործ դարան էր մտած սպանելու նորան մինչ նա ձիավարում էր անուղեկից դէպի քաղաք: Պատմութիւնն ասում է թէ, երբ մարդը նշմարեց նորան եւ վեր առաւ իւր հրացանն դէպի ուսն, իւր անդամները բռնուեցան յանկարծական երկիւղով, թեւը ցնցուեցաւ կախարդական գաւազանի պէս, եւ ինքն ընկաւ ծունկերի վրայ իւր զոհի առաջ, որի ակնարկներին անկարող էր հանդուրժել:

«Իբրեւ գրող Խրիմեան բանաստեղծութեամբ եւ յուզմունքով լեցուն արձակարանութեան միջոցաւ արտայայտած է իւր ժամանակի նեղութեանց վրայ այնպիսի Աստուածաշնչային ըմբռնումներ եւ մտածումներ որ միմիայն կարող էին բղխել Արեւելքի նախկին քրիստոնեաների ջերմ երեւակայութիւնից: Յաճախ տուժած է նա իւր հրավառ քարոզների համար, եւ նա ունի միանգամայն թէ կատարեալ ճարտասանի ոճ եւ թէ անձնական հրապոյր որ հմայքի տակ է պահում ունկնդիրներին: Նա շատ տարիներ կանգնած էր հայկականշարժման ճակատն, եւ նա էր որ վարեց հայ դատը Բեռլինի

վեհաժողովի առաջ: Մի ժողովուրդ՝ որի ոգին ճնշուած է եւ որի մարդկութիւնը նուաստացուած՝ առնում է նոր կեանք այսպիսի ուսուցչից եւ սովորում է դառնալ մարդ: Բայց միանգամայն բաղադրեալ եւ որպէս ցերեկուայ լոյս պարզ այս բնաւորութեան մէջ գուցէ ամենաքանչելի յատկութիւնն այն յարաբուխ ազնուութիւնն եւ գրկաբաց համակրութիւնն է որով նա կցորդ է լինում իւր ընկեր—մարդոց ցաւերին: Այն ինչ ամբոխը խռնւում է ազգի այն ամենաբարձր պաշտօնն ունողի շուրջն, եւ ձգնում է համբուրել նորա ձեռքն 'կամ դէթ ընդնշմարել նորա երեսը, միտքս գնում է յետ յետ դէպի այն հանդիսաւոր տեսարանն ուր Յոյն Թագաւորն ընդունում է իւր հարուածեալ եւ վարանեալ ժողովուրդն· «Ո՛վ իմ ծանօթ խեղճ զաւակներս, անծանօթ չէ ինձ ձեր աղերսանքի առարկայն, լաւ վերահասու եմ թէ դուք ամենեքեանդ չարաչար չարչարուած էք, սակայն, թէպէտ եւ տառապում էք դուք, չկայ ձեր մէջ ոեւէ մէկն որ տառապում է այնպէս ինչպէս ես: Քանզի ձեր կրած ցաւը գալիս է ամեն մէկից միայնակ — անձնիւր իւր համար է տառապում — եւ ուրիշ ոչ ոքի, բայց իմ անձն սգում է Պետութեա՛ն համար եւ ի՛նձ եւ ձե՛զ համար» (էջ 239):

«... Մեզ մեր նոր շրջապատին ծանօթացնող հանգիստ առած օրուայ հետեւեալ առաւօտ ես հրաւիրուեցայ այցելել Նորին Սրբութեան: Նա ժամանած էր Մենաստանի պարտէզի ներսն մինչ մենք Արարատի վրայ էինք, եւ յայտնի եղաւ թէ նա հազիւ հազ էր կարողանում թողուլ իւր բնակարանն իւր սքանչացողներից խոնարհագոյնների ուղեւորութեան պատճառաւ, որոց անկարելի էր զսպել նորա շուրջ խռնուելուց ամեն անգամ որ նա ներսից դուրս էր քայլում: Նոյն իսկ պարտէզն արշաւուած էր գիւղացիներից, որ ժամերով կսպասէին դէթ աչքի ծայրով տեսնելու իրենց Հայրիկը — որպիսի

աւելի վայելչագեղ եւ գրաւիչ երես, եւ ես բերկրութեան սարսուռի փորձն առի պարզապէս նայելով նորա կողքին եւ տեսնելով վճիտ թուխ աչքերի շուրջ խաղացող ժըպիտն, որ յայտնապէս բնական էր այդ դիմագծերին: Եւ ձայնն նոյնպէս է ձայն մեծի քաղցրութեան, եւ շարժուածքն՝ հեզ արժանապատուութիւն սքօղեալ վեհափառութեամբ...: Ապա մեր խօսակցութիւնն անցաւ նորա Անգլիայի այցելութեան, եւ ես հարցրի նորա կարծիքը Պրն. Գլադստոնի մասին, ում հետ նա հաղորդակցութիւն վայելած էր: Ուրիշ այնքա՜ն շատերի նման նա եւս տպաւորուած էր այդ դիւրաթեք մտքի աստուածաբանական կաղապարով: Երեսը կնճռուեցաւ երբ եկանք խօսել իւր կեանքի մասին Թուրքական գաւառներում: Եւ նա առանձին ուժգնութեամբ ծանրացաւ հայ ազգաբնակութեան տառապանքների զարհուրելի իրականութեան վրայ: Նորա Կորովի օրերի եւ անքուն գիշերների բոլոր ճիգերն եւ յոյսերն եւ անձկութիւնը թւում էին դիզանալ նորա մտքի մէջ եւ խեղդել ձայնը: Ապա նա յետ սուզուեցաւ, այնպիսի մի հառաչանքով որ երեւում էր լինել ի ցաւակցութիւն անցեալի այդ յիշողութեան...» (էջ 247):

Կաթողիկոսական փառայեղ օծման եւ ցոյցերի օրուայ գրեթէ կէս գիշերին Պրն. Լինչ յատուկ հրաւէրով այցելում է Հայրիկին.

«... Ես գտայ նորան ընկողմանած փայտաշէն բազմոցի վրայ մի մերկ տախտակածեփ սենեակի մէջ, մի գորգ միայն կախուած կար պատի վրայ բազմոցին առընթեր: Այսպիսի է անկողինն եւ այսպիսի կահկարասին բնական առարկային այս մեծագործ փառաւորութեան, որ անտարակոյս եմ խորապէս անհաճոյ է այսպիսի մի բնաւորութեան: Նա առաւ իմ ձեռքն իւր ձեռքի մէջ եւ մենք նստանք միասին մի առ ժամանակ: Թարգմանի

պաշտօնը կատարում էր կարծեմ բժիշկ Արշակ Տէր Միքէլեան: Մեր խօսակցութիւնն շրջեցաւ շատ նիւթերի վրայ, բայց ես պիտի գերադասէի նախ անպայման, նայիլ այդ աչքերի մէջ եւ լսել այն ձայնը: Կարծեմ մենք երկուքեանս եւս զգացինք թէ մենք յոյժ մերձ էինք միմեանց, եւ կրօն ասուածն մի այնպիսի նրբագոյն բան է որ չէ կարող սահմանափակուիլ դաւանութեանց եւ վարդապետութեանց մէջ կամ ամփոփուիլ ինչի մէջ որ աշխարհը կոչում է տեսիլք» (էջ 256):

Այս երեւելի Հայ մարդն որ այսպէս խո՛ր տպաւորութիւն էր արած մեր մեծ Անգլիացիի վրայ, ըստ նորա համակրալիր կենսագրական պատմութեան, ծնած էր ի Վան 1820ի ապրիլ 5)17ին: Արդէն 1841ին նա դարձած էր ուղեւոր եւ իմաստասէր: Այդ տարին նա ճանապարհորդեց Արարատ եւ Էջմիածին: Իւր առաջին գիրքն երեւցաւ 1850ին, եւ էր մի բանաստեղծական նկարագրութիւն իւր Արարատեան աշխարհի ուղեւորութեան: Ապա նա հրատարակեց իւր ուղեւորութեան պատմութիւնն դէպի Աւետեաց Երկիրն, եւ Կիլիկիա՝ վերջին հայկական հարստութեան երկիրը: 1855ին եղաւ վարդապետ: Այդ թուականին է որ սկսաւ նորա կեանքի նշանաւոր մասը: Ամբիոնն տուաւ լայնարձակ ասպարէզ նորա բնական ճարտասանութեան, մինչ ուսումնասէրի եւ գրողի յատկութիւններն ի ցոյց էին գալիս իւր 1856ին հիմնած «Արծիւ Վասպուրականի» անուն թերթի սիւնակներում, եւ նա առաջին մարդն էր որ զետեղեց տպագրական մեքենայ Հայաստանի մէջ՝ նախ Վան եւ ապա Մուշ:

Հայրենասիրութեան կոհակներն որ նա շարժման մէջ դրաւ դեռ բնաւ իջած չեն, եւ ժամանակը մերձենում է երբ մենք կարելի է տեսնենք խոստման կամ խոստմնազանցութեան որ ափի վրայ նոքա վիճակուած են փշրիլ եւ անհետանալ: Եթէ երբէք կար մի բարի դատ

հայ ժողովրդի համար, այդ այն դատն էր որին նա ախոյեան կանգնեց, եւ ոչ մէկ փաստաբան կարող էր լինել աւելի մաքրամիտ քան նա ինքն: Նորա դաւանած առարկայն եւ իրական նպատակն էր հայերի բարձրացումն եւ նոցա նախապատրաստութիւնն այն նոր Թուականին համար որ նա նախատեսում էր: Այդ Թուականն նա ըմբռնում էր որպէս Թուական ազգային գործունէութեան մահմեդական ժողովրդոց արագ անկման մէջ եւ Թուական նոր ազդեցութեանց մերձեցման Արեւմուտքից:

Այսպիսի վարդապետութեանց յեղյեղումն իւր հայբնակիչների մտքում անշուշտ պիտի բռնկումն յառաջ բերէր մի ժողովրդի մէջ որ նկատուած էր որպէս ստորին էակ եւ գրեթէ որպէս ստրուկ մահմեդականաց՝ ութ հարիւր տարիներից ի վեր: Նորան է վերագրուած թէ նա աշխատում էր վերստին կենդանացնել հին հայկական Թագաւորութիւնը: 1869ին նա ընտրուեցաւ պատրիարք Կ. Պոլսոյ. բայց հազիւ չորս տարի կարողացաւ մնալ այդ դիրքի մէջ: Թուրք կառավարութիւնն սկսած էր վերահասու լինել նորա մեծ եւ յարաճուն ժողովրդականութեան, եւ հարկ դատուեցաւ որ նա հրաժարուէր: Երբ Ռուս—Թրքական պատերազմից յետոյ Վեհաժողովը գումարուեցաւ Բեռլինում, նախկին պատրիարքն Խրիմեան իւր ազգի կողմից ճանապարհ ընկաւ դէպի Գերմանիոյ մայրաքաղաքն: Այդ նորա առաջին եւ միակ ուղեւորութիւնն էր դէպի Արեւմուտք. Նորա եւ Կ. Պոլսոյ Ներսէս Պատրիարքի ջանքերի արդիւնքն եղաւ հանրածանօթ յօդուածի ներմուծումն Բեռլինի Դաշնադրութեան մէջ՝ արձանագրելով Եւրոպայի խոստումն վերակացու կանգնելու բարենորոգմանց գործադրութեան ասիական Թուրքիոյ հայաբնակ գաւառներում:

Խրիմեան վերադարձաւ Հայաստան՝ առարկայն Թուրք իշխանութեանց ոխակալութեան: Հայկական

դժկամակութիւնն ծածկում էր սակայն։ Բ. Դրան սրտադողը սաստկանում էր, եւ 1886ին Խրիմեան, որպէս հայ շարժման կենդանի ոգին, Աբդիւլ Համիտի հրամանաւ հեռացուեցաւ ի Կ. Պոլիս, եւ 1889ին աքսորուեցաւ Երուսաղէմ։ 1892ին Աբդիւլ Համիտի կարծաւորն ազգի միահամուռ ձայնով ընտրուեցաւ Պետ Հայ Եկեղեցւոյ։ Մէկ տարւոյ երկարաձգութիւնից յետոյ Սուլթանն ի վերջոյ ստիպուեցաւ վերջանկէ Ցարի կառավարութեան պահանջներին եւ թոյլ տալ Ընտրեալ Կաթողիկոսին մեկնել իր աթոռավայրն՝ ի Ռուսիա։

Ս. Գրիգոր Լուսաւորչի Աթոռն տասն եւ չորս տարի գրաւելուց յետոյ Խրիմեան Հայրիկ հանգեաւ ի Տէր 1907 Նոյմ. 11ին (ն. տ.) ութսուն եւ եօթնամեայ հասակում։

Հայ ազգի աչքին նա դրեթէ յիսուն տարի շարունակ երեւեցաւ որպէս մի պատկառելի կենդանի արձան մարմնացեալ հայրենասիրութեան, եւ ամբողջ հայկական պատմութեան մէջ մենք չենք տեսնում ուրիշ որեւէ անձնաւորութիւն որ իր ողջութեան ժամանակ հասած լինէր մի աւելի բարձր եւ աւելի տեւական ժողովրդականութեան քան այս մարգարէական բանաստեղծութեան Հեղինակը։)

ՀԱԶԱՐ ՏԱՐԻ ԱՌԱՋ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՑՈՑ ԱՌ ԿՈՍՏԱՆԴԻՆ ԿԱՅՍՐՆ ՅՈՒՆԱՑ

« Եւրոպան չկատարեց իր խոստումը, Եւրոպան խաբեց հայ ազգին, Եւրոպան դաւաճանեց հայ ժողովրդին » . . . Աւելի քան վաթսուն տարիներ տխմարաշունչ այս բացագանչութիւնները հնչում են հայ միամիտ եւ անմիտ ընթերցողների եւ ունկնդիրների ականջին: Բայց ո՞վ է ի՞նչ է հայ ազգը որ Եւրոպան խաբէր նրան, եւ ո՞վ էր այդ Եւրոպան՝ այդ ժամանակ անունով ներդաշնակ եւ հոգիով եւ մտքով աններդաշնակ վեց մեծ պետութիւններ կային, որոնցից երկուսը հեռաւոր Ատլանտեան Ովկիանոսի Արեւմտեան ափերից 1853ին նաւեցին մինչեւ Սեւ Ծովը՝ այնտեղ կռուելու երրորդին հետ եւ արգիլել նրան տիրապետելու ոսկէ Հող Թիւրք կայսրութիւնից: 1871ին նրանցից երկուսը կըռ-

ուի բռնուեցան միմեանց երկիրներ իւրացնելու՝ մղուած յաւիտենական ագահութեան ոգիով: 1914ին եւ 1939ին բոլոր վերը դաժանօրէն մոլեգնած՝ աշխարհը ներկեցին իրենց տասնեակ միլիոն զինուորների եւ քաղաքացիների արիւնով եւ թշուառացրին իրենց ժողովրդոց անտեսական կեանքը եւ բարօրութիւնը:

Ահա այսպէս է այն Եւրոպան, որին մեր ազգի անուղղելի ազգասէրները ամբաստանելու եւ դատապարտելու անխախճան սովորութիւնն ունին, յեղյեղելով թէ նա խաբեց հայ ազգին, եւ անուանելով նրան «Դաւաճան Եւրոպա»:

Առաջին հատորում եւ յատկապէս այս Գըրքում ըստ կարելիին պատկերացնում եմ թէ ի՞նչպէս էր հայոց վիճակը Օսմանեան կայսրութեան մէջ եւ թէ ի՞նչպէս Հայոց Հայրիկը գնաց Եւրոպա՝ Վեց պետութեանց դռները զարնելու, որ անկախութեան դուռը բանային ապատակորոյս հայ ազգի առաջ:

Այսպէս ուրեմն, 1878ին Խրիմեանն էր որ եկաւ հայ ազգի աղերսարկու Եւրոպայի Վեց Պետութիւնների առաջ: Իսկ սրանից հազար տարի առաջ, նմանօրինակ դեր կատարեց պատմաբան Յովհաննէս Կաթողիկոս: Այս Կաթողիկոս, ամենաողորմելի մի դրութեամբ, աղաչում էր Բիւզանդիոնի Կոստանդին կայսեր, որ նա կարեկցէր հայ ազգին եւ փրկէր նրան հարաւի բարբարոսների աղանաբար ձեռներից:

Այդ աղերսագին նկարագրութիւնից դատե-

պատրաստուեց»: Արդարեւ մերժուեց: Գնացի «Նոր Դար»ի խմբագիր Սպանդար Սպանդարեանին, որ պատասխանեց. «Չը նայած իմ մեծ յարգանքին Մելքիսեդէկ սրբազանի հանդէպ, անկարող եմ հրատարակել յօդուածդ, ցենզուրից հրաման ունեմ չը հրատարակել ոչ մի տող նրան նպաստաւոր, բայց հրատարակել ամէն ինչ նրան աննպաստ»: Եւ ես նրա խորհուրդով գնացի գրաքննիչի մօտ, որ հայ էր եւ անունը կարծեմ Խարախանով: Յայտնի եղաւ որ այս անձը իւր փոքր տարիքում Գարեգին Մուրատեանի աշակերտն է եղել, եւ այդ տարիքից ի վեր պահել էր իւր սէրն եւ յարգանքը իւր ուսուցչի հանդէպ. «շատ եմ ցաւում որ անկարող եմ թոյլատրել ձեր նպաստաւոր յօդուածի հրատարակութիւնը. այսպէս է իմ հրամանը Մելքիսեդէկ Սրբազանի նկատմամբ»:

Ռուսիոյ բռնակալական ռէժիմից այս առաջին փախստականի՝ Մելքիսեդէկ Արքեպիսկոպոս Մուրատեանի՝ հանրային կեանքի քաղաքական նշանաբանն էր իւր Թրքահայ ունկնդիրներին հասկացնել թէ հայ ազգը գտնւում է երկու մեծ տէրութիւնների միջեւ, որոնցից մեր չնչին ուժով չենք կարող ազատել մեր պատմական երկիրը եւ ստեղծել անկախ Հայաստան: Թէ ռուս տէրութիւնը աստիճանաբար սպանում էր իւր հայ ժողովրդի ազգային լեզուն, դպրոցները եւ կրօնը, մինչ Թուրք տէրութիւնը թոյլատրել էր իւր հպատակնե-

մամբ ահի, եւ դառնաշխատ քրտամբ յերկունս մահու վտանգեալք. եւ իբրեւ խուն ինչ ի հողմոյ տարաբերեալք՝ դանդաչէին իբրեւ զկիսամեռ ի վտանգէ նեղութեանց:

«Եւ յայսմ ամենայնի ձեռն թշնամւոյն ոչ վաստակեցաւ զբազմախողխող երկաթն արեամբ արբուցանել, զի ի նենգաւոր շնչոյն իւրոյ մահ բղխէ յամենեսին: Զոմանս կորստական եւ մահացու դեղոց արբուցմամբ ի ծածուկ խարդաւանէ, իսկ զոմանս հրկիզութեամբ առկայծեալ մաշէ, եւ զայլս հեղձամղձուկ սատակմամբ վճարէ. եւ զոմանս սրախողխող դառնութեամբ տապաստ արկեալ ի սպանելոց անտի լցեալ եղեն հիմունք երկրի մերում . . Եւ այսպէս եկեղեցի Քրիստոսի խոպանացեալք եղեւ. եւ իբրեւ այրութեամբ իմն անխնամ եւ անհովացող մնացեալ, եւ լռեալք ի տօնից տարեկանաց . . . Եւ կրեալ զայս ամենայն եւ հալածեալ քաղաքէ ի քաղաք, հասեալ կամ առ զրուցս հըզօրագունիցդ եւ վեհագունից ինքնակալ թագաւորացդ ի հեռաստանէ աստի (Տարօնայ գաւառէն) խնդրել զողորմութիւն ի բարեպաշտիկ եւ ի ներողամիտ խնամածութենէդ ձերմէ, ոչ միայն ինձ, այլ եւ բոլոր Ասքանազեանս զրոհի (հայ ժողովուրդը). շահել ձեզ զարդիս սպանելոց ծառայիցն ձերոց որք առ հասարակ արբաք զբաժակն բարկութեան ի հարաւային բռնութենէ. արբաք եւ քամեցաք զմրուր սրտմտութեան եւ բաժակ խռովութեան ի թշուառացուցչացն

մերոց: Եւ աղաչեմ զայն՝ զի իմաստութեամբ եւ բարեպաշտութեամբ չնչոյ ձերոյ համբարձջիք զձեռն ձեր իվերայ ամբարտաւանութեան թշնամւոյն մինչեւ իսպառ . . . Եւ հալածեալ զգազանս չարաչարս, եւ զգայլս յափշտակողս, եւ զհեթանոսս ապստամբս, եւ զբարբարոսս վայրենիս, նուաճեսջիք զկողմանս զայսոսիկ . . եւ թօթափեսջիք զմեզ ի հողոյ աստի՝ յոր մածան մէջք մեր. եւ լուծէք զլուծ ի պարանոցէ մերմէ, որ ի ձեռն բռնակալիս այսմիկ ծանրացաւ մինչեւ ի մահ. եւ սրբեսջիք զայս աշխարհ եւ զքաղաք, որ ի հակառակութիւն եւ ի նախանձ արկաւ ի պղծոց եւ ի կորուսելոց, ի չարաչար իշխանաց ատելեաց Աստուծոյ . . .

«Այսօրիկ վասն հասարակացս բանաւոր հօտի հաւատացելոյ ինձ ի Տեառնէ մաղթանք աղերսանաց առաջի ձեր եղաւ . . . Ի խնամս ողորմած եւ ինքնակալ կայսերդ ապաստանեալ հասեալ կամ առ ոտս ձեր, հայցեմ . . . եւ օգնականութեամբ ձերով մեծաւ եւ փառօք շնորհօք պատրաստեսցուք զՀայաստանեայս ժողովուրդ կազմեալ նախ Տեառն եւ ապա ձեզ՝ կամօքն Աստուծոյ: (Գլուխ ԾԳ.)

«Եւ աշխարհն հայոց այսպէս անմարդացեալ եւ անզաւակացեալ, խոպանացեալ եւ անշքեղացեալ, այնուհետեւ անդաստանք մեր եղեն իբրեւ զանդաստանս մացառախիտ, եւ ցամաքեցան բողբոջք բուսոց արօտավարաց եւ արօտից. եւ քաղաքք մեր կործանեցան առ ի չգոյէ բնա-

կչաց . . . եւ այսպէս ծածկեցին զմեզ անար-գանք մեր եւ ի մեզ բովանդակեաւ լցաւ մար-գարէութիւնն Եսայեայ, եթէ՝ երկիր ձեր աւե-րակ է, քաղաքք ձեր հրկիզեալք զաշխարհս ձեր առաջի ձեր օտարք կերիցեն, աւերեալ եւ կոր-ծանեալ յազգաց օտարաց (Գլուխ ԾԲ.»):»

Նոյն Կաթողիկոսի չորս տողերը « Արմենի-ա»յի հեղինակը եւ պատուական բարեկամս Հէնրի Լինչ դրել է իր երկհատոր գրքի առա-ջին հատորի վերնագրի ներքեւ.

«Ո՞վ կարող է գուշակել մեր ապագան:
Խնայէ ինձ փորձը: Նման ենք հունձքի
հնձուած չոր մշակներէ՝ շրջապատող
աղջամուղջի եւ ամպի մէջ: »

ՀԵՆՐԻ ԼԱՅԱՐԴԻ ԱԶԴԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԳՈՒՇԱԿՈՒԹԻՒՆԸ

1880ին Անգլիոյ դեսպանը Լայարդ հետեւեալը ուղղեց Սուլթանների մայրաքաղաքից առ Գլատսթըն՝ Անգլիոյ նախարարապետը.

« Հայերը, խրախուսուած այն համակրութենէն որ ընդունեցին Անգլիոյ մէջ, եւ վստահելով այն փոփոխութեանն որ կը հաւատան տեղի ունենալու մօտ է Անգլիոյ քաղաքականութեան մէջ Թուրքիոյ նկատմամբ, եթէ ոչ անկախ, կը նային մի ինքնօրէն Հայաստանի ըստեղծման: Այս նպատակաւ ծրագիրներ կը բղխին գլխաւորապէս հայ կոմիտէներէ, հայ մամուլի մէկ մասէն, եւ Կ. Պոլսաբնակ եւ Եւրոպաբնակ ազդեցիկ հայերէ: Ո եւ է փորձ դէպի նոցա իրականացումն, արդի պարագայից մէջ, կարող է առաջնորդել յոյժ ծանր հետեւանքնե-

րի եւ աղէտների բուն իսկ հայ ժողովրդեան: Պէտք չէ մոռացուի թէ նոքա կը կազմեն երկրի բնակչութեան փոքրամասնութիւնը, եւ շատ գաւառների մէջ յոյժ չնչին փոքրամասնութիւնը: Յիմարական է եւ վտանգաւոր ճգնել հերքելու այս փաստն՝ անգիտանալով քիւրդերը: Փոքր Ասիոյ մահմեդականներն տեղեակ են Եւրոպական Թուրքիոյ ինքնօրէն քրիստոնեայ նահանգների մէջի իրենց եղբայրների ճակատագրին: Նոքա որոշմադիր չպիտի լինեն ենթարկուելու նման ճակատագրի առանց ընդդիմութեան: Մի պահանջ ինքնօրինութեան համար Հայաստանի մէջ կարող է առաջնորդել կոտորածների եւ այսու ի գլուխ բերել Ռուսիոյ անմիջական միջամտութիւնն եւ անոր անխուսափելի հետեւանքները: Եւ ոչ եւս հաւանական պիտի լինի, նոյն իսկ եթէ յաջող, պահպանել այն ազգայնութիւնն որով հայերն այնքան հըպարտ են: Ռուսիա հաւանօրէն երբէք պիտի չը թոյլատրէ մի հայկական ինքնօրէն կամ անկախ պետութիւն, եւ ոեւէ փորձ կազմելու այդպիսի մի բան պիտի վերջանայ Հայոց կլանումովն Ռուս կայսրութեան մէջ, եւ այս հին ազգի եւ նորա լեզուի եւ հաւատքի վերջին ջնջումովն: Ինչի որ հայերը համարելի են, եւ ինչ որ մեր անտարակուսելի իրաւունքն է պահանջել նոցա համար, է լաւ կառավարութիւն եւ նոցա արդար եւ անաչառ բաժինը Տեղական Վարչութեան մէջ, եւ խոստացեալ բարենորոգումների անմի-

Ջալման եւ խալական ներմուծումն այն նահանգ-ների մէջ ուր նոքա կը բնակէին:

Ապրիլ 27, 1880 Կապոյտ Գիրք

Այս ճակատագրական խօսքերը եթէ նոյն իսկ լսելի լինէին հայ անհեռատես հայրենասէր-ներին, նրանք այսու ամենայնիւ բնաւ ուշադ-րութիւն եւ արժէք պիտի չտային, որովհետեւ վառ զգացումներ յուզուած էին յեղափոխու-թեան հողմերից, եւ օդային յեղափոխութեան զգացումը սկսել էր ծնիլ եւ աճել տհաս եւ ծըռ-ուած դատողութեանց մէջ, որոնք կարծում էին թէ իրենց յեղափոխական ցոյցերով Եւրոպան պիտի պարտաւորուէր թիւրքի իշխանութիւնից առնել հայաբնակ գաւառները, եւ ստեղծէր ինքնօրէն Հայաստան, եւ կամ թէ իրենք իրենց սեպհական ուժերով պիտի յաջողէին անել նոյ-նը: Իրենց եղանակները եւ հնարքները ցուցա-դրուած են նախընթաց եւ յաջորդ էջերի վրայ:

Այսպէս Զուիցերիայի Ժընեւ քաղաքի մի աննշան փողոցի գետնայարկից՝ ուսանողական պարզ ննջասենեակի անկիւնում կապարեայ տառերի շնորհիւ տպագրուած սեւերես երեւաց զուարթուն «Հնչակ»ը:

Մօտաւոր ընթերցողներին իբրեւ պարզա-պէս ուսանողական գրականութեան գրօսանք եւ պարծանաց առարկայ, եւ հեռաւոր Սուլթա-նահպատակ խակ եւ դիւրահաւան երիտասարդ-ների երեւակայութեան առաջ որպէս մի խոր-հրդաւոր զօրութիւն՝ ընդունակ տապալելու

թիւրք տէրութիւնը եւ նրա գլխակի վրայ կանգնելու ցանկալի Հայաստանը։

Այս հրաշագործ զօրութեան զօրավարներից երկուսը տարբեր ուղղութիւններից գրեցին Սապահգիւլեան Լոնդոնից գրեց իր Պուլկարիոյ ընկերներին «Ես ապրում եմ այստեղ ամսական մէկ ոսկիով եւ նախաճաշի համար օրական ծախսում եմ մէկ բենի. ուրեմն կարող էք երեւակայել զոհողութեան չափը . . .»

Միւսն էր Ռուբէն Խանազատեան, կուսակցութեան առանձնաշնորհեալ առաքեալը, որ Մարսէյլից դէպի Կ. Պոլիս նաւ նստելիս Կեդրոնին գրեց 1889 հոկտ. 23ին. «Գրպանումս մնացել է տասնեւհինգ ֆրանք, շուտով Պոլիս ղրկեցէք ինձ 25 ֆրանք . . .»

Եթէ կատակ չէին մեր Յեղափոխութեան այս նախակարապետների գրպանային ողորմելիութեան այս տեղեկագրերը, սակայն եւ այնպէս շատ հեռու չէին ճշմարտութիւնից։

Այս առթիւ արժէ խորհիլ, թէ ինչպէ՞ս ըսկսեցին Հրեաները եւ ի՞նչպէս յառաջ տարին իրենց ազգային ազատութեան շարժումները։

ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

ՀԱՅԸ ԵՒ ՀՐԵԱՆ

Այս երկու ժողովուրդները Ծայրագոյն Արեւմտեան Ասիայի ամենահին բնակիչներից են։ Հայը իր պետական կեանքի եւ հին գրական ստեղծագործութեան մէջ չէ արտադրել այնպիսի կարողութիւն որով իրաւունք ունենար պարծենալ միջազգային համբաւով եւ իր անունով, որպէս Ասորեստանցիներ եւ Պարսիկներ, նաեւ Յոյներ եւ Հռոմայեցիներ, որոց գրականութիւնը եղաւ սնունդ իմաստութեան Եւրոպայի յետագայ ազգերի գրողներին՝ տասներեք դարից սկսեալ մինչեւ վերջին դարն եւ որոց քաղաքակրթութեան նշխարներն առատօրէն տեսանելի են Բրիտանական, Ալբըրտ եւ Վիկտորիա, Հնդկական, որպէս նաեւ Եւրոպայի բոլոր մեծ թանգարանների մէջ։ Հայկականից ոչինչ կայ տեսանելի։ Միայն թէ նրանց ձեռագիր մատենադարանների դարակներում կան հայերէն ձեռագիր Աւետարան, Յայսմաւուրք, Սաղմոս եւ Ժամագիրք՝ զարդարուած մանրա-

նկարներով եւ գեղագրերով, տասներեքից մինչեւ տասնեօթներորդ դարերը, ամէնքն եւս գրեթէ համանման եւ գեղարուեստով ստորադաս նոյնօրինակ պարսիկ, յոյն, իտալական, Փլաման եւ իռլանտական արուեստի գործերից: Ես այապլխների մէջ, որքան ես տեսել եւ յիշում եմ, լաւագոյններն են Թորոս քահանայի Աւետարանները՝ Բրիտանական Թանգարանի մէջ, եւ Սարգիս դպրի պատուական Յայսմաւուրքը Մորգընի մատենադարանում ի Նիւ Եորք, որի մելանը, թուղթը եւ մանրանկարների ներկերը չինուած են իբր ձեռարուեստով 1336ին կամ մօտաւոր թուականներում:

Բայց մեր մէջ կան մարդիկ Ֆիլատէլֆիայից մինչեւ Կիպրոս եւ Երեւան, որ ազգասիրութեան խելացնորութիւնից բռնուած, հաստատում են թէ Եւրոպայի բոլոր ազգերի նոյնպէս եւ Ամերիկեան ցեղերի բազմաթիւ բառեր ծնել են հայերէն լեզուից, թէ հայերէն մատենագրութիւնը եղել է աւելի բարձր քան յունականը եւ հռոմէականը, բայց այրուած են եւ չկան հիմա. թէ հայ քաղաքակրթութիւնը գերազանց է ամէնից, բայց բարբարոս թիւրքերը եւ բռնակալ ցարերը եւ նրանց յաջորդ_նախանձոտ բոլշեւիքները թող չեն տալիս, որ Հայաստանի անհամար աւերակների տակից այս աշխարհը գան հայ ազգի քաղաքակրթութեան այդ հրաշալիքները: Իսկ Հայաստանի երէկուայ փառապատիւ եւ այսօր բարեբաղդաբար անարժանա-

պատիւ պատմաբան Զալոյեան, ինչպէս երեւում է, ամենահաստատուն աղբիւրներից գալ է որ Եւրոպան իր քաղաքակրթութեան լոյսը եւ քրիստոնէութեան հաւատքի շնորհքը ըստացել է հայ Առաքեալներից եւ Թոնտրակեցիներից:

Մահմետական առաւել կամ նուազ վայրենի ցեղերի իշխանութեանց տասնեակ դարերով ենթակայ հայ ցեղի համար մեծ բարիք պիտի լինի երբ նրա ուսեալները իրենց գլուխներից դուրս հանեն այդպիսի մեծափառ ունայնաբանութիւնները եւ հասկանան թէ ինչ բաների մէջ մեր ցեղը մեծ է եւ իրաւունք ունի համարուել մեծ:

Այլ տեսակի ուղեղների ուսեալները ունայնամտօրէն պարծենում են թէ հայ ժողովուրդը աշխարհիս մէջ առաջին ազգն է եղել որ ընդունեց Քրիստոսի կրօնքը: Գործք Առաքելոցը միակ ուղիղ աղբիւրն է ուր կարելի է տեսնել թէ ո՞ր տեղերն էին, որոնց մէջ Քրիստոսի ձկնորսները սկսեցին ձեռք առնել մարդիկ եւ որսալ ցամաքային ձուկեր իրենց նոր վարդապետութեան համար: Նրանց գիրքերում հայ քաղաքների անուններ չկան, Մակեդոնիա, Կորնթոս, Եփեսոս, Թեսաղոնիկէ ,Զմիւռնիա, Անտիոք եւ Կեսարիա: Այս ամէնը յունական են: Եթէ դրանց շարքին նոյն իսկ յիշուած լինէին հայ քաղաքներ, դրանով հայի ի՞նչ առաւելութիւն, խելք, շնորհք եւ պատիւ ապացուցուած պիտի

մնէր։ Բայց մէկ բացայայտ ապացոյց կայ Հայոց պատմութեան մէջ, որ քրիստոնէական կրօնքը ընդունելու հետ թագաւորութիւնը եւ կառավարութիւնը սկսեցին աստիճանաբար թուլանալ, կրօնական եւ քաղաքական երկպառակութիւններ ծագիլ եւ վերջ բերել հայ ազգի պետական անկախութեան եւ այսպիսով խոնարհեցնել Հայաստանի ազատութեան արեւը, պատել Հայաստանը ստրկութեան խաւարով, որ թանձրացաւ հայ կեանքի ամէն կողմերի վրայ երբեմնակի եւ տեղ տեղ ծագելով ժամանակաւոր ազատութեան փրկարար լոյսերը։

Հայ ցեղի քաղաքական անկման պատճառը կրնայ լինել որ քրիստոնէական կրօնքի ընդունելութեան հետեւանքով չէր եւ կարող է լինել որ էր, քանի որ պատմութեան ընթացքը մեզ կը հարկադրէ հակամիտիլ այդ հայեացքին. այսու ամենայնիւ մեր յիշեալ տեսակի ազգադրոշմութեան իրաւունքները այնքան ոչինչ են, որ համեմատութեան համար պէտք կը տեսնեմ յառաջ բերել որքան մեծ է հրէական ցեղը արդարապէս պարծենալու իր ստեղծագործութեան իրաւունքներով։ Իրենց ազգային պատմութիւնը նրանք յաջողեցան դարձնել մի սուրբ գիրք աշխարհի մի մեծ մասի մարդկութեան համար, որոնք ահով եւ դողով համբուրում են իրենց եկեղեցիների մէջ, եւ մօտ 2000 տարի առաջ Նազովրեցի մի հրէայ կոյս Հոգւոյ Սրբոյ զօրութեամբ ծնաւ Որդի Աստուծոյ։ Եւ ահա

ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

Երկու հազար տարիէ իվեր աշխարհիս մարդկութեան մեծ մասն ընդունում է եւ պաշտում նրան իբրեւ Աստուած ճշմարիտ: Եւ այժմ 19րդ դարու վերջում ծնաւ Քարլ Մարքս, մի հրեայ՝ մի ոչ-կոյս հրեայից եւ սպառնում է հիմնովին տապալել Նազովրեցի Աստուծոյ գոյութիւնը, եւ նրա զօրութեամբ կանգնած Քօմմիւնիզմը իւր ահռելի եղջիւրները տարածել է ընդհանուր մարդկութեան քաղաքակիրթ եւ վայրենի արարածների վրայ եւ ահ ու սարսափի մատնած Քրիստոնէութեան իշխանների հոգին ու մարմինը: Եւ ի՞նչ կարող է դիմանալ այդ զօրութեան դէմ: Ո՞վ կարող է գուշակել: Եւ այս երկու մեծութիւնները չնչին են համեմատած այդ ցեղի մի երրորդ զօրութեան հետ, որ իւր ցեղի ազգային անկախութեան սերմը սերմանեց 1875 թուին, թաղուած պահեց մինչեւ 1888, որից յետոյ Սիօնիզմի կոմիտէներ հաստատուեցան ամենուրեք ուր կային հրեաներ եւ իւրաքանչիւր անդամ նպաստեց ամսական եւ տարեկան վճարումներով եւ այսպէս դիզեցին ահագին գումարներ, լռեցին առանց ոեւէ պոռոտաբանութեան որքան ժամանակ որ իրենց հայրենիքը Թիւրքի իշխանութեան տակ էր եւ գործեցին դիւանագիտօրէն Անգլիական իշխանութեան ներքեւ, մինչեւ որ հասաւ ժամանակը, երբ ըզգացին որ կրնային հակառակիլ թէ Արաբ ցեղի հետ եւ թէ ռումբերով եւ դաշոյններով Անգլիական կառավարութեան հետ, գիտնալով որ

Թիւրքի նման մի բարբարոս կառավարութիւն չէր· այլ կը պատժէր միայն յանցաւորին եւ գիտէր թէ յանցաւորը երբէք պիտի չբռնուէր, որովհետեւ պիտի չգտնուէր ոեւէ հրեայ մատնիչ որ մատնէր յանցաւորին, եւ առանց ոեւէ կազմուած իշխանութիւն ունենալու իր հայրենիքի մէջ, իր զարմանալի հայրենասիրութեան եւ միաբանութեան հրաշալի զօրութեամբ, պատերազմեց եօթն հաստատուած Արաբ Թագաւորութիւններու դէմ, իր առջեւէն քշելով նոցա զօրքերը: Իսկ խղճալի խելքով աշխարհացիր հայերից ամենախելացիներ իրենց ամենասիրելի, հեռաւոր եւ անհայրենակ հայրենիքի համար մռնչում են· « Այդ նահանգները մեր պատմական երկիրներն են, ինչո՞ւ պէտք է մնան Թիւրքի ձեռքին: Ամերիկա եւ Եւրոպա պարտաւոր են առնել եւ տալ մեզ:

Գնացէք առէք ձեր հայրենիքը ինչպէս հրեան առաւ իրը, պիտի առէ իրենց ամէն խելացին:

Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

ԴԷՊԻ ԵՒՐՈՊԱ

Բիւզանդ Քէչեան, «Արեւելք»ի կեսարացի խմբագրապետը, ըստ սովորութեան տունից բերած հացը, բաստրման, պանիրը եւ խաղողը իւր լայնափոր ստամոքսին մէջ լեցնելուց յետոյ, երբ ըմպում էր Մանուկ աղայի պատրաստած եւ վերէն բերած Թրքական խահուէն, եւ մենք չորս խմբագիրներս, հայկական կամ յունական ճաշարանի մէջ ճաշելուց յետոյ, նստած մեր սենեակում պատուհանների առաջ զովանում էինք Մարմարայից եւ Վոսփորից փչող քաղցրաշունչ հովով խառնուած մեր սիկարէթների կապտագոյն ծուխի հետ եւ հրճւում էինք լուսամուտներից թափանցող արեւափայլ օդի զգուանքով, երբ մեր սենեակի դուռը բացուեց եւ ներս մտան երեք այցելուներ. մէկն էր Սեդրակ Դեվկանց, իմ սիրած «Ծահէնն ի Սիբիր»ի սիրելի հեղինակը, ծաղկահար բայց ժպտադէմ

եւ պսպղուն մանր աչքերով, վայելուչ հագուստների մէջ. եւ ուղիղ իր կեցուածքով:

Միւս երկուսից մէկը մեզ հասակակից, մի կայտառ երիտասարդ էր, լիակուշտ փորով եւ խնձորալլի այտերով. հարստութիւնը փայլում էր նրա հագուստների վրայ:

Միւսը աւելի տարէց էր եւ չունէր Դեւկան-ցի մարմնական բարեձեւութիւնը, կարծես ոտները յոգնած էին մարմինը կրելուց իրենց վրայ եւ մարմինը ձանձրացած ոտների վրայ ուղիղ կանգնելուց: Եւ զարմանալի չէր երբ Դեւկանց իր աջ ձեռքը ուղղելով նախ դէպի մեզ, ապա դէպի իր կողակիցը, զուարճալիօրէն ասեց.

«Ահա՛ ձեզ ներկայացնեմ անունով ձեզ ծանօթ, դէմքով անծանօթ Մկրտիչ էֆէնտի Փորթուգալեան, որ Վանի նոր սերունդը լուսաւորելէ յետոյ հիմա ալ Եւրոպա կ՚երթայ լուսաւորելու այնտեղի խաւարամիտ քաղաքագէտները եւ ազգերը աւելի մեծ գործի մը համար: Եւ այս պատուական երիտասարդը իմ թանկագին սանն է, Վահան Եսայեան: Կը տանիմ Զուիցերիա՝ աւելի բարձր ուսմունքի համար. եւ ես ալ անոր հօր հարուստ գրպանի շնորհիւ վայելեմ այդ երկրի կապուտակ ծովակները եւ բարձրահայեաց լեռների հրաշալի տեսարանները եւ համեղ կաթն ու կարագը»:

Թրքահայութեան բախտի այդ շրջանին, հայերը անհոգ էին եւ սիրահար հանրային ցուցարարութեան: Այս ես տեսել էի մանկութեանս

Շրջանին Տիգրանակերտում, ուսանութեանս օրերին՝ Կ. Պոլսում եւ բանտարկութեանս տարիներին՝ Աքեայի բերդում, ուր Թիւրքիոյ զանազան գաւառներից աքսորուած քաղաքական բանտարկեալներ հառաչում էին իրենց կեանքի ազատութեան եւ հայրենիքի կարօտութեան համար: Նրանք պատմում էին թէ երբ մի նոր եկեղեցական պաշտօնեայ, Առաջնորդ կամ յաջորդ գալիս էր իւր նոր պաշտօնատեղին, եռանդուն երիտասարդներ ձիերով գնում էին ընդառաջ մի քանի ժամ հեռու՝ ընդունելու իրենց հոգեւոր հովիւը եւ առօք փառօք բերում էին իրենց աթոռանիստ մայրաքաղաքը բազմութեան ցոյցերի մէջ, որպէս թէ լինէր մի հայ իշխան:

Իմ բանտարկեալ ընկերներից մէկը՝ Մշեցի երիտասարդ Կարապետ, պատմում էր ինձ թէ երբ Միացեալ Ընկերութեան դպրոցների ընդհանուր Տեսուչն էր այցելում Մուշ, այսպիսի ցոյցերի ընդունելութիւնը լինում էր շատ աւելի մեծ եւ եռանդալից:

1895ին Պետութեանց բարենորոգմանց ծրագրի ընդունելութեան առթիւ հայ բանտարկեալների ընդհանուր ներումը պայմաններից մէկն էր, բացի մեծ եղեռնագործներից: Ազատուեցան նոյնպէս Աքեայի մօտ 50–60 բանտարկեալներ, որոց թիւը որոշ չեմ յիշում: Թէեւ ես միւսների հետ ազատ թողուեցի, բայց հետեւեալ օրը ազատութիւնս ետ առնուեցաւ համարուելով իբրեւ մեծ եղեռնագործ, թէեւ դատա-

րանով դատապարտուած չէր եւ Թիւրքական ճանճն իսկ չէր սպաննած: Միայն կայսերական հրամանով եւ Ոստիկանութեան նախարարի կարգադրութեամբ ղրկուած էր Աքիա: Միւս ամէնը մեկնեցան Երուսաղէմ՝ համբուրելու Քրիստոսի գերեզմանը, որ իւր հրաշագործ զօրութեամբ ազատեց զիրենք Սուլթան Համիդի գերութեան շղթայից: Ինչպէս միւսները, Մըշեցի Կարապետ երբ Մուշին էր մօտենում, միւս Մշեցիների հետ, նախկին ցուցարարութիւններ տակաւին շարունակւում էին նոյն իսկ կոտորածի ենթարկուած հասարակութիւնների մէջ: Բազմաթիւ ձիաւորներ դիմաւորելու գնացին վերադարձող աքսորեալներին: Նժոյգ ձիերից մէկը նուիրեցաւ երիտասարդ Կարապետ վարժապետին, որ փառքով մտնէր իր հայրենի քաղաքը: Իր ցնծութեան հետ իւր ձին եւս մասնակցում էր եւ նրա աշխոյժ շարժումների ցնցումից Կարապետ վար ընկաւ եւ աւանդեց իր հոգին. եւ դիմաւորողներ եւ եկողներ մտան Մուշ ոչ թէ ցնծութեան թափօրով, այլ իբրեւ յուղարկաւորներ մեռեալ Կարապետի մարմնին: Եւ այսպէս վերջ գտաւ նրա ազատութեան ողբերգութիւնը:

Աքիայի մեր երազահան Ղազար վարժապետը այս տխուր լուրը իւր ցաւալի զգացումների սեւաներկ բառերով ղրկեց ինձ, մինչ ես Աքիայի բերդի մէջ էի եւ որ մինչեւ այդ ժամանակ ազատութեան տենչով նախանձում էի Կարապե-

տի եւ նրա նմանների ցանկալի կեանքին:

Այսպիսի ազգային ցոյցերի մասին գրելով հեռացայ նիւթից թէ ի՛նչու Փորթուգալեան փակեց իր դպրոցը եւ բաժանուեց Վանայ ծովի տեսարանից: Իր գլխաւորական մարզանքներով դպրոցին մէջ աւելի տհաճելի դարձաւ Թիւրք կառավարութեան աչքին, որովհետեւ Թիւրք կառավարութիւնը արդէն կասկածի տակ էր, թէ այդ դպրոցը Ռուսական հիւպատոս Հայազգի Կոստանդին Կամսարականի միջոցաւ նպաստներ էր ստանում Ռուս կառավարութիւնից, եւ Թրքահայոց մէջ ռուսասիրութիւն տարածելու մի վարժարան էր, եւ պատուիրեց նրան փակել դպրոցը եւ հեռանալ Վանից:

Ահա այսպէս էր երբ մենք տեսանք նրան մեր խմբագրատան մէջ, եւ նրա յաջորդ ձայնը լսուեց Ֆրանսայի Մարսիլիա քաղաքին մէջ, ուր իր նորահաստատ «Արմէնիա» անուն թերթով առաջին պատերազմ բացողը եղաւ Թիւրք կառավարութեան դէմ եւ հիմնեց նուազ մեծաբարբառ առաջին յեղափոխական դպրոցը:

Ժընեւլի ապագայ «Հնչակ»ի ապագայ մեծ յեղափոխականներ իրենց բոցավառ զգացումների առաջին փորձերը սկսեցին ցուցադրել Փորթուգալեանի «Արմէնիա»յի մէջ· եւ երկու տարի յետոյ, 1887ին, գրոշմեցին նորան իբրեւ պահպանողական, եւ ճշմարիտ յեղափոխութեան զանգը հնչեցրին «Հնչակ»ի մէջ:

ՄԻՆԱՍ ՉԵՐԱԶ ԵՒՍ ԴԷՊԻ ԵՒՐՈՊԱ

1884ի Մայիս ամսին, երբ եկայ Կ. Պոլիս կովկասեան ուսանողական հագուստով եւ ազնիւ Թորոսեանի Թղթավաճառանոցում ծանօթանում էի այնտեղ այցելող զանազան գրագէտներին, մէկ օր Թորոսեան ինձ ներկայացրեց մի լայնալանջ եւ բարեկազմ անձի, ասելով թէ սա Ազգ. ժողովի նշանաւոր անդամ Ստեփան էֆ. Փափազեան էր, որ Խորէն Արքեպիսկոպոսի հետ գնաց Պետերբուրգ իբրեւ պատուիրակ Հայկական Խնդրին, խնդրելու Ցարի բարեխացակամութիւնը Հայկական Դատին համար: Փափազեան հայրաբար ձեռքերս բռնելով տարաւ ինձ մօտակայ Ենի ճամի թրքական սրճարանը մէկ մէկ բաժակ խահուէ խմել եւ միասին խօսակցելու: Այդտեղ նա պատմեց իրենց պատուիրակութեան մանրամասնութիւնը: Որքան յիշում եմ, Ռուս կառավարութեան ընդունելութիւնը շատ բարեկամական չէր, այն պատ-

ճառաւ որ Պերլին պատուիրակութիւն ղրկելը մի տեսակ հակառակ էր Սան Ստեֆանոյի դաշնագրին, որով Ռուսիա կ'ուզէր որ Էրզրում մընար իր ձեռքում իբրեւ երաշխաւորութիւն Հայ բարենորոգմանց: Մինչդեռ Պերլինի Հայ Պատուիրակութեան խնդրանքի ոգին էր բոլոր հայաբնակ գաւառների բարենորոգումը, որոնց մէջ Էրզրում բացառութիւն չէր կազմեր: Այս համակրելի դէմքի զօրաւոր ձայնը յաճախ լըսում էի Ազգ. երեսփոխանական ժողովի մէջ, երբ գնում էի ներկայ լինել նրանց նիստերում, եւ հետաքրքրութեամբ լսում նրա ճառերը:

Իսկ նրա բարձրաստիճան ընկերակից Խորէն Արքեպիսկոպոս Նար Բէյ, այդ ժամանակ Բէշիքթաշ Թաղի, Վոսփորի ափերի վրայ, հայոց եկեղեցւոյ քարոզիչն էր. իր Թաղի արեւմտակողմից հանդիպակաց բարձրութեան վրայ իր խոնարհ գիւղից միշտ անխուսափելիօրէն տեսնում էր Սուլթան Համիդի Եըլտըզ քէօշքը, ուր հաւանօրէն Մարգարէի յաջորդը լուսամուտից նայում էր փառաւոր Բիւզանդիոնի մինարէների վրայ՝ Մարմարա ծովը իր հեռաւոր Իշխանաց կղզիներով եւ Վոսփորը իր անդրափեայ հին Քաղկեդոնով: Բայց ոչ նրա աչքերը զօրում էին տեսնել Նար Բէյին եւ ոչ ալ Նար Բէյի սըկար աչքերը՝ նրան: Եւ սակայն տարիներով ապրում էին անտեսանելի միմեանց իբրեւ նոյն Թաղի բնակիչներ, առանց մէկ միւսից վախնալու: Եւ Ներսէս Պատրիարքի մահից յետոյ,

1885ի պատրիարքական ընտրութեան ժամանակ հաւանօրէն Նար Բէյ պիտի ընտրուէր Պատրիարք, երեսփոխանական ժողովի քուէներով, եթէ զօրաւոր խաղ չղառնար յաջողցնելու համար Յարութիւն Արքեպիսկոպոս Վեհապետեանի ընտրութիւնը: Սակայն եթէ յաջողէր իրրեւ Պատրիարք Հայոց Թուրքիոյ, ազատօրէն պիտի մտնէր Եըլտըզի պալատը եւ պիտի ներկայանար Սուլթան Համիդին իր վեհափառ դահլիճին մէջ:

Այսպէս էր Խորէն Նար Բէյի կեանքը Պոլսոյ մէջ Պետերբուրգից վերադարձէն մինչեւ իր մահը. միայն թէ 1890ի Գում Գափուի դէպքից եւ յաջորդող բանտարկութիւններից յետոյ, որոշ մատնութիւնների հետեւանքով, Խորէն Նար Բէյ եւս ձերբակալուեցաւ եւ յետոյ ազատ արձակուեց: Այս միակ դէպքն էր որ իրրեւ գըրկանք կրեց Թիւրք կառավարութիւնից եւ որի պատճառն էին մի քանի ոչ–Թիւրք չարակամներ:

Մեծ պատուիրակը՝ Խրիմեան Հայրիկ Պոլսոյ մէջ մի առժամանակ կենալուց յետոյ, վերադարձաւ իր հայրենիքը, թէ արդեօք կառավարութեան հրամանա՞ւ էր թէ իր հայրենիքի սիրով, չեմ կարող ասել:

1885ին Թիւրք կառավարութեան որոշ կասկածների հիման վրայ, Փորթուգալեանի դպրոցի եւ այդպիսի անյայտ պատճառներով, կա–

ռավարութիւնը հարկ դատեց որ Խրիմեան հեռանար իւր հայրենիք Վանից եւ վերադառնար Պոլիս, բայց արտասահմանի մէջ հակապետական յեղափոխական թերթերի երեւումը եւ Պոլսոյ մէջ այդ զգացումների շարժումից ազդըւած, թիւրք կառավարութիւնն հարկ դատեց որ Խրիմեան հեռանար Պոլսից եւ երթար Քրիստոսի գերեզմանի մօտ ապրիլ Ս. Յակոբայ վանքին մէջ Պատրիարքի եւ հոգեւորականութեան հետ, մինչեւ որ ընտրուեց Կաթողիկոս Ամենայն Հայոց: Սուլթան Համիդ չուզեց տեսնել նրա երեսը, ուստի արգիլեց որ նաւով անցնէր իր պալատի առաջից եւ Վոսփորի միջով, այլ իր սիրած Եւրոպայի հողով երթար իւր օրհնեալ էջմիածինը:

Երկու Պատուիրակութեանց մնացեալ անդամն էր Մինաս Չերազ, որ ընկերացաւ Խրիմեան Հայրիկին որպէս թարգման: Եւ Մինաս Չերազ շարունակեց ապրիլ Կ. Պոլսոյ մէջ, ինչպէս որ էր Բերլին երթալուց առաջ:

Ընկերութեան մէջ Չերազ երեւում էր երբեմն մեղմ եւ քաղցրաձայն եւ երբեմն զուարճալի հաստատաձայն ծիծաղով: Նա ներկայ եղաւ թէ Վոսփորի եւ թէ Իշխանաց կղզիի երկու մեծ խնճոյքներին որ Սուլթանահպատակ երեւելի հայեր տուին ի պատիւ Գամառ Քաթիպային, մեր մեծ եւ երեւելի հակաթուրք բանաստեղծին որ երգեց «Մեր բահերն էլ կ՚անեն նրանց շան–

սատակ»: Եւ նա նոյնպէս Ճէյքայլրեան Ազամեանի յօբելեանի կոմիտէի անդամներից մէկն էր, այն կոմիտէին, որ իր անունով պսակ ներկայեց Ազամեանին եւ գինը վճարեց Ազամեանի հասոյթից: Ի վերջոյ նոյնպէս եղաւ տեսուչ Կ. Պոլսոյ հայ Նշանաւոր Կեդրոնական Դպրոցին:

Ահա այսպէս էր այս չորս անձերի կեանքը Պոլսոյ մէջ, ինչպէս ընթերցողները տեսան նախընթաց էջերում: Սակայն, Մինաս Չերազ իւր մի գրուածքի մէջ այնպէս կը ներկայացնէ խնդիրը որպէս թէ Բերլինից վերադարձին եղաւ կասկածելի եւ հալածական եւ որպէս թէ ինք երկրից հարկադրեալ հեռացաւ եւ օտարութեան մէջ ապրեց ահ ու վախով:

Իրաւ է սակայն երբ նա ապրում էր Կ. Պոլսում, ահ ու վախը երթալով ծանրանում էր իր սրտին վրայ, տեսնելով որ մէկը Վասպուրականի աշխարհից գնացել էր մինչեւ Մարսիլիա՝ Հայաստանի ազատութեան դատը հայերէն լեզուով հնչեցնելու անհայագէտ եւրոպացիներին, որովհետեւ նրա հաղուագիւտ հայ ընթերցողները նոր բան պիտի չսովորէին եւ ոչինչ պիտի կարողանային ընել:

Ուրիշ մի քանի գրեթէ անհայագէտ ռուսահայ ուսանողներ, Ժընեւի լճի ափերին նըստած, հնչեցնում էին յեղափոխութեան թնդանօթը Սուլթան Համիդի ճակատին, եւ ձեռք էին առել Հայաստանի անկախութեան չէնքը իրենց

իսկ ձեռքով կառուցանել: Եւ նա զգում էր թէ ինքն էր միայն այդ իրաւունքի հարազատ ժառանգը եւ ոչ թէ այդ նորածին խորթ զաւակները: Ուստի հառաչում էր սրտի խորքից թէ ինչպէս երթար Եւրոպա իր այդ նպատակի անվրիպելի յաջողութեան համար: Ներսէս Պատրիարքը որ Բեռլինի յուսախաբութիւնից յետոյ, շատ սրտաբեկ էր եղել, քննադատուած թէ Ազգ. Ժողովի եւ թէ Մայրաքաղաքի հայ լրագիրների մէջ, մի օր դառնապէս այս խրատը արտասանեց Զերազին.

«Զերա՛զ, գլխիդ ճարը նայէ, այս ազգին չուանով հորը չիջեցուիր»: Բայց Զերազ անվըհատ ազգասէր էր եւ յօժարակամ էր ազգի չուանով հոր իջնել՝ պայմանաւ որ այդ չուանը հիւսուած լինէր ոսկի թելերով, ուստի խնդիր էր թէ այդպիսի չուան ո՞րտեղից գտնէր որ երթար Եւրոպա եւ ազգի սիրով հոր ընկնէր:

Եւ գտաւ: Եւ մի երջանիկ օր Պոլիսը կորցրեց նրան եւ Եւրոպան գտաւ նրան: Եւ նա մտածեց հայեր չեն որ պիտի լուծեն Հայկական Խնդիրը եւ ոչ հայ լեզուն է որ պիտի ծառայէ եւրոպական քաղաքագէտների հասկացողութեան Ֆրանսերէնն է որ միջազգային դիւանագիտական լեզուն է, որով եւրոպացի դիւանագէտներ պիտի սովորեն Հայկական Խնդիրը եւ իրենց միացեալ դիւանագիտական զօրութեամբ լուծեն նրա անլուծելի հանգոյցը: Եւ այսպէս նա Եւրո-

պայի քաղաքագէտների սեղանի առջեւ տրամադրեց իր Փրանսերէն քառէջեայ «Լ'Արմէնի»ն:

Եւ այսպէս, Պոլսոյ իր հանգիստ կեանքից մտաւ մի լաւագոյն հանգստեան կեանքի մէջ, ինք անհետացաւ աշխարհից բայց նրա Օսմանեան Հայաստանի ազատութիւնը թաղուեցաւ խաւարի մէջ:

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ

Այն օրից որ իմ եւ իմ նմանների պատանեկական հոգւոյ եւ զգացումների մէջ սերմանւեցան Հայաստանի ազատութեան գաղափարի սերմերը, այդ սերմերը ստեղծուած էին սիրոյ ոսկեզօծ երազներով, ուր ամէն ինչ երեւում էր դիւրին եւ փայլուն, եւ որի դէմ չկար ո՛չ դժուարութիւն, ո՛չ զրկանք, ո՛չ բանտարկութիւն եւ ո՛չ արիւն: Բոլոր այդ գաղափարի զգացումները լայնածաւալ լուսեղէն չէնքերի նման էին, հաւատքով, այնպէս սուրբ որպէս Էջմիածնի Աստուածակերտ Իջման լուսեղէն սեղանը: Եւ որքան մեծանում էինք, այնքան աւելի էինք լսում, տեսնում եւ խօսում ամենադժուարին բաներից այդ նպատակի իրագործման համար: Այնուամենայնիւ, այդ զգացումները շարունակում էին մնալ օդային աշտարակաշինութեան երեւոյթով, եւ միայն աստիճանաբար էինք զգում նրա մարմնացումը:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Այդ գաղափարի վրայ հետզհետէ սկսայ աւելի լրջօրէն մտածել, երբ գալով Կ. Պոլիս եւ աստիճանաբար տեսնելով այնտեղ հայ ցեղի ազգային կեանքը, հայ ցեղի գոյութեան իբրեւ ուժ եւ նրա դիմադրութեան կարողութիւնը այն քաղցր նպատակի համար, որի վրայ երազում էինք այնքան տարիներով: Խանազատեանի Պոլիս գալը եւ ինձ յայտնելը թէ յեղափոխութեամբ է որ մեր նպատակը պիտի իրագործենք ամենազօրաւոր խօսքն էր, որ ազդեց իմ վրայ եւ խորհիլ տուաւ թէ ի՞նչպէս կարելի է յեղափոխութեամբ, այն է մեր ուժի զօրութեամբ, գործադրել այդ նպատակը, ինչ որ կը նշանակէր կռուել թիւրք կառավարութեան դէմ:

Իմ մտքիս մէջ յաճախ ետ ու առաջ դառնում էր թէ՝ ի՞նչպէս կարելի էր լինել յեղափոխական, այն է՝ ազատ հայրենիք ստեղծելու ջանալ, առանց թշնամացնելու մեր անոյժ ազգի դէմ Օսմանեան կայսրութեան հզօր կառավարութիւնը: Այս հայրենիքի ազատութեան ուխտաւորները կարծես սկսում էին բազմանալ, զանազան բուռն ու թեթեւ զգացումներով, եւ կարծես նրանց մէջ աստիճանաբար երեւում էին ցուցամոլութեան եւ շահախնդրութեան վտանգաւոր յատկութեանց հետեւանքները, ինչպէս, զոր օրինակ, երեւում էին անուս եւ սոսինձատիպ թերթիկներ, որոնք հրատարակում էին լուրեր իրենց Տիգրանակերտի, Խարբերդի կամ Վանի գործակալներից իրենց յեղափոխական

գործունէութեան մասին: Իսկապէս այդպիսի կոմիտէներ չկային այդ քաղաքների մէջ, բայց կասկածի տակ էին դնում այդ քաղաքների հայերին: Եւ Կ. Պոլսոյ մէջ մեր գաղափարի երիտասարդները սկսել էին ունենալ տարբեր զգացումներ եւ համոզումներ: Ոմանք յեղափոխութիւնը հասկանում էին բուն յեղափոխութեան գաղափարով, այն է՝ ցոյցեր անել թիւրք կառավարութեան դէմ ռուսէ կերպով: Ուրիշներ ի զուր էին համարում ցոյցերն, եւ հակառակ էին: Կարմիր յեղափոխական գլուխ ունեցողները, փողոցներում քայլած եւ շարժած ժամանակ, որպէս Պոնտոսցի Յակոբ Մեղաւորեան, որ իւր լայն լանջով, երկայն մազերով եւ սեւ կակուղ գլխարկով, բարձր եւ հաստ մարմնով, իւր թիկնապահով կամ թիկնապահներով, գըլխաւոր փողոցում քայլած ժամանակ, շարժում էր ետ ու առաջ իւր թեւերը այնպիսի հանդիսաւորութեամբ, որպէս թէ նախկին Բիւզանդիոնի տէրը լինէր եւ ոչ թէ Եըլտըզի պալատում բազմող թիւրքը: Ես երբեմն դիտողութիւն էի անում նրան, բայց նա ասում էր՝ «Թող թիւրքեր հասկանան թէ մենք ո՞վ ենք եւ չենք վախենում նրանցից»:

Մի երեկոյ, նա, ես եւ մի ռուսահայ գաղափարակից ընկեր՝ Պետրոս Բարութչեվ, ժողովի պիտի երթայինք Իւսկիւտար՝ Մելքոն Կիւրճեանի (Հրանդ) բնակարանը, ուր պիտի լինէին եւ ուրիշներ:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Օրակարգի գլխաւոր խնդիրն էր ցոյցեր անե՞լ, թէ ոչ: Մելքոն Կիւրճեան, որ Կեդրոնական Վարժարանի մէջ հայերէնի եւ հայոց պատմութեան ուսուցիչ էր, եւ դասի ժամանակ դասը թողած ազգասիրութիւն էր սովորեցնում, պատասխանեց թէ՝ ինքը սիրում է յեղափոխութիւնը, որովհետեւ սիրում է իր ազգի ազատութիւնը, բայց յեղափոխական ցոյցերով Թիւրք կառավարութիւնը կատղեցնելը համարում էր կորստաբեր իր ազգի գոյութեան համար, ուստի սիրում էր մնալ յեղափոխական, առանց այդպիսի ցոյցերի: Այսպէս էին կարծիքները անոնց, որոնք ծնած էին գաւառների մէջ, բայց ապրած Պոլսում եւ ճանաչում էին երկիրը եւ հայ ժողովուրդը իրենց պայմաններով:

Մեղաւորեան, որի ոտքը առաջին անգամ դրուած էր հողի վրայ Տրապիզոնի մէջ, եւ յետոյ երբեմն Տրապիզոնի եւ երբեմն Բաթումի մէջ, պատասխանեց թէ՝ «Եթէ յեղափոխական ենք անունով, պէտք է այնպէս էլ լինինք նաեւ գործով, եթէ ոչ մեր ընթացքը պիտի լինի պարզապէս կեղծիք, ժամանակ է որ դադարինք Թիւրքէն վախնալէ եւ ցոյց տանք անոր մեր կամքը ցոյցով որքան էլ չնչին լինի այդ ցոյցը»:

Կեցցես Յակոբ, ըսաւ Բարութչեվ, որ այդքան ցոյց սիրում ես. եթէ այդպէս է, ինչո՞ւ անենք հանրային ցոյց Թիւրքի դէմ, որ յետոյ անողները բանուին եւ Թիւրք ոստիկանի ձեռքով

բանտը կոխուէին․ ուրեմն քու փառաւոր մարմինդ ի ցոյց դիր եւ դու վախցրու նրանց: Իսկ ժողովի հիւրընկալը Հրանդ ասեց․ Ընկերներ, դադրեցնենք մեր լեզուական ցոյցերը եւ մեր ատամները գործածենք մի համեստ ընթրիքի եւ մեր կոկորդները՝ Հայաստանի կարմիր գինիով զովացնելու համար, որի մէջ Մեղաւորեանը իւր ախորժակի ամենամեծ սէրը ցոյց տուեց՝ մինչեւ այն աստիճան, որ իւր սեւամազ գլուխն իսկ կարմրելու մօտ էր: Եւ երբ ամէն ոք բաժանուեցաւ, մենք երեքս մնացինք իջնելու վար՝ ծովափը, եւ նաւակով անցնելու Ասիայէն Եւրոպա: Եւ երբ քայլում էինք երեքնիս առանձին, Մեղաւորեան կարծես իր ոտքերի տակ ըզգում էր երկրի շարժումը: Եւ երբ հասանք Վոսփորի ափը եւ ուզում էինք նաւակ բռնել, փոքր ինչ հեռուից մի ոստիկան մօտեցաւ մեզ դանդաղ քայլերով: « Ներայա համշարիլէր, (ո՞ւր, հայրենակիցներ), եթէ կարենաք անցնիլ ջուրի միւս կողմը Ղալաթիոյ ոստիկանատունը պիտի բռնէ ձեզ եւ դնէ իր անախորժ ննջարանի մէջ, ուստի աւելի լաւ է այստեղ իմ մօտ կեցէք, կը գիշերէք իմ ննջարանի մէջ եւ վաղն առաւօտ ձեր երեք եւրոպական գլխարկներով հաճոյքը կ՚ունենաք այցելել մեր ոստիկանապետի մօտ»: Ոստիկանը սկսաւ քայլել եւ Բարութչեվ նրա հետ անմիջապէս մտերմական խօսակցութեամբ եւ ես ու Մեղաւորեան մեղմաքայլ հետեւելով նրանց: Խճիրապատ եւ զորգապատ գետնի վրայ

ծալուած էին երեք անկողիններ եւ հագիւ թէ նստած, Բարութչեան դրպանից հանեց մի մէճիտիյէ եւ առաջարկեց ոստիկանին երթալ եւ մեզ բերել մէզէ եւ մի երկու շիշ գինի: Եւ ասեց, մի բարեկամի մօտ տօնախմբութեան քէֆ էինք կատարում, հիմա էլ այստեղ ձերբակալութեան քէֆը կատարենք: Եւ մինչ այս քէֆը կատարւում էր, Մեղաւորեան արդէն փռուած էր անկողնի վրայ եւ ստամոքսի միջից երկրաշարժի ձայներ էին լսւում: Եւ ահա յանկարծակի արագութեամբ, Եւրոպական կոկուղ գլխարկը գլխէն հանելով, բերնին մօտեցուց եւ կոկորդից ժայթքեց գինելից լաւան:

— Աֆարիմ, ասամ, չուգալիտա պարապար թաշիօր, (կեցցէ մարդ, մեզամանն էլ միասին է պտտցնում), բացագանչեց ոստիկանը ծիծաղելով եւ աւելացրեց՝ «իր այս պատուական քաջութեան համար, առանց ոստիկանապետի այցելութեան, ես ձեզի թոյլ պիտի տամ, որ վաղ առաւօտ առաջին շոգենաւով անցնիք Եւրոպա»:

Ընթերցողը այս գրութեան երեւոյթից հաւանօրէն կարծէ թէ Մայրաքաղաքի հայութեան մէջ գոյութիւն ունէր մի տեսակ յուզում եւ հետաքրքրութիւն այս խնդիրների մասին, եւ թէ մթնոլորտը լի էր քաղաքական կասկածներով, յեղափոխականների շարժումներով եւ ոստիկանութեան կամ լրտեսների հետապնդումներով:

Սրանցից ոչ մէկը գոյութիւն ունէր. մթնո-

լորտը խաղաղ էր, հայ հասարակութիւնը ոչ գիտէր եւ ոչ էլ կխօսէր այդ մասին: Կային մի այն մի կարգ մտաւորականներ, որոնց ամէնը գաւառացիներ էին եւ ո՛չ մէկը Պոլսեցի, եւ շատ տասնեակ բնիկ գաւառացի աննշան ուսուցիչներ, մանր խանութպաններ, խանձի–սրճավաճառներ եւ բեռնակիրներ, որոց խօսակցութեան եւ գործունէութեան գլխաւոր առարկան էր՝ Հնչակի կամ Արմէնիայի գաղտնապէս ստանալը եւ կամ քաջութեամբ մէկ միւսին տալը՝ ընթերցանութեան համար եւ անվախօրէն նամակներով ղրկելը իրենց հայրենի քաղաքներ: Այս էր ամէնը որի հիման վրայ ազգասիրական շարժումները կառուցանում էին Հայաստանի ազատութիւնը:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

ԳՈՒՄ ԳԱԲՈՒԻ ՅՈՅՑԸ

Գիտէինք որ ցոյց էր կազմակերպւում եւ երբ պիտի լինէր օրը, բայց չգիտէինք թէ ի՞նչ պիտի լինէր այդ ցոյցի հրաշալիքը: Խորհրդաւոր գաղտնիք էր պահուած մեզ համար, սակայն տեղեակ էինք որ ցոյցի օրից երկու երեք օր առաջ Խանազատեան, ցոյցի ոգին, թողել էր Կ. Պոլիսը եւ Դարդանէլի միջով գնում էր դէպի Ադրիական ծովը, այնտեղից դէպի Ժընեւի լըճափը, որից փոքր ինչ հեռու Հնչակը իր աղօտավայրից սփռում էր իր լուսաւոր ճառագայթները Կ. Պոլսի իր հաւատացեալների վըրայ: Եւ Յակոբ Մեղաւորեան գնացել էր օդափոխութեան անկախութեան ամարանոցը, որից յետոյ ես երբէք չտեսայ նրան մինչեւ 1909, 19 տարի յետոյ, երբ ես Կովկասից Լոնդոն վերադառնալիս ուզեցի անցնել գահընկեց Սուլթանի մայրաքաղաքով եւ մինչ Բաթում սպասում էի նաւին, լսեցի որ Մեղաւորեան տեղական բան-

կայլի մէջ պաշտօնեայ էր, եւ գնացի տեսայ նըրան եւ հարցրի որ 1890ին ո՞ւր գնաց եւ ինչո՞ւ միայն իր անմարմին հոգին թողուց մեծ ցոյցի ղեկավարութեան համար: Եւ Մուրատ յոգնած լինելով իր ջանքերի գործունէութիւնից, հարկադրուած էր մնալ մթնշաղ լոյսի մէջ, տեսնել ցոյցը հեռատեսիլով եւ լսել աղմուկը հեռաձայնով: Եւ այսպէս, ընդհանուր հրամանատարութիւնը մնաց հայրենի օդով սնած Վանեցի քաջակորով Արթին Ճանկիւլեանին. անյայտ բայց փոքր թուով քաջարիներ հաւաքուեցան Գում Գափուի հայոց կիսափայտաշէն Պատրիարքարանի դրան առաջ եւ արշաւեցին գաւիթի ներսը եւ այնտեղից մի քանի աստիճաններ բարձրանալով, ներխուժեցին Պատրիարքարանի դահլիճը, ուր հանդիպակաց ճակատը փառաւորուած էր Սուլթան Համիդի կայսերական գինանշանը՝ նոր նուիրուած Սուլթան Համիդի կողմից՝ Թրքահայոց Պատրիարք Խորէն Արքեպիսկոպոս Աշըգեանին:

Ինչպէս ամեհի առիւծը յանկարծ իր առաջ կը գտնէ մի ոչխար կամ մարդ եւ կատաղօրէն ցատկէ նրանց վրայ՝ պատառ պատառ անելու այնպէս եւ Ճանկիւլեան ցատկեց քաջարար անկենդան գինանշանի վրայ, վայր առաւ եւ խորտակեց իր ոտքերի տակ: Պատրիարքարանի պաշտօնեաներ անզօր էին դիմադրաւել այս արշաւանքին: Պատրիարքը սարսափից մտել էր իր ննջարանի մէջ. հերոսը իր թիկնապահնե-

րովներս մտաւ եւ դուրս քաշեց սրտադող Պատ-րիարքին.—

Եէլլահ, Պատրիարք, քէլէ մեզ հետ Սուլ-թան Համիտի պալատը եւ խասկցուր անոր որ մենք կը պահանջենք մեր հայրենիքի բարենո-րոգումը եւ ազատութիւնը: Պատրիարքը եւ ի-րայինք որ անդ էին, աշխատեցին համոզել այդ ընթացքի յիմարութիւնը եւ վնասակարութիւ-նը, բայց ի զուր: Ճանկիւլեան կրկնեց.

—Ատանկ բաներ շատ լսած ենք, էսկից յե-տոյ էլ չենք խամբերի, իրիչքի էս բախշիշին, որ առիր Թիւրք Թագաւորի ձեռքից, ինչի որ էտա ջարդ ու բշուր արի, էնպէս պիտի անեմ էս քեզ բախշիշ անող բատիշահին»:

Այդ միջոցին, զինանշանի դիակի առաջ կանգնած մի երկայն եւ վայելչագէմ երիտա-սարդ, գաւառացի երեւոյթով, զինանշանի բե-կորներ առնելով, զուարճալի հետաքրքրու-թեամբ նայում էր քննական աչքով; եւ մի եր-կու կտոր հաճոյքով դրեց իւր գրպանը, իւր աչ-քերը ուրախութեան ժպիտով դարձնելով Ճան-կիւլեանի եւ Պատրիարքի վրայ: Ինչո՞ւ գրպա-նեց եւ ի՞նչ էր դիտաւորութիւնը. արդեօ՞ք երբ պալատ երթար կ՚ուզէր ցոյց տալ Սուլթանին իւր զինանշանին ճակատագիրը, եթէ ոչ փա-փաք ունէր բարձր գնով ծախել մի կեսարացի հնավաճառի, որ նա եւս իւր կարգին ամենա-բարձր գնով վաճառէր Փարիզի Լուվր կամ Լոն-

դոնի Բրիտանական Մուզէին։ Սրա անունն է՝ Արթին էր, սեբաստացի դերձակ եւ խելքով կիսատ։

Պատրիարքի համար կառքը սպասում էր դուրսը։ Պատրիարքին դժուարութեամբ կառքի մէջ կոխեցին եւ Ճանկիւլեանն էլ նրա կողքին. եւ յաղթական թափօրը յառաջացաւ։

Այս պատմական դէպքից գրեթէ մի ամիս առաջ ես արդէն բացակայ էի եւ գտնւում էի Կովկասում, բայց ոչ միեւնոյն նկատումներով, որպէս էին ցոյցի հեղինակները, քանի որ կողմնակից չէի։ Բայց մօտաւոր մանրամասնութիւնը լսեցի դէպքից երեք տարի յետոյ, Աքիայի միջնաբերդում եւ Կարապետ Նաթանեանի ձայնով։ Այս անձը, նոյնպէս Վանեցի, քաղաքի նշանաւոր անձերից մէկն էր, մի կատարեալ հակապատկեր Ճանկիւլեանին։ Կարապետ Նաթանեան, անդամ Վանի կուսակալութեան Վերաքննիչ Ատեանին եւ լինելով հակառակորդ նահանգապետ Բահրի փաշայի քաղաքականութեան Կ. Պոլսոյ կառավարութեան մօտ նրանից ամբաստանուեցաւ իբրեւ հայ յեղափոխական եւ դատապարտուեցաւ տասնեւհինգ տարուան բերդարգելութեան Աքիայում, քաւելու իր հակա-բահրիական մեղքը։

Նաթանեան այդտեղ պատմեց ինձ թէ՝ այդ դէպքի միջոցին գտնւում էր Կ. Պոլսում, եւ կարծեմ ասեց թէ՝ ինքը Բաբ Ալիի փողոցի վր-

րայ էր, երբ հազիւ հեռացած Պատրիարքարանէն, այդ Թափօրը յառաջանում էր, եւ հանդիպակաց կողմից երեւեցան մի գունդ զինուորներ սուինաւոր հրացաններով, որոնց երեւումին վրայ, հետաքրքրութեան համար Թափօրին պատահարար հետեւողներ սկսեցին ետ երթալ ու հեռանալ, եւ տեսաւ մի քանիսին որ ունէին ատրճանակներ եւ ձգում էին պատերի տակ։ Ոստիկաններ հրամայեցին հետեւողներին եւ ետ դարձրին կառքը որտեղից որ եկած էր։ Եւ Թափօրը այսպէս փոխանակ այցելութեան երթալու Սուլթան Համիդին բողոքի աղաղակներով, հնազանդ գառների նման բռնեցին Գում Գափուի ճանապարհը՝ քալելով հրացանակիր զինուորների առաջից։ Եւ երբ հասաւ Պատրիարքարան եւ մտան դահլիճը, այնտեղ ենթարկուեցան հարցաքննութեան թէ ո՞վ էր զինանշանի անարգողը եւ ցոյցին մասնակցողները։

Տաճատ վարդապետ արդեօք պաշտօնեա՞յ էր պատահարար գտնուեցաւ այնտեղ, յայտնեց թէ ով էր զինանշանը խորտակողը։

Այսպէս Ճանկիւլեանի եւ այլ գործակիցների հետ ձերբակալուեց նաեւ սեբաստացի դերձակ Արթինը, որ գործակից չէր, այլ միայն հետաքրքրութեան համար հետեւած էր խմբին դէպի Պատրիարքարանը։ Եւ զինանշանի բեկորը գրպանին մէջ կոխելու յանցանքին համար դատապարտուեց տասն տարուան՝ քաւելու իր

մեղքը Աքիլայի բերդում: Եւ մի քիչ հեռուն, եղեռնագործների բանտում 101 տարուայ բանտարկութեամբ շղթայակապ ապրում էր միւս Արթինը, գլխանչանի մեծ ոճրագործը:

Այսպէս, երկու Արթինների հետ, ցոյցի զոհերից մի երրորդը, Թոքախտաւոր, իրաւաբանութեան ուսանող, Գրիգոր Գըլըճեան եւս վայելում էր Աքիլայի բերդային մթնոլորտը: Կարապետ Նաթանեան ողբաց որ հայ կեանքը աղէտների ենթարկող այսպիսի անձեր լինում էին հերոսներ, որպիսին էր Ճանկիւլեան, մի անձ, ասեց նա, որ Վանի մէջ անուն ունէր իրրեւ Փախուկ Արթին:

Եւ սակայն այդ ցոյցը Հնչակեան Կուսակցութեան յեղափոխական յուզիչ գործերու փառապսակն էր, ուստի նա ոչ ոքի իրաւունք պիտի տայ անարգել իր գործունէութեան այդ յաւիտենապէս անթառամ պսակը:

Այդ դէպքը, աստիճանաբար բացաւ նորանոր ձերբակալութիւնների առիթներ եւ հնարաւորութիւններ. ձերբակալեալների մօտ գըտնըւեցան թուղթեր որ կամ Հնչակի թերթեր էին կամ փոքրիկ գրութիւններ ընկերական ժողովների, յեղափոխական խուչալների մասին եւ կամ գաղափարի փոխանակութիւններ թէ ինչպէ՞ս այդ խուչալները կարելի էր իրականութեան վերածել. Թէեւ ամէնը օդային, բայց կառավարութեան համար նկատւում էին դաւադրական շարժումներ: Եւ այդ շարժումները մը-

ղում էին զանազան հայեր դէպի ձերբակալութիւն եւ դէպի բանտ:

Այդպիսիների մէջ արժանի է յիշատակել նրանցից միմիայն մէկը,—Մամբրէ վարդապետ, որ կապ ունէր եւ որի անունը խառնուած էր այդ շարժման մէջ: Այդ միջոցին ճանապարհի վրայ էր եւ գնում էր Կարին կամ Հայաստանի մի այլ քաղաք՝ հովուական պաշտօնով: Եւ տակաւին պաշտօնատեղին չհասած, կառավարութեան հրամանաւ ետ բերուեց Կ. Պոլիս: Լինելով եկեղեցական, Ոստիկանութեան Նախարար Նազըմ բէյ, որ իւր արուեստի մէջ ճկուն եւ ճարտար հրապոյրներ ունէր, անձամբ հարցաքննեց Մամբրէ վարդապետին, որ Նազըմի կախարդական խօսքերի՞ թէ խոստումների ազդեցութեան տակ, խոստովանեց թէ ինք սխալուած էր իր ընթացքին մէջ, թէ հայ ժողովրդի շահը պահանջում էր հաւատարիմ լինել Սուլթանի կառավարութեան, եւ թէ ինք այնուհետեւ պատրաստ էր ծառայել պետութեան շահերին՝ ընդդէմ արտասահմանից ներս մտած կամ արտասահմանից ներշնչուած անձերին եւ գործերին, այսինքն հրապարակաւ ճանաչուել լրտես՝ առանց ամչնալու: Եւ դարձաւ ոստիկանութեան պաշտօնեայ՝ կղերական զգեստով: Եւ մինչեւ 1892 Մարտ 14, երբ ես ձերբակալուեցայ, երկրորդ եւ վերջին անգամ նա տակաւին անունով եւ մօրուքով վարդապետ էր, բայց ոչ զգեստով:

ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԻԴԻ ԽՐԱՏԸ ՀԱՅԵՐԻՆ

1890ի ամառից յետոյ, Թիւրք կառավարութեան ցայն վայր անհոգ տրամադրութիւնը զգալապէս փոխուեցաւ խստութեան եւ լուրջ մտածութեան: Եւ կառավարութեան պաշտօնեաները այդպէս ալ տպաւորեցին Սուլթան Համիդի միտքը, մինչ այն աստիճան, որ նա որոշեց եւ իւր մօտ կանչեց Պոլսոյ հայ հասարակութիւնից եօթն նշանաւոր անձեր, որոնցից այժմ միայն երեքն եմ յիշում, — Յարութիւն բէյ Տատեան՝ յայնժամ Արտաքին Գործոց նախարարի օգնական եւ ապա նախարար, Գաղատալըեան ,դեսպանական օգնական էր Բալկանեան պետութիւններից մէկի մօտ, եւ Յովհաննէս Էֆէնտի Նուրեան՝ անդամ Պետական Խորհրդի: Այդ խօսակցութեան մանրամասնութիւնները ինձ պատմեց Յովհաննէս Նուրեան, որ մասնա-

ւոր համակրութիւն եւ վստահութիւն ունէր դէպի ինձ: Մանրամասնութիւնները միտքս չեն բայց ընդհանուր տպաւորութիւնը այսպէս էր. թէ Սուլթանը յայտնեց թէ՝ ինք իր հաւատարիմ հայ ժողովրդի վրայ մասնաւոր համակրութիւն ունենալով, շատ ցաւում էր, որ այդպիսի անհաւատարմութեան նշաններ երեւում էին իրենց մէջ,՝ եւ յատկապէս Եւրոպայի մէջ թերթեր հրատարակում էին իր տէրութեան դէմ, եւ փափաք յայտնեց, որ հող տանէին արգիլել երկրի մէջ այդ թշնամական զգացմունքի տարածումը եւ խրատէին Եւրոպայի այդ խըռովարարներին դադրեցնել իրենց թերթերը եւ հրաժարէին իրենց թշնամական ընթացքից Թիւրքիոյ դէմ:

Հայ ներկայացուցիչները իւրաքանչիւրն իր կարգին ջանաց բացատրել թէ եղածները անկարեւոր տղաքների եւ բանից չը հասկացող մարդկանց գործեր էին եւ թէ չարժէր որ Նորին Վեհափառութիւնը կարեւորութիւն ընծայէր այդ բաներին եւ դրոյցներին, թէ նրանցից շատեր մինչեւ իսկ Նորին Վեհափառութեան հպատակներ չէին, այլ ռուսահպատակներ: Նուրեան այդ մասին աւելի յառաջ գնաց ու յայտնեց թէ, եթէ երկրի մէջ կան դժուարութիւններ, դրանց պատճառն է Ֆրիմի պատերազմէն յետոյ հաստատուած կապիտուլասիոնը, որով եւրոպական մեծ տէրութիւններ իրաւունք են համարում խառնուել Օսմ· կայսրութեան ներքին

գործերում եւ ցոյց տալ թէ՝ ազդեցութիւն ունին երկրին վրայ, եւ օսմանեան հպատակ հաւատարիմ մի հայի պակաս կարեւորութիւն կ'ընծայուի պաշտօնեաների կողմից, քան օտար տէրութեանց հովանաւորութիւնը վայելող այդ հպատակ հայերը: Եւ այդ կապիտուլասիօնը մի չարիք է որ հրապուրում է հաւատարիմ հայ ժողովրդին իր աչքերը դարձնել դէպի Եւրոպական տէրութիւնները: Եթէ դադարի այդ չարիքը, ոչ մի հայ իւր երեսը չի դարձներ դէպի Եւրոպա: Եւ եթէ այդ բանը ստեղծուած չլինէր, երկրի մէջ խռովութեան եւ անհանգստութեան ոչ մի ոգի չէր բարձրանար:

Այդ ընդունելութիւնից յետոյ, Թիւրքիոյ Հայոց Ազգային Կեդրոնական Վարչութիւնը, Կայսերական կամքը յարգելու համար, Պատրիարքի հետ խորհրդակցաբար, մի Պատուիրակութիւն ղրկեց Եւրոպա՝ համոզելու Հնչակի խմբագրութեան եւ միւսներին, որ վերջ տային իրենց հակա-թիւրքական գործունէութեան: Բայց Պատուիրակութեան խնդիրքը ենթարկուեցաւ արհամարհանքի եւ ձեռնարկը եղաւ ընդունայն: Եւ պատուիրակները կոչուեցան թրքամոլ: Եւ անհատներ շարունակում էին ձերբակալուիլ Պոլսոյ մէջ: Եւ սակայն գաւառներում, առանց սեւէ նշանակելի ազդեցութիւն գործելու ընդհանուր վիճակի վրայ, որ գրեթէ նախկին խաղաղ հանդամանքով շարունակւում էր:

ԻՇԽԱՆ ՆԻԿՈՂԻՄՈՍ ԱՄԱՏՈՒՆԻ

Գում Գարուի դէպքից քիչ ժամանակ յետոյ, Կովկասից վերադարձայ եւ զարձեալ Պոլսոյ մէջ էի, ուր նկատեցի որ մեզ նման մտածողների կարծիքով, ամենուրեք երեւակայական եւ թէ իրական լրտեսներ էին երեւում, որպիսիներից մէկը՝ Վահան Ոսկեմատն՝ Փրանսերէն Սթամպուլ թերթի խմբագիրներից մէկը, որին լաւ ծանօթ էի, շատ համակրելի եւ հայրենասէր մի անձ էր, ու զարմացայ որ նա եւս լրտեսների շարքին մէջ էր դասւում:

Մի երեկոյ մտայ մեր սիրելի սրճարանը, որ Բերայի գլխաւոր փողոցի վրայ էր եւ Հայ եկեղեցւոյ շէնքի մէկ մասն էր կազմում: Հանդիպակաց սեղանի վրայ իմ աչքերն ինկան Ոսկեմատի վրայ եւ նրանն՝ իմ վրայ, եւ ձեռքի բարեկամական շարժումով ինձ հրաւիրեց իր մօտ, եւ ակամայ սեղանակից եղայ իրեն: Իր գլխաւոր խօսակցութիւնը եղաւ թէ հայկական դէպքերը, այսինքն նորանոր բանտարկութիւններից

երեւցող յեղափոխական յայտնութիւնները, ինչպիսի տպաւորութիւններ էին թողել Թրքական շրջանների վրայ, պալատին մէջ եւ պալատից դուրս: Ես աւելի լսում էի եւ զգուշանում էի որեւէ կարծիք արտայայտելուց, որովհետեւ այդպիսի խօսակցութիւններ մի այդպիսի կասկածոտ ժամանակ, այդպիսի տեղում, բաւական լսելի ձայնով, ինձ շատ լաւ չէին թւում:

Երբ դուրս ելանք եւ բաժանուեցանք, նա դէպի ձախ եւ ես դէպի աջ, Ու հազիւ թէ մի քանի քայլ էի արել, երբ մէկը յետեւից ուսիս զարկաւ, եւ ես յետ դառնալով տեսայ իմ առաջ մի անսովոր անձնաւորութիւն, վրացի իշխանի զգեստով, նրանց անսովոր մորթէ գլխարկով, սեւ եւ մարմնին կպած կովկասեան չերքէզական չուխան, կուրծքի երկու կողմերը զարդարուած արծաթազարդ փամփուշտների շարքերով եւ արծաթաշող գօտիից կախ ունենալով նոյնպէս արծաթազարդ պատեանով դաշոյն, եւ այդ համազգեստին յատուկ երկայնաւիզ կօշիկներ ոտներում:

— Դուք Պր. Տօնապետեանն էք, ասեց, էգուց գալու էի ձեզ գտնել, բայց հիմա գտայ· Ես իշխան Նիկողիմոս Ամատունին եմ եւ ճանաչում էի ձեզ, երբ շատ փոքր էիք:

— Բայց ի՞նչից ճանաչեցիք ինձ, հարցրի զարմանքով:

— Սրճարանում նստել էի ձեր ետեւ, նրանից հասկացայ թէ ո՞վ էք դուք· բայց ո՞վ էր

էդ մարդը, հարցրեց նա, ինչպէս երեւում էր, կարեւոր մի անձնաւորութիւն էր, որ այնպէս տեղեակ էր պալատի մէջ եւ պալատից դուրս եղած խօսքերին: Եւ այսպէս քայլելով միասին Բերայի ոստիկանութեան առաջով, գնացինք դէպի հիւրանոցը: Երբ ոստիկանութեան առաջ տեսաւ հրացանակիր պահակ ոստիկան, հարցրեց թէ միթէ՞ կասկածի տակ չէի մտներ իր նման հագուստով մարդի հետ քայլելու համար: Պատասխանեցի թէ՝ վիճակը այնպէս էլ վատ չէ եւ այդ տեսակ բաների վրայ կասկածող չկայ:

Երբ հասանք իր մօտ, յայտնեց թէ՝ ինք գալիս էր Պետերբուրգից յատկապէս ,ուր Խատիսեանի, Քաջազնունու, Զաքարեանի եւ միւս գաղափարակիցների հետ խորհրդակցելուց յետոյ, եկել էր իմանալ թէ՝ իսկապէս ի՞նչ պատրաստութիւններ կան այստեղ ճշմարիտ յեղափոխական ցոյցի եւ Հայաստանի դատի յաջողութեան համար:

Ես պատասխանեցի թէ ինչպէս Պետերբուրգի հայ գաղափարականները չեն կարող պատրաստութիւն ստեղծել, Ռուսական Հայաստանը Ռուս պետութեան ձեռքից առնելու համար, նոյնպէս էլ մենք չենք կարող պատրաստութիւն ստեղծել՝ Թիւրք տէրութեան ձեռքից Հայաստանը ազատելու համար: Իմ կարծիքով, մեր բոլոր պատրաստութեան պաշարները մեր հայրենասիրութեան զգացում-

ներն են, թէ այդ զգացումներով մենք ի՞նչ յաջողութիւններ կարող ենք ձեռք բերել՝ մի Հայաստան ստեղծելու համար, ձեզ եմ թողնում երեւակայել: Ես եւս նոր վերադարձայ Պոլիս, եւ վերջին փոթորիկների հետեւանքով, մեր զգացումների գունդերը ցրուած են, բայց կարող եմ ներկայացնել մի բարեկամ, որ թերեւս նրա միջոցաւ փոքր ինչ գոհացում ստանաք ձեր նպատակի հետաքրքրութեան համար:

Հետեւեալ օրը կանչեցի Մելքոն Կիւրճեանին Ամատունիի հիւրանոցը եւ յայտնեցի խնդիրը, որ ինքը տանէր իշխանին եւ ներկայացնէր իրենց կազմակերպութեան անդամներին, որոնց հետ որ կապ ունէր:

Կիւրճեան պատասխանեց թէ՝ անշուշտ դու էլ միասին պիտի գաս, քեզմէ գաղտնիք չունինք:

Հետեւեալ առաւօտ, Կիւրճեան դարձաւ եկաւ հիւրանոց, եւ կարծես տատամսութեան մէջ էր մի որոշ պատասխան տալու, եւ ես ըզգացի, որ որոնց որ տեսած էր, նրանք չէին ուզել որ ես ալ միասին երթայի: Ուստի, առանց նրա այլպէս ինձ հասկացնելուն, ես ասեցի որ դուք գնացէք. եւ դարձայ իշխանին ասելու, որ երեկոյեան իրեն կը տեսնեմ: Եւ Կիւրճեան չկրկնեց նախորդ օրուայ իր խօսքերը՝ որ ես ալ երթայի եւ թէ ինձանից ոեւէ գաղտնիք չկար: Եւ գնացին երկուսը առանձին:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Երեկոյեան, երբ վերստին հանդիպեցի Պետերբուրգի պատգամաւորին, նա ընաւ խօսք չբացաւ թէ՝ ո՞րոնց տեսել էր եւ ի՞նչ էր եղել տեսակցութիւնը: Ես ալ ընաւ հետաքրքրութիւն ցոյց չտուի: Նա միայն այսքան յայտնեց թէ՝ ես ծանօթացայ ձեր մի մտերիմ ընկերոջ հետ՝ Բաչալեանին, որ մի շատ համակրելի երիտասարդ էր, եւ հրաւիրեցի որ վաղը Կիւրճեանի հետ միասին ճաշի գար մեզի:

Ես չափազանց զարմացայ թէ ո՞վքեր էին այդ խորհրդաւոր յեղափոխականները, որոնց մէջ գտնւում էր նաեւ Լեւոն Բաչալեան, որի հետ արդարեւ շատ լաւ ընկերներ էինք, տարիներով լինելով գործակից-ընկերներ «Արեւելք»ի խմբագրութեան մէջ. բայց, ըստ իս, նա ամենավերջին անձն էր, որ կարող էր մտա եւ սիրտ ունենալ այդ տեսակ մի գործի մէջ մտնելու: Եւ միտքս լցուեց կասկածով եւ վըրդովմունքներով իշխան Ամատունիի այցելութեան եւ նրա մարդոց վրայ:

Երկար ժամանակից ի վեր Բաչալեան ծախսում էր չափազանց աւելի, քան իր սեփական միջոցն էր ներում եւ նախկին սովորութիւնից բոլորովին դուրս: Երրորդ կարգի սիկարէթի փոխարէն սկսել էր ծխել Էքսթրա սիկարէթ, ինչ որ հարուստների յատուկ էր: Մեր սովորական ճաշարանը թողել էր եւ ճաշում էր եռապատիկ աւելի թանգ մի եւրոպական ճաշարանի մէջ, եւ մի արտասովոր մտերմութիւն էր հաս-

տատանել նրա եւ Արփիարեանի միջեւ, որը նախապէս երբէք ճաշարան չէր գնում, այլ տունից էր բերում իր ուտելիքը. եւ աջ ու ձախ պարտքեր ունէր, եւ պարտատէրներն գալիս էին ամէն շաբաթ եւ ետ էին դառնում ձեռնունայն: Նրա այս վիճակն էլ կախարդական գաւազանով բարեփոխուել էր: Ի՞նչ էր գաղտնիքը, չէի կարող թափանցել:

Հետեւեալ օր Բաշալեան եւ Կիւրճեան եկան եւ մենք կերանք ու խմեցինք իբրեւ Ամատունիի հիւրերը, եւ մեր խօսակցութեան մէջ երբէք ակնարկութիւն չեղաւ նախորդ օրուայ նրանց խօսակցութեան մասին: Եւ այսպէս խնդիրը մնաց ինձ համար մի անհասկանալի գաղտնիք, մինչեւ որ մի տարի յետոյ գաղտնիքը բացուեց ինձ համար Պետերբուրգից եկած ոսկեխնդիր բանալիով Եւ Բաշալեանի շռայլութեան գաղտնիքը երեք տարի յետոյ Աքիլայի բերդում պատուական թոքախտաւոր բանտակից Գրիգոր Գըլըճեանի յայտնութեամբ:

ՅԱԿՈԲ ՎԱՐԴ - ՊԱՏՐԻԿԵԱՆ

Այդ ժամանակի օրերից շատ հեռու եմ այժմ, մարդեր մեռած են կամ անհետացած, եւ իմ յիշողութիւնը թառամած՝ մտաբերելու այդ շըրջանի դէպքերը իրենց կարգով: Բայց յիշում եմ միջազգային մարդերով չարժուող Ղալաթիոյ քարափի մօտակայ փողոցի մէջ քայլելիս յանկարծ եկայ դէմ առ դէմ էջմիածնայ ճեմարանի ընկերակից, Աղեքսանդրապոլցի Յակոբ Վարդ-Պատրիկեանին: Հայաստանը Սուլթանի իշխանութիւնից առնելու երազով Պոլիս եկած ամենաոգեւորեալ զինուորներից մէկն էր, եւ առաջինն որ այդտեղ, Արդէն Համիդի մայրաքաղաքին մէջ, փորել տուաւ Հնչակեան Կուսակցութեան ահաւոր կնիքը, նոյնպէս մի ուսահայի ձեռքով, Երեւանցի Մատթէոս Արքեպիսկոպոս Տէր Մատթէոսեանի Կովկասից փախըստական կեղծանունով, Անդրանիկի եղբօր Արշակ Մուրատեանի ձեռքով: Իւր յեղափոխականի անզգոյշ ոգեւորութեան հետեւանքով՝ իր

խորհուրդների եւ արարքների մէջ ընկած էր նաեւ այնպիսի անձերի հետ, որոնց ձեռքով Թակարդի մէջ բանուելու ամէն վտանգ ունէր, ուստի եւ Թիւրք ոստիկաններ ամենայն դիւրութեամբ պատիւ ունեցան ձերբակալել նրան։ Լինելով ռուսահայ, իր ետին ունէր Ռուսական կայսրութեան ուժը։ Իւր անվախ բնաւորութիւնը առիթ ստեղծեց նրան ,որ Թրքական դատարանի մէջ, ամենայն համարձակութեամբ յայտարարէր թէ՝ իր գաղափարի նըպատակն էր անկախ Հայաստանի կանգնումը օսմանեան հողի վրայ։

Առ հասարակ, հայ բանտարկեալների դատավարութեան առթիւ, Թրքական թերթերում յիշատակութիւն չէր լինում, եւ սակայն տարօրինակօրէն, Վարդ-Պատրիկեանի դատավարութիւնը եւ նրա ամէն խօսքերը հրատարակւում էին բոլոր Թիւրք հետեւաբար եւ հայ թերթերի մէջ։ Զարմանալի էր որ նրա այս յանդուգն ազատութեան խօսքերը՝ Հայաստան ստեղծելու մասին, այսպէս բացարձակ թոյլատրուած էին։ Թիւրքեր՝ սրճարանների մէջ եւ Թիւրք թերթեր իրենց էջերում, գովաբանում էին Վարդ-Պատրիկեանի այս համարձակախօսութիւնը։ Կեցցէ՛ մարդը, կը գոչէին։ Թիւրք կառավարութիւնը չկարողացաւ դատապարտել նրան։ Ռուսական դեսպանատունը պահանջեց նրա յանձնումը՝ իրեն։

Երբ մի օր անցնում էր Ռուսական հիւպա-

տուսարանի պարտէզի դրան առաջով, զարմացմամբ տեսայ, որ դրան դրսում Վարդ-Պատրիկեանը յենած էր երկաթեայ վանդակին. եւ նա կանչեց ինձ եւ յայտնեց թէ թիւրք կառավարութիւնը պարտաւորուեցաւ յանձնել զինք Ռուս. հիւպատոսարանին եւ թէ՝ հիմա պիտի մեկնէր Ռուսաստան: Այն միջոցին, հիւպատոսը, որ ճանաչում էր ինձ, եւ դրսից ներս էր մտնում, յայտնեց որ ես կարող էի երթալ ներս եւ Վարդ—Պատրիկեանի հետ խօսակցիլ: Մեր խօսակցութեան ժամանակ, ընկերս պատմեց թէ՝ ինք յոյս չունէր որ ազատ պիտի թողուէր Ռուսաստան գնալուց յետոյ, թէ հաւանօրէն պիտի աքսորուէր Սիբերիա կամ այլ ուրեք: Եւ այնպէս էլ եղաւ:

Սիբերիա երկար աքսորից յետոյ, նրա աքսորավայրը փոխուեցաւ հիւսիսային Կովկաս, ուր կային հայ բնակիչներ, եւ առիթը գտաւ ու փախաւ Ցարի սահմաններից դուրս՝ Զուիցերիոյ ազատ հողին վրայ, ուր իւր հին յեղափոխական ընկերներից շատեր՝ անջատուած իրենց հին հաւատքից, ստեղծել էին Հայ յեղափոխութեան նոր Դաշնակցութիւնը՝ Ժընեվի մէջ: Իմացած էր որ ես Աքիայի բերդից փախստական, գտնւում էի Լոնդոնում, եւ անդամ մեր Մայր Կուսակցութեան, Հնչակեան Կեդրոնին. նա գրեց ինձ որ թողնէի Հընչակեանութիւնը եւ նրա նման միանայի մեր վաղեմի ընկերներին: Ես գրեցի իրեն թէ մեր յեղափոխական կուսակցութիւնները կարող

ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

էին հայ ժողովրդի կուսակցութիւններ դառնալ, երբ նրանց ներկայ ղեկավարները ձախաւելով մաքրուէին իրենց կեդրոններից, նաեւ այն կեդրոնը, ուր ես էի:

Ընդ երկար Դաշնակցութեան ժընեվի մեծերի հետ միասին, ինչպէս մեծերից մէկը, եղաւ խորհրդակից եւ սեղանակից, եւ ապա Արեւելեան Բիւրոյի պետը, եւ ապա իր Վառնայի թերթին մէջ քննադատելով ժընեվի Կոմիտէի դրամական զեղծումները ամենախիստ լեզուով, սպաննուեցաւ իր բազմամեայ ընկերների տէրօրիստական դաշոյնով: Եւ ժընեվն էլ սպաննութիւնից յետոյ ամբաստանեց նրան դրամական զեղծարարութեամբ: Թէ ո՞րն է ճշմարիտը, խնդիր չէ, բայց անհերքելի ճշմարտութիւնը այն էր որ Վարդ—Պատրիկեանը իր լեզուի ձայնով թիւրք կառավարութեան եւ Թրքահայ աշխարհին ցոյց տուեց յեղափոխական սրտի մեծութիւնը գործնականապէս: Տարիներով տառապեց Սիբերիոյ սառնամանիքների մէջ՝ նոյն իտէալի համար. փախաւ Ռուսաստանից՝ մղուած գործելու իր սուրբ գաղափարի համար: Բացի լեզուական մեծափառ դատարկութիւնից ուրիշ ի՞նչ իրական գործ էին կատարել ժընեվի այդ մարդիկը, որ իրենք իրենց արժանի համարէին անխղճօրէն սպաննել տալու մէկ ընկերը, որ կընոջ, եւ բազմաթիւ զաւակների հայր էր:

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐԵԱՆ

Մեր դժբախտ յեղափոխութեան սեւ մըթնոլորտի ամենավիճեալ անձերից մէկն էր Արփիար Արփիարեան, որպէս յեղափոխական եւ հակայեղափոխական. Նկատուած միանգամայն թէ մատնիչ եւ թէ յեղափոխական: Չեմ գիտեր թէ ո՞վ աւելի լաւ ճանաչում էր նրան քան ես, եւ ո՞վ աւելի վայելած էր նրա պատուական ծերունի մօր հիւրընկալութիւնը. Եւ թէեւ վաղուց բաժնուած աշխարհքից, ես ցաւում եմ որ նրա անունը իւր ընթացքով այնպէս արատաւորուեց, նրա վախկոտ եւ յեղյեղուկ բնաւորութեան հետեւանքով, ապա յամառ եւ անձնավնաս: Նրան պարտական եմ որ ես դըտայ իմ առաջին գործը Արեւելքի խմբագրութեան մէջ: Գրիգոր Նիկողոսեան, Զօրավար Լազարէֆի թիկնապահը 1878ի պատերազմին Էրզրումի գրաւման ժամանակ, որ այդ միջոցին նոյնպէս Հայկական Խնդրի հետեւանօք

ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

Թողած էր Կովկասը եւ հրապուրուած էր դէպի Պոլիս, եւ պաշտօնեայ էր ռուսական նամակատան մէջ, որպիսին ունէին Մեծ պետութիւնները Պոլսոյ եւ Թիւրքիոյ ծովեզերեայ քաղաքների մէջ։ Թէեւ նա եւ Արփիար մտքի յատկութեամբ ներհակ էին միմեանց, բայց երկուսն էլ Մշակ թերթի թղթակցութեամբ կուսակիցներ էին։ Իրենց խօսակցութեան ընթացքում յառաջացաւ, որ ես Արեւելք թերթի մէջ լինէի աշխատակից ռուսահայ կեանքի վերաբերմամբ, մանաւանդ ծանօթ լինելով ռուսերէն լեզուին՝ ռուսական լուրերի համար։ Արփիարեան լինելով Արեւելքի վարչութեան անդամ, սիրով ընդունեց այդ գաղափարը եւ առաջարկեց վարչութեան՝ իմ ընտրութիւնը։ Այս մասնակցութեան հետեւանքով, շատ անգամ շաբաթից մինչեւ երկուշաբթի, անցնում էի ժամանակը իր եւ իր Ալեքսան եղբօր տան մէջ, որ Պատրիարքարանի երկրորդ քարտուղարն էր. եւ նրա Ակնցի ծերունի պատուական մայրը գուրգուրում էր իմ վրայ որպէս մայր, եւ միւս երկու զաւակների հետ վայելում նրա ընտիր հայկական կերակուրները, որոց պատրաստութեան համար Ակնցի խոհարարներ համբաւաւոր էին Թիւրք փաշաների պալատներում։

Այդ հիւրընկալութեան օրերում, ես աւելի ժամանակ անցընում էի եղբօր, կնոջ եւ մօր հետ՝ եւ շատ քիչ՝ իրեն հետ։ Արփիարեան

նստում էր սենեակում եւ կարդում ֆրանսերէն վէպեր. գրեթէ բազմաթիւ էջերում տողեր մատիտով ընդգծուած էին լինում եւ բառեր աւելացուած: Ես առաջ չէի հասկանում թէ՝ ինչո՞ւ էր անում այդ բոլոր նշանները, բայց կամաց կամաց հասկացայ, որ նա նշանակում էր հեղինակների ընտիր ասութիւնները, որ քաղէր եւ յարմարցնէր նրանց իրեն համար մի վէպ հեղինակելու կամ յօդուածներ շարելու նպատակաւ:

Այդքան հիւրընկալութիւն ունենալով մէկ-տեղ, ես չէի սիրում Արեւելքի մէջ նրա գրած յօդուածները, թէեւ իր հեղնական եւ ծաղրա-յին ոճի պարունակութեան համար անմեղ մարդոց եւ դէպքերու դէմ, ախորժելի էին թւում ուրիշ շատ ընթերցողների: Այսպիսի պարագաներում, յաճախ իր նիւթի մէջ ար-տայայտւում էր այնքան անարդար, անիրաւ եւ դատապարտելի, կեղծելով ճշմարտութիւ-նը, որ ես լցւում էի վրդովմունքով եւ զզուան-քով, եւ զգացումս բացարձակապէս յայտնում էի իրեն եւ մեղադրում: Սրանց մէջ կային ո-րոշ արդար եւ արժանաւոր նշանաւոր անձեր, ինչպէս ազգից ընտրուած եւ Ցարից մերժուած Մելքիսեդեկ Արքեպիսկոպոս Մուրատեան, ընտիր գրագէտ եւ խմբագիր Մատթէոս Մա-մուրեան, յետագայ Պատրիարք եւ Կաթողի-կոս Մատթէոս Իզմիրլեան, եւ Ռէթէոս Պէր-պէրեան, Մէզպուրեան, որոնք իրենց հիմնած

արական եւ իգական դպրոցներով շնորհած էին Թրքահայ հասարակութեան հարիւրաւոր ընտիր կրթութեամբ անձնաւորութիւններ, որոնց մէջ էր նաեւ Արփիարեանի ամենասիրելի Լեւոն Բաշալեանը:

Չեմ յիշում թէ Վարդ—Պատրիկեանի դատավարութեան միջոցին թէ՞ յետոյ եւ ի՞նչ բանից յառաջանալով, բազմաթիւ մարդիկ ձերբակալուեցան, ի մէջ որոց Խորէն Արքեպիսկոպոս Նար Բէյ, նոյնպէս եւ Արփիարեան. եւ այդ առթիւ Լեւոն Բաշալեանի անակնկալ փախուստը Կ. Պոլսից բաւական զարմանք եւ ծիծաղ պատճառեց Արեւելքի շրջանակի երիտասարդ գրագէտներին, ի մէջ որոց եւ յատկապէս յիշում եմ Գրիգոր Զոհրապ, որ յայնժամ ոչ մէկ հոգ եւ մտածութիւն ունէր յեղափոխութեան եւ նրա գաղափարականների մասին, եւ յետոյ արհեստաբար դարձաւ Դաշնակցութեան յարգելի գործակիցներից մէկը, եւ ուրիշ ծանօթներ հեգնանքով հարցնում էին թէ Բաշալեան ինչո՞ւ փախաւ: Իսկ ես ինքնիրենս զարմանքով հարցնում էի թէ Արփիարեան ինչո՞ւ ձերբակալուեց: Այս անակնկալ բանտարկութիւնները ազդեցիկ տպաւորութիւն ըրին գլխաւորապէս հայ հասարակութեան վրայ այն պատճառաւ, որ նըրանց մէջ կար Խորէն Արքեպիսկոպոս Նար Բէյ որ չէր կարող ոեւէ կասկածի առարկայ համարուիլ: Միայն շշուկներ կային թէ՝ Խորէն

Նար Բէյ չարակամութեամբ մատնութեան զոհ էր։ Ոեւէ դատավարութիւն տեղի չունեցաւ, եւ որքան յիշում եմ, այս բանսարկութեան պատճառները բացայայտ չեղան։

Երբ 1892*ին Մարտին ձերբակալուեցայ, իմ մօտ գտնուեցան մի քանի նամակներ որ ես գրած էի եւ ինձ պատասխանելու նիւթեր էին պարունակում։ Նրանցից մէկը, իմ պատասխանն էր Գալուստ Ալոյեանին, հայ յեղափոխութեան առաջին զինագործը, եւ ապա Դաշնակցութեան յաւիտենական հաւատացեալը։ Այդ նամակը մոռացմամբ մնացել էր իմ ընկեր բանաստեղծ Ալեքսանդր Ծատուրեանի ինձ ուղարկած նոր գրքին մէջ, եւ ձերբակալութեանս միջոցին թուղթերիս հետ ընկան ոստիկանութեան ձեռքը։ Այդ նամակի մէջ ես գրել էի Ալոյեանին թէ՝ «դարձեալ Հայկակի մասին ես հարցնում, քեզ արդէն քանիցս յայտնել եմ իմ կարծիքը թէ նա վատ արարած է եւ այնպէս էլ կարծում եմ այժմ»։*

Ոստիկանութեան նախարար Նազըմ պէյ, իմ ձերբակալման երրորդ ընդունելութեան ժամանակ, մի նամակ ձեռքը բռնած, եւ շարժելով այն իմ երեսին, հարցրեց. «Ինչո՞ւ էք Արփիար Էֆէնտին վատաբանում, որպէս ալչաք հէրիֆ *(վատ արարած)։ Ես պատասխանեցի թէ՝ ես Արփիարին շատ լաւ ճանաչում եմ եւ իմ համոզումով ,իր յօդուածների համար համարում էի նրան* վատ արարած, *եւ ոչ թէ*

ուրիշ ռեւէ պատճառ: Եւ Նազըմ պէյ պատասխանեց.— Ոչ, ոչ, դուք գիտէք որ Արփիար էֆէնտին հաւատարմօրէն ծառայում է Տէօվլէթէ վէ միլլէթէ (Տէրութեան եւ ազգին) դրա համար ամէն տեղ աշխատում էք նրան անպատուել եւ վարկաբեկել:

Եւ ես պատասխանեցի.— Ինչի՞ց կարող եմ գիտենալ թէ՝ նա հաւատարմօրէն ծառայում է տէրութեան եւ ազգին (ինչ որ նշանակում էր թէ լրտեսութիւն էր անում) եւ մատնում հայ յեղափոխականներին եւ տէրութեան դէմ աննպաստ խօսող եւ գործող հայերին: Եւ նա պատասխանեց.—

Շատ լաւ գիտէք ,ինչպէս որ մենք մարդիկ ունինք որ գիտեն ձեր շարժումները եւ գործերը, նոյնպէս էլ դուք ունիք ձեր մարդերը, որ ճանաչում են մեր մարդիկը եւ հետեւում են նրանց շարժումներին եւ արարքներին:

Ես զարմացայ Նազըմ պէյի այս յայտնութիւնից. նրա ոստիկանութեան բանտում գրեթէ վեց ամիս խաւարային բնակութիւն վայելելուց յետոյ, մի օր պահապան պուլկարացի Մէհմէտ աղան խօսելով ինձ նոր ձերբակալուած հայերի մասին թէ նրանց մէջ կար մի 16 թէ 17 տարեկան տղայ, ասեց.—Մինչեւ հիմա հարիւրաւոր հայեր, մեծ ու փոքր, ձերբակալուելով եկան ու անցան այս բանտով. ամէնը մի քանի օր մնում էին տխուր, բայց յետոյ կարծես մոռանում էին իրենց տխրութիւնը եւ

անցընում էին իրենց ժամերը ինքնուրոյն գոհունակութեամբ եւ երգերով։ Մինակ նրանց մէջ եղաւ մի ալչաք հէրիփ, Արփիար էֆէնտի, որ թէեւ թոյլատրուած էր իրեն տունէն անկողին բերել եւ օրական երկու անգամ կերակուր, գրիչ ու մելան խնդրած էր, այդ էլ Պէյից շնորհուած էր իրեն, այնու ամենայնիւ, առաւօտից մինչեւ իրիկուն տխուր էր եւ լաց էր լինում, եւ խնդրում էր որ իրեն տանէին Պէյին մօտ, այսինքն Ոստիկանութեան Նախարարին։ Արդ, այն տիպարը որ ես վերագրել էի նրան, իմ Ալոյեանին ուղղած նամակում, միեւնոյն տիպարը Նազըմ պէյի ոստիկանութեան բանտի անուս եւ պարզամիտ թիւրք պահապանը իր մօքի գատողութեամբ եւ աչքի դիտողութեամբ շնորհեց Արփիարեանին։

ՀԱՅ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐԸ ԱՔԻԱՅԻ ԲԵՐԴՈՒՄ

Երեսուն եւ աւելի Էրզրումցի, Տրապիզոնցի, Երզնկացի, Սեբաստացի, Կեսարացի, Մարզըւանցի, Վանեցի, Մշեցի, Ալաշկերտցի, Կ. Պոլսեցի, եւ այլ տեղացի տարէց եւ երիտասարդ հայեր կենակցաբար, հառաչանք էինք քաշում Աքիայի բերդի հոգեկան քաւարանի, մտային տանջարանի, եւ Ֆիզիքական զրկարանի մէջ:

Ամենամեծ մասամբ, սրանք էին Հնչակեան կուսակցութեան յեղափոխականներ, առանց, սակայն, իրականապէս յեղափոխական ոչ մէկ գործ կատարելու, բացի մէկը, որ դիւցազնական խենթութեամբ, Կ. Պոլսի Պատրիարքարանում պատից վայր էր առել, եւ իր ոտների տակ կոտրել էր Սուլթան Համիդի լուսանկարի փայտաշէն շրջանակը թէ՝ Թուղրան, 1890ին, երբ այդ Սուլթանը դեռ չէր ըսպանել տուել ոչ մէկ հայ:

Իմ միւս բաղդակիցները իրենք եւս չը գիտէին թէ՝ արդեօք իրենք յեղափոխականնե՞ր էին, եւ կամ ի՞նչ կուսակցութեան էին իրենք պատկանում: Բայց թէ այս մեղաւորացնող անմեղները, եւ թէ միւս դեռ մեղքը չը գործած մեղաւորները, ցերեկին մտատանջւում էին վշտահար երեւակայութեամբ, եւ գիշերին սրտայոյզ երազներով, թէ՝ ե՞րբ վերջապէս պիտի արձակուէին գերութեան ստրկացուցիչ կապանքից եւ մի անգամ եւս վերադառնային երջանիկ ազատութեան կեանքին, որպէս էին առաջ իրենց մանկութիւնից ի վեր, իրենց ցանկալի տան մէջ, իրենց գիւղի փողոցներում, իրենց բարեկամների, եւ հարեւանների հետ, եւ իրենց հոգեզուարճ քաղաքների հետաքրքրական, շարժուն կեանքի մէջ, ազատ քայլերով, եւ անընկճուն հոգիով:

Այսպիսի մի ամենախաւար հոգեկան շըրջանում էինք, երբ ամէն ոք իր անլոյս սրտի խորքում զգաց մխիթարար ազատութեան արշալոյսի հրաշալի ճառագայթները:

Եւ ի՞նչ էին այս ճառագայթները:

Կովկասածին Յեղափոխական Դաշնակցութեան արիագործ ասպետները, որոց անձնական ռազմագիտական սկզբունքն էր կանգնել հեռու թշնամի Թուրք զինուորի հրացանի կապարեայ մահաբեր գնդակի հասողութեան վտանգաւոր սահմանից, հեռաւոր Զուիցե-

ըխոյ հողի ժընեվեան խաղաղ ծովակի աւա-գոտ ափերի վրայ հերոսաբար շարուած, մխա-բերան վճռեցին Էրզրումը դարձնել իրենց ա-թոռանիստ մայրաքաղաք, իրենց ստեղծելիք մեծն եւ ազատ Հայաստանի: Այս ճառագայթ-արձակ լուրի վրայ, բերկրութեան չափ եւ սահման չկար իմ բաղդակիցների սրտերում, եւ նրանց շրթունքները չկարողացան զսպել իրանց բերաններից ժայթքող աղաղակը — Կեցցէ՛ Հայաստան:

Մեր պահապան արաբ ոստիկանները դուրս ցատկեցին՝ պինդ բռնած իրենց հրացանների կոթերից, եւ շուարած՝ տեսնելու թէ ի՞նչ էր պատահել: Ես միայն մասնակից չեղայ իմ Հայ վիճակակիցների բերկրութեան, եւ բացա-գանչութեան: Բայց, ի միտ բերի Էրզրումի օրերիս ախորժահամ կերուխումը, եւ խորհե-ցի թէ Թրքահայոց ազատութեան նուիրեալ Զուիցերիական լեռների ետեւ պատսպարուած այս Կովկասածին պատերազմողների բուն փափաքը ի՞նչ լինելու էր, որ այդ քաղաքն էր գերադասել աթոռանիստ իրենց փառքին: Ես երեւակայութեանս առաջ երեւեց երազիս Սուլ-թան Համիդը՝ իւր վերջին երեւոյթով դաժան եւ իւր վերջին ձայնով սոսկազդեցիկ,— Յորե-նի ցողունի պէս պիտի հնձեմ ամէն հայ կեանք իմ աշխարհածաւալ երկրի երեսից»: (*): Ժ

Թէեւ մէկ երկու ընկերիս նման նայում էի

փողոցներին, անցնողներին, եւ բաց խանութներին, բայց մտքիս մէջ անբաժանելի միայն տեսնում էի տեսարաններ, մարդիկ եւ դէպքեր իրենց շարժումներով, որպէս տեսայ երազում, եւ որպէս իրենց բնականութեամբ պիտի իրականանային տարիներ յետոյ:

Որքան յառաջանում էի երեւակայութեանս մէջ փողոցներով, այնքան երթեւեկութիւնը խտանում էր, աւելի խանութներ, եւ աւելի մարդկային ձայների խառնաշփոթ աղմուկներ, որոց ժողովրդեան լեզուն հնչում էր ոչ նուազ զօրաւոր, եւ մեծապէս: Միթէ՞ Էրզրումի իմ պատուական հիւրընկալ Տիգրան աղան իր երջանիկ ընտանիքով, եւ սրանք ամէնքը, որոց հայերէն լեզուն դեռ լսում եմ, պիտի ոչնչանան այս քաղաքի երեսից, որին ինքնավստահ հայ յեղափոխականը իր Ժընեւեան սենեակից նախասահմանում էր մայրաքաղաք Հայաստանի: Այսպէս էր ալեկոծւում մտքիս ծովը, եւ աւելի սիրում էի հաւատալ հայ ցընորական յեղափոխականի ազգախաբէութեան որոշման, քան բոցավառ Սուլթանի Հայաջընջիչ սպառնալիքին:

Բանտարկեալների մէջ կար Ալաշկերտի Համզաշէնի հայ գիւղի գիւղապետը Ներսո, 90 տարեկան, նա ինքն եւս չգիտէր թէ՝ ինչ էր իր յանցանքը, այնքան որ անուս էր հասկանալու դատաւորութեան ամբաստանութեան

կէտերը: Միայն իր մի համագիւղացուց հասկացայ թէ նա գիւղում պատսպարել էր դրսից եկած հայեր:

Թուրքիայում սովորութիւն էր, որ Թուրք շրջուն ձիաւոր երկու կամ երեք ոստիկաններ, իջեւանում էին հայ գիւղապետների տներում: Նոյնպէս էին անում եւ անծանօթ անցորդներ: Գիւղապետը տեղաւորում էր այսպիսիներին կամ իր մօտ, կամ գիւղացիներից մէկի մօտ: Եւ գիւղապետները առ հասարակ ունէին իրենց հակառակորդները եւ թշնամիները: Անհաւանական չէր, որ երբ այդպիսի անցորդներ գըտնըւում էին գիւղապետի մօտ, նա մատնում էր իբրեւ հակակառավարական: Ներսոն եւս այդպիսի մատնութեան զոհերից մէկն եղաւ, եւ տարուեց բանտ, դատապարտութիւն եւ բերդարգելութիւն որպէս ծանր քաղաքական յանցաւոր: Մի օր նա ինձ պատմեց հետեւեալը: Երբ նա այս ամբաստանութեամբ հարցաքննուեց, նրան ասեցին թէ՝ իր տան մէջ պահում էր յեղափոխականներ, եւ այս հարցումը արուեց նրան հայերէն, որովհետեւ արդէն

հազիւ հազ էր հասկանում:

Ուստի երբ հայ թարգմանը ասեց·

« Կ'ըսեն դու տանդ մէջ եղափոխականներ կը պահէիր »·

Ներսոն պատասխանեց·

« Աղաներ, փառք Աստուծոյ, ես բաւական

կով ու ոչխար ունիմ, ու բոլ եղ կը պատրաստենք, ու կը պահենք բղուղներով մեր տունին մէջ մեր ձմրան կերակուրներու համար »:

Այս խօսքերուս վրայ ոտքի ելաւ Նումբուխով անանկ զարկաւ բերնիս, որ ահա աս մէկ առջի ակռան անդէն փրթաւ, եւ պոռալով ըսաւ. « Անզգամ ծեր խորամանկ աղուէս, մեզ հետ օյին մի ըներ, թէ գիտես ինչ կ'ընեմ »

Յետոյ դառնալով ինձ ասեց.

« Տօ, ինչ գիտնայի թէ եաղարաղակն ասած բանը մեր տուներու մէջ պահած եաղի բղուղները չէին ուզեր ասել. ինչէն գիտնայի թէ ուտելու բան չէր, բայց մի տեսակ ջանավար մարդ: Ոչ թուրքերէն ոչ ալ հայերէն ատանկ անուն չէի իմացեր: Կերածս Նումբուխէն յետոյ հասկացի որ Օսմանցին մեր հայ գրել կարդացողի անունը գրեր է եաղարաղական: Աստուած բերան տայ, մեր հանգիստը տար, տուներնիս քանդուքար եղաւ, կորուցինք տուն ու ընտանիք եւ մալ, եւ հիմակ աշխարհէս անդին ծայրը խեղճ ու անօթի, պատառոտած լաթերով, փտտած մաշուած անկողիններով, եւ կանցունենք չարչարանքի գիշերներ, ցաց չարտախներու տակ, ուտելով չոր հաց, եւ մի քանիներու ողորմութեան չորբայով եւ քիչ մը կեանք տուող կերակուրով: Մեր գիւղերու մուրացկանները մեր աս իմ վիճակէն շատ աւելի բաղդաւոր արարածներ են »:

բեւոնի»: Ունէր պարթեւ հասակ, լայն կուրծք խոշոր, խամրած աչքեր՝ լուսաւորուած բարութեան լոյսով եւ բարկութեան խաւարով. երեսի եւ ճակատի կաշիի մաշկերը թառամած էին, այնպէս որ կենդանաբար արեան ներկայութիւնը կարծես արդէն բացակայում էր նըրանց վրայից, եւ կեանքի արեւը իր վերջին լոյսն էր որ տարածում էր նրանց վրայ: Նրա մազերը սպիտակ էին նման սառած ձիւնին, մօրուքը այնպէս կախ ընկած չէր, որպէս կըղերականների մօրուքները, Տէր Խորայէլի միրուքի թելերը որպէս լուսակրոյս ճառագայթներ, շրջապատում էին նրա մեռելակերպ երեսը գերագանցօրէն, անհամեմատելի պայծառ արեգակի ժպտուն երեսը շրջապատող ճաճանչաւէտ ճառագայթներին նման:

Տէր Խորայէլ իր գիւղապետի հաճոյարարոյ մտերմութիւնը չունէր: Յաճախ լռակեաց էր, մտախոհ եւ երազուն: Ամէն անգամ, կարեկցութիւնից զգածուած, ուզում էի խօսք բանալ նրա հետ, նա աշխատում էր խուսափել խօսելուց, կամ տալիս էր այնպիսի ձեւի պատասխան, որ ես հրաժարէի շարունակել խօսակցութիւնս, առանց սակայն կոշտ վարմունք ցոյց տալու. բայց եկաւ մի օր, երբ բերանը բաց արեց վշտի եւ դառնութեան շեշտով եւ ասեց ինձ.

«— Կ՚ասեն թէ դուն բամբա էիր շինէր, ու

կ՚ուզէիր Սուլթանը սպանել: Դուն Սուլթանը չէիր կրնա սպանել, բայց Սուլթանը կրնա ըսպանել մեր բոլոր ազգը, ինչպէս որ կամաց կամաց մեզ կ՚սպանէ աստեղ: Ամէն Թուրք Սուլթանի ուժով է մեր վրայ, եւ կրնա լմնցնել մեր ազգը աշխարհիս վրայէն: Մեղք չէ՞ քեզի: Մեղք չէ՞ մեզ ամէնուս որ ասանկ թշուառ կեանք կ՚անցունենք մեր երկրէն եւ ընտանիքներէն հեռու: Ու անոնք հոն կուլան մեր վրայ»:

Երկու կամ երեք ամիսներ չէին անցել երբ նախ Ներսոն, եւ յետոյ Իսրայէլ քահանան հալուեցան հալւող մոմի պէս, եւ յաջորդաբար շիջան նրանց անխեղ կեանքը, լոյսերը խաւարեցան: Նրանց դիակները, իրենց մաշուած հագուստների մէջ երկարած, մնացին ցուցադրած չոր տախտակի վրայ մեր փոքր բակում: Եթէ կար ցաւող եւ սգացող, այդ մենք էինք, եթէ լինէին յուղարկաւորներ առաջնորդել նրանց մարմինները դէպի եկեղեցի եւ գերեզման այն մենք լինելու էինք:

Այս թշուառ մեռեալների համար մեր ցաւի եւ սուգի զգացումը ոչ մի երկրային եւ երկնային զօրութիւն կարող էր խլել մեր սրտերից, բայց նրանց յուղարկաւորութեան համար բաւական եղաւ արաբացեղ Թուրք ամենահասարակ ոստիկանի օլմազ, կարելի չէ, բառի մէկ չեչոտի զօրութիւնը, եւ մեր յեղափոխական ոյժերը եղան ապիկար, մեր ոտները չկարողա-

ցան յառաջանալ հետեւելու դուրս տարուող դիակներին, դիակներ որոնք երբ ողջ էին, մի էին կենդանաբար հոգիներով եւ շարժուող լեզուներով, հանապազ յիշում էին Յիսուս Քրիստոսի անունը, օրհնում նրա ամենակարողութիւնը, եւ ազատութիւն աղաչում իրենց ողբերգական դրութիւնից:

Արդ, արդեօք, Յիսուս Քրիստոս ի վարձատրութիւն իւր այս ջերմեռանդ պաշտողներին, պիտի կարենա՞ր իւր աստուածային կարողութեամբ ուղղել այդ բազմաչարչար մարմինները դէպի Աքխայի մի քրիստոնէական եկեղեցի, ուր քահանայք աղօթէին իրանց հոգիների համար, եւ խաղաղութիւն խնդրէին նրանց փտելիք ոսկորներին: Նաեւ իւր երկրպագուների մէջ պիտի գտնուէ՞ր մի գթալից քրիստոնեայ, որ քաջութիւն ունենար հետեւել նրանց անվնաս դիակներին ի գերեզման, տեսնել նրանց արհամարհօրէն ձգուիլը խոր փոսի մէջ, եւ արտասուք թափէր երբ արաբներ կամ թուրքեր, իրենց թիակներով թափում էին թաց հողը փոսի մէջ, եւ առ յաւէտ թաքցնում նրանց երկրագունտի երեսից:

Սատկած շների դիակները աւելի բաղդաւոր էին քան այս հայ յեղափոխականների դիակները: Երբ ես տակաւին 5—6 տարեկան էի, մենք ունէինք մի սիրեցեալ շուն որ հոգին փչեց. մի մարդ վզից թէ ոտներից պարան կա-

ղելով, քարշ տալեց Վաղարշապատի մէյտանի միջով, տարաւ էջմիածնի պարիսպի եւ բաղարի արտաքին դուրս երկարող պատի միջով, մինչեւ գրաւ վայրենի անբնակ ամայութիւնը, եւ այնտեղ թաղեց անկանաչ հողի փոսերից մէկի մէջ: Ես եւ մի հարեւան հասակակից տըղայ, ամբողջ ընթացքին տխուր մտածումով հետեւում էինք մեր բարեկամ շունին: Ուէս Ներսայի եւ Տէր Խորայէլի դիակները զուրկ էին այսպիսի մի շնորհից: Միայն նրանց վըրայ նայում էր կապոյտ օդում բարձրացող անշունչ եւ անհոգի Կարմեղոս լեռը, որտեղից Եղիա Մարգարէն վերացաւ երկինք:

Հայ նորափթիթ ազգասիրութեան կանաչ պտուղներն էին, որ չորանում էին Աքիայի արեւահար գետնի վրայ, յեղափոխական անւան ներքեւ: Այնտեղ տկարները դառնում էին կենսազուրկ, եւ ուժեղները ուժաթափ, թափուած եւ ազատութիւնից. նրանց ազատութիւնը հաւասար էր կենդանի մեռեալների ազատութեան: Եւ նրանք զգում էին թէ բերդաքաղաքի շուները ազատ քաղաքացիներ էին, եւ ազատախնդիր հայրդի արարածները մերստորնագոյն քան այդ չորքոտանիները, մերկացուած ամէն ազատութիւնից, բացի այն, որ ծակամուտ մթնոլորտում ազատ էինք մեր միջեւ խօսել ինչ որ մեր խելքից փչէր, խելացի կամ անխելք:

Լսում էինք թէ՝ Թուրքիոյ վերջը մօտեցել

էր, թէ Հայաստանի ստեղծումը արդէն վերահաս, եւ Դանիմարքայի Թագաւորի երկրորդ որդին ընտրուած էր Թագաւոր Հայաստանի:

Այս յոյսերի փայլուն պատկերն էր: Եւ սեւ պատկերները երեւան էին գալիս, երբ խօսակցութիւնը դառնում էր իրենց բնավայրերի վիճակի մասին, որ սկսեց 1890ից յետոյ:

ԺԵՆԵՎ ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ

1898ին կամ 1899ին, լինելով Մարսէյլայում, խորհեցի վերադառնալ Լոնդոն Ժենեւի վրայով՝ տեսնելու այնտեղ գտնուող Շէֆֆիք բէյը Թուրքիոյ Պատերազմական Նախարարի փեսան, որ նախապէս աքսորական էր Աքիայի բերդում, որտեղից միասին փախանք 1896ին։ Ժենեւում այցելեցի Դաշնակցութեան Կենտրոնը։ Մեծաւորն էր, կարծեմ, Քրիստափոր։ Ճաշին ներկայ էին Միքայէլ Յովհաննէսեան, որ յայնժամ չէր երազում լինել մի օր Հայաստանի դեսպան, բազմած Հռոմում, եւ հալածուած հաւերից։ Միւս ներկաների մէջ կար Արմէն Գարո (Բաստրմաճեան), Օսմանեան Բանքի գրաւողների պարագլուխը, որի ընթացքով նոյն օրը 5,000 հայեր զաւազաններով, դանակներով, դաշոյններով եւ սուրերովսպանուեցան տանջանքներով իրենց

խանութներում, խաներում, փողոցներում, եւ Ոսկեղջիւրի երկու կամուրջների վրայ, եւ նրանց մարմինները արիւնաթաթախ փռուած կամուրջի տախտակների, կամ փողոցների քարերի կամ հողերի վրայ, ուր հաւանօրէն չնաստա Կ. Պոլսի անօթի շուներ իրենց ժանիքներով պատառում էին անմեղ զոհերի արդէն պատառուած մարմինները:

Այդ ահարեր օրում, Սուլթան Համիդի Մարմարա ծովից մինչեւ ծայրը, եւ մինչեւ Սեւ ծով տարածուած մայրաքաղաքի ամէն հայ տուն որ ունէին մէկը բացակայ, ահ ու դողով նայում էին իրենց լուսամուտներից, եւ մինչեւ երեկոյ եւ գիշեր սպասում սրտատրոփ արտասուաթոր եւ անձկանօք թէ՝ արդեօք ի՞նչ պատահեց իրենց սիրելիներին, թէ արդեօք նրանք ո՞ղջ էին, թէ սպանուեցան այնքան անհամար սպանուածների մէջ, թէ արդեօք միտի գայի՞ն, թէ յաւիտեան կորել էին:

Եւ հետեւեալ օր, Թշուառ Թրքահայոց ողբի եւ կոծի աղաղակը հնչեց բոլոր Օսմանեան կայսրութեան սեւ հողի վրայ, այժմ փոխուած կարմիրի: Կոտորածների շարքերը շարունակեցին Կ. Պոլսից ի Վան, եւ Տրապիզոնից ու Կարինից մինչեւ Այնթապ, Ադանա եւ Ալեքսանդրետա: Յիմարագործութեան Հերոսը, եւ նրա յեղափոխութեան ծրագրողները, եւ հետակեաց հրամանատարները հրապարակու

հպարտացան թէ՝ իրենց քաջերը մէկ երկու օր գրաւած պահեցին Բանքը, նոյնպէս պարծանք համարեցին որ իրենց քաջերը չյանձնեցին իրենք իրենց, ինչպէս արդէն տասնեակ հազարաւոր հայ մարդիկ, կանայք եւ երեխայք սպանուել էին արարքի հետեւանօք, քաջութիւն չունեցան անպաշտպան դուրս գալ Բանքից, որ դրսում սպասող կատաղի Թուրքերը դաւազաններով եւ մուրճերով ջախջախէին իրենց, բայց պայման դրին որ դուրս գային Անգլիոյ, Ռուսիոյ եւ Ֆրանսայի զինուորների պաշտպանութեամբ, եւ Թուրքիայից դուրս հանուէին Եւրոպա, այդ տէրութիւններից մէկի նաւով:

Այս եւ նրա ծնունդն եղող հարիւր հազարաւոր հայ ժողովրդեան կոտորածը Դաշնակցութեան պրոպագանդայի եւ պարծանքի յեղափոխական ամենամեծ գործերից մէկն է յանուն Թրքահայոց դատին եւ նրանց ազատութեան Թրքական լուծից: Ահա ներկաներից մէկն էր այս արարքի հերոս Արմէն Գարոն:

Դաշնակցութեան եւ նրա նախահայր Հնչակեան Կուսակցութեան կուրացած վարիչների համար եղել էր մի նորատեսակ ցնորամտութիւն, թէ Թրքահայերին Թուրքի լուծից ազատելու համար պէտք էր ցոյց անել Թուրքիոյ դէմ, դրդել Թուրք կառավարութիւնը, հայկական կոտորածներ գործադրել, եւ այս–

պէս կոտորածներով եւ հայ ժողովրդեան բնաջնջումով ստեղծել ազատ Հայաստան: Եւ այս կատարուեց, ժողովուրդը բնաջնջուեց, եւ Հայաստանը ազատուեց հայերից, եւ եղաւ միայն Թուրք եւ քիւրդ մարդոց բնակարան: Սկզբնական անմեղ հայասէր յեղափոխութեան ոգին փոխուեց մեղաւոր հայասպան յեղափոխութեան ոգիի:

Մօտ քսան տարի առաջ կարդացի մի Ամերիկացի միսիոնարի գրութիւնը: Նա շատ տարիներ ապրել էր հայ ժողովրդի մէջ, եւ հայ ժողովրդի հետ: Խարբերդի եւ Մարզուանի Ամերիկեան դպրոցների միջոցով նա տուել էր հայ հասարակութեան բազմաթիւ բարեկիրթ երիտասարդներ, գիտէր հայերէն՝ հայի պէս, եւ սիրում էր հայ ժողովրդին, որպէս թէ լինէին իր ազգի ժողովուրդը: Նա տեսել էր եւ գիտէր թէ հայերը, թէեւ մի ինքնուրոյն անկախ եւ ազատ ազգ չէին, բայց ապրում էին բարեկեցիկ եւ հանգիստ, երբ տակաւին չկար յեղափոխականութեան անունն եւ շարժումները, ուստի սիրտը շատ էր ցաւում, երբ արդէն Ամերիկայումն էր եւ կարդում էր իր սիրած ժողովրդի դժբաղդութիւններն եւ կոտորածները, որոնք 1895ին Հնչակեան Կուսակցութեան ցոյցերի ընթացքից հետեւած կոտորածներ էին: Եւ նա պատահեց տեսնել Ռուբէն Կարապետեանին, այն է մեր փոքր եւ կուզիկ Ռուբէն Խանազատեանին, որ Հնչակեան էր, եւ Ա-

մերիկացին մեծ ցաւով արտայայտեց իր ըզգացումը հայ ժողովրդի այդ զարհուրելի դժբաղդութեան համար: Եւ նա գրում է.—

«Ես ապշեցայ եւ ողբացի որ այդ կուզ յեղափոխականը անզգացում պատասխանեց.— «արժանի են կոտորուելու, թող երթան կոտորուեն, քանի որ ուզում են սորուել ապրել Թուրքի ձեռքում, եւ չեն պաշտպանում իրենց, եւ չեն ապստամբում Թուրքի դէմ»: Ահա մի հայ յեղափոխական թէ ինչպէս է ցաւում իր կոտորուող ազգի համար, ինչպէս է հասկանում Թրքահայ ժողովրդի վիճակը, եւ ինչպէս անխղճամիտ բառերով, յուսամ ոչ սրտով, արտաղեղում էր իր ազգասէրի պարտականութեան աններելի զգացումը մի օտարի առաջ»:

Ամերիկացիի դատապարտութիւնը արտայայտուած էր աւելի խիստ խօսքերով, քան ինչ որ ես յիշողաբար յառաջ եմ բերում այս տողերով: Տխմար, օդային ցոյցերը Հայ յեղափոխութեան վարիչների համար եղել էին փառաւոր ազգասիրութեան զէնք, ծածկելու նրանց ազգասիրութեան դատարկութիւնը ,եւ լցնելու նրանց պարծանքով եւ ինքնագովութեամբ, ուստի եւ Թրքահայ ժողովրդեան կոտորածների իրականութիւնը եւ լուրերը բթացեալ կարեկցութիւն էին ազդում նրանց զգացումների վրայ, Այսպէս եւ Խանազատի երբեմնի փափուկ զգացումը բթացած էր այդ

ժամանակ այդ խօսքերը արտասանելով, կոտորուող հայ ժողովրդեան մեղքացող Ամերիկացիին:

Առաջին տեսութիւնից մօտ 26 տարիներ յետոյ, ես տեսայ նրան Թիֆլիսում իր տան մէջ: Նա ամուսնալուծուած էր յեղափոխութիւնից եւ ամուսնացել էր մի կնոջ հետ: Երբէք չէի կարծում թէ նրա կարճ հասակից կարող էր բուսնել երկար միրուք: Եւ սակայն նա կրում էր միրուք, որ ունէր իր մարմնի գրեթէ մէկ չորրորդ երկարութիւնը, եւ սպիտակ հաւասարապէս երկայնաձիգ թելերը լուսազարդում էին նրա մթագոյն միրուքը: Նա սակաւին սիրում էր պարծանքով խօսել մեր ժամանակի յեղափոխական կեանքից: Բայց մենք միայնակ էինք, եւ ես ուզեցի որ յիշէինք այդ ժամանակների սեւ տեսարանները, եւ խորհէինք արդեօք իրաւունք ունէինք պարծենա՞լ թէ ողբալ:

«Անիծեալ լինի այն յեղափոխութիւնը, ասեց Խանազատեան, որ մենք ստեղծեցինք: Ես չէի երեւակայում թէ այսպէս պիտի վերջանար, երբ նրա գաղափարը յղացանք Հնչակեան Կուսակցութիւնը ստեղծելով»:

Երբ այնքան տարիներ առաջ նա եկաւ Կ. Պոլիս, եւ Գարեգին եպիսկոպոս Սրուանձտեանի սենեակում մենք խօսում էինք իր առաքելութեան մասին, նա կրում էր իր ուսին,

իր բնածին փոքրիկ կուզը, եւ իր ծնօտի վը-
րայ փոքրիկ սրածայր միրուքը, եւ իր գլուխի
մէջ Թուրքիոյ Հայոց համար ազատ Հայաս-
տան ստեղծելու հսկայ գաղափարը:

Այսպիսի միրուք, եւ այսպիսի երկաթա-
կուռ գաղափարով զինուած էր նաեւ Հնչակեան
յեղափոխական Կուսակցութեան անունը, խոր-
հրդաւոր զգուշութեամբ արտասանւում էր Կ.
Պոլսի հայոց բերաններում, եւ հազիւ հազ լը-
սելի էր լինում ունկնդրի ականջում 1890ից
մինչեւ 1896, եւ Թուրք կառավարութիւնն իսկ
սկսեց հաւատալ նրա մթին, անտեսանելի յե-
ղափոխական ուժին: Նրա այս խորհրդաւոր
գործութիւնից եւ ժողովրդականութիւնից օգ-
տուելով, մի քանի վարպետորդի հայեր, որ
շահախնդրութեան արհեստի մէջ զարգացած,
նրբամիտ ազգասիրութեան քողարկեալ խա-
բեբաներ էին, իրենց այս ճարպիկութեամբ,
մտան Կ. Պոլսի Հնչակեան Մասնաճիւղի մէջ,
եւ դարձան նրա լիազօր վարիչները, սպառնա-
լիքով դրամ պահանջելով եւ առնելով եւ կոյր
ազգասիրութեամբ կուրացած տեռորիստների
դաշոյններով սպառնելով ազնիւ հայեր, որոնք
մերժում էին դրամ տալ, գիտնալով նրանց
որպէս դրամաշորթներ, կամ մնասակարներ
Թրքահայ ժողովրդեան. եւ այսպիսի կեղծի-
քով նրանք սպանել տուին այնպիսի հայեր, ո-
րոց դէմ նախապէս անձնական ատելութիւն
ունէին: Եւ հասարակութեան մէջ ատելութիւ-

նը սաստկացաւ Հնչակ անունի դէմ: Նա սկըզբնապէս ստեղծուած էր սպանել հայասպան եւ հայավնաս Թուրքին, բայց նրա տեռոռիստները միշտ քաջ եղան սպանել վատաբար անմեղ եւ անզէն հայեր, բայց ո՛չ մէկ հատ իսկ վնասակար Թուրք: Բնական էր մի կուսակցութիւն, որի մէջ խոր արմատ էին դրել այդպիսի մարդիկ, պիտի չկարենար ապրել, եւ պիտի քայքայուէր, իրար քայքայելով, բզկտելով: Թէեւ նրա բեկորները, աստ անդ, շարունակէին մնալ կիսակենդան:

Արդէն այս վիճակի մէջ ընկած էր Յեղափոխութեան Մայր Կուսակցութիւնը, երբ ես նստած էի Դաշնակցութեան կուռքերի կռատան մէջ:

Այդ հանդիսաւոր կաճառում, ես ասեցի թէ երբ 1885ից առաջ կամ յետոյ, յեղափոխական գաղափարները զրգռում էին մեր մտքերում եւ սրտերում, յեղափոխական կոմիտէներ կազմւում մի քանի տհաս եւ կիսահասուն երիտասարդների մէջ, եւ կուսակցական մեծահնչիւն ծրագիրներ յօրինւում, մենք միայն տեսնում էինք մեր գաղափարների փայլուն կողմը, եւ վարդագոյն երեսը, չէինք տեսնում եւ երեւակայում Թրքահայ ժողովրդեան կոտորածներ այդ հետեւանքով, եւ թէ մեզանից շատեր կատարեալ տղայամտութեամբ կարծում էինք թէ՝ եթէ մի քանի տասնեակ հայեր

մեր ընթացքից սպանւում էին Կ. Պոլսում, Եւրոպական Մեծ Պետութիւնները պիտի իրենց դրահաւորները մտցնէին Դարդանելից ներս, եւ դրաւէին Սուլթանի մայրաքաղաքը, անիծէին Սուլթանի խերը, եւ կատարէին Հայ յեղափոխականների պահանջները: Մենք այնքան տգէտ էինք մեր այս հասկացողութեան մէջ, որ չէինք հետամուտ եղած կարդալ եւ տեսնել թէ Խրիմեան Հայրիկ, վեղարը գլխին, խաչը կուրծքին, եւ մի երկար խնդրագիր ձեռքին, իր երիտասարդ թարգման Մինաս Չերազի հետ կանգնած Մեծ Պետութեանց Վեհաժողովի դրան մօտ Բերլինում, եւ նրան տրուեց մի ոսկեդրամ դրօշմուած Վեց Պետութեանց գլուխներով: Բայց շատ չուշացաւ, որ վեց գլուխներից երեքը գաղտնապէս հասկացրին Սուլթանին թէ՝ Հայոց համար իրենց տուած ոսկեդրամը կեղծ էր, եւ թէ ինքն Նորին Վեհափառութիւնը վեց կոպէկի կարեւորութիւն իսկ տալու չէ՝ ո՛չ այդ ոսկեդրամին, եւ ոչ միւս գլուխների խորհուրդներին եւ սպառնալիքներին: Ուստի խաչակիր հոգեւորականի տեղ անցաւ զինակիր Հայ Յեղափոխութիւնը, մտադրելով՝ սպառնալիքներով ճնշում բանեցնել Մեծ Պետութեանց վրայ, եւ ցոյցերով սարսափեցնել Սուլթան Համիդին, որպէսզի Եւրոպան գործադրել տայ, եւ Համիդը գործադրէր Հայ Յեղափոխութեան պահանջը, այնպէս հայ յեղափոխականները իրենց զէն-

քի գործութեամբ իրենք պէտի տնօրինէին իրենց պահանջը։

Այդ ընթացքի արդիւնքը այն եղաւ, որ յեղափոխական թերթերի երեւումով Եւրոպայում, եւ նրանց սպառնալիքներով, Սուլթանը անխճանաբար ջնջեց ազատութեան շատ բարիքներ, որ Թրքահայերը վայելում էին որպէս Հայ ազգ։

Եւ երբ, յեղափոխականի բառերի հետ միացան յեղափոխականի ցոյցերի նշաններ, Սուլթան Համիդ բորբոքուեց բարձրագոյն կատաղութեան, մղուելով իր հպատակ հայ ժողովուրդը ջնջելու գաղափարին, եւ այսպէս, ամէն անգամին սպանուեցան տասնեակ հազարաւոր հայեր եւ թէ մինչեւ այդ օր այդպէս կոտորուածների թիւը արդեօք երկու հարիւր հազար թէ՞ չորս հարիւր հազար, անյայտ էր մեզ, բայց, ասեցի իմ խօսակիցներին, թէ երբ յեղափոխութեան զգացումը բորբոքուեց մեր զգայուն սրտերում, այն հաւատքով, թէ դրանով մենք ստեղծելու էինք աւելի բաղդաւոր կեանք մեր Թրքահայ եղբայրների համար, թէեւ նրանց որքան բաղդաւոր կամ դժբաղդ կեանք ունենալու մասին իսկապէս չունէինք ո եւ է ստոյգ հասկացողութիւն, բայց այժմ, երկու տարիներից ի վեր լսում էինք նրանց բնաջնջման մասին, ուստի այժմ վերջապէս՝ մենք զգալու էինք թէ յեղափոխական կուսա-

կցութիւնները ինչ պարտ էին անել: Մեր Հընչակեան Կուսակցութիւնը, ասեցի նրանց, պէտք էր այլ եւս վերջապէս մեռած համարել: Մնում էր ուրեմն միայն Դաշնակցական կուսակցութիւնը, որ ուղղէր իր գործունէութեան ընթացքը:

Տրուած պատասխանները չէին համապատասխանում յարուցուած հարցին: Ոմանք մեծարանում էին այնպէս, որ կարծես անյեղափոխական յեղափոխութիւնը պսակուած լինէր հրաշալի գործունէութեամբ, եւ ոչ թէ արատաւոր եւ սեւացած հրէշալի աղէտներով:

Ոմանք, մթագնած իրենց դատողութեան մէջ, եւ գինովացած իրենց կուսակցութեան սիրով, սնապարծում էին այնպիսի ոճով, որ թւում էր որպէս թէ ջարդւողներն էին թուրք զինուորներ, եւ ջարդողներն էին Դաշնակցութեան քաջարի յեղափոխականները:

Արմէն Կարօն լսում էր, բայց լուռ էր: Երեւի մտածում էր թէ երբ իր դաշնակ քաջերով չնչին ռումբեր ի ձեռին, կանգնած տափակ տանիքի վրայ, Օսմանեան Բանքի ահագին շէնքը քարուքանդ անելու սպառնալիքով, նա տեսնում էր ցածը, փողոցում, եւ հեռւում, ինչպէս անյեղափոխական հայ անցորդներ, թուրք ոստիկանների սուիններից եւ թուրք խուժանի փայտերի եւ լախտերի հարուածների տակ վայր էին ընկնում արիւնահոս եւ ան-

չունչ ,եւ հաւանօրէն խորհում իւր այս ընկերների պատասխանատուութեան վրայ, եւ թերեւս նոյնպէս մտածում էր իւր կուսակցութեան պետերի իմաստութեան վրայ թէ՝ անգլիական եւ ֆրանսական մի քանի հարիւր հազար, կամ մի միլիոն ոսկի դրամատան չէքի կամ դրամական վնասի համար, այս երկու պետութիւնները պիտի ահաբեկուէին, եւ բռնադատէին Սուլթանին, որ նա ստեղծէր անկախ Հայաստան, եւ հրաւիրէր ժենեւի այս հայ քաղաքագէտներին՝ երթալ եւ թագաւորել Կարնոյ անուշաբոյր պալատներում, կամ Վանի կապուտագեղ ծովի ափերում: Այժմ, թերեւս, խելքը զօրացել էր իւր ազգասիրական ոտնդահարութիւնից եւ զարմանում եւ ծիծաղում իւր մեծերի այդ ամենամեծ յիմարութեան ծրագրի վրայ, եւ այդ լինելու էր պատճառը, որ նա մնում էր անհաղորդ միւսների մեծարանութիւններին:

Բայց նրանց մէջ կար մի երիտասարդ, որ յոյժ աշխոյժ էր իւր շարժումներով, աւելի ոգեւորեալ իւր խօսակցութեամբ, եւ աւելի վճռական իւր յեղափոխական գիտութեան մէջ: Դա էր յետագայի անկախ ազատ Հայաստանի ապագայի անկախ դեսպանը, որ իտալացի աքաղաղների մեծագոչ ցնծութեան ցոյցերով ընդունուեց Հռոմում:

Նա այդ ժամանակ չէր երազում թէ մի օր

պիտի դառնար դիւանագէտ եւ դեսպան Յաւի-
տենական քաղաքում: Բայց այժմ նա արդէն խօսում էր դիւանագէտի իմաստութեամբ:

« Հայը դեռ զուրկ է ինքնապաշտպանութեան գիտակցութիւնից: Մենք հիմա նրան սովորեցնում ենք ինքնագիտակցութիւն եւ զինում ենք ինքնապաշտպանութեան, որպէսզի պատրաստ լինի միշտ դիմադրել թշնամին:

Յոտնկայս խօսող հանդիսաւոր պերճաբանին պատասխանեցի ներողաբար ասելով, թէ իր ասուածքից ակնյայտնի էր թէ նա, նման այլ ռուսահայ գլուխների, չէր եղել Թրքահայաստանում, եւ ոչինչ գիտէր այնտեղի հայ գիւղացիի կեանքից եւ կարողութիւնից, եթէ ոչ չէր ունենար այդպիսի հայեացքներ: Թրքահայաստանի գիւղացին փոքրիկ ծիտի չափ էլ պակասամիտ չէ, որ չունենայ ինքնապաշտպանութեան գիտակցութիւն, երբ երկնքից արծիւը կամ ներքեւից մի փոքր տղայ մօտենում է նրա բունին, բռնել իրեն կամ յափշտակել իր ձագերին, նա բացում է իր թեւերը, եւ ճռճռում է յուսահատ, զգալով իր անզօրութիւնը հսկայական զօրութեան դէմ առ դէմ:

Այսպէս է եւ Թրքահայաստանի, եւ Թուրքիոյ ամէն տեղերի Հայը: Իր անզօր եւ անզէն անձի դէմ նա ունի առնուազն երկու կամ երեք զօրաւոր եւ զինեալ մահմետականներ, ամէնը վարժուած զինուորութեան եւ պատերազմի: Եւ սակայն հայ ժողովուրդը, հակառակ այս ան-

համաչափ պայմաններին, ապրեց դարերով առանց անցնելու կոտորածների դժոխային արհաւիրքների մէջից:

Ահա այս էր դրութիւնը, երկու կամ երեք նոյն իսկ աւելի զօրաւորների եւ գիշատիչների առաջ, մէկ անզօր եւ անզէն հայ մարդ: Եթէ ճշմարտութիւնն եւ իրականութիւնը չգիտէինք երբ յեղափոխութեան վսեմ գաղափարը յղացաւ մեր խակ գիտակցութեան մէջ, բայց այնուհետեւ փորձով պէտք էր գիտենայինք: Մեր յեղափոխական կուսակցութեանց գաղափարի յղացող ռուսահայ հաշուագէտ գլուխները եթէ սկզբում չգիտէին, շուտով գիտցան թէ Յեղափոխութեան դաշտը իրենց համար վտանգաւոր պիտի լինէր Թրքահայաստանում, եւ անտարակոյս իրենց անձնական շահը կը պահանջէր, որ իրենց տները չդնէին Հայաստանի հողի եւ հայ գիւղացիների մօտ, ուստի որոշեցին այս երկու փրկարար գործողութիւնը կատարել եւ վարել Ռուսաստանից եւ Եւրոպայից բառերի եւ ճառերի ռումբերով:

Իմ հայեացքները, մեկնութիւններն ու մերկութիւնները տհաճելի էին թւում, եւ ոմանք դիտողութիւն էին անում թէ ես բոլորովին դարձել էի հակայեղափոխական եւ Թրքասէր, եւ յետադիմական:

Ապագայի դէպքերը մի մեծ նորութիւն երեւան հանեց, անգիտանալով եւ անմարսելով

ինչ որ ես այնքան որոշակի բացատրել էի, եւ ասեց մեծապարծօրէն.—

«Մենք արդէն ամէն քայլեր ձեռք ենք առել բուն երկրում: Քաղաքներում եւ գիւղերում մեր հայերին մէջ զարգացնում ենք ինքնապաշտպանութեան գիտակցութիւնը, եւ սահմանից մեր մարդոց ձեռքով ներմուծուած զէնքերով զինում ենք ժողովրդին ամէն տեղ»:

Չեմ կարծում որ նա իր դիւանագիտութեան մէջ այնքան պարզամիտ էր, որ հաւատար թէ ես եւս կարող էի հաւատակից լինել իր առասպելներին: Բայց նա գիտէր թէ այնտեղ կային մոլեռանդ միամիտներ, եւ անգէտներ, որ պիտի հաւատային կուսակցութեան այդ հրաշալի հրաշագործութիւններին:

Ես պատմեցի իմ բանիմաց բանախօսին թէ Աքքայում կային 60–70 հայ քաղաքական բերդարգելեալներ, Հայաստանի եւ Փոքր Ասիոյ գաւառներից, ամէնը ձերբակալուած 1894ից առաջ, այն է Հայկական Թղթաչէն Յեղափոխութեան հրատարակումից յետոյ, եւ մեծ կոտորածների սկզբնաւորութիւնից 2–3 տարիներ առաջ:

Հազար տարիներ առաջ կամ յետոյ, երբ Մեծ եւ Փոքր Հայաստանի զանազան տակաւին կիսանկախ իշխաններ կամ կռուելու կարող փոքր ինքնապաշտպանութեան վստահ խումբեր կռուել են աւելի զօրաւոր մահմետական իշխանների կամ ցեղապետների հետ՝ իրենց

դաւառների կամ գիւղերի եւ իրենց ազատու-թեան համար, յաճախ կամ երբեմն իրենց պարտութիւնը տանել է կոտորածների երեւոյթ::
Բայց յորմէ հետէ այդպիսի պատերազմիկ ուժեր դադարեցին Հայ ազգի մէջ, եւ Օսմանեան պետութիւնը մեծ եւ միացեալ ուժ ստացաւ, որի դէմ ոչ մի հայկական զօրութիւն չմնաց հայ ժողովրդեան մէջ, այդպէս դէթ հինգ հարիւր տարիների տիրապետութիւնից յետոյ, այս հաւանօրէն առաջին անգամն էր, որ Հայ ազգը պատիւ էր ունենում արժանանալ ունենալու քաղաքական ախտաղտով բանտարկեալներ, եւ վայելելու Աքիայի եւ Տրիպոլիսի մթնոլորտները եւ Թուրք եւ արաբ ոստիկանութիւնների հովանաւորութիւնը:

Իրենց այս նորախորձանք կեանքի բարեբաղդութեան համար նրանք երախտապարտ էին սկզբնապէս մի քանի ռուսահայ երիտասարդների, որ ուսանել էին ոչ թէ բուն հայկական այլ ռուսական գիմնազիա դպրոցներում, եւ Վրաստանի Թիֆլիսից դուրս անգիտակ էին Ռուսահայաստանի ժողովրդեան կեանքին եւ երբ ուսանում էին կամ գտնւում էին Զուիցերիայում, որպէսզի Ժէնեւի համալսարանում ուսանէին իրենց սիրելի մասնագիտութիւններից մէկը, գտան թէ չկար աւելի սիրելի եւ աւելի պանծալի մասնագիտութիւն, քան ճարտարապետել մի հրաշակերտ Հայաստան, ուր Թուրքիոյ հպատակ հայերը ապրէին ազատ

քաղաքացիներ, եւ Սուլթանի բռնակալութեան լուծը խորտակուի նրանց վզերից: Մի Հայաստան, որի ո՛չ հողն էին տեսել, ո՛չ նրա ապրող ժողովուրդը, եւ այդ ժողովրդի վզից կապուած լուծը: Եւ նրանք, իրենց բնակարանի մի անկիւնում աղօտ լոյսի տակ շարեցին հայերէն տառեր ազատամտութեան մեծաշըռինդ բառերով մի աղքատ թուղթի վրայ, որի Հնչակ վերնագիրը հեռահեռէ սփռեց իւր զատարկալից զօղանջիւնը Ժենեւի լճից մինչեւ Վոսփոր, հսկայական յոյսերով լցնելով թեթեւամիտ, անհաշուագէտ գլուխներ, եւ ազգասիրութեան զգացումների հիւրընկալութեան պատրաստ սրտեր:

Կ. Պոլիս բաց քաղաք էր: Մեծ Պետութիւնները ունէին իրենց նամակատները, եւ բնակիչները այդ փոստաների միջոցով կարող էին ստանալ աներկիւղ ամէն հակաթուրք նամակ, թերթ եւ գիրք: Այսպէս եւ ես ռուսական նամակատան միջոցով ստացայ «Հնչակ»ի առաջին եւ յետագայ ծրարներ, ըստ կարգադրութեան Ժենեւի հետ, եւ սկզբում նոյն իսկ առանց նամակագրոշմի, այնքան որ երեւի անդրամ էր Օսմանեան կայսրութեան դէմ պատերազմի պատրաստուած այդ ազատարար զօրութեան գանձարանը:

«Հնչակ»ի հնչիւնը սկսում էր հնչել եւ գաւառներում, Կ. Պոլսից իրենց գաւառական

բարեկամներին ղրկուած նամակների միջով, եւ ողորմելի կարդացողները թերթի ամէն թիւի մէջ նայում էին այնպիսի պարզամտութեամբ, որպէս թէ ամէն մէկը մէկ մէկ ռումբեր էին, պայթեցնելու Սուլթանի թագաւորութիւնը եւ պայծառացնել գոյութիւնն նորաստեղծ Հայաստանի։ Բաղդի բերմամբ, «Հնչակ»ի մի թիւ, կամ աւելի թիւեր ձեռք բերած մի ունայնամիտ հայ գաւառացի երիտասարդ, ինքն իրեն զգում էր աւելի բաղդաւոր եւ առանձնաշնորհեալ ազգասիրութեան վսեմ հորիզոնի վրայ, քան իր ուրիշ մտերիմ ծանօթներ, եւ խորհրդաւոր ձեւով, մի ծածուկ տեղում, հանում էր «Հնչակ»ը իր գրպանից եւ ցոյց տալիս։ Այսպէս, կախարդական թերթը ծածկաբար անցնում էր ձեռքէ ձեռք, եւ գաղափարի փոխանակութիւն մտքից միտք եւ այսպէս կազմւում Հնչակեան ինքնաբոյս կոմիտէներ, այն եւս գրեթէ բուն Թրքահայաստանի հողից աւելի դուրս, ուր կային հայ հասարակութիւններ, եւ անկարելի էր որ բաժին ունենային, ըստ ինքեան անհնարին Հայաստանի փառքին տիրանալու։ Եւ մտային յեղափոխութեան շարժման ընթացքին, այնպէս պատահում էր որ նրանցից մէկը անզգուշութեան կամ մեծարանութեան հետեւանօք, գաղափարական թղթաչէն յեղափոխութեան գաղտնիքը հանում էր թուրք ոստիկանութեան ականջին, եւ այսպէս հայ քաղաքական

այսպիսի գաւազիրները, իրենց բազմամաշ «Հնչակ» թերթի թիւերը ծոցերում, մուկի նըման ընկնում էին թակարդի մէջ, եւ ոստիկանների սուինների տակ տարւում էին Թրքական բանտը, զնդանը, եւ դատաւորական դատապարտութեան կնիքը ճակատների վրայ, քշւում էին հեռաւոր Աքիայի ահաւոր բերդը, կամ Տրիպոլսի եւ Ֆիզանի անապատը:

Եթէ յեղափոխութեան օդային ծրագրի ձայնը, եւ նրա տխմար առաջին ցոյցը այնքան անտեղի խառնութիւն յառաջացրեց Թուրք կառավարութեան վարմունքի մէջ, եւ այնքան ձերբակալութիւններ եւ երկիւղ հայ ժողովըրդեան մէջ, եւ եթէ զուտ խռովարարական գոյնի արարքների հետեւանօք մի քանի հարիւր հազար Թրքահայեր կոտորուեցան, ժողովրդին զինելու, կամ զինած լինելու փափուն զրոյցները կարող էին մղել հետզհետէ աւելի գայրացող Թուրքերին՝ բնաջնջել բոլոր Թրքահայութիւնը: Ուստի այս նկատումով էր որ հարցերի թէ նրանց կուսակցութիւնը ի՞նչ ուղղութեան պարտ էր հետեւիլ: Միքայէլ Յովհաննէսեան կրկնեց նոյնը.— «Մենք ամէն միջոցներ ունինք ժողովրդին ինքնագիտակցութիւն տալ եւ զինել ինքնապաշտպանութեան համար:

1894—1896ի ահեղ իրականութիւնից յետոյ ցնորական յեղափոխութեան մի խելացնոր յեղափոխական միայն կարող էր հաւատալ ա-

սել եւ պնդել մի այսպիսի բացարձակ անկարելիութիւն:

Ես հեռացայ Ժընեւից այն տպաւորութեան տակ, թէ աւելի կարելի էր ուղղել սապատողի անուղղելի ուռեցքը, քան այսպիսի մարդիկ իրենց խաբէական մտայնութիւնից, զի ժողովրդի կորուստը չէր իրենց հոգը բայց իրենց յեղափոխական արհեստի կորուստը, որը չէին կամենում կորած տեսնել:

ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԳԷՈՐԳ Ե. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ

1911 նոյեմբեր 11ին Կաթողիկոսական ընտրութիւն էր էջմիածնում: Թուրքիոյ ամէն թեմերից կային բազմաթիւ աշխարհական եւ հոգեւորական պատգամաւորներ: Ամերիկայի եւ Եւրոպայի հայ հասարակութիւնները, առաջին անգամն էր որ Ռուսիոյ Ցարից արտօնւում էին մասնակցել ընտրութեան, մէկ մէկ պատգամաւորով:

Հայկ Ամրիկեան ներկայացնում էր Ամերիկայի, եւ սոյն տողերի գրողը Եւրոպայի հայ հասարակութիւնները: Ռուսիոյ հայերը ներկայացնում էին 12 աշխարհական եւ եկեղեցական պատգամաւորներ: Թրքահայերը աւելի քան ութսուն, բացի այս եւ էջմիածնի միաբանները: Քսան եւ հինգ պատգամաւորներ խիստ հակառակ էին Գէորգ Արքեպիսկոպոս Սուրէնեանին. եւ նրանց պարագլուխն էր

Բաքուի ատամ քահանայ Գեղամեան, Րաֆֆիի հակաթուրք յեղափոխական վէպերի մըտրակիչ քննադատը հին Հայկունին: Ես ծանօթ էի Կովկասի հայ դրամատէրներին Վաղինակ անունով, որպէս Թիֆլիսի «Արձագանք» թերթի այդ ծածկանուն թղթակիցը Կ. Պոլսից: Գեղամեան երեւի մի որոշ համակրանք ունէր դէպի ինձ, եւ իր գաղափարակիցների ներկայութեամբ, ծանրապէս եւ լրջօրէն ասեց ինձ. «Պարոն Վաղինակ, ես այս անունով եմ սիրում կոչել ձեզ, եւ ոչ Տօնապետեան անունով: Դուք ուզում էք այդ մարդի կաթողիկոսութիւնը: Ես ճանաչում եմ նրան. դուք չէք ճանաչում նրան: Ես ծեր եմ 72 տարեկան, եւ դուցէ չտեսնեմ, բայց դուք պիտի տեսնէք թէ այդ մարդը եթէ Կաթողիկոս դառնայ, մեծ դժբաղդութեան պատճառ պիտի լինի խեղճ Թրքահայոց գլխին: Ցարի կառավարութիւնը իր ձեռքում մեղրամոմի պէս պիտի դարձնէ իր նպատակի համար: «Թրքահայաստան առանց Հայի». Այս էր իշխան Լոբանովի խօսքը, եւ այս է նրա յաջորդների քաղաքականութիւնը, կատաղեցնել Թուրք կառավարութիւնը իր հայ հպատակների դէմ: Առաջ յաջողեց մեր վէպերի եւ յեղափոխականների ընթացքներով այսուհետեւ էլ պիտի անել տալ այս մարդի ընթացքով: Պիտի տեսնէք»:

Ներկաներից շատեր ճեմարանի ընկերներ, եւ միւսները լաւ ծանօթներ: Ոմանք ատողներ

ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

Ցարի կառավարութիւնը, միւսները Թունդ ատողներ Դաշնակցական կուսակցութիւնը, որպէս երկուսն եւս թշնամիներ հայ ազգի։

«Այդ մարդը» դարձաւ Կաթողիկոս Ամենայն Հայոց։ Եւ իր օծումից շատ ամիսներ չանցած, դարձաւ գործիք Պետերբուրգի քաղաքականութեան։ Թէեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Էջմիածնի շրջանից դուրս գալու իրաւունք չունէր առանց ցարական հրամանի, եւ իրաւունք չունէր ձայն հանել, պաշտպանել եւ բողոքել իշխանութեանց դէմ, իր մի ծառան կամ մի բարձրագոյն արքեպիսկոպոսը բանտարկուէին եւ աքսորուէին ռուս ոստիկանութեան ձեռքով, եւ թէեւ նրա հեղինակութիւնը զուտ կրօնական էր, առանց մազաչափ քաղաքական եւ քաղաքային հեղինակութեան, եւ Ցարի պրոկուրորը նստում էր իբրեւ լրտես, հսկող նրա բոլոր ժողովներու եւ առանց նրա թոյլտուութեան ոչ մէկ որոշում կարող էր անցնել տալ։

Եւ այսպէս, քաղաքական բանտարկեալ Գէորգ Ե. Կաթողիկոս Ամենայն Հայոց, երդուեալ հպատակ Ցարի, եւ Ցարերի ուկազներով եղած փետրաթափ՝ շարժիլ, եւ իրաւազուրկ՝ խօսել եւ գործել իր ցարահպատակ հայ ժողովրդեան կեանքի պահանջների համար, եւ միջամտել նրանց ազգային դպրոցների եւ կրթութեան գործերին, եւ ահա, իրաւունքներից իրաւազուրկ Հայոց հոգեւորական

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Հայրը հրահանգ, այսինքն հրաման, է ստանում Սողանովից նշանակել Եւրոպայում մի Հայ Ազգային Պատուիրակութիւն, ներկայացնել Մեծ Պետութիւններին Թրքահայոց վիճակը Թուրք իշխանութեան տակ, եւ յարուցանել Հայկական Խնդիր պետութեանց առաջ: Այս պարզապէս նշանակում էր կաղեցնել Թուրք կառավարութիւնը, որ նա նոր կոտորածներ սկսէր իր հայ ժողովրդեան դէմ: Նա ընտրեց Պօղոս փաշա Նուպարի նախագահ, եւ ուրիշ 4–5 հայեր որպէս անդամներ այդ պատուիրակութեան, եւ շրջաբերական կոնդակներով հրահանգեց Եւրոպայի, Ամերիկայի, Եգիպտոսի եւ այլ գաղութներին, որ նրանցից իւրաքանչիւրը գրաւոր դիմէին Մեծ Պետութեանց Թագաւոր եւ անթագ Գլուխներին, նախարարապետներին, արտաքին գործոց նախարարներին, եւ ներքին գործոց նախարարին:

Այս անգուգական եղանակի նպատակն էր երեւի սարսեցնել Մեծ Պետութիւնները իրենց գլուխներից մինչեւ իրենց ոտները: Եւ էր քաղաքագիտական ախմարութեան գլուխ գործոց: Եթէ ճիշդ այսպէս չէր Ցարից կնքահայրութեամբ մկրտուած հակաթուրք Յեղափոխականապետ Հայ Կաթողիկոսի հրամանի յատուկ ձեւը այսպէս էր յամենայն դէպս նրա պատուիրակութեան գասատութիւնը իրեն հետեւողներին, որոց թիւը շուտով շատացաւ, երբ նըրանք առեան հրամանատուն Հայ Եկեղեցւոյ

միջեւ յարաբերութիւնները բարեկամական չէին, եւ միայն արհեստականօրէն էր պահւում բացարձակ թշնամութեան եւ պատերազմի պայթիւնը։ Կանոն Մակկոլ, Գլադստոնի բարեկամներից մէկը, դեռ 1896ին, գրելով իր «Սուլթան եւ Եւրոպա» գրքում եւ դատապարտելով Եւրոպայի Մեծ Պետութիւններին, որ չէին միաբանում միմեանց միջեւ՝ արգիլել հայկական կոտորածները, եւ պատժել Սուլթանին, նա ասում է « Այս մեծ յանցանքի համար պիտի գայ օրը, երբ այս պետութիւնները պիտի պատժուին մի մեծ պատերազմով, որի սպառնալիքի տակ նրանք սարսափով ապրում են տարիներից ի վեր։

Եթէ Հայ ժողովուրդը լինէր ընդունակ մի ցեղ ունենալ իր մէջ հասուն մտքեր, եւ ուղիղ կրթողներ եւ հանրային մտածման ղեկավարներ, Բերլինի Վեհաժողովի դատարկ երաշխաւորութիւնից, եւ դատարկ երաշխաւորութեան աւելի դատարկ արդիւնքից յետոյ, պէտք էր լաւ հասկանային իրենք, եւ լաւագոյնս հասկացնէին տհասներին, թէ Եւրոպա մէկ տէրութիւն չէր, բայց շահերով միմեանց հակառակ տէրութիւններ, մանաւանդ Թուրքիոյ վերաբերմամբ։ Բերլինի դաշնագրի 61րդ յօդուածի ստեղծագործութեան նպատակը ոչ այլ ինչ էր, բայց ոչնչացնել Սան Ստեֆանոյի ռուսօ-թուրք դաշնագրութեան 16րդ յօդուածը, որով Ռուսիա ներկայանում էր պաշտպան

Թուրքիոյ քրիստոնեաների կեանքի եւ ինչքի, եւ երաշխաւոր բարեկարգութեան, եւ թէ իբր երաշխաւորութիւն նա իւր ձեռքում պիտի պահէր Կարնոյ նահանգը:

Հրեայ ցեղի օրինակը մէջտեղ է, մենք ոչ տեսնում ենք եւ ոչ ի նկատի ենք առնում այդ մեծացոյց օրինակը: Մեր ցեղը համբաւաւոր է եւ Եւրոպայում շատ քիչ ծանօթ, այն եւս դըլխաւորապէս նրանց որ կարդացել են հայկական կոտորածները, եւ գիտեն որպէս հալածուած եւ կոտորուած մի ժողովուրդ: Հրեայ ցեղը մեծահսկայ է Եւրոպայում եւ Ամերիկայում: Դրամով մեծազօր է, գրագէտներով, հնարագէտներով, արուեստագէտներով համատարած այդ երկիրներում, նախարարապետներով, նախարարներով բազմաթիւ այդ մեծ պետութեանց, յատկապէս Անգլիայում, Ամերիկայում, եւ էին եւ պիտի լինեն Ֆրանսայում, եւ այս երկիրների բանւորների հզօր ընկերակցութեանց ունեն մեծ եւ ղեկավարող ուժերի անհատներ: Եւ սակայն իրենց բոլոր այս առաւելութիւններով մէկտեղ դեռ չեն յաջողում ունենալ մի մեծ Հրէաստան:

Անիրականելիութեան դժուարութիւնը ըբանումն է, որ հրեաները փոքրամասնութիւն են իրենց պատմական երկրում, թէեւ ոչ այնպիսի չնչին փոքրամասնութիւն, որպէս էին հայերը Թուրքիոյ վեց հայաբնակ նահանգներում 1896ի կոտորածներից առաջ: Իսկ 1915ի

կոտորածների բնաջնջումից յետոյ, փոքրամասնութեան խնդիր եւս չմնաց: Հայկական Դատի պաշտպանութեան համար, բացի բարոյական եւ խղճի արդարութեան դատից, պատժել ոճրագործ կառավարութիւնը: Բայց ո՞վ է այժմ որ պիտի մտածէ պատժել արդէն երեսուն եւ վեց տարիներ առաջ սպաննուած ոճրագործ Թուրք կառավարութիւններին, երբ ոչ ոք ուզեց, եւ ոչ ոք յաջողեց պատժել նրանց երբ նրանք կենդանի էին արիւնաներկ ձեռներով:

Հրեաները իրենց միջազգային ահագին ազդեցութեամբ ունէին անհունօրէն աւելի վստահութեան հիմք՝ յուսալ եւ ձեռք բերել հրէական հայրենիքը, այնու ամենայնիւ, եթէ նրանց ջերմեռանդ եւ կեղծեռանդ հայրենասէրները վարուէին այնպէս, ինչպէս մերայինք վարուեցան, երկիրը բաժանել Օսմանեան Կայսրութիւնից, Պաղեստինի եւ այլ տեղերի հրեայ բնակիչների ճակատագիրը պիտի լինէր համանման: Բայց նրանք քայլեցին մեծ զգուշութեամբ համբերատար յոյսը դրած ապագայի

Բեռլինի Կոնգրէսին 61րդ յօդուածին մէջ ոչինչ կար Թուրքահայ ժողովրդեան սիրոյ համար, բայց դուրս քշել Ցարի զօրքը եւ հովանաւորութիւնը Էրզրումից: Մինչեւ իսկ Հայ պատուիրակութիւնը, առանց անձամբ ընդուն-

ւելու Վեհաժողովի ներկայութեան, Բերլինից դատարկաձեռն վերադարձաւ, մէջտեղ ելաւ, որ Հայ պատուիրակութիւնը Թուրք կառավարութեան անուղղակի թելադրութեամբ եւ թոյլտուութեամբ գնացին Բերլին, իրենց բարենորոգման շրջանի մէջ պահանջելով նաեւ էրզրումի նահանգը, այս հնարքով մի նոր պատճառ յառաջ բերելու Ռուսիոյ դէմ, թէ հայերն իրենք արդէն պահանջում էին էրզրումի նահանգը:

Այս խաղը դառնում էր Թուրք կառավարութեան բարձրաստիճան հայ պաշտօնեաների միջոցով, Պատրիարքի եւ նրա կրօնական եւ քաղաքական գործոց խորհրդականների հետ: Պատրիարք, Կեդրոնական Վարչութիւն, -ուրիշ բառերով Թրքահայոց Սահմանադրութեան հայ գործոց կառավարութիւնը, եւ Ազգային ժողով, սրանք ամէնը իրենց անդամներով միասին Սուլթանի հպատակներ էին եւ իրենց այդ պաշտօնները ստանալիս, նրանք երդուել էին հաւատարմութիւն Սուլթանին: Ուստի, շատ տարօրինակ պիտի լինէր որ ընդհանուր Թրքահայոց այդ Ազգային ժողովը, նստած Սուլթանի մայրաքաղաքի մէջ, վիճաբանէր եւ պատրաստէր յիշատակագիր՝ պահանջելով բարեկարգութիւններ էրզրումի եւ յարակից նահանգների համար, եւ համարելով նրանք հայկական շրջանակ, եւ Բերլինի Վեհաժողովից պահանջել նրանք, որպէս հայ ազ-

գի խրատունք ընդդէմ Թուրք կառավարութեան:

Ռուս կառավարութիւնը այդ յիշատակագրով տեսաւ թէ՝ այդ մի խաղ էր իւր դէմ, որին գործիք էր եղել Հայոց Պատրիարքը եւ Թուրք կառավարութեան կարգադրութեամբ, եւ այս պատճառաւ վատ ընդունելութիւն եւ յանդիմանութիւն արեց նա Խորէն արքեպիսկոպոս Նարբէյին եւ Ազգային ժողովի անդամ Ստեփան Փափազեանին, որ իբրեւ պատուիրակութիւն ղրկուած էին Պետերբուրգ: Խորէն արքեպիսկոպոս վերադարձաւ Կ. Պոլիս, նուաստացած եւ դժգոհ, որ ղրկել էին իրեն Պետերբուրգ, եւ ուր ռուսները յայտնել էին Հայոց կատարած դերը Ռուսիոյ, եւ նա պատմեց այս իւր նախկին աշակերտ Թադէոս Բէգդեանին, որ այդ միջոցին խրատարան էր եւ անդամ Ազգային ժողովին:

Եւ եկաւ մեծ Ազգային ժողովի օրը, առնել եւ լսել Բերլինի Վեհաժողովին դիմելուց ձեռք բերուած մեծ արդիւնքը Հայ ազգի համար: Ներսէս Պատրիարք, ժողովի նախագահը, շատ փայլուն եւ փառաւոր ներկայացրեց այդ արդիւնքը, եւ ժողովը եւ ժողովուրդը մեծ ցնծութեան մէջ էին, եւ ծափահարութիւն ծափահարութեան ետեւից, երբ Թադէոս Բէգդեան, բռնած իւր ձեռքում Բերլինի Դաշնագրի նորատիպ Ֆրանսերէն օրինակը եւ ուղղելով զայն

դէպի Ներսէս Պատրիարք, գոչեց չափազանց կծու բառերով, որոց մօտաւոր իմաստն էր.—

«Ձեր պատուիրակութիւնը իրական եւ գործնական ոչինչ ստացաւ Բերլինի Վեհաժողովէն, նա անձամբ չը կանչուեց եւ չընդունուեցաւ Վեհաժողովի առաջ, բայց միայն նորա յիշատակագիրը: Դուք կը խաբէք այս ժողովը, ազգը՝ ճշմարտութիւնը չը խօսելով: Պատուիրակութիւնը գնաց մեծ յոյսերով, եւ վերադարձաւ բոլոր ձեռնունայն: Դուք սուտ կը խօսիք, եւ դաւաճան էք»: Թէրեւս նախադասութիւնները աւելի լի էին քան այս կարճ խօսքերը:

Ներսէս սաստիկ յուզուած, յայտարարեց թէ ինք հրաժարւում էր Պատրիարքութիւնից, եւ ժողովը վրդովուած, ժողովից դուրս հանեց անդուսպ անդամին:

Այդ օրից մինչեւ իր մահը, Ներսէս շատ անգամներ քննադատութեան եւ պարսաւի առարկայ եղաւ թէ՝ նա այդ քաղաքականութեամբ էապէս ծառայեց Թուրք կառավարութեան սարքած նպատակին, եւ ամէն անգամին հրաժարական տուաւ, եւ ամէն հրաժարականը ետ առաւ իր կողմնակիցների խնդրանօք: Հակառակորդները աւելի զօրացան իրենց ամբաստանութեան մէջ, երբ Սուլթան Համիդ իր Եըլդըզի պալատից 3–4 մղոն հեռու Վոսփորի բարձունքի վրայ, գեղատեսիլ գիւղերից

մէկում մի վայելուչ տուն նուիրեց Ներսէս Պատրիարքին հանգստաւէտ բնակութեան համար: Տակաւին ես Թիֆլիսում էի, երբ այս լուրը հրատարակուեց, և նրա հետ զրոյցը տարածուեց նաև Կովկասում թէ՝ Ներսէս կաշառուեց Սուլթանից, և Հայկական Դատը ծախեց Սուլթանին մի տան փոխարէն: Եւ Ներսէսի պաշտողներին սիրոյ կրակը սկսեց կորցընել իր բուռն բոցերը:

ԼՈՐՏ ԲՐԱՅՍ

ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ

Ի՞ՆՉ ԱՆՑԱՒ 1912ԻՆ

«Արձագանգ Փարիզի»ի 25 փետր. 1917 ի մէջ երեւցաւ Լորտ Բրայսի մի ճառն որ ծերունի անգլիացի քաղաքագէտն 1916 նոյեմբեր 30ին ուղղեց Ամենայն Հայոց Կաթողիկոսի մե ծարանաց Կոնդակն իրեն մատուցանող մի հայ պատուիրակութեան: Այդ ճառի մէջ կար մի ազդու յանդիմանութիւն որ հայ ժողովրդեան 43 տարուայ անգլիացի բարեկամն ակնարկած էր մեր ազգի քաղաքական ճակատագրի անխորհուրդ, անշրջահայեաց եւ սանձարձակ ՈԳԻԻՆ:

Պատուիրակութեան այն բազմաթիւ անդամներն, նամանաւանդ այն հայերն, որոց կը վերաբերէին կամ կ'ակնարկուէին այդ խօսքերն, արդեօք կարդացի՞ն կամ փոքր ինչ տը-րամաբանութիւն գործածեցի՞ն հասկնալու

այդ յստակ ակնարկութիւնը, արդեօք նոքա խղճի մտօք խորհրդածեցի՞ն այդ խօսքերի նշանակութեան վրայ,— Ամենեւին, որովհետեւ ամբողջ 25 տարի նոքա ամենայն յամառութեամբ մերժեցին հասկնալ. իսկ այժմ հայկական ճակատագրի այս վերջին եւ մեծագոյն ողբերգութենէն յետոյ, զիջանիլ հասկնալն պիտի նշանակէր իրենց ճակատին վրայ ընդունել դատապարտութեան խարանը, փոխանակ փաստաբանութեան պսակին:

«Ձեր անգլիացի բարեկամները յաճախ ստիպուած էին խնդրելու ձեզ, որ համբերող ըլլաք. համբերող՝ հարստահարութիւններու ներքեւ, որոնք արդարացուցած են ապստամբութիւնը, եթէ երբէք ապստամբութիւնը յաջողութեան յոյս կրնար ունեցած ըլլալ»:

Դիւանագիտական այս լակոնական խօսքերը քաղաքավարի բայց աներկդիմի մի պարսաւ էր այն աղէտաբեր գործելակերպին, որով մենք շարժուած ենք Հայկական Խնդրի վերաբերմամբ՝ 1888*էն մինչեւ* 1915*: Բրայսի սոյն յայտարարութեան անտաշ բայց հարազատ իմաստն այս է,—*

«Անցեալին մէջ ձեր քաղաքական պահանջի մասին դուք վտանգաւոր կերպով կը գործէիք, եւ այն աստիճան վնասակար ձեր ժողովրդեան շահին որ յաճախ ձեր անգլիացի

թարեկամները ստիպուած էին խնդրել ձեզ՝ հանդարտ կենալ, լինել համբերող, համբերող հարստահարութեանց տակ, մինչեւ անգամ այնպիսի հարստահարութեանց տակ որոնցով յեղափոխութիւնը արդարանալի նկատուէր յաչս աշխարհի. Ձեր անգլիացի անկեղծ բարեկամներն հայկական յեղափոխութեան յաջողութեան հեռանկար ,յոյս չկարենալ տեսնելուն պատճառաւ էր որ ստիպուած էին խընդրել ձեզ համբերող լինել ի սէր ձեր ժողովըրդեան շահերին, մինչեւ որ միջազգային քաղաքականութեան պայմանները նպաստէին հայկական խնդրի լուծման»:

Իմ այս լուսաբանութիւնն՝ Լորտ Բրայսի փափկանկատ արտասանութեան՝ չունի իր մէջ ո եւ է չափազանցութիւն կամ յերիւրանք: Հայոց Կաթողիկոսի Կոնդակին պատասխանող անգլիացի քաղաքագէտն իր այս խօսքերով պարզապէս թարգման կը հանդիսանար Անգլիոյ 39 տարուայ քաղաքականութեան եւ նորա դիւանագիտական պաշտօնական արտայայտութեանց, որ կան տպուած, եւ որ մատչելի են ամէն ուսումնասիրելու փափագ ունեցողին: Բայց մանրակրկիտ քննութեան առնուած եւ ազդուապէս արտայայտուած հայկական հարցին վերաբերեալ այդ անհերքելի, ամենակենսական փաստերը բուն սկիզբէն մինչեւ այս տողերը գրելու պահէն մնացած են անուշադիր, անուսումնասիրելի եւ արհամարհելի

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Հայ ժողովրդեան ճակատագրին հետ խաղացող մի կարգ յոխորտաբան անհատներէ. Նոցա լեզուի վրայ եւ նոցա շանթարձակ մամուլի մէջ պետութիւնները հսկայական ոչնչութիւններ էին, քաղաքագէտները՝ խարդախներ, եւ նոցա դիւանագիտութիւնը ՝խարդախութիւն: Այսպէս մեր ժողովրդեան ամէն խաւերի մէջ յառաջացան անհամար թերուսներ, որոնք անհանդուրժելի գիտնականութեան հովերով վարակուած, ունակութիւն ստացան մեծաբանօրէն յեղյեղելու այս մոլորեցուցիչ ադիտաբանութիւնը:

Լորտ Բրայս իր խօսքերով կ'ուզէ մեզ մըտաբերել տալ այն ինչ որ նոյն ինքն պր. Բրայս հմուտ քաղաքագէտ Չարլս Դիլկ, Գլադստոն եւ այլ բարեացակամ անգլիացիներ, ըստ հետեւողութեան իրենց պետութեան քաղաքական տեսութեանց, 1890էն յետոյ յաճախ ըստիպուած էին մեզ ապացուցել թէ ցուցարարութիւններ կամ անպատեհ քաղաքական դըրդումներ կարող էին վտանգաւոր լինել հայ ժողովրդեան շահերին, առանց ո եւ է արդիւնաւոր ելքի հայկական խնդրի լուծման համար: Անցեալին մէջ այսպիսի դիտողութիւններն ու տեսութիւնները Անգլիոյ պաշտօնական եւ անպաշտօն քաղաքագէտներէն մեր ամբարտաւան մտքերի առաջ կ'որակուէին իբրեւ «շահախնդիր դիպլոմատների կողմից եղած նպատակաւոր խաղեր, որոնց հայ ռէվօլիւցի-

այն անընկճելի ռահվիրաները զզուանքով մի-
այն կարող էին պատասխանել եւ վերաբեր-
ուել»: Զարմանալի չէ որ հիմա եւս հայկական
ռեվոլիւցիայի այդ խելքի անընկճելի ռահվի-
րաներից մէկը հրապարակ կ'իջնէ եւ «մար-
տիրոսացեալ հայ ազգի սէրիցը մղուած» հա-
յութեան ամենավտանգաւոր դաւաճանը կ'ան-
ուանէ զիս, այն պատճառաւ որ համարձակած
եմ վերաբանալ այդ բառ ինքեան բացայայտ
անցեալն եւ իմ ուսումնասիրութիւնն ու զա-
տողութիւնը հիմնել այդ իսկ վաւերական փաս-
տերի ու կարծիքների վրայ:

Ոճրագործները թշնամի են լոյսի:

Ո՞ր բանաւոր ուղեղի տէր մարդ կարող է
եզրակացնել թէ Բրայսի, կամ ո եւ է գիտողի
այսպիսի խօսքը մտադրեալ է կամ արտայայ-
տուած է արդարացնելու համար Թուրքի զա-
գանութիւնը: Մեր սխալագործներն իրենց ինք-
նապաշտպանութեան նրբամիտ նկատումներով
այսպիսի կեղծ սոսկումներ կը յերիւրեն եւ մեր
միամիտներն ալ թութակների պէս կը յեղյե-
ղեն նոյն իմաստազուրկ պատճառաբանու-
թիւնը:

Լորտ Բրայսի անունին այսօր ամենուրեք
երկրպագու մեր ազգային փարիսեցիների ա-
ռաջ կը դնեմ հետեւեալ պարզ հարցումները.—
Ամենամեծ Եւրոպացի Հայասէրն ճանաչուած
այս պատկառելի ծերունին, եթէ մեր սխալա-
գործների յանցանքն այսպէս մեր երեսին զար-

կաւ այդ հանդիպաւոր առիթին, ի՞նչ զգացումէ դրդուած էր. արդեօք Թրքապաշտպա՞ն թէ՞ Հայապաշտպան: Մասնաւոր անհատների կամ մարմինների սխալն ու կուրամտութիւնը բարոյական սկզբունքի տէր ժողովրդոց համար արդեօք ազգային արժանապատուութիւն կը նկատուի՞ն, թէ՞ անպատուութիւն: Արդեօ՞ք կը նուիրագործուին եւ կը քօղարկուին, թէ՞ կը դատապարտուին: Ո՞վ է Հայ ցեղի եւ Հայ ցեղի բարոյականի իրական դաւաճանը: Նա՞ որ Լորտ Բրայսի ուղիղ, պատուաւոր եւ փրկարար սկզբունքը կը դաւանէ եւ կը ձգտի որ Հայ հասարակութիւնն եւս սնանի եւ լուսաւորուի այդ սկզբունքով ու ճանաչէ սխալագործութիւնն եւ սխալագործն որպէս ժողովրդային շահերի ամենամեծ թշնամին, թէ՞ նա որ անուանարկութեան եւ ահաբեկութեան անարգ հնարքներով կ'ուզէ լռեցնել այդ սկզբունքն քարոզողին, եւ որ ամէն ճիգ կը թափէ սխալագործութեան եւ սխալագործի բռնակալ իշխանութիւնը անխախտ պահել տալ մեր ժողովրդեան բաղդի հետ կապուած խնդրոց մէջ իբրեւ անքննադատելի եւ անմատչելի մի սրբութիւն:

Լորտ Բրայսի կակուղ յանդիմանութիւնն իմ աչքիս առջեւ կը պատկերացնէ 1912 դեկտ. 5ի Հայ ներկայացուցչական մի ժողովն որ տեղի ունեցաւ Լոնտոնի մէջ խորհրդակցելու համար Գէորգ Ե. Կաթողիկոսի մի շրջաբերական հրահանգի մասին, որով կը պատուիրուէր

ՀԷՆՐԻ Ֆ. Բ. ԼԻՆՉ

տեսակցութենէն առաջ, որովհետեւ միեւնոյն առաւօտ մի նամակ ստացած էի Լինչէն դեկտեմբեր 4 թուակիր, որով նա իր զարմանքը կը յայտնէր իրողութեան համար եւ քաղաքկեալ ոճով ծանրապէս կը մեղադրէր հայ ազգի ներկայացուցիչները: Նամակի վրայ մակագըրած էր «մտերմական», բայց ի տես խնդրի լուրջ հանգամանքներին, եւ ի լուր առարկութեանց թէ կարեւորութիւն չպէտք է տալ այդ անգլիացւոց կարծիքին, ստիպուեցայ ժողովի մէջ կարդալ այդ նամակը: Տակաւին մտքիս առաջ պատկերացած կ'երեւի մի ոչ- յեղափոխականի, ազգի փրկութեան համար մատին ծայրն իսկ չը զոհող, բայց սատրապաբար մի ազգասէրի արհամարհոտ շարժուածքն ի նախատինս Լինչի եւ միւս խորհրդատու անգլիացւոց որոց խրատն եւ արդար յուզմունքը մի միայն Թուրքիոյ հայ ժողովրդեան բարիքին համար էր. տակաւին ականջիս կը հնչէ խելացի ազգասէրի համբաւ վայելող այդ ձրի ազգասէրի (քանզի մեր մէջ բոլոր ձրի ազգասէրները խելացիի համբաւ կը վայելեն) հետեւեալ յանդուգն հրամանաբանութիւնը.—

«Ալ բաւ է որքան խաբուեցանք այդ անգլիացիներէն, մեր ազգի կործանման պատճառ եղան. պէտք չունինք, թող իրենց մնան իրենց խորհուրդները: Ինչ որ մեր Կաթողիկոսն ու ռուս կառավարութիւնը մեզ խորհուրդ կուտան մենք անանկ պիտի վարուինք: Թող տասն հա-

պար հայեր ալ ջարդուին, բայց Հայաստանը Ռուսիոյ ձեռքով թող ազատի եւ ոչ Անգլիոյ»:

Հայ ժողովրդեան շահի ո եւ է անխարդախ հոգածու, Անգլիոյ այս ազդարարութիւնը նըւիրական պարտք պիտի համարէր տեղեկագրել Կաթողիկոսին, եւ ոչ թէ այսպէս խօսէր: Եւ մի ազգի մէջ երբ ժողովրդեան մահու եւ կենաց խնդիրն այսպէս սանձարձակօրէն ենթակայ է ամբարտաւանութեան, անբարեխըղճութեան եւ բարոյականութենէ զուրկ սկըզբունքի Ոգիին, այնտեղ անկարելի է որ դըժբաղդութիւնն ու աղէտը չբարձրացնեն իրենց գլուխը եւ հիմնայատակ չընեն ժողովրդեան երջանկութիւնն ու գոյութիւնը:

Լորտ Բրայսի այս արդար յանդիմանութիւնն մեր անցեալի խրատամերժ յամառութեան մասին իմ աչքի առաջ կ'արձանացնէ «ազգապաշտպան» Մ. Վարանդեանը, որ կռթնած «հայ ժողովրդեան անձնուրաց գործիչ»ի իր ինքնատուր իրաւունքի վրայ, ամենայն յանդգնութեամբ, առանց ամաչելու, զիս ի լուր աշխարհի կ'անուանարկէ որպէս հայ ժողովրդեան շահերի դաւաճանների մէջ «ամենավըտանգաւոր արարածն», «արժանի հնձուելու հայ տեռռոխասի գերանդիէն»: 1912 դեկտեմբեր 10ին, հայ ազգի այս նախանձախնդիր ախոյեանը Բարիզէն ինձ գրեց հետեւեալը.—

. . . Այժմ ճիշդ յարմար առիթն ենք համարում հայկական հարցը վերարծարծելու . .

դար հայեր ալ ջարդուին, բայց Հայաստանը Ռուսիոյ ձեռքով թող ազատի եւ ոչ Անգլիոյ»:

Հայ ժողովրդեան շահի ո եւ է անխարդախ հոգածու, Անգլիոյ այս ազգասիրութիւնը նըւիրական պարտք պիտի համարէր տեղեկագրել Կաթողիկոսին, եւ ոչ թէ այսպէս խօսէր: Եւ մի ազգի մէջ երբ ժողովրդեան մահու եւ կենաց խնդիրն այսպէս սանձարձակօրէն ենթակայ է ամբարտաւանութեան, անբարեխըղճութեան եւ բարոյականութենէ զուրկ սկըզբունքի Ոգիին, այնտեղ անկարելի է որ դըժբաղդութիւնն ու աղէտը չբարձրացնեն իրենց գլուխը եւ հիմնայատակ չընեն ժողովրդեան երջանկութիւնն ու գոյութիւնը:

Լորտ Բրայսի այս արդար յանդիմանութիւնն մեր անցեալի խրատամերժ յամառութեան մասին իմ աչքի առաջ կ'արձանացնէ «ազգապաշտպան» Մ. Վարանդեանը, որ կըթնած «հայ ժողովրդեան անձնուրաց գործիչ»ի իր ինքնատուր իրաւունքի վրայ, ամենայն յանդգնութեամբ, առանց ամաչելու, զիս իլուր աշխարհի կ'անուանարկէ որպէս հայ ժողովըրդեան շահերի դաւաճանների մէջ «ամենավըրտանգաւոր արարածն», «արժանի հնձուելու հայ տեռորիստի գերանդիէն»: 1912 դեկտեմբեր 10ին, հայ ազգի այս նախանձախնդիր ախոյեանը Բարիզէն ինձ գրեց հետեւեալը.—

. . . Այժմ ճիշդ յարմար առիթն ենք համարում հայկական հարցը վերարծարծելու . .

Արդէն նշանաւոր Ֆրանսացիներից մի կոմիտէ կազմելու վրայ ենք . . . եւ մտադիր ենք մի Ֆրանսերէն թերթ հրատարակել մեր դատի պրոպագանդայի համար: Բայց նախ քան այդ շատ ցանկալի կը լինէր իմանալ՝ ի՞նչ է մըտածում պր. Լինչը. նրա կարծիքը ահագին նշանակութիւն ունի, ուստի խնդրեմ տեսնուէք հետը եւ անմիջապէս ինձ իմաց տաք . . . »:

Իմ հասցէն չիմանալով, Վարանդեան իւր նամակն ուղղած էր Րաֆֆիի միջոցաւ: Շտապեցի պատասխանել թէ՝ Լինչ հիմնովին դէմ է այդ բոլոր քայլերին, եւ կը համարէ կորստաբեր Թուրքիոյ հայ ժողովրդեան համար. նոյնպէս յառաջ բերի մի քանի տողեր մի երկրորդ նամակէ, որ Լինչ գրած էր ինձ դեկտ. 5ին, վերոյիշեալ հայ պատուիրակին այցելութենէն յետոյ: Սոքա էին այդ տողերը «. . .Կը խընդրեմ հայերը թո՛ղ հանդարտ կենան եւ ոչինչ թոյլատրեն երեւիլ մամուլի մէջ իրենց քաղաքական պահանջների մասին մինչեւ որ պատերազմը վերջանայ եւ ամէն ինչ կարգի մտնէ: Այլապէս վատ կոտորածներ կը լինին . . . » (Տես «Արմէնիա» Փորթուգալեանի թիւ 22, 1912 դեկտ. 19 հ. տ.):

Ինձ նման ուրիշ շատ շատեր եւս գիտեն թէ, ամէն հեղինակաւոր կարծիք, նոյն իսկ Աստուծոյ կարծիքը, եթէ ստորագասաբար զուգընթաց չէ մեր միահեծան ազգափրկիչների անսասանելի նպատակակէտին, դատա-

պարտուած է իր «ահագին նշանակութենէն» վերածուելու արհամարհելի աննշանակութեան: Վարանդեան արհամարհեց այն կարծիքն, որ գիտենալն ինքն էր խնդրած: Տգէտ Եւրոպան բերանաբաց նորան կսպասէր սորվելու համար թէ ի՞նչ է հայկական հարցն, ո՞վ է հայ ազգն ,եւ ի՞նչ է Թուրքիա կոչուած երկիրը կամ Թուրք կառավարութիւնը· ուստի եւ-նա սկսաւ հրատարակել իր Փրանսերէն թերթը, մէկն այն տեսակի հրատարակութիւններէն, որոց ընթերցողն ոչ ոք է, որոց գոյութեան արժէքը հաւասար է ոչնչութեան եւ որոց մեծախորհուրդ երեւոյթը կը ծառայէ մերձաւոր ինքնախաբէութեան եւ հեռաւոր ազգախաբէութեան սուրբ նպատակին:

— «Պիտի ընենք ինչ որ Ռուս կառավարութիւնը խորհուրդ կուտայ», կը գոչէր մեր խելօք «ազգափրկիչը», Լոնտոնի ներկայացուցչական ժողովին մէջ:

Բայց եկ տես, որ Լորտ Բրայսի այդ խօսքերը արձագանգն իսկ էին ռուս կառավարութեան տուած խորհրդին: Անգլիոյ քաղաքական շրջանակին մէջ այն գաղափարն էր յառաջացած թէ հայկական խնդիրն արծարծելու այդ քայլն՝ որ հայկական կոտորած առեղծելու մի չարժառիթ կարող էր լինել՝ Ռուսիոյ թելադրութեան մի արդիւնքն էր: Արդեօ՞ք այս գայթակղութիւնը փարատելու եթէ ոչ մի այլ նպատակաւ էր, որ Ռուսիոյ Արտաքին

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Գործոց Նախարար Սազոնով հարկ տեսաւ մի մտերմական ճեպագիր ուղղել Լոնտոնի ռուսական դեսպանին՝ ի գիտութիւն անգլիական կառավարութեան հետեւեալ բացատրութեամբ

— «Վերջերս կայսերական կառավարութիւնն ամէն կողմերէ հայ ժողովրդեան եւ եկեղեցականութեան ներկայացուցիչներէ կըստանար թախանձագին դիմումներ՝ Թուրքիոյ միջամտութեան համար ի նպաստ Փոքր Ասիոյ մէջ ապրող հայերին, մինչեւ անգամ զինուորական գրաւման համար այն նահանգներին ուր կենտրոնացած է հայ ժողովուրդը . . . Հայերի աղերսներին ի պատասխան մենք . . . միեւնոյն ժամանակ մատնացոյց կընենք իրենց թէ իրաց արդի պայմաններին մէջ, երբ բալկանեան տագնապը տակաւին վախճան գտած չէ, Հայկական Խնդրի յարուցումը անդէպ պիտի նկատուի նոյն իսկ իրենց հայոց շահերի համար . . (Տես Նարնջագոյն Գիրք պաշտօնագիր թիւ 5, 13 դեկտ. 1912)։

Ռուսիոյ այս որոշ ազդարարութիւնն, որ անշուշտ դեկտեմբերէն առաջ տրուած լինելու էր Ռուսահայ ներկայացուցիչներին, հաղորդուած է ի Լոնտոն Լինչի եւ իր համախոհ անգլիացի քաղաքագէտների ազդարարութենէն 21 օր յետոյ։ Արդ, պաշտօնական Ռուսիան, անգիտակցաբար, հաստատած էր անպաշտօնական Անգլիոյ տեսակէտը, կրկնած միեւնոյն ազդարարութիւնն եւ տուած միեւ-

նոյն խորհուրդը: Հետեւաբար, յոյժ անտրամաբանական կը թուի որ Հայ Ազգի Հոգեւոր Պետն ընտրէր ճիշդ այն քայլն, որ պաշտօնական Ռուսիայէն իրեն կ'ազդարարուէր իբր վըտանգաւոր քայլ բուն իսկ իր հօտին ի վնաս: Ի՞նչ է ուրեմն այն խորհրդաւոր արտակարգ պատճառն որ ստիպեց Ամենայն Հայոց Հայրապետին գործել հակառակ Ռուսիոյ բացայայտ եւ բացարձակապէս բանաւոր խորհուրդին: Մի՞թէ հայ ժողովրդեան կեանքն իր էութեամբն եւ իրաւունքովն աւելի սուրբ եւ աւելի նուիրական չէ քան ո եւ է պայմանական եւ արհեստական սրբութիւն: Կարո՞ղ են Ռուսիոյ հայ ժողովրդեան եւ եկեղեցականութեան ներկայացուցիչներն երդնուլ Աստուծոյ եւ իրենց խղճի առաջ թէ Ռուսիոյ պատասխանն իրենց դիմումներին չէր այն, ինչ Սազոնով ըշտապած էր ի վերջոյ ծանուցանել իր Լոնտոնի դեսպանին: Եթէ այն չէր, անշուշտ իրենց պարտականութիւնն էր գէթ 1914ին կարդալ Նարնջագոյն Գիրքն, տեսնել Սազոնովի յայտարարութիւնն եւ մտածել այդ ամէնի վրայ: Ինչո՞ւ միեւնոյն քայլը առնուեցաւ Նարնջագոյն Գրքի երեւումէն յետոյ ալ:

Սակայն ազգային պարտականութեան գիտակցութիւնը եւ խիղճը հայութեան «փրկիչներին» հոգւոյն մէջ ընդունած է մի առաձգական բնութիւն, որի մէջ ամէն յանցանք կը սըրբանայ երբ գործողն իրենք են: Բայց անուրա-

նալի փաստը մէջտեղն է,— ինչպէս Անգլիա, նոյնպէս եւ Ռուսիա, խրատեցին եւ ազդարարեցին Հրապարակի վրայ դերակատար «ազգափրկիչ»ներին չյուզել հայկական հարցի պահանջն ,որովհետեւ այդու Թուրքիա կարող էր կոտորել իր հպատակ հայ ժողովուրդը: Անուրանալի փաստը մէջտեղն է,— « ազգափրկիչ»ները արհամարհեցին իրենց տրուած խրատները եւ բռնեցին այդ խրատների հակառակ ուղղութիւնն որտեղէն կը բացուէր մահւան դուռը Թուրքիոյ հայ ժողովրդեան կեանքի առաջ:

Բոլոր այս վաւերական փաստերի եւ նոցա տրամաբանական եզրակացութիւնների դէմ մեր ազգի այդ դերի պատասխանատու եւ անպատասխանատու գործիչները կարող են, եւ ընդունակ են ,պարծանքով փաստաբանել թէ իրենք իսկապէս աւելի խելացի քաղաքագէտ դուրս եկան քան Ռուսիոյ Արտաքին Գործոց Նախարարն կամ այն դառանցող անգլիացիներն, ապացոյց որ 1912ին կոտորած չեղաւ:

Այդ եղերական թուականին, ըստ տրուած հրահանգի տրամադրութեան, հայկական խընդրի պահանջի գրեր ուղղուեցան Պետութեանց Գլխաւորներին, Նախարարապետներին, Արտաքին եւ ոմանց եւս Ներքին Գործոց Նախարարներին՝ առանձին առանձին, այնպէս որ Եւրոպայի արքայական պալատներէն մինչեւ նախարարական պաշտօնատները թնդացին

հայկական դիմումների արձագանգով։ Այլապէս եւս սպասել չէր կարելի, քանի որ պահանջագիրները շարադրուած էին Լոնտոնի եւ Բարիզի մեծագոյն հայ ուղեղների քրտնաթոր մրցակցութեան հանդիսաւոր խորհրդակցութեամբն։ Եւ հանճարեղագիտ ու մեծագործ դիմումներէն ծնաւ մէկ հատիկ արժանաւոր զաւակ, որ ցարդ անյայտ կը մնայ հայ ազգին։ Ֆրանսայի Հանրապետութեան Նախագահին ուղղեալ շքեղագիր, մեծախնամ մագաղաթագիր, Հայոց յոյսն ուլոյսը կազմող այդ շարադասութեան լոկ վերնագիրն եւ ստորագրութիւնն կարդացուած էր պր․ Նախագահէն կամ հաւանաբար միայն իր քարտուղարէն, պարունակութեան ընթերցումն թողլով Ֆրանսայի Նախգ․ Դիւանատան ապագայ մի հայ հնախոյզի, որ անշուշտ չպիտի թերանայ այդ մժղուկէն մի ուղտ արտադրել իր ժամանակակից հայութեան առաջ ի պարծանս 1912ի ազգային գործիչներին։ Այդ փառաւոր խընդրագիրն զուգադիպելով Ծնունդի եւ Նոր Տարիի միջոցին, կարծուեցաւ լինել տօնական մի շնորհաւորագիր Եւրոպայի Հայոց Առաջնորդի եւ հայ հասարակութեան կողմանէ․ ուստի եւ Նախագահի քարտուղարն Լիվրպուլի Փրանսական հիւպատոսի միջոցաւ մի պատասխանագիր ուղղեց Հայոց Առաջնորդին ի Մանչէսթըր յայտնելով Նախագահի շնորհակալութիւնը, եւ Ծնունդի ու Կաղանդի փոխադարձ

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

շնորհաւորումն իրեն եւ իր թէմի հայ հասարակութեան: « Ահա մեր մեծախնամ եւ բազմայոյս դիմումին արդիւնքն », դառն հեգնութեամբ ըսաւ Առաջնորդը, տալով ինձ կարդալու յաւերժական յիշատակաց արժանի այդ պատասխանագիրը: Անգլիոյ Արտաքին Գործոց նախարարութեան պաշտօնատունէն, ըստ անգլիական անվրէպելի սովորութեան, պատասխան տրուեցաւ Առաջնորդին թէ գրութիւնն ստացուած էր, երկու տողէ բաղկացած մի չոր ու ցամաք պատասխան: Իսկ Ռուսիա եւ միւս պետութիւններն եւ նոցա նախարարները պատասխանի անգամ արժանի չհամարեցին եղած դիմումը:

Այդ դիմումը դիւանագիտական խակութեան մի գլուխ գործոց էր, որ հանդիսաւորապէս գործուեցաւ Հայ ազգի անունով: Եւ սակայն մեր սնապարծ փրկիչները կը փաստաբանեն թէ 1912ի այդ դիմումների շնորհիւ եւ պատճառաւ էր որ յետոյ, 1913ին, պետութիւններն ստիպուեցան ձեռք առնել Հայկ. Խնդրի լուծումը: Այսպիսի չինծու եզրակացութիւնն արդիւնք է այն անբուժելի ինքնախաբէութեան ոգիին, որով մեր այդ կարգի խելացի եւ անխելք ուղեղներն այնքան բազմահարուստ են:

Ահաւասիկ այդ խաբէական ջատագովութեան ջախջախիչ ապացոյցը՝ արտասանուած Սազոնովի կողմէն նոյն թ. 5 1912 դեկտ. 26ի

ԴԱՐԵՐՈՒ ՄԻՋՈՎ

ճեպագրին մէջ առ ռուսական դեսպան Լոնդոն.

«. . . Այժմ դժուարաւ կարելի է յոյս դնել պետութեանց լիուլի միաձայնութեանց վրայ, եթէ Հայկական Խնդիրն միջազգային քննութեան դրուի: Միւս կողմանէ ո եւ է կարգի անմիաբանութեան յայտնութենէն Թուրքիա առիթ պիտի քաղէ . . . : Առանց ամենեւին անգիտանալու Հայկական Խնդրի բոլոր կնճռոտութիւններն եւ դժուարութիւնները, մենք այնու ամենայնիւ անհրաժեշտ պիտի նկատենք մինչեւ անգամ այժմ կարծեաց յօժարամիտ փոխանակութեան մէջ մտնել Բարիզի եւ Լոնտոնի Դահլիճների հետ կարծեաց ընդհանուր ձայնակցութիւն եւ համագործակցութիւն հաստատելու նպատակաւ»:

Ռուսիոյ Արտաքին Գործոց Նախարարի այս յայտարարութիւնն անվիճելիօրէն կը հաստատէ թէ հայութեան այդ յաւակնոտ ազգափրկիչներն բերան բանալու ոչ մէկ իրաւունք ունին իրենց գործունէութեան ազդեցութեանը վերագրել պետութեանց 1913ի ձեռնարկը: Եւ շատ բացորոշ է թէ Ռուսիա վճռած էր Հայկական Հարցը յուզել իւր քաղաքական նկատումների համար, ինչպէս չափազանց ակնյայտնի է Նարնջագոյն Գրքի մի շարք սկզբնական վաւերաթղթերէն: Մեր այն հայկական դիմումներն ըստ ինքեան անարժէք էին, եւ անարժէք եւս պիտի լինէին. նոքա մի միայն ծառայեցին

Հայութեան կորստեան անդունդի ընդլայնմանը,— կրճատումն ատամանց Թուրք կառավարութեան, եւ նորա լուին բայց խոր անդարձ անվստահութիւնն եւ ատելութիւնը դէպի Հայ անունը եւ Հայ ցեղը։

1912 *դեկտ. 7ի երեկոյեան Պ. Լինչ ինձ կըսպասէր, մանրամասնօրէն տեղեկանալու թէ հայերը մտիկ պիտի ընէի՞ն անգլիական խրատին եթէ ոչ պիտի հետեւէին Հայկական Հարցի պահանջքն հրապարակելու հրահանգին։ Եղելութիւնը պատմեցի։ Կարեկցական, մելամաղձիկ եւ ներողամտութեան զգացումով խառն ժպիտը կ'երեւէր Լինչի դէմքին վրայ, երբ կը լսէր իմ խօսքերը։ Այդ ժպիտն յատուկ էր նորա բնութեան, երբ նա կը տեսնէր թէ ինք անկարող էր իւր միտքն ըմբռնել տալ լսողին։ Երբ ամէն ինչ լսեց, ոտի կանգնեց, թեւերը խաչաձեւեց իւր կուրծքի վրայ ,եւ ծնօտն աջ ձեռքի բուռն մէջ առած, գլխակոր եւ մտախոհ սկսաւ երթեւեկել իւր ընդարձակ մատենադարանին մէջ, ուր աշխատասիրած եւ արտադրած էր* Արմէնիան. *ապա արձանակերպ, անժպիտ եւ մռայլադէմ կանգնելով իմ հանդէպ, անդայրացկոտ բայց լուրջ եւ հզօր ձայնով հետեւեալն արտասանեց.—*

« Եթէ ձեր հայ պարագլուխները կուրաբար վճռած են կոտորել տալ իրենց Թուրքիոյ

Հայ ժողովուրդը, մենք եւս վճռած ենք արգիլել այդպիսի կոտորած»:

Այս խօսքերը արտասանողն երկու օրէ ի վեր կը խորհրդակցէր Արտաքին Գործոց Նախարարութեան հետ հայկական սխալ քաղաքականութեան մասին, եւ արդէն որոշուած էր ձեռք առնել անհրաժեշտ նախազգուշութիւնը: Նախ Արտաքին Գործոց պաշտօնատունէն գաղտնի հրահանգ տրուեցաւ մամուլին ոչինչ թոյլատրել երեւիլ Հայկական Հարցի վերաբերմամբ: Ապա, Բ. Դուռն ազդու խորհուրդ ընդունեց Լոնդոնի Թուրք եւ Կ. Պոլսոյ Անգլիական դեսպանի միջոցաւ զգոյշ լինել եւ խաղաղութիւնն վրդովելու ո եւ է դէպքի պատճառ չթոյլատրել Հայաստանի մէջ, նաեւ ձերբակալել եւ պատժել այն յանցաւորներն որ չարիք էին մատուցած այլ եւ այլ անհատ հայերի երկրի զանազան կողմերը:

Այս մտերմական տեղեկութիւնն առաջին անգամն է որ ես երեւան կը հանեմ: Բայց թէ ստուգիւ այսպէս էր խնդրի գաղտնիքն, եւ թէ խնդիրն իր էութեամբ անծանօթ չէր ինձ, այդ բացայայտաբար կարելի է նշմարել Փորթուգալեանի «Արմէնիա»ի 1912 դեկտ. 25 եւ յաջորդ ութ թիւերի մէջ շարունակաբար լոյս տեսած յօդուածներէս, ուր իրողութեան պաշտօնական բնութիւնն ու աղբիւրն դիտմամբ սքողուած են: Ստորեւ ընթերցողն պիտի տես-

նէ այդ յօդուածներէն առնուած հատուածները: Բայց կայ նաեւ պաշտօնական փաստ, Ռուս կառավարութեան ձեռք բերած փաստը, որ կ'ապացուցանէ այդ իրողութեան ստուգութիւնը: Մի ժամանակ յետոյ, Անգլիոյ այս ընթացքի զրոյցը մասնակի կերպիւ կը հասնի Կ. Պոլսոյ ռուսական դեսպան Կիրսի ականջն, եւ սա անմիջապէս կը տեղեկագրէ իր լսածն Ռուսիոյ Արտաքին Գործոց նախարարին հետեւեալ բացատրութեամբ.—

«Ինձ հաղորդուած մի տեղեկութեան համեմատ, Անգլիոյ Արտաքին Գործոց մնայուն դեր-նախարարը Հայաստանի մէջ գործուած ոճիրների մի ցուցակ ներկայացնելով Լոնտոնի թրքական դեսպանին, նորա ուշադրութիւնն հրաւիրեց նմանօրինակ աղէտաբեր արարքների կրկնումէն յառաջ գալիք վտանգի վրայ Թուրքիոյ եւ իր Արեւելեան Նահանգների համար— արարքներ որ ստիպեալ են առիթ տալու անուղղակի միջամտութեան: Տրամադիր լինելով ըստ դեր-նախարարի ասութեան Թուրք կայսրութեան ասիական երկիրների անխախտելիութեան պահպանմանը, Մեծն Բրիտանիա խորհուրդ կուտայ Դրան անմիջական քննութիւն բանալ եւ պատժել յանցաւորները...

Մեծ Եպարքոսը Թէֆֆիք փաշայի տեղեկագիրն ստանալուն պէս խորհրդակցութեան կանչեց Ներքին, Արդարութեան եւ Պատերազմական նախարարներն եւ նոցա հրահանգ տը-

ւաւ որ ամէն կարելի եղածը ընեն Անգլիոյ փառքին գոհացում տալու համար . . . »:

Ողջմտութեան եւ բարոյական սկզբունքի դաւանող ամէն մի հայ ընթերցողի համար այսու պարզ պիտի թուի թէ ինչո՞ւ Թուրքիոյ հայ ժողովուրդն կոտորածէ ազատ մնաց 1912ին, չնայելով այդ ժամանակուայ մեր սըխալ քաղաքականութեան, եթէ երբեք կարելի է « քաղաքականութիւն » անունը տալ բթամտութեան:

Եթէ մենք դեռ այնքան անգէտ ենք, Եւրոպան անգէտ չէ: Եթէ մենք ցվերջ չկարողացանք ճանաչել Թուրք կառավարութիւնը, պատճառն այն է, որ մենք չենք ճանաչեր ըզմեզ: Եւրոպան, որի համար հայ կոչուած ժողովուրդն բնականաբար չի ներկայացներ ըզգացմունքի հետաքրքրութեան ո եւ է առարկայ, աւելի լաւ կը ճանաչէր հայ ժողովրդեան տկարութիւնն եւ Թուրք կառավարութեան քընացող գազան ոգին, շատ աւելի լաւ քան թէ մենք որ հայ ենք, մենք որ կը պարծենանք իբր ռահվիրաներ հայ ազգի ազատագրութեան, եւ մենք որ մեր կեանքը անցուցած ենք լսելով, կարդալով եւ տեսնելով Թուրք կառավարութեան ինչութիւնը: Այդ օտար, սրտի եւ մտքի կապերով բոլորովին օտար Եւրոպան, մեզ եւ Թուրքը բառ ամենայնի ճանաչելուն համար էր, ոչ իբրեւ պարզ մարդասէր խորհրդատու, կ'ազդարարէր մեզ, — «հանդարտ կեցէք, համ-

բերեցէք, ապա թէ ոչ Թուրքը կը կոտորէ ձեր խեղճ ժողովուրդը»։

Երոպան եթէ այսպէս կ՚ազդարարէր, պատճառն այն էր, որ իր աչքի առաջ ունէր ամբողջ հարիւր տարուայ նախընթաց արխնայից փաստեր, որոնք անտարակուսելիօրէն կ՚ապացուցանէին թէ՝ Թուրքը երբ վտանգի մէջ է, եւ մէկը յանժամ սկսի զինքը կատղեցնել, նա կը դառնայ մի անօրինակ զարհուրելի գազան, եւ անողորմաբար կը գիշատէ ով որ եւ ինչ որ վտանգ կ՚սպառնայ, կամ թերեւ վտանգ կը պատկերանայ իր գոյութեան եւ իր որջին։

Մեր ազգասիրութեան աչքերը այնքան պայծառատես էին, եւ տակաւին են, որ լոյսի ամենափոքր նշոյլ իսկ չէին թողած մեր դատողութեան աչքերի մէջ՝ կարենալ տեսնելու համար ո՛չ այդ խորթ նախընթացն եւ ոչ իսկ մերազնեայ Հայաստանի 20 տարի առաջուայ արիւնաշաղախ համայնապատկերը։ Եւ այդ դատողութեան աչքերի տեսութիւնն դեռ այս օր այնքան տարօրինակ է իր ազնուութեան ճառագայթներով, որ եթէ մի հայ ձգտի մեր առաջ դնել այդ բազմախորհուրդ անցեալն իր հարազատ իրականութեամբ, այսպիսի մի արարք այդ կոյր դատողութեան աչքերին կը թուի իբր բուն իսկ հայի ձեռքով ինքնարդարացման փաստ տալ Թուրքին՝ իր հայասպանութեան ի նպաստ։

ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

Այդպիսի տկար մտաւոր աչքերի համար այսպիսի գայթակղեցուցիչ մակերեսութիւնը բոլորովին բնական է։ Արդ, զարմանալի չէ, որ մեր տաղանդաւոր օրէնսդէտ Տիար Մալէզեան այնքան ազնուօրէն կ'ողբայ իմ «Արարատ»եան յօդուածին համար, որով ցաւ ի սիրտ կը յայտնէ թէ Ժնեւի Երիտասարդ Թուրքերը զարդարած են եղեր իրենց հրատարակած կամ հրատարակելիք հայոց դէմ փաստաթղթերի մեծախնամ ալպոմի ճակատը, մի ալպոմ, որ նոքա պիտի դնեն « քաղաքակիրթ մարդկութեան » եւ ապագայ Վեհաժողովի առաջ ի պաշտպանութիւն Թուրքիոյ եւ յամբաստանութիւն կոտորուած հայութեան։ Փաստաբան չը լինելով, ես անշուշտ չեմ կարող գտնել թէ արդեօք յօդուածիս ո՞ր մասն կամ ո՞ր տողն է, որ իբր փաստ այնչափ մեծապէս կարենայ ծառայել Երիտասարդ Թուրքերի ազգային արժանապատուութեան նպատակին, որ նոքա պատուոյ առաջին տեղն են տուած ինձ իրենց հրաշագործ ալպոմի մէջ։ Բայց այսքանն ինձ համար պարզ է, որ այդ օրինակ ալպոմները կարող են միայն դատարկ փոթորիկ յարուցանել դատարկ գանկերի մէջ։

Ենթադրենք որ Քաղաքակիրթ Մարդկութիւնը իր առաջ ունի մի դատ, որի լուծումն նա վեր կը գտնէ իր եւ իր ամենամեծ իմաստուններին կարողութենէն, եւ զգածուած այն բարձր ներբողականներէն որ իր վրայ այն-

քան վեհանձնօրէն շռայլուած կը տեսնէ իւր հանճարեղ հայ հիացողներէն, կ'որոշէ ապաւինել նոցա իմաստութեան: Այդ առթիւ, Արդարադատութեան մի յատուկ պալատ կը կառուցուի, եւ արդարադատութեան դահերի վըրայ վերամբարձեալ կ'երեւին երեք Սողոմոններ. 1) Տամատեան, որ մէկ ձեռքին բռնած ունի Արեւ, իսկ միւս ձեռքին «Քաղաքակիրթ Մարդկութեան» նկարն, որ Արեւի ճառագայթների մէջէն ակնապիշ եւ խոստմնալից կը նայէ Հայ ազգին վրայ՝ սոյն նկարի գաղափարն առնուած լինելով Տամատեանի խըմբագրականէն: 2) Մալէզեան՝ որ կը հանդիսանայ Թէմիսի կերպարանքով, աչքերը ծածկուած անաչառութեան շղարշով, մէկ ձեռքին ունի երկսայրի սուր, միւսովը բռնած է Կշիռն Արդարութեան: 3) Սոցա մէջէն, խոժոռ երեւոյթով աչքի կը զարնէ Վարանդեան, իբրեւ միաձուլեալ մարմնացումն Արամազդի եւ Պըրոմոթէոսի, իւր դուրս ցցուած աջ ձեռքին մէջէն կայծակունք կը փայլատակին, իսկ ձախ ձեռքը բուռին մէջ կը վառի դժոխային կարմիր կրակն Թաթառուն եւ վերասլաց հրեղէն լեզուներով:

Այսպէս է Արդարութեան բեմի տեսարանը, երբ անդէն ապաստաշունչ համարձակութեամբ ներս կը մտնէ մի ահեղ հսկայ՝ սիգաճեմ եւ մի ստուար փառակազմ ալպօմ յաղթականօրէն բռնած առ ի ցոյց վերնական երբ-

նակ իմաստութեան: Նա ամբաստանուած է իբրեւ սպանիչ 500,000 ձեռնակապ եւ ոտնակապ անզօր եւ անվնաս մարդկային արարածների, որոց ինքնապաշտպանութեան միակ յայտարար նշանը կը կայանար նոցա սարսափահար գլուխների ,կարկամ լեզուների եւ ոտքի ծայրերի դողդողուն շարժման մէջ:

Յանդուգն մարդասպանը իր դատը կը ջատագովէ այսպէս.—

«Իմ ճիրաններիս մէջ գտնուող այս անճարացեալ բիւրաւոր արարածների թեւաբձակ, ոտնարձակ եւ վտանգազերծ արիւնակիցներն կանգնած լայն ,անկամուրջ եւ անանցանելի գետի միւս կողմի անմատչելի ափի վրայ, սկսան օդային քարաձգութեամբ, օդածեծ գաւազանաճօճութեամբ, եւ անսաստ լեզուագարութեամբ մի անգամ եւս սպառնալ գլխս կործանելու. նոքա պէտք էին փորձով քաջ գիտնալ, որ գլխս կատղեցնելը, մանաւանդ վտանգով շրջապատուածս ատեն, ի՞նչ կրնար նշանակել: Հիմա թող երթան հասկնան, եթէ երբէք հասկնալիք խելք ունին: Ահա մի ապացոյց այս ալպօմէն: Այդ նախկին գրգռիչներէն մին կը հաստատէ, որ 38 տարի առաջ այդ թըզուկները գլխս կատղեցնելու սովորութիւնը ձեռք առին առանց իրենց եւ իմ ուժի չափը հասկնալու, առանց անկէ ի վեր մազի չափ աչքերնին ետ դարձնելով փորձանքներէն օգտըւելու, եւ առանց դէթ կառք մը աշխատիլ մը-

տածելու ի՞նչ են իրենք, ի՞նչ է Եւրոպան իրենց համար, եւ ինչ կրնայի դառնալ եւ իրենց ժողովրդեան համար: Ահա թէ ինչ դարձայ: Ձեռքիս հասողութենէն հեռու էին իրենք, բայց իրենց հեռուէն փրկել ուզած ժողովուրդը ոչխարի հօտի նման իմ սուրի տակ էր, եւ ընկաւ այդ սուրի տակ»:

Կէս միլիոն անմեղ մարդկային էակների կեանքի անվրդով պատասխանատուն այս բառերով աւարտեց իր պաշտպանողական ճառը եւ դուրս ելաւ թողլով Հայկական Իմաստութիւնը դանդաթեք եւ ծանրախոհ մի լուծումն գտնալու այս ամենախրթին խնդրին, որին Քաղաքակիրթ Մարդկութիւնն անձկանօք կը սպասէ:

Ողբալի՜ է արդարեւ:

Եթէ Թուրք կառավարութիւնն գնդակահարէր հազարաւոր զինեալ հայ ապստամբներ, նա միջազգային օրէնքով իր իշխանական իրաւունքի սահմանի մէջ պիտի լինէր, եւ կրնար ինքնարդարացման պատրուակներ յարուցանել ընդդէմ պատահական ամբաստանիչների կամ յառաջի ատենին Քաղաքակիրթ Մարդկութեան պաշտօնական ներկայացուցիչն եղող Մեծ Պետութեանց: Բայց Աստուծոյ երկնքին ներքոյ չկայ մարդկային օրէնք, որ ոեւէ պայմանաւ իրաւունք ունենայ, կամ այլապէս կարողանայ, արդարացնել մեծաքանակ թէ փոքրաքանակ եղեռնագործութիւն եւ սպանիչ

չարչարանք՝ անպաշտպան մարդոց, կիներու եւ երախայոց վրայ: Բնութեան եւ մարդկային օրէնքի առաջ եղեռնագործութիւնը չունի արդարացում: Պարզ անհատն իր ոճրագործութեան համար չէ կարող խոյս տալ արդարադատութեան վճռէն ինչ եւ լինի իր յանցանքի դրդումը: Կառավարութեան կոչումն է պաշտպանել իր ժողովուրդը չարիքի եւ չարագործի դէմ. իսկ մի կառավարութիւն որ ինքն կը սպանէ իր պաշտպանելիք ժողովուրդն, այդպիսի կառավարութիւնը կը գերազանցէ ամէն չարագործ եւ կը դառնայ հրէշ: Եւրոպան գիտէր այս, բայց Եւրոպան մի միութիւն չէ, վեց անջատ միութիւններ են ուր վերացական արդարութիւնը կ'ոչնչանայ գործնական շահերի առաջ:

Եւ ցաւալի է, որ արդարադատութեան ըմբռնողութեան մասին այս բնական խորհրդածութիւնը կը պակսի մեր ցեղի օրէնսգիտական հրապարակագրական եւ յեղափոխ. էն զարգացած ուղեղների մէջ իսկ:

ՌՈՍՏՈՄ ԶՕՐԵԱՆ ԼՈՆՏՈՆՈՒՄ

Մեծ պատերազմի սկիզբներում, Լոնտոն եկաւ իմ հին բարեկամ Ռոստոմ Զօրեան, Դաշնակցութեան գլխաւորներից մէկը։ Նա ճիշդ դուրս էր եկել Թուրքիայից, ուր իր կուսակցութեան արտասահմանի եւ Թուրքիոյ ներկայացուցիչները հաղուադէպ համագումար ունէին Կարնոյ մէջ։ Այսինքն, այն կուսակցութիւնը որ ծնել էր Կովկասում եւ ռուսահպատակ հայ երիտասարդներից, կործանել Թուրքիան եւ նրա հողի վրայ ստեղծել մի անկախ Հայաստան։

Այս զարմանահրաշ երեւոյթը ցոյց է տալիս թէ՝ Ռուսահայ յեղափոխական առիւծները յետ էին կանգնել պատառելուց Սուլթանի կայսրութեան մարմինը, եւ Սուլթանն եւս զիջանել էր ազատ ասպարէզ տալ նրանց՝ արշաւանքներ կատարել իր պետութեան ամէն կողմերում, եւ հաստատել բնակութեան որ-

ջեր, եւ դաշնակցական խաղերի կրկէս Կարինում:

Պատուական բարեկամս Ռոստոմ, կարմիր ռուսահայ հակաթուրքը, լիաբերան սրտագոհութեամբ, եւ խորհրդաւոր շեշտով ասեց.

« Հաւատացնում եմ քեզ թէ՝ Թրքա-Հայաստանի հայ ժողովուրդը երբէք այնպէս հանգիստ եւ ապահով կեանք չէ ունեցել, ինչպէս նոր ռէժիմի տակ 1909ից ի վեր: Ես ապրեցի երկրի մէջ, եւ տեսայ: Կարնոյ կուսակալը եւ զինուորական հրամանատարը, երբեմն կանչում էին մեզ, եւ խորհրդակցում մեզ հետ կառավարական խնդիրների մասին:

Մեր կուսակցական համաժողովը դեռ չէր վերջացել, երբ Գերմանօ-Ռուս պատերազմը ծագեց: Նահանգապետը կանչեց մեզ իր մօտ եւ ասեց. գուցէ Թուրքիա էլ պատերազմի մէջ մտնէ, « Ներքին Գործոց նախարարից հեռագիր եմ ստացել որ հարցնէ ձեզ, թէ ի՞նչ վարմունք պիտի ունենաք մեր երկրի մէջ: Խռովութիւններ հանել պիտի տա՞ք, թէ պիտի խաղաղ պահէք ձեր հայերը: Որոնք որ ռուսահայ են, իրենց պարտքն է, իբրեւ ռուս զինուոր կռուել մեզ դէմ, բայց որոնք որ մեր հպատակներն են, իրենց պարտականութիւնն է հաւատարիմ մնալ մեր տէրութեան: Ոեւէ անհաւատարմութեան վարմունք, եւ կամաւոր հայ խումբերի կազմութիւն եւ ընթացք մեզ

դէմ, շատ վատ հետեւանք կարող է յառաջ բերել: Ուստի՝ ասացէք այս ձեր հայ հայրենակիցներին, որ լաւ հասկանան»:

Մենք պատասխանեցինք նահանգապետին թէ՝ մենք այնքան գոհ էինք կառավարութեան վարմունքից հայ ժողովրդի համար, որ պատրաստ էինք Թուրք զինուորների հետ, կռուել ռուս բանակի դէմ»:

Եթէ ոչ ճիշդ բառացիութեամբ, իմաստով ճիշդ այսպէս էր Ռոստոմի ասածը:

Եթէ այս ազնիւ դաշնակցական յեղափոխականի վկայութեան չհաւատանք, ուրեմն ո՞ւմ վկայութեան պէտք էր հաւատալ: Նա արդարեւ ազնիւ էր եւ բարի: Եւ նրա բարի կամ ծուռ ընկերակիցներն եւս նոյնն էին հաստատում այդ ժամանակ, եւ նրանցից ոմանք անդամներ էին Նոր Թուրքիոյ փառլամէնթի մէջ:

Այսպէս էր Թրքահայոց վիճակը 1909ից մինչեւ 1914ի վերջին ամիսները: Եւ երբ 1912ին Թուրքիոյ դժբաղդ հայ ազգի ողջ մնացած մասերը հանգիստ հոգւով, եւ անվրդով սրտով խաղաղօրէն ապրում էին իրենց գաւառներում եւ տուներում, Թուրքիայից բոլորովին դուրս, Ռուսաստանում եւ Եւրոպայում, եւ Ամերիկայում ապրող որոշ հայեր յանկարծ դուրս եկան իբրեւ լխաբերան կամ բերանաբաց ազա-

տասէր ազգասէրներ Թրքահայերի Դատի պաշտպանութեան համար։

1895 – 1896 թ․ի Հայկ․ կոտորածների ընթացքին, Ցարի կառավարութեան արտաքին քաղաքականութիւնը թւում էր լինել՝ տեսնել Թրքահայերը բնաջնջուած իրենց գաւառներում, եւ մի Հայաստան առանց Հայի, ապագայ ռուսական տիրապետութեան համար, եւ «Նովոյէ Վրեմիա», ամենաազդու եւ ազգամոլ ռուս թերթը, գրելով հանդերձ որ կոտորւածները անմեղ մարդիկ էին եւ ոչ թէ յեղափոխականներ, այնուամենայնիւ ոչ միայն գթութեան մէկ առղ խօսք չարտայայտեց, բայց անխղճօրէն հրատարակեց թէ՝ նրանք ապստամբներ էին, եւ թէ՝ Թուրք կառավարութիւնը արդարացի էր պատժելով իւր անհաւատարիմ հպատակներին, բացի այդ, այդ թերթը ամէն ռուսահայի ծանօթ էր խիստ հայատեաց։ Արդ, 1912ին, այդ նոյն պետական քաղաքականութեան վարիչը, եւ այս միեւնոյն քաղաքականութեան ջերմ պաշտպան հրապարակարան, ամենէն ազդեցիկ ռուսական նախարարը, եւ մշտապէս հայատեաց « Նովոյէ Վրեմիա » լրագիրը, յանկարծ փոխեցին իրենց սրտերը, սկսեցին խղճալ Թուրքիոյ հայերին, վրդովիլ նրանց հարստահարեալ եւ հալածեալ վիճակի համար, եւ թելադրել Հայ ազգասէրներին՝ բողոքներ բարձրացնել Եւրոպայի Մեծ Պետութեանց առաջ՝ ընդդէմ Թուրք կա-

ռավարութեան ի փրկութիւն Թրքահայոց:

Այսպիսի թելադրութիւն, քաջալերութիւն, եւ խորհուրդ, եթէ սատանաների թագաւորից իսկ տրուի, կան մշտապատրաստ հայեր դառնալու ոգեւորեալ ազգասէրներ, եւ գործելու ըստ այնմ առանց նախատեսնելու թէ այդ ընթացքը արդեօք ժողովրդի բարիքի՞ն պիտի ծառայէր թէ չարիքին:

Այդպիսիք Թուրքիոյ մէջ չէին, միայն մտածում էին եւ մինչեւ իսկ ծրագրում, թէ եթէ յաջողէին, պիտի գտնային թագաւոր կամ նախագահ եւ նախարարներ: Բայց եթէ չյաջողէին, եւ Թուրքը, ըստ իր արդէն բացառոչ վարմունքին, նորէն կոտորէր, եւ այդ անգամ բոլոր Թրքահայերին, փառք Աստուծոյ, իրենք շատ հեռու էին Թուրք սուրից, եւ պիտի մնային ողջ առողջ, եւ դարձեալ պատեհ առիթով եթէ մի նոր Սազանով եւ մի նոր «Նովոյէ Վրեմիա», նմանօրինակ թելադրութիւն եւ քաջալերութիւն տար նրանց, նրանք կը դիմէին աշխարհի մեծ պետութիւններին՝ պահանջելով Թուրքիոյ կէսը, եթէ ոչ աւելին, կը հաւաքէին մնացեալ Թրքահայոց չորացած եւ փտած ոսկորները, եւ նրանցով կառուցէին մի բազմամարդ Հայաստան, եւ իրենք միշտ մնալով անմեռ, պիտի հասնէին իրենց անմահ փառքին:

Այսպիսի զգացումով եւ երեւակայութեամբ

հայ ազգասէրներ էին որ դարձան գործիք Թրքահայոց ճակատագրի թշնամիների ձեռքում: Բարի խորհուրդ ի նպաստ Թրքահայոց կեանքին տուեց նրանց, եւ նրանք արհամարհեցին առարկելով թէ՝ թող երթան տասն հազար եւս հայեր սպանուին, բայց հայ ժողովուրդը ազատուի Թուրքի լուծից: Այդ նոր ազնուահոգի ցարական խորհուրդի եւ նրանից յափշտակուած եւ գործիք դարձած հայերի ընթացքի վրայ 1912 – 1913ին մի շարք յօդուածներ հրատարակեցի Մարսիլիոյ «Արմենիա» թերթում, բացատրելով թակարդը եւ կացութիւնը թէ այդ յոյսերի եւ ձեւերի հետեւանքով էր, որ Թրքահայոց կեանքի բարեկեցութիւնը աստիճանաբար փոխուեց դժոխային կացութեան եւ թէ ո՞վ կարող էր վստահացնել թէ՝ այս անգամ ոչ թէ տասն հազար, այլ հարիւր հազարներ կարող են կոտորուիլ:

Եւ հաւանօրէն այդպէս էլ պիտի լինէր, եւ կամ նոյն իսկ բոլոր Թրքահայերը կոտորուէին, եթէ չլինէր Անգլիոյ Արտաքին Գործոց Նախարար Սըր Էդուարդ Գրէյի խիստ խորհուրդը Լոնդոնի Թրքական դեսպանին, եւ անգլիական Կ. Պոլսի դեսպանի խորհուրդը ուղղակի Թուրք կառավարութեան, թէ այդ ռուսական խաղ էր. եւ թէ այդ բանից գրգռուած նոր կոտորածներ պիտի վատթարացնէին Թուրք պետութեան վիճակը, եւ միայն ծառայէին Ռուսիոյ նպատակին:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Թուրքիա համոզուեց եւ զսպեց իր կատաղութիւնը, բայց չմոռանալով թափել իր թոյնը անճարակ հայերի վրայ ուրիշ առիթով:

Այս մասին ընդարձակօրէն գրել եմ արդէն նախորդ գլխում:

ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

ԱՒԵՏԻՍ ԱՀԱՐՈՆԵԱՆ ԵՒ ՓԱՐԻԶԻ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՎԵՀԱԺՈՂՈՎԸ

Մեծ պատերազմի առաջին ամիսներումն էր, կարծեմ, երբ շատ ուշ Լոնդոն բնակարանս երթալով գտայ մի նամակ հապճեպ գրուած մի քանի տողով։ «Եկ եւ փրկիր ինձ այս թանգ եւ անպիտան հիւրանոցից»։ Ստորագրողն էր Աւետիս Ահարոնեան, ճեմարանի մի ընկեր, ինձանից մի դասարանով ցած, Իգդիրի կարծեմ խալֆալու գիւղից, արեւակէզ թուխ եւ քաջառողջ դէմքով, նախանձելի վէգ խաղացող, որին չէի հաւասարում։ Այդ մատաղ կեանքում, ոչ նա էր մտածում թէ ի՞նչ կարող էր լինել ապագայում, եւ ոչ ես էի գուշակում թէ ճակատագիրը ի՞նչ աշխարհներ պիտի քշէր ինձ։

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Աւելի քան երեսուն տարի էր որ չէի տեսել նրա երեսը, եւ ոչ մէկ տող գրուածք էինք փոխանակել միմեանց հետ: Ուստի ես մնացել էի զարմացած, թէ նա ինչպէս խորհեց իմ վրայ, գըտաւ հասցէս, եւ դիմեց ինձ որ ես երկարէի ձեռքս, եւ դուրս հանէի նրան այն կործանարար ծովից որի մէջ նա խեղդուելու մօտ էր: Ես գընացի եւ հանեցի նրան այն տեղից. մի հին չըտեսնուած եւ չմոռացուած ընկեր, բայց այժմ անճանաչելի իմ աչքերիս. նախկին արեւակէզ կարմրութիւնը փոխուած նուրբ դեղնութեան նրա դէմքի վրայ, եւ երեսին շրջապատող սաթագոյն մօրուքը, լայն ճակատի ունքերի փայլող լայն աչքերը տալիս էին նրա կերպարանքին մի սիրելի եւ համակրելի երեւոյթ: Նա այժմ մեծ գրագէտ էր եւ անունը ծանօթ բոլոր ռուսահայոց մէջ: Նա միանգամայն եւ յեղափոխական էր, դաշնակցական յեղափոխական, նրա տները կոխուած չէին այն հողի վրայ ուր ապրում էին թրքահայերը, բայց յեղափոխականօրէն բարբառում էր Թիֆլիսում կամ Զւիցերիայում եւ այդ հեռաւորութիւնից նիզակահարում Սուլթանին:

Հաւասար էինք մեր մեծութեամբ, երբ պարզ պատանիներ էինք, եւ այժմ մի անգամ եւս գտնւում էինք միասին, նա մի մեծահամբաւ անձնաւորութիւն էր, եւ ես զգում էի իմ աննշան փոքրութիւնը: Եւ սակայն ես գրեթէ փոքրութիւնիցս ի վեր յոյժ երազում էի մի օր

դառնալ այնպիսի մի մեծ գրագէտ, որի նըման ոչ ոք եկած լինէր աշխարհ, ոչ Պղատոն եւ ոչ Բակոն իրենց գերիմաստ իմաստասիրութեամբ, եւ ոչ Շեքսպիր եւ Միլտոն իրենց բարձրաթռիչ հանճարներով:

Իմ մեծամիտ մտածումները, սակայն, մընացին իրենց ամենախոնարհ թզուկային բարձրութեան վրայ: Այս ամբարտաւան յաւակնութեան հրաշափառ երազները եղան չքեղամերկ երազներ. եւ լուսեղէն գրիչը միշտ շարունակեց գրել սպիտակ թուղթի վրայ, եւ սպիտակ մելանով: Որով ոչ միայն չարժանացայ երկրագնտի ամէն ազգերի ծափահարութեան, բայց չկարողացայ արժանանալ գէթ Հայ ազգի մի մասի ծափահարութեան, ուր այս դպրոցակիցս, եւ Թիֆլիսի դասընկերս, սիրեցեալն Ալեքսանդր Ծատուրեան, եւ մեղմաբարոյ Նարդոս ունէին իրենց գրական աթոռները:

Ահարոնեան պատցնում էր իւր գրական աթոռը ուր որ գնում էր, որովհետեւ չունէր ուրիշ արուեստ կամ արհեստ: Ահարոնեանի երկաթուղին ունէր երկու կայարաններ, մէկ կայարանն էր Կովկաս, միւսը Զուիցերիա: Եթէ այս երկու հանգստավայրերում իւր ապրուստի համար նա կախուած լինէր իւր սեփական աշխատութեան եկամուտից, նա անվրէպ մի օր պիտի կախէր իրեն այդ տեղերից մէկում մի

կանաչ ծառի ճիւղից. եւ կամ մի չոր գերանից. մուկերը պիտի պար գային նրա դատարկ գըր-պանում եւ իրենց կերուխումի խնճոյքը պիտի անէին նրա անզօրացեալ մարմնի վրայ:

Բայց բարեբաղդաբար, Հայ Յեղ. Դաշնակցութեան Յեղափոխական գանձարանը խոնարհաբար հարկատու էր Ահարոնեանի դաշնակցական անունին եւ լեզուին, նմանապէս նրա մտքի ստեղծագործութեան դրամատէր հիացողներ, ինքնաբերաբար կամ խնդրաբար, նպաստում էին նրա նպաստակարօտ գրպանին:

Այդ դրամատէր համակրողները հարկաւ հասկացել էին նրա գրուածների արժանիքը, մինչ դրանք բոլորովին անծանօթ էին ինձ, իմ բոլոր կեանքում հեռու լինելով Կովկասից: Միայն այս ընկերոջս մէկ գրուածքի անունը լսել էի, այն էր Ահեղագանգ, բայց չիմացայ թէ այդ գրութիւնը ներկայացնում էր Դաշնակցութեա՞ն ահեղագանգը,- սպառնալիքով ուղղուած Սուլթան Համիդին ,եթէ ոչ Սուլթանի սարսափելի ահեղագանգը ուղղուած հայ ազգին:

Եւ այժմ նա Զուիցերիայից վերադառնում էր Կովկաս, որտեղից Հայրենիքն էր իրեն կանչում:

Երբ մտայ փրկութեան սպասող բարեկամիս սենեակը, նրա հետ գտայ մի ընկերակից

կին, որ իր կինը չէր: Նա մի այլ մարդու կինն էր, աւելի ճիշդ տիկինն էր անունով եւ օրէնքով, բայց գրական գործունէութեամբ տիկնութիւն էր անում կողակցութեան բազմակարօտ սիրելի վիպասանին: Այս բաղդաւոր տիկինը քայլն էր այն արիւնառուշտ ազգաւէրի, որ ինձ մահ էր սպառնում, բայց տիկինը իր եղբօր նըման չէր որպէս թէ ինքն եւ իր սիրելի Աւետիսի նման պատանեկութեան ծանօթ էր ինձ հետ: Մի շաբաթ կամ աւելի իրանք մնացին Լոնդոնում եւ եղանք միասին գոհացնելով մեր երեսուն տարիների բացակայութեան կարօտը: Աւետիսի զգեստը չունէր այլ եւս չար նախանձելի մի գոյն, մի լաւ դերձակին կարել տուեց անգլիական կապոյտ սերժի մի լաւ զըգեստ, որով նա այնքան հիացած ու բացագանչում էր ցնծագին.

«Կեանքումս էսպէս լաւ հագուստ չէի հագել»:

Այսպէս երբ Ահարոնեան վերադարձաւ Կովկաս, թէեւ մեծ պատերազմը սկսել էր, բայց ոչ տակաւին Ռուսիայ եւ Թուրքիայ միջեւ: Եւ յուսալից հայ յեղափոխականներ երազում էին թէ ապագայ Հայաստանը արդեօք Թուրքիայ քանի՞ նահանգներից, վեց թէ՞ աւելի վիլայէթներից պիտի կազմուէր:

Սկսուած պատերազմը պայթեց այս երկու աւանդական թշնամիների միջեւ, որոնցից

մէկը չունէր այլ եւս բաւական զօրութիւն տիրանալ միւսի հողին, բայց միւսի քաղաքականութիւնն էր տիրել եւ յառաջանալ, եւ տարածել իր իշխանութիւնը դէպի հարաւ եւ արեւմուտք իր հարեւանի ցանկալի երկիրների վրայ:

Թնդանօթի ձայները հազիւ թէ տարածուել էին Հայաստանի դաշտերի եւ լեռների վրայ, երբ Սազանով, Ռուսիոյ արտաքին գործոց նախարարը, իր մամուլի առկից լոյս աշխարհ հանեց իր Նարնջագոյն Գիրքը, մի դիւանագիտական սովորութիւն, որ Անգլիա ունէր իր այդպէս ասուած Կապոյտ Գիրքով, որ երբեմն հրատարակում էր Թուրքիոյ վերաբերմամբ, յառաջ բերելով իր եւ Թուրքիոյ միջեւ կատարուած պաշտօնագրերը, որպէս նաեւ իր եւ Մեծ Պետութեանց միջեւ փոխանակուած գրութիւնները Թուրքիոյ հայոց վիճակի եւ հայկական խնդրի մասին: Ռուս կառավարութիւնը չէր ունեցած այդպիսի սովորութիւն, եւ գրութիւն: Այս առաջին անգամն էր, եւ պարունակում էր միայն Ամենայն Հայոց Կաթողիկոսի եւ անանուն երեւելի ռուսահայոց դիմումներ իրեն, Սազանովին, Ցարի պաշտպանութիւնը չարչարուող Թրքահայոց համար. ռուս հիւպատոսների տեղեկագիրներ՝ իրենց Կ. Պոլսոյ դեսպանին, նկարագրելով հայ ժողովրդեան ճնշուած եւ հարստահարուած վիճակը, եւ նրանց խնդրանքը եւ բաղձանքը՝

ազատուել Թուրքի իշխանութիւնից եւ մտնել ցարական հովանաւորութեան, եւ ի լրումն ամենայնի այդ գրքի վաւերագրերից, Թրքահայոց Կ. Պոլսի Սուլթանին հաւատարմութիւն երդուած հպատակ Պատրիարքը ներկայացուած էր որպէս գաղտնի յարաբերութիւն ունեցող Կ. Պոլսի ռուս դեսպանատան հետ. պարզ խօսքով որպէս դաւաճան իր պետութեան դէմ:

Ցարի արտաքին գործոց նախարարը այնքան պարզամիտ մի արարած չէր, որ չհասկանար թէ այսպիսի մի գրութիւն ոչ թէ այսպիսի ահեղ համաեւրոպական պատերազմի ժամանակ, բայց նոյն իսկ ամենախաղաղ ժամանակ պիտի լցնէր Թուրք կառավարութեան հոգին եւ սիրտը ատելութեամբ դէպի հայ անունը, եւ ամենազարհուրելի կատաղութեամբ դէպի իր հպատակները անխտիր:

1894—1896ի պարբերական կոտորածները բացարձակապէս ցոյց տուին թէ Թուրք կառավարութիւնը, մղուած ի կատաղութիւն, կարող էր աներկիւղ եւ անպատիժ եւ անարգել կոտորել իր հայ հպատակներին, թէ Եւրոպայի Մեծ Պետութիւնները մէկը միւսին պիտի արգիլէր սպառնալ Սուլթանին եւ արգիլէր բապանարար ձեռքը: Արիւնահեղ ողբերգութիւնը դեռ շատ թարմ էր, եւ Սազանով այսու ամենայնիւ իր 1912ի քաղաքականութեան համար դրօշակակիր ընտրեց Էջմիածնի Գէորգ Ե. Կա-

Թալէկոսին, կառավարութեան կարմիր դրօշակը բռնել տալ Եւրոպայում եւ այնտեղից ծածանեցնել Թուրքիոյ կառավարութիւնից կարմրած աչքերի հանդէպ:

Երկրորդ կարմիր դրօշակը եղաւ նրա Նարինջագոյն Գիրքը: Առաջին դէպքում Թուրքը զարկեց բզկտելով հայ ժողովրդին, այս երկրորդ դէպքում ոչ ոք կար որ կարողանար փըրկել նրան: Նա արդէն գիտէր որ Անգլիա, Ֆըրանսա եւ Ռուսիա բաժանել էին իրեն իրենց միջեւ, եւ թէ իր արեւելեան վիլայէթները, ուր քիչ շատ կային իր «անիծեալ» հայ հպատակները, նշանակուել էին լինել բաժին Ռուսիոյ: Ուստի, Նարինջագոյն Գրքի լոյս տեսնելուց մի քանի ամիսներ յետոյ, վճռեց խաւարեցնել իր երբեմնի սիրեցեալ հայ հպատակների կեանքի լոյսը, եւ այնպէս մոլեգնօրէն եւ հիմնօրէն խաւարեցրեց, որ հայի կեանքը անկարելի պիտի լինէր վերստին լոյս տեսնել այդ հողերի վրայ:

Նաեւ խաւարեց Ցարիզմի կեանքը:

Մէկը իր անուղղայ բռնակալութեան, միւսը իր միամիտ, անմիտ, եւ սանձարձակ փրկիչների անուղղելի կարճատեսութեան, յամառագոյն ագահութեան, եւ ոմանց կոյր կամ կեղծ ազգասիրութեան, եւ անհնարին փառասիրութեան հետեւանօք:

Եւ սակայն սրանք ամենեքեան 1919ին հա-

ւաքուեցան ի Փարիզ։ Ամենամեծ անձնաւո-
րութիւնը նրանց մէջ էր Աւետիս Ահարոնեան,
Լոնդոնի անգլիական կապոյտ կտաւից վայել-
չօրէն ձեւակերպուած զգեստը մեծ բաղդ էր
բերել իմ անուանի ընկերոջ անունին եւ մարմ-
նին։ Հանդուցեալ Ցարիզմի հարաւ արեւմտ-
եան գերեզմանատան հեռաւոր անկիւնում, ի
տես Թեւատարած երկնասլաց Մասիսի, եւ ի
բարձունս բարձրաչափ Հրազդանի, Դաշնա-
կցութեան անմեռանելիօրէն յեղափոխական
կուսակցութիւնը իւր հերոսների հեղեղահոս
արեան գնով ստեղծել էր մի ազգային Հանրա-
պետական Հայաստան եւ Ահարոնեան նրա ա-
ռաջին փառլամէնտի առաջին նախագահը։ Եւ
նա Թռչում էր բարձրութիւնից բարձրութիւն,
եւ նրա հետ իւր Լոնդոնեան Տիկինը։ Եւ այժմ
նա եկել էր Ֆրանսայի մայրաքաղաքը պահան-
ջել Մեծ Պետութեանց Խաղաղութեան Վեհա-
ժողովից օրինաւոր ճանաչումն նորաստեղծ
Հայաստանի, որ հաստատուել էր անտէր ռուս
տէրութիւնից տիրացուած Արարատեան դաշ-
տի եւ լեռների վրայ, նաեւ պահանջել դեռ դը-
րանից աւելին։

Այնտեղ էր նրա հետ միասին, եւ ոչ միա-
սին, եւ գործակից եւ մրցակից մի այլ
մեծ Հայ, բայց մեծ՝ ծնեալ իհօրմէ։ Թուր-
քիոյ մէջ, եւս առաւել Թրքա-Հայաստանի
մէջ այլեւս ամէն հայ բնաջինջ եղած լինելով
բնականաբար նրա դերը վերջացած էր առ յա-
ւէտ։

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Մեռածները ոչ կարող են հայրենիք ունենալ երկրի երեսին, եւ ոչ ազատութիւն: Նրանց հայրենիքը եւ ազատութիւնը միայն կարող է գոյութիւն ունենալ գետնի տակ, բայց Պօղոս Նուբար փաշա, որ Հայ ազգի թագաւորական կեանքի պատմութեան եւ բուն սեփական երկրի ինքնութեան եւ աշխարհագրութեան մասին այնքան մեծահմուտ էր որչափ կարող էր տեսնել իւր խորհրդականները, եւ ապագայ նախարարների գունաւոր աչքերով: Ուստի նրանց արձագանգեալ ծափերի մէջ նրանք ինչպէս իմ աչքերը երեւակայօրէն տեսնում էին, տակաւ ելեւէջներով շարժուեցան այնտեղ, ուր յանկայս սպասում էին երկրագունդի երեք Մեծերը՝ Վիլսոն, նախագահ Ամերիկայի Միացեալ Նահանգաց Լոյդ Ջորջ նախարարապետ Մեծն Բրիտանիոյ, Կլեմանսօ, նախարարապետ Ֆրանսայի: Նրանք միայնակ էին, առանց քարտուղարի եւ թարգմանի: Եւ ես երեւակայութեամբ ականատես եւ ունկնդիր եղայ հետեւեալ տեսարանին:

Սիգարար նրա մատներից մէկը ունէր իւր աջ ձեռքում մի մագաղաթեայ գլանաձեւ գրութիւն, եւ միւսը պատի խոշոր աշխարհացոյց, նոյնպէս բոլորուած, Ահարոնեան բռնած ունէր իւր մագաղաթը վերամբարձ, Պօղոս Նուբար բռնած իւր քարտէզը իւր առաջի դրօշակի ցիցի նման տնկուած գետնի վրայ:

Վիլսոն հետաքրքրութեան եւ կարեկցութեան նայուածք նետելով նրանց վրայ, ասեց·

— Ողջոյն ձեզ, ով ներկայացուցիչներ տարաբաղդ հայ ցեղի: Ինչո՞ւ եկաք այստեղ, ի՞նչ էք դուք կամենում եւ ի՞նչ կարող էք ակնկալել մեզանից:

Ահարոնեան·— *Ես գալիս եմ յանուն Հանրապետութեան վերակենդանացեալ Հայաստանի, եւ այն խակ հողի որի ամէն մի ոտնատանի չափ տարածութիւնը կարող է վկայել մեր թաազգի սեփականութեան իրաւունքը, մեր գաւառների եւ մեր ազգային անկախութեան փաստերն ու ստուերները: Այս Նորբազա Հայրենիքը տասնեակ դարերից ի վեր խլուած էր մեր ժողովրդի սեփականութիւնից յաջորդաբար մէկը միւսից վատթար բարբարոսների ձեռքով, եւ ամենավերջին յափշտակիչներն էին Ռուսիոյ ցարերը: Ցարութեան մահուան հետ ստրկութիւնից այդ հայրենիքը թօթափեց իր շղթաները: Եւ մեր Դաշնակցութեան յեղափոխական կուսակցութիւնը խորտակեց դարաւոր գերութեան շղթան, եւ մենք պսակեցինք մեր նորաստեղծ Հայաստանը ազգային ազատութեան պսակով: Ոչ եւս ստրկութիւն, ոչ եւս գերութիւն: Ինչ որ մենք կամենում ենք, այն է որ Դուք ճանաչէք մեր անկախութիւնը: Ինչ որ մենք ակնկալում ենք, այն է որ դուք ձեր մեծազօր զօրութեամբ*

զօրավիգ կանգնիք մեր մատաղ կեանքի պաշտպանութեան եւ զօրացման համար:

Կլեմանսօ.— *Ունայն է յուսալ թէ Եւրոպա եւ Ամերիկա միլիոններ ծախսեն, հարիւր հազար զօրք եւ ռազմամթերք զրկեն մէկ երկու ամիս հեռաւորութեամբ մի երկիր, որ գան պաշտպանեն մի քանի հարիւր հազար Հայերի հանրապետութիւնը եւ պատերազմեն Ռուսիոյ դէմ, ի դէպս եթէ նա գայ եւ յետ առնի ձեզանից իր սեփականութիւնը: Դուք շատ միամիտ էք եւ եղել էք միամիտ, մնալով այսպիսի երեւակայական երազների մէջ: Ցաւակցութիւնը մնայ, բայց իրականութիւնը այլ է եւ դուք անկարող էք ապրել երբ նա փչէ իր մահացնող շունչը ձեր ակար թոքերի վրայ:*

Ահարոնեան.— *Բոլորովին ճիշդ էք Դուք, Առիւծ Ֆրանսայի, իմ հայրենիքը հրաժարւում է ձեր զօրութիւնից, եւ իր վստահութիւնը դնում է իր վրայ: Քառասուն տարի մեր ժողովուրդը նայեց Եւրոպային իր ազատ Հայաստանն ունենալու համար, սակայն մտածելու թէ Եւրոպա մի համերաշխ միաբանութիւն չէր, բայց կռուարան անմիաբանութեան: Եւ այժմ մենք ձեզ բերինք ազատ հայրենիքը մեր սեփական ուժով. եւ մեր սեփական ուժով պիտի պաշտպանենք եւ պահենք նրա գոյութիւնը, եւ ոչ մի ռուսական զօրութիւն, որքան եւ մեծ եւ ահեղ լինի նա,*

պիտի կարենայ դիմանալ մեր հոգեկան, եւ մարմնական մեծագործութեան առաջ. բայց դուք կարող էք վստահ ըլլալ թէ եթէ ցարիզմը մնաս գլխուն, ստրկանութիւնը եւս կիսամեռ է: Մեր մեծահմուտ նախագահն հանրապետութեան, եւ նրա հետեւաս քաղաքագէտներից ոմանք հաստատել են եւ գըտել թէ ամբողջ Ռուսիա մի կիսամեռ դիակի է նման, եւ անդամալոյծ եղած, քսանեւհինգ տարիներ անցնելու են մինչեւ որ նա կարողանայ շարժուիլ իր պառկած դիրքից: Թէեւ մենք, Կովկասի երեք հանրապետութիւններս, արդէն սկսել ենք վէճի եւ կռուի միմեանց հետ մեր սահմանների համար, բայց եթէ Ռուսիա իր կաղ ոտներով քայլէ Կովկասի վրայ, նա պիտի գտնէ մեր երեք հանրապետութիւնները իր դէմ, աւելի ամուր քան Կովկասեան լեռանց շղթան, եւ աւելի բարձր եւ ահաւոր քան Կազբեկի անմերձենալի կատարը:

Լոյդ Ջորջ. — Ուրեմն ձեր նորաստեղծ Հայկական Հանրապետութիւնը պիտի ապրի յաւիտեան անսասան, եւ նրա փառաւոր դրօշը կը տնկէք յաւիտենական Արարատի հրաշալի գլխում Նոյ Նահապետի տապանին կից առ կից: Եւ այժմ տեսնենք այդ ինչ խորհրդաւոր քարտէզ է, որ ձեր պատկառելի ընկերակիցը, այնպէս ամուր բռնած ունի իր ձեռքում, որպէս մի թագաւորական գաւազան:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Նուպար Փաշա.— *Ահարոնեան, օգնեցէք ինձ, բռնեցէք միւս ծայրէն որ բանանք քարտէզը:*

Կլեմանսօ.— *Այդ ինչ է, Պօղոս փաշա, դուք ատում էք Թուրք կառավարութիւնը որպէս կոտորիչ ձեր ժողովրդեան, բայց ցանկանում էք փաշա տիտղոսով զարդարել ձեր անունն ու անձը: Այժմ, ես տեսնում եմ ձեր արեւելակոյս հանրապետութեան լիազօր պատուիրակն եւս կրում է նոյնպէս մի բարձր տիտղոս, մեր Ֆրանսայի գլխատուած միապետութեան* պառօն *տիտղոսը: Ինչպէս տեսնում եմ դուք երկուսդ էլ, ցանկանում էք լինել ռամկավար մի ժողովրդի ներկայացուցիչներ, լեզուով հանրապետատիրական, տիտղոսով եւ փառասիրութեամբ ուզում էք լինել միապետական:*

Պօղոս փաշա.— *Իմ վիպասան պաշտօնակիցը միակը չէ այդ տիտղոսով: Բոլոր Հայերն* պառօններ *են, ըստ որում այդպէս տիտղոսաւորում միմիանց:*

Լոյդ Ջորջ.— *Շնորհաւորում եմ, որ Հայը իր ամբողջութեամբ ազնուականների ցեղ է, ուստի եւ իրաւամբ արժանի է կանգնել ոչ թէ ցած, բայց բարձր այն ամեն ազգերից որոց մէջ եւ որոց ներքեւ նա ապրում է: Այժմ գանք այդ քարտէզին, որի հիւսիս արեւմտեան անկիւնում տեսնում եմ «Թուրքիա» բառը տպուած խոշոր գրերով: Արդեօք կամենում էք*

կարդալ դասախօսութիւն Թուրքիոյ աշխարհագրութեան մասին, թէ կամենում էք, որ մենք կտարենք Թուրքի աշխարհը ,որպէս նա կտարեց ձեր ցեղի գոյութիւնը:

Պօղոս փաշա.— Իմ ցեղի արեան բողոքի ձայնը բարձրացաւ մինչեւ երկինք: Եւ ես բարձրեալն Աստուծոյ պատուէրով է որ եկած եմ այստեղ այս քարտէզի վրայ ձեզ ցուցանել Օսմանեան Կայսրութեան այն մասերն որ նախախնամութիւնը, եւ մարտիրոսացեալ Թրքահայութեան հոգիները պահանջում են ձեզանից Հայ Ազգի համար:

Այս ասելով, անդայ Թրքահայ ժողովրդեան հօգեցունց փաստաբանը փակեց իր աջ ձեռքի երեք մատներն եւ բթամատը, եւ ցցելով իր ցուցամատը, դարձրեց շրջանակելով այն նահանգների կամ վիլայէթների վրայ, որոնք վիճակուած էին յետ այնու լինել երկիր Մեծին Հայաստանի: Եւ ցուցամատը սկսեց Սեբաստիայից, դարձաւ դէպի Մեծն Միհրդատի Պոնտոսի մայրաքաղաքն Տրապիզոն, ոլորեց դէպի վայր, Էրզրում, ներփակելով Բիւրակնեան լեռները, ուր էր Եղեմական դրախտը, եւ աւելի ցած՝ Վասպուրական աշխարհը, այդտեղից հարաւ արեւմուտք, Բաղէշ, Սուրբ Գրոց Բաղամի եւ նրա հայախօս պատմական էշի ծննդավայրն եւ հանդաստանը, եւ այնտեղից դէպի այն անմահ քաղաքը, որի անքայքայելի հսկայ պարիսպ-

ները ամկաւին մնում են կանգուն կոթողներ Մեծ Տիգրանի մեծութեան: Եւ անյողդողդ ցուցամատը սկսեց բարձրանալ վեր արեւմուտք, Խարբերդի նահանգից յետոյ, նա պտտեցրեց իր ցուցամատը անելով պտուտակներ այդ նահանգներից դուրս երկիրների վրայ, նա պարծանքով դարձաւ երեք Մեծերի եւ յաղթականօրէն ձայնեց·

«Այս այն այլազան ցեղերով եւ լեզուներով երկիրներն են որ երբ մեծ նահապետն Արամ, որդին Հայկայ, 2159 տարիներ Քրիստոսից առաջ սկսեց իր ընդաւար բանակներով, կապեց նրանց անհամաձայն լեզուները, եւ հրամայեց որ նրանց նորաբոյս լեզուները պարտ էին կրթուել եւ շարժել միայն հայերէն լեզու խօսելու համար»:

Այս անելով նա շարունակեց իր ցուցամատի մարզանք դէպի ուր արեւը մայր էր մտնում Միջերկրականի խաղաղ ջրերի հարեւանի յետեւում: Եւ խաղաղօրէն շարժելով մեծ ծովի եզերքով, սկսած Ալեքսանդրեթայի պատմական նաւահանգստից հասաւ մինչեւ Մէրսին:

— Ահա այստեղ պիտի վերջանայ մեր նոր եւ մեծ Հայաստանի արեւմտեան ցամաքակէտը, եւ արեւելեան սահմանը Կասպից ծովի արեւմտեան շրջակայքից, եւ հիւսիսում Սեւ ծովից մինչեւ Նինուէի աւերակները: Ինչպէս նախապատմական ժամանակներում ։ քաղա—,

քակիրթ Հայաստանի առեւտրական ապրանքալից նաւերը իրենց հայկական դրօշակներով զարդարում էին Սեւ ծովի նաւահանգիստները, եւ Ալեքսանդրեթայից նրանց ձիւնափայլ առագաստնաւերը արագիլի երամների պէս թռչում էին Միջերկրականը շրջապատող երկիրների վրայ, եւ Ջիբրալթարի նեղուցով դուրս դէպի անհուն ովկիանոսի անծանօթ երկիրները, այնպէս եւ աւելի մեծափառ պիտի լինի նոր Հայաստանի նաւերի երեւոյթը: Բայց մինչ այդ, ինչ որ այժմ կամենում ենք եւ իրաւունք ունենք սպասել ձեզանից, այն է որ դուք տաք մեզ բաւական զինուորներ երկրի պաշտպանութեան համար, պայմանաւ որ այդ զինուորները պարտին լինել մեր հայ զօրավարների հրամանի տակ, եւ պարտիք անել մեզ դրամական մեծ փոխառութիւն, բայց իրաւունք պիտի չունենաք հսկողութեան մեր ելեւմտական վիճակի վրայ, թէ ինչպէս պիտի գործածենք դրամը: Այդ մեր պետութեան գաղտնիքը պիտի լինի եւ ինչ որ ամենակարեւորն է, Հայաստանը պիտի նկատէ ինքն իրեն բացարձակապէս անկախ, թէեւ պիտի ընդունենք ձեզանից մէկի մանդատը Հայաստանի վրայ, բայց Հայ Ազգը ինքը պիտի լինի իր երկրի մանդատորը:

Երեք Մեծերը լսեցին եւ ապշեալ լռում էին ուշադիր եւ նայում միմեանց: Եւ մինչ նրանք տակաւին այս վիճակի մէջ էին, Ահա-

ընկեան ատարանց իր պաշտօնակցի փաստաբա-նութիւնը մի պանծալի կարգաբանով:

— Նախագահ, եւ նախարարապետներ, դուք կարող էք կատարելապէս վստահ լինել թէ մեր խաղաղ ազգը պիտի լինի քաղաքա-կրթութեան փարոսը որ արեւմուտքից քաղա-քակրթութեան լոյսը պիտի սփռէ ամբողջ Ասիոյ վրայ:

Վիլսոն.— Այո, Արարատեան Հանրապե-տութիւնը արեւմուտքից, եւ Ամերիկեան Հանրապետութիւնը արեւելքից կը լուսաւո-րեն Ասիոյ խաւար ազգերին եւ դուք, սիրելի Ահարոնեան կը բանէք լուսաւորութեան ջա-հը: Եւ դուք, Նուբար փաշա, խմացել էի թէ Ձեր հայրը կարճ ժամանակ պաշտօնավա-րեց Եգիպտոսի նախարարապետութիւնը, եւ այժմ ձեր հիմնաւ յայտարարութիւնից ես դիտում եմ ձեր բարձր հմտութիւնը քաղա-գիտութեան մէջ:

Կլեմանսօ.— Փաշա, Ձեր ցուցամանի ճանապարհորդութեան պատկերներից տեսնում եմ որ դուք շատ բան չէք թողում Թուրքիոյ Փոքր Ասիայում, եւ կազմել էք Հայաստանի մասն երկիրներ, որոնք մեծ մասամբ եթէ ոչ ամբողջովին բնաւ չեն եղել Հայաստանի հող ոչ պատմական, եւ ոչ իսկ նախապատմական ժամանակներում, եւ այժմ այն տեղերում բնաւ չկայ Հայ: Ի՞նչպէս նրանից կարող էք ստեղծել Հայաստան, եւ որի՞ վրայ պիտի

թագաւորէք: Այդ ամէն տեղերում բոլոր մարդիկ ցեղերով են Թուրք, քիւրդ, գնչու, եզիդի եւ արաբ, եւ կրօնով են մահմեդական: Ուրեմն կամ դուք ձեր խորհրդականներով, ցեղով կը դառնաք Թուրք եւ կրօնով մահմեդական, եւ երկիրն եւս կը թողուք որ անունով կոչուի Թուրքիա, եւ դուք երթաք եւ թագաւորէք երկրի վրայ, եւ կամ մի կախարդական զօրութեամբ այդ այլազան ցեղերին ուղեղով, լեզուով եւ մտածութեամբ կը դարձնէք Հայ, ուստի ամեն ոք ինքնաբերաբար պիտի խորհի թէ ի ծնէ է Հայ, եւ երկիրն եւս բնականաբար էր եւ է ոչ այլ ինչ բայց Հայաստան: Եւ այսպէս միայն կը կատարուի ձեր անկարելի փափաքը եւ կը լուծուի ձեր անլուծելի խնդիրը:

Պօղոս Նուբար.— Մանախոր նախարարապետ Ֆրանսայի. դուք չէշտերի մէջ թեւամ էք լինել համակիր հալածող Թուրք կառավարութեան քան հալածուած Հայ ժողովրդեան: Կար ժամանակ որ ձեր Ֆրանսական ժողովուրդն եւս էր հալածուած, սակայն ոչ օտարացեղ բանակների ձեռքով բայց բուն նոյնացեղ բռնակալ թագաւորների եւ նրանց իշխանաւորների ձեռքով: Եւ ձեր ժողովրդեան գլխաւորները կտրեցին իրենց բռնակալների գլուխները եւ ստեղծեցին ազատութիւն Ֆրանսական ազգի համար, որով այժմ դուք եւ ամէն Ֆրանսացի պարծենում էք: Ուստի

դուք պէտք էիք լինել առաջինը պարծենալու, որ մեր Հայ ժողովրդեան գլխաւորները կամենում ենք նոյն ազատութիւնը ձեռք բերել օտարացեղ բռնակալներից: Հայը ոչ նուազ իրաւունք ունի հպարտանալու իր ազգութեամբ քան դուք Ֆրանսացին իր ազգութեամբ եւ թերեւս աւելի: Բոլոր այն երկիրները որ ես մատնանշեցի այս քարտէզի վրայ, եւ որ Թուրքական են այսօր, էին հայկական դարեր առաջ, երբ Ֆրանսա տակաւին գոյութիւն չունէր, եւ մեծ Հայաստան այն ժամանակ տարածուած էր իր հարազատ երկիրները այդ սահմաններից դեռ շատ հեռու: Եւ հեռու չէ այն ժամանակը, երբ համայն աշխարհ պիտի դարմանայ Հայ ազգի անծանօթ անցեալի մեծութեամբ: Մենք ունենք մի վսեմահմուտ հնագէտ Արշակ Սաֆրաստեան, իր հնագիտական գիւտերով անզուգական տիեզերքի բոլոր հնագէտների մէջ: Եւ իր անհամար եւ անհերքելի փաստերով պիտի յեղաշրջէ հին դարերի մարդկային քաղաքակրթութեան պատմութիւնները: Եւ պիտի տեսնուի եւ համոզուի որ նա երեւան պիտի հանէ թէ Ասորեստան, Եգիպտոս, Յունաստան եւ Հռոմ իրենց քաղաքակրթութիւնը եւ գրականութիւնը փոխ են առել եւ ընդօրինակել են Հայ ազգի քաղաքակրթութիւնից եւ գրականութիւնից, որոնք աստօրէն եւ ամենուրեք եւ անջնջելի թաղուած են խոր գետնի տակ եւ մենք այժ ա-

մենք լոյս աշխարհ պիտի հանենք երբ հաստատենք մեր պետութիւնը։ Թէ այսօր չկամ Հայ ժողովուրդ այդ երկիրներում, վաղը պիտի լինի ինչպէս որ կար հնաւոր անցեալում անհամար միլիոններով ,եւ ինչպէս տակաւին չորս տարի առաջ կար մէկ երկու միլիոն, եւ Թուրք կառավարութիւնը ոչնչացրեց վայրենի գազաններին յատուկ բնութեամբ եւ կատաղութեամբ։ Անցեալ դարի վերջին Գերմանիա, Ռուսիա եւ Աւստրիա էին որ ամէն անգամ դժուարութիւններ հանեցին Հայկական խնդրի դէմ, եւ այսպէս քաջալերելով Թուրք իշխանութիւնը իր հայ հպատակներին ջնջելու բարբարոսութեան մէջ։ Հայ ժողովրդի բնաջնջման հետ, Աստուծոյ պատիժով բնաջնջուեցան այդ երեք տէրութեանց կայսրները իրենց բռնակալ իշխանութեամբ միասին։ Դուք էիք յայնժամ մեր ազգի իրաւունքի բարեկամները եւ պաշտպանները եւ արգիլել ջանացողները։ Արդ, այժմ ժամանակն է որ արդարացնէք թէ արդարեւ դուք պաշտպան էիք անվիճելի արդարութեան։ Եթէ էիք, ուրեմն գազանի ճանկերից առէք մեր երկիրները, որ ես ցոյց տուի ձեզ, եւ տուէք մեզ Հայ ազգին ,արդար տէրն այդ աւերեալ աշխարհի։ Եւ հայեր, հազարներով երկրագնտի ամէն կողմերից գարնան թռչունների նման պիտի սաւառնին իրենց կարօտակէզ հայրենի տունը։

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Լոյդ Ջորջ.— *Բայց ես վստահ եմ այդ ազգասէր Թաչուհիների մէջ պիտի չը գտնուի եւ ոչ մէկ Լոնդոնի հայ գործավաճառ ,որոնք իրենց լեզուներով նոյնչափ ազգասէրներ են, որպէս դուք ,ով փաշա, բայց իրենց հոգիները կառչած պիտի մնան այնտեղ ուր են իրենց գործերը շահաւէտ ծախելու հաւատով: Բառերով ազգասէր լինելը մի առաքինութիւն չէ, եւ նոյնիսկ վտանգաւոր պակասութիւն է մի ազգի համար, որ իրաւամբ կամենում է մեծնալ եւ բարձրանալ: Մենք Գալլիացիներս ունենք աւանդութիւն, թէ մեր ցեղի եւ հայ ցեղի միջեւ եղել է առնչութիւն ամենահեռաւոր դարերում, եւ թէ կան շատ իրերանման բառեր մեր երկու լեզուների մէջ: Վաղն օրոյ եւ սկսեալ դպրոցական սեղանից հետաքըրքրւում էի հայ ազգով, ամէն անգամ, որ անունը կարդում էի մի գրքում կամ մի թերթում: Եւ առաջին բանը որ սովորեցի գիրքերից էր թէ Հայը ի բնէ ծնեալ արուեստով էր ազգասէր ամէն բանից առաջ, եւ այս շատ լաւ պատկերացնում է Ջորջ Բարրո, մեր անցեալ դարի ճարտարամիտ հեղինակը իր վէպերում: Նա պատահարար ծանօթանում է մի հայ առեւտրականի, որ ապրում էր Լոնդոնում Արքայական Սակարանի մօտերում. վերի յարկում նրա ննջարանն էր, եւ ներքեւում նրա գրասենեակը եւ ամէն անգամ որ լինում էր նրա մօտը Հայը շարունակ խօսում էր իր*

ազգասիրութիւնից: Մի օր նկատեց որ նրա գրագիրը խուլ եւ համր էր. եւ հարցրեց Հային թէ ինչպէս է նա կարողանում կատարել իր գործը մի այդպիսի գրագրի ձեռքով: Նա պատասխանեց թէ երբ ունէր լեզուով եւ ականջով գրագիր, իր հայրենակիցները հնարագիտութեամբ հարցնում եւ իմանում էին թէ ով էին յաճախորդները, որքան էր շահում, որքան հարստութիւն ունէի, եւ այսպէս ամէն գաղտնիքները: Ուստի ճարահատած բռնեցի այս խուլ եւ համր գրագիրը, որ ոչ կարող է լսել նրանց հարցումները, եւ ոչ խօսել նրանց հետ, եւ պատասխանել նրանց հետաքրքրութեան: Մի օր երբ ըստ ժամադրութեան գնաց Հայ բարեկամին, գտաւ տեղը կողպըւած, եւ գրագիրը կանգնած դրան առաջ, մի նամակ բռնած ձեռքում.: Նա երկարեց նամակը դէպի Բարրո եւ հեռացաւ, որը գերագոյն հետաքրքրութիւնից շարժուած, անշարժ կանգնեց իր տեղում եւ բանալով նամակը կարդաց այսպէս.

«Մեծայարգ բարեկամս,

Հայրենիքիս սէրը այրում է ազգասիրական սիրտս: Այլեւս անկարող դիմանալ բոլոր գործերս կարգադրեցի եւ մաքրագարդեցի: Հարստութիւնս տեսայ երկու հարիւր հազար անգլիական ոսկի է: Արդ, մնաս բարեաւ, անգլիացի բարեկամ ,ես շտապաւ գնում եմ, գնում եմ զոհել անձս եւ հարստութիւնս իմ

Հայ ազգի վերակենդանութեան, եւ իմ պաշտելի Հայաստանի վերաստեղծման համար»:

Նա գնաց եւ Ջորջ Բարրը այլեւս չը լսեց նրանից, բայց ապահով էր թէ իր Հայ բարեկամը գտեց ոչ իր հարստութիւնը եւ ոչ իր անձը:

Լեգուարանական հայրենասիրութեան ըսդւաճառական ազգասիրութիւնը, որով սաստիկ սիրահարուեցան հայերից ոմանք վերջին երեսուն տարիների միջոցին, ծնունդ տուին Թուրքիայ ատելութեան իր հայ հպատակների դէմ, որով խանգարուեց նրանց հանդարտելի բարեկեցութիւնը, եւ նրանք ենթարկուեցան հալածանքի, բանտարկութեան, պարբերական կոտորածների եւ ամբողջական ոչնչացման, այնպէս որ ոչ մէկ հայ չը մնաց այն ամէն նահանգներում, ուր դուք այժմ պահանջում էք մեզանից, որ մենք ձեզ համար հիմնենք Հայաստան: Դուք չէք խորհում թէ ինչ էք խօսում եւ չէիք խորհում երբ ստանձնեցիք ձեր դերը եօթն տարի առաջ ձեր ցեղի անբարեացակամ ներքին թելադրութեամբ, եւ հակառակ ձեր Թրքահայոց ապահովութիւնն եւ կեանքը վտանգելից եւ կորուստից ազատ պահելու փափաքողների բարի ազդարարութեանց, խորհուրդներին: Այդ հետեւանքով, Թուրքիա կատաղած կանգ պիտի չառնէր նոր հայ կոտորածներ վերսկսելու, եթէ չզսպուէր մեր ազգը եւ իմաստուն խոր-

հուրդներից 1912–1913ին։ Ինչ որ նա չորեց 1913ին, արեց 1915ին, երբ նա պատերազմում էր մեզ դէմ, եւ ձեր ժողովուրդը նրա ոտների տակ էր անյոյս եւ անպաշտպան։ Բոլոր Թըրքահայերը ճզմուած էին նրա ոտների տակ, դուք, հետեւեալ տարին, 1916ին, երբ Անգլիա եւ Ֆրանսա տատանում էին կեանքի եւ մահու անդունդի միջեւ, եկաք Լոնդոն խընդրելով տեսնել իմ Արտաքին Գործոց Նախարարին, Սըր Էդուարդ Գրէյին, որի ազդարարութեան եւ խորհուրդի դէմ գացիք երեք տարի առաջ, եւ որով Թըրքահայերը ոչնչացան։ Նա ոչինչ ունէր տեսնել ձեզ։ Դուք, եւ ամէն Հայ որ ձգտումն եւ դեր են ցոյց տալ եւ ստանձնել իրենց Թրքահայ ժողովրդի բարութեան համար, շատ վաղուց պէտք էր հասկնայիք, եւ դուք ես տասել, թէ ի՞նչ է Եւրոպա, եւ որքան արժէք ունի փառահիլ եւ դիմումներ անել Եւրոպային, եւ այդու գըրգռել Թուրքիային։ Այս պատերազմը չը գիտեմ կարողացա՞ւ հասկցնել ձեզ, թէ ինչ է Եւրոպա, թէ պատերազմ կամ խաղաղութիւն նրանք միեւնոյն հակառակորդները եւ միեւնոյն գաղտնի եւ յայտնի թշնամիներն են միմեանց միջեւ, դուք հայերդ ունէք մի ազգային հիւանդութիւն, թէ ձեր ազգը մի մեծ արժէքաւոր տարր է աշխարհի վրայ, յաչս Եւրոպայի։ Բայց Եւրոպան ձեր_մասին չի մտածում անգամ։

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Արդ, ի՞նչ կարող էիք սպասել այսպիսի մի Եւրոպայից. եւ արդէն ձեր նախկին փորձառութիւնից՝ ձեր հայերը պարտ էին սովորած լինել թէ դիմել եւ ապաւինել մի այսպիսի Եւրոպայի ընդդէմ Թուրքիայ, նշանակում էր հրաւիրել Թուրքիային կոտորել իր հայ հպատակներին, զի այս մեր Եւրոպայի Մեծ Պետութիւններից ոմանք վատթարագոյն են քան Թուրքիա, եւ այս որոշակի ցոյց տուին նաեւ հայոց համար քան հինգ տարի առաջուայ հայկական պարբերական կոտորածների դէպքերում:

Բայց արդէն ի՞նչ արժէք եւ կարեւորութիւն ունի հայ անունն եւ այդ անունը կրող ժողովուրդը: Ոչ մէկ: Նրանց համար հայ ազգը ողջ կամ մեռած, մազի չափ նշանակութիւն եւ կարեւորութիւն չունի: Հայերը իրենք են որ պարտ էին մտածել եւ ուսումնասիրել իրենց անզօր եւ անպաշտպան փոքր ցեղի գոյութեան անվտանգ պահպանման եւ զարգացման լաւագոյն հնարաւորութեանց վրայ, եւ ոչ թէ հաւանական կորստեան վտանգների ենթարկել: Բայց այդպիսի մտածումն պակասում է այն հայերի մտքերում, որոնք դեր են ստանձնել իրենց ազգի ճակատագրի բարձրացման համար: Դուք երկուքեան կանգնում էք մեր առաջ, որպէս Հայ ազգի ներկայացուցիչներ, եւ դուք ձեր յիշատակագրում չէք չափում ձեր խօսքերը, եւ պահանջների բանաւորութեան

սահմանները, եւ պարծենում էք ձեր ցեղի կատարած եւ կատարելիք դերով մարդկային քաղաքակրթութեան ասպարէզում, մի հզօր Հայաստանի գոյութեամբ:

Պիտի ոչ աւել երկար, պարոն Ահարոնեան, Հիւսիսի Սպիտակ Արջը իջնէ վայր Կովկասեան լեռներից Արաքսի հովիտը եւ կախէ ձեր անկախ Հանրապետութիւնը իր երկաթակուռ կախաղանից, եւ կապէ զայն իր երկայնաձիգ պոչի ծայրին անբաժանելի: Իսկ գալով Փաշայի պահանջած ընդարձակածաւալ Հայաստանին, այդտեղ արդէն հայ չկայ:

Այդպիսի մի Հայաստան, որպէսզի դառնայ Հայաստան, կարելի է երկու հնարաւորութեամբ: Կամ կտրել բոլոր մահմեդական բնակիչների լեզուները եւ նրանց տեղ դնել հայ լեզուներ, ինչպէս ձեր Արամ Թագաւորը արեց սրանից չորս հինգ հազար տարիներ առաջ, եւ նրանց գանկերից դուրս հանել իրենց բնական ուղեղները, եւ տեղաւորել հայաշէն ուղեղներ, որպէսզի նրանք այնուհետեւ խորհեն թէ իրենք հայեր են, եւ իրենց լեզուների ձայներից լսեն թէ իրենք թուրք եւ եզիտի չեն, բայց են ճշմարիտ հայ ազգի հարազատ զաւակներ, ինչ հնարաւորութիւն որ իմ պաշտօնակից Կլեմանսօ յղացաւ իր մտածութեամբ: Եւ կամ գտնելու է մի նոր աստուածային Սուրբ Հոգի, որ իր ամենակարող շունչը շնչէ այդ երկրի ա-

բարդերի, թուփերի, քարերի եւ եղեւնիների վրայ եւ տակ նրանց.

«Եղիցիք Հայք» եւ եղիցին Հայք:

Եւ գոչէ այդ երկրի հողին, լեռներին եւ դաշտերին, եւ գետերին.—

«Եղիցիք Հայաստան»
Եւ եղիցին Հայաստան:

Երկինքը շատ լաւ գիտէ ձեր ազգային վեհեմ առաքինութիւններն եւ կատարելութիւնները, եւ անտարակոյս պիտի փափաքի ղրկել իր Սուրբ Հոգին կատարելու այնպիսի աներեւակայելի մի հրաշք, եթէ տեսնէ վեր չէ իր ամենակարողութիւնից: Այլապէս մեր Վերի ձորերում կայ մի կախարդական անձաւ, որի կանաչեղութիւնը յետ չէ մնում Ադամի դրախտից, ամենուրեք մշտաթարմ բազմազան բուսականից ծաղկաստաններ, որոց մէջեւ վճիտ աղբիւրներ ցայտում են վեր օդի մէջ, եւ ցօղանման իջնում ծաղիկների վրայ, եւ շողշողում որպէս ադամանդի հատիկներ: Թէ ո՞ւր է վերջանում այս անձաւի խորութիւնը, ոչ ոք է տեսել, եւ ոչ ոք գիտէ: Այս խորհրդաւոր քարայրում բնակում է միայն մէկ ճակ, ծաղկաստանների մէջտեղում կանգնում է նրա բնակարանը. պատերը վարդից, աթոռները եւ սեղանները վարդերից, նոյնպէս վարդերից եւ նրա անկողինը եւ բարձերը: Նա չէ եփում եւ

չէ ուտում: Նրա կերածը եւ շնչածը իր շրջապատի յաւիտենապէս անթառամ ծաղիկների քնքոյշ տերեւներից բարձրացող յարածուխ անուշաբոյր հոտերն են: Նա ծնել է աշխարհի ծննդեան հետ, նրա ամենաքնքոյշ եւ փափուկ զգացումն է միայն որ կարող է փափկասրտութիւն ներշնչել իրեն դէպի Հայ ազգի փափաքը որ ցանկանում է դարերի տատասկոտ կեանքի փշապատ ճանապարհից դուրս գալ, եւ ապատիլ· եւ ապրել որպէս ինքնուրոյն ազատ, նըման ազատ ազգերի, ազգային ազատութեան երջանիկ դրախտի մէջ:

Ես միակ մարդկային արարածն եմ, որ տեսել եմ այդ անզուգական էակին, եւ մուտք կոխել նրա կախարդարանի մէջ: Եւ ինչ որ ոչ մենք երկրաբնակ երեքեանս, եւ ոչ երկնաբնակ Երրորդութիւնը կարող են տալ ձեզ մի Հայաստան այսպիսի կամ այլպիսի հրաշագործութեամբ, այս ամենահրաշագործ էակը պիտի անտարակոյս կատարէ տենչերքի ամենադարմանալի հրաշքը, այսպէս ստեղծելով ձեր պահանջած Հայաստանը, որ այլապէս անհնարաւորութեանց անհնարաւորութիւնն է: Գիտի աղաչեմ նրան, եւ եթէ նա արժանի համարէ, Հայ ազգը մի այդպիսի գերագոյն շնորհի, ամէն բնակիչներ կը դառնան Հայկազունք, եւ դուք թագաւոր նրանց վրայ:

Արդ, այժմ կարող էք երթալ ձեր խորհր

դասակիցների մօտ, բացէք ձեր Հայաստանի քարտէզը, եւ տեսէք եթէ ձեզանից ոմանք կամենում են նորանոր երկիրներ կամ քաղաքներ մտցնել քարտէզի սահմանագծից ներս, եւ այսպէս եւս աւելի մեծացնել Հայաստանը: Քանդի եւ լսեցի թէ երբ խորհրդակցում էիք թէ՝ ի՞նչ գաւառներ պիտի ուզէիք ներմուծել, եւ արդէն գծել էիք սահմանները. մէկը գալով երբ տեսնում էր որ իւր ծննդավայրը Եդեսիոյ գաւառի գիւղը Հայաստանի սահմանագծից դուրս էր թողուած, պահանջում էր ջնջել մելանագիծը, եւ մի նոր գծով մտցնել իւր ծննդավայրը իւր սիրելի Հայաստանի իշխանութեան տակ:

Այսպէս էր վարւում եւ հնավաճառութեամբ եւ գործավաճառութեամբ հարստացած մի Կեսարացի: Եւ քարտէզ գծողը հարկադրուած էր լինել հաճոյակատար նրանց ազգասիրական ցանկութեանց: Եւ մի ուրիշը, ուսեալ ձեր մի բարձրագոյն կրթարանում, եւ ապա մի գերմանական համալսարանում, եւ ապա դարձած մի անուանի հեղինակ, եւ անունով Շանթ կամ Կայծակ, սիգաբար ճեմում էր ձեր Խորհրդարանում, ռեվոլվեր գրպանում կամ ձեռքում, գոռալով՝

Եւրոպայի այս Խաղաղութեան ժողովին ինչ որ մենք գրում ենք մեր սրբազան դատի համար, չպէտք է ունենայ խնդրագրի գոյն:

Մենք չենք խնդրում, բայց մենք պահանջում ենք այդ ժողովից, եւ նրանք պարտաւոր են կատարել մեր պահանջը:

«Այսպէս է մեր անմահ Դաշնակցութեան յեղափոխական Կուսակցութեան անպարտելի ազգային հանրապետական իշխանութեան երկաթեայ կամքը, եւ անջնջելի վճիռը»:

Ես յաճախ իմացել եմ թէ հայ ժողովրդեան մէջ կան ընտիր մարդիկ եւ գովելի ընկերութիւններ, եւ թէ այդ ցեղի հասարակ եւ պարզ գեղջկական եւ անուս մասը բարի եւ պատուական մարդիկ են, արժանի նրանցից ստեղծուելու մի ազատ երջանիկ պետութիւն, ազատ եւ անկախ ազգերի մէջում: Բայց յիշեալ տեսակի ուսեալների բնաւորութիւնն ու վարքը խոչընդոտ են այդ արժանաւոր ցեղի զարգացման: Երբ այդպիսի տեսակի ազգային փրկութեան դերակատարներ չքանան, յանժամ ձեր ազգը պիտի գտնենայ ինքն իրեն, եւ ուրիշներ եւս պիտի գտնենան նրան:

Այս վերջարանութեամբ, Մեծն Բրիտանիոյ փոքրահասակ եւ մեծանուն նախարարպետը շրջեց իր դէմքը, եւ հակայաքայլ անհետացաւ յետեւի դռնից, եւ նրան հետեւեցին Վիլսոն եւ Կլեմանսօ: Պօղոս փաշա Նուբար, եւ Աւետիս Ահարոնեան դուրս եկան այն դռնից, որտեղից մտել էին ներս:

Լոյդ Ջորջ վերադարձաւ Լոնդոն, եւ Պար-

յամենայի մէջ ճառելով Խաղաղութեան ժողովի մասին, ի մէջ այլոց, իբրեւ հեղինութիւն թէ՞ յանդիմանութիւն, յայտնեց թէ՝ փոքր ազգերից ոմանք չեն հասկանում իրենց պահանջների չափն ու սահմանը:

Այս ողբերգութիւնից յետոյ անկանգնելիօրէն ընկաւ եւ Դաշնակցութեան Հայաստանի տիրապետութիւնը, եւ մի անգամ եւս նրա հանրապետութիւնը հաստատուեց արտասահմանում եւ նրա սահմանները Թաւրիզից մինչեւ Նիւ Եորք եւ Քալիֆորնիա, ուր ամենուրեք հաւատարիմ քաղաքացիները հնազանդօրէն վճարում էին իրենց ազգասիրական տուրքերը, եւ նրանց պետերը հետեւում էին իրենց անփոփոխ նշանաբանին — կեր, արբ եւ ուրախ լեր:

Ահարոնեան զրկուեց իր կուսակցութեան այս նոր թագաւորութեան երջանիկ բաղդի այս հին նշանաբանի քաղցրութիւնից: Նրա հոգեկան հարուածին յաջորդեց մարմնական հարուածը: Նրա մարմնի մէկ կողմը եւ մէկ աչքը եղան անդամալոյծ, մի առ ժամանակ յուսանալով, բայց հետզհետէ անդամալուծութիւնը տարածուելով մարմնի բոլոր անդամների ողնէս եւ լեզուի վրայ:

Իմ ամէն զառամութիւններով, գիտութիւններով, եւ քննադատութիւններով հանդերձ, ես պարտիմ ասել թէ, Դաշնակցական

կուսակցութեան դիպլոմատական իշխանակալութեան կարճատեւ կեանքի պատմութեան մէջ, Աւետիս Ահարոնեան գլխաւոր դէմքն է, որ որպէս հայ դատի պատուիրակ, բաղդ ունեցաւ Պօղոս Նուբարի հետ ներկայանալ Բարիզի Խաղաղութեան ժողովի մեծագոյն դատաւորների առաջ: Նրա այս բացառիկ դերի համար Ահարոնեանի անունը միշտ պիտի մնայ հայ դատագրութեան պատմութեան մէջ:

ՄԻՔԱՅԷԼ ՎԱՐԱՆԴԵԱՆ ՀՌՈՎՄՈՒՄ

Միքայէլ Վարանդեան, ինչպէս Յովհաննէսեան, իր դերում նմանում էր Ռիբենտրոպին, երբ սա որպէս Հիտլերի սանձարձակ դեսպան արշաւում էր Եւրոպայի մեծ պետութեանց արտաքին գործոց նախարարների պաշտօնատները, խօսում էր յանուն Հիտլերի, եւ խորհուրդներ էր տալիս, եւ յայտնում իր մեծաւորի կամքը:

Բայց Վարանդեան իր գլխի վրայ չունէր Հիտլեր, նա դաշնակցական հայ յեղափոխական կուսակցութեան սանձարձակ դեսպանն էր, առանց սանձահարողի իր սանձը: Նա տեսնում էր մեծ պետութեանց բարձր պաշտօնեաներին, քաղաքական կուսակցութեանց պետերին եւ մեծ դիւանագէտներին, խօսակցում նրանց հետ Հայկական խնդրի եւ պահանջների մասին եւ լուսաբանում հայկական հարցի միջազգային կարեւորութիւնը: Եւ այս եղելութիւնները

Նա մանրամասնօրէն տեղեկագրում էր Ամերիկա եւ այլուրեք իր ընկերներին, որոնք իրենց աշխարհաճանաչողութեամբ յաւէտ մնալով նոյն անբարւոքելի ոչխարամիտները, բերանները լայն բացած, առանց ծամելու կուլ էին տալիս նրա ամէն գրածները եւ սքանչանում նրա դիւանագիտական կարողութեան վրայ, եւ թէ ինչպէս բոլոր դիւանագէտների դռները բաց էին նրա առաջ: Նա չգիտէր եւ չէր երեւակայում թէ աշխարհի ամէն կողմերի նամակներ 1914—1919 ամենամեծ մասամբ բռնուելով ցամաքի եւ ծովերի վրայ, բերւում եւ բանտարկւում էին անգլիական գրաքննութեան բանտի մէջ, ի միջի այլոց եւ նրա նամակները սկսեալ Շուէտից, եւ թէ ես այդ միջոցին լինելով հայերէն նամակների բանտապահը, մերկացնում էի եւ նրա նամակները, եւ զուարճութեամբ կարդում էի նրա սքանչելի դիւանագիտութեան հիանալի տառասխալաբանութիւնը: Երեւի, ճիշդ իր այս արժանիքի համար նա ինքնիրեն նշանակել էր դեսպան Յաւիտենական Քաղաքի, յանուն նորածագ Անկախ Հայաստանի, որ փոխանակ ծնելու Սուլթանի Էրզրում քաղաքում, սխալմամբ ծնաւ Ցարի Երեւան քաղաքում:

Բայց նա այնքան իրականութեամբ եղաւ դեսպան Իտալիոյ Թագաւորի առաջ, որքան ես եղայ Դաղստանի լիազօր դեսպան Հնդկաստանի Կայսր եւ Մեծն Բրիտանիոյ Թագաւոր

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Գէորգ Հինգերորդի առաջ, հետեւաբար, ոչ նա ներկայացաւ Վիկտոր Էմանուէլ թագաւորին, եւ ոչ էլ թագաւորը այցելութիւն արաւեց անկախ Հայաստանի դեսպանին: Դեսպանը սպասում էր, որ այդպէս էլ պիտի լինէր, բայց չէր սպասում թէ իր դեսպանատան կողքին կարող էր լինել մի տուն ուր հաւեր եւ նրանց բարձրագոչ ամուսինները բնակէին, եւ իրենց կոկորդաձայն ժամերգութիւնը սկսէին գիշերային մութի լռութեան հետ: Դեսպանի կակուղ ջիղերը արդէն ցնցահար էին իր մարմնի ատամային ատմբերից, եւ անկարողանում էր փակել իր աչքերը մութի փարատումից առաջ, եւ երբ Քնոյ Աստուածը տարածում էր իր քնաբեր թեւերը հոգետանջ հայ դեսպանի ջղայնացունց մարմնի վրայ, թշուառական աքաղաղները իրենց կոկորդների ամենաուժգին թելերով սկսում էին երգել, եւ կանչել նրան՝ ոտքի կանգնել եւ կարդալ Անկախ Հայաստանի կառավարութիւնից եկած պաշտօնական նամակներն ու հեռագիրները:

Յուսահատ դեսպանը հարկադրեալ դիմեց իր դեսպանատան առաջին թարգմանը հաւատիրոջ մօտ, պահանջելով անդգամ աքաղաղների պապանձումը, բայց որովհետեւ նրանք անընդունակ էին հնազանդիլ ոեւէ հրամանի, դեսպանը առաջարկեց գնել եւ տապակել եղաւ գնել խորամանկ խալացիից ամենաբարձր, առասպելական գնով, հրամայեց իր խոհա-

բարին մաղթել այդ աքաղաղներին, և նրանց մսից Թիֆլիսի չխրթմա եփել իր համար, որ նրանց ձայնը իր և իր պաշտօնեաների փորերից լսէր այնուհետև:

Նորին Վսեմության դեսպանի զարմանքը և զայրույթը եղաւ յոյժ մեծ, երբ մի քանի օր յետոյ, հազիւ թէ փակել էր իր յոգնած աչքերը, յանկարծ ցնցուեց բոլոր մարմնով, երբ աւելի բարձրաձայն և աւելի բազմաթիւ աքաղաղների երաժշտութեամբ թնդաց օդը, նրա ականջի թաղանթները պատռելու աստիճան:

—«Դաւաճան խառակացին անպատճառ կամ Հայաջինջ Սուլթանի, կամ Ցարասպան Լենինի վարձկան գրգռիչ գործակալ է: Այսպիսի ինտերնացիոնալ վասերին պէտք է ոչնչացնել ճանճի պէս: Բայց առ այժմ ուրիշ ճար չկայ, պէտք է մեր դեսպանատունը փոխադրենք Հռոմի մի այնպիսի շրջանում ուր հաւեր և աքաղաղներ իրաւունք չունեն ոտք կոխել»:

«Պէտք է ոչնչացնել վասերին» մի նոր նշանաբան չէր յարգելի քաղաքագէտի համար:

ՄԱՐՕ ՆԱԶԱՐԲԷԿԵԱՆ

Հնչակեան դրօշին յաւէտ կառչած հին կուսակցական եւ վաղեմի բարեկամ Յակոբ Թիրաքեան, վերջերս պատճառեց ինձ անակնկալ հաճոյք՝ ղրկելով պատճէնները չորս նամակներին, որ գրել էի Աքիայի բերդից Տիկին Մարօ Նազարբէկեանին՝ նրա Աքիա, Հնչակեան բանտարկեալներին այցելութենէն յետոյ:

Մարօ, Հնչակեան կուսակցութեան հիմնադիրներից էր եւ նրա հաւատացեալների հեռաւոր եւ պաշտելի աստուածուհին էր, որպէս ապա մարդկութեան այլազան հաւատացեալները պաշտում են իրենց անտեսանելի եւ անհասանելի եւ անծանօթ բաղդաւոր Աստուածը:

Այս առաջին հայ յեղափոխականուհին, որ կածալից եւ փոթորկալից ասպարէզի մէջ, անձնուրաց եւ յամառ գործունէութիւն ունեցած է՝ ազատ արտասահմանէն մինչեւ թուրքական բանտերը, մերթ իբրեւ ղեկավար ար-

գային շարժումին, կամ եռանդուն քարոզիչ ըմբոստական գաղափարներու, եւ մերթ իբրեւ անձնուէր կազմակերպիչ Հայ Ազատագրական շարժման հերոսներու փաղանգին:

Մարօյի կեանքը բոլորանուէր զոհաբերութիւն եղած է իր սրտին մօտիկ եղող իտէալներին, որոնց համար ապրած է իր մանկամարդ կեանքին բովանդակ կորովն ու աւիւնը:

Ահա այդ նամակները.—

Աքիա, 26 նոյեմբերի, 1893

Պատուական Տիկին,

Ձեր առաջին նամակը իր խիստ համառօտ պարունակութեամբն հանդերձ ամենաընդարձակ ու երջանիկ տպաւորութիւն թողեց վրաս: Մեր տեսակցութեան պարագաներն այնպիսի մի սրտայայտ շրջանի մէջ տեղի ունեցան որ յարգանաց ու համակրութեան դրոշմը անջնջելի կերպիւ կնքուեցաւ իմ սրտիս վրայ ձեր անձի ու ձեր անուան նկատմամբ, հետեւաբար ձեր մի պարզ երկտողն իսկ շատ սիրելի պիտի լինէր ստանալ, ուր մնաց ձեր արտայայտած թանկագին զգացմունքը, որով շատ մեծ ուրախութիւն ունեցայ ամեն ուրախութիւնից զուրկ այս անիծեալ տեղում. Գաղափարի այն սուրբ եւ նուիրական ձգտումը, որ ձեր հոգին հրապուրեց իտէալի անարժան մարտիրոսներին

տեսնելու գալ, միանգամայն, ձեր ու իմ մէջ հիմնեց բարեկամութեան այնպիսի մի կապ, որի քաղցրութիւնը հայրենիքի վերածնութեան անխարդախ մշակները կարող են զգալ կատարելապէս. Այո՛, կը հաստատեմ որ կը տեսակցինք, նամանաւանդ այսուհետեւ երբ, առաւել քան երբէք, երեւակայութիւնս յափշտակուած է ինձ դէպի այն կողմ, ուր շատ եղբայրներ նախ դիմում են մեր երեւակայութեամբ ու ապա փոշմանում:

Ձեր երթալուց յետոյ մեր գլխին դժբաղդութիւնները շատացան. մեր մէջ կայ մի հրեշային եւ անբացատրելի կերպով անզգամ արարած՝ փաստաբան Գասպար Կիւլպէնկեանը, որ շարունակ աղքատ ու պարզամիտ հայ Մշեցի աքսորականներին անհանդարտ պահելու էր աշխատում. նորա անզգամութեան պատճառաւ մի արիւնահեղ, սարսափելի կռիւ եղաւ. մեր ոստիկանները ծեծ ուտելով փախան դուրս եւ փաստաբանը դուրս փախեց հակառակ նորեկ ոստիկանների ապաստանելով, միւս կողմանէ լուր տարածուեցաւ որ հայերը մի զինուորական հարկադրեալ են սպանել. այս պատճառաւ զինուորական հրամանատարը յարձակողական փողը հնչեցնել տուաւ. 500 զինուոր զէնքի կոչուեցան. կտուրների վրայից, մեր շրջապատ փողոցների մէջ եւ հրապարակի վրայ լցուեցան անհամար զօրքերը լցուած հրացանները մեր խանի վրայ ուղղած. մահմետական հա

տարակութիւնը մոլեռանդութեամբ լցուած ուտում էր մեզ սաղ սաղ փրթել. ամեն կողմէ գոռում էին «դուռ բացէք»: Զօրքերը եւ ոստիկանները կտուրներից մեր բակը մտնելով բացին եւ դուրս տարին մեզանից 5 հոգի. փողոցը մի տեսակ պատերազմի դաշտ էր. դեռ իմ սենեակի լուսամուտի առաջ հոգին հատած մեր հայերը արդէն գլխից մինչեւ ոտք արիւնի մէջ շաղախուած էին. տեսարանը՝ քամնելի էր. քարերով, փայտերով, հրացանի կոթերով կը դանակոծուէին չարաչար. այսպէս լինելու էիք այդ վայրկենին տեսնելու համար ամենածայրայեղ գազանութեան այդ ընթացքը, որ սոսկալի վայրենիներին միայն յատուկ է: Դժբախտաբար պատճառներն այնքան փոքր ու ցած են, որ այդ ոճիրները նախագործելու բարոյական ուժ չունին մեր խղճին առաջ, թէպէտ այպիսի չարիքներից լաւ օգտուելու առիթը փախցնելու միտքը չեմ ունեցած, ինչպէս որ հաւանօրէն տեսնէք «Ադամն ու Եւան Հայաստանի մէջ են ծնել» առածի «Հայաստանի» մէջ, ինչպէս որ դուք այսպէս մի անգամ ակնարկեցիք Զ.ի նկատմամբ::

Մաքուր աղքատ կեանքի մէջ ենք ընկել, հետեւաբար խելքի աղքատութիւնը ինձ էլ կարող է յատուկ դառնալ, այս պատճառաւ մասնաւոր պաշտպանի միւս մասն էլ կարօտեմ ձեր խոստացած նամակին համար, որին անտարակոյս սպասում եմ անհամբեր գոհունակութեամբ:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Իմ եւ Մ. Ի. դուրս գալը կարծեմ չի պիտի յաջողուի· ոստիկանապետը, որ ինձ համար արդէն ամէն խոստումներ տուած էր, մի քանի օր առաջ յանկարծակի մերժեց եւ երկու օր առաջ էլ Սէյիմին կանչելով խօսել պատուիրեց որ եթէ ուրիշ անգամ տեսնուելու լինի ինձ հետ, իրեն էլ կը բանտարկէ. այսուհետեւ մեկնելու օրը Սէյիմը գունատ ու գաղտագողի եկաւ պատմեց ինձ: Սակայն այս ամէն խստութիւններն իսկ նշանակութիւն չունին: Որպէս վարանգի նոյնպէս եւ տառապանքի առաջին քայլն է դժուարին ու անտանելին: 325 օր բանտային միայնակ, փակ, անվերմակ անանկողին ու անլուաց ապրեցայ Կ. Պոլսոյ բանտի մէջ, երբեմն մշտախաւար եւ երբեմն գարշահոտ որջանման սենեակներու մէջ. ուրեմն այսպիսի աննշան զրկանքներ ինչ արժէք կրնան ունենալ. ձեզ նման անգին ընկերներու երբեմնակի նամակները կրնան բոլորովին մոռցնել տալ մեզ մեր ամենադաժան տառապանքները եւ միանգամայն քաղցրացնել մեր կեանքը:

Կը խնդրեմ իմ սրտագին համակրանքը յայտնէք ձեր ամուսնին, որ իր կեանքն ու առողջութիւնը դրած է այն սուրբ սեղանին իբր զոհ: Մնամ միշտ ամենախորին համակրանօք

Գ. ՏՕՆԱՊԵՏԵԱՆ

Կ. Ն. կարօտով բարեւում է: Խանդատին բարեւ:

ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

XX

Սիրելի Բարեկամուհի.

Անսահման ուրախութեամբ ստացայ ձեր առաջին նամակն, որ ուղղակի իմ հասցէին էր. բրօշիւրը ստացել եմ, իսկ յիշուած նամակները չեմ ստացել: Այս նամակս ստանալուց յետոյ յոյս ունիմ թէ նամակաւ ինձ պիտի բարեհաճիք գրել այն ամենն ինչ որ արդէն նախապէս խնդրած էի. այն է տէրութեանց իւրաքանչիւրի տրամադրութեան աստիճանը հայ խնդրի նկատմամբ. հայ խնդրի հասունութեան աստիճանը. գործը կարո՞ղ է պատերազմի յանգել թէ ոչ. վերջապէս ինչ որ հետաքրքրութեան եւ, նամանաւանդ կարեւորութեան արժանի է:

Մ. ը իմացայ թէ Կ. Պօլսում բանտարկուած է տակաւին, այս պարագային աւելի լաւ էր եթէ ազատուած չլինէր. իսկ գալով մեզ շատ փոխուած է մեր ամբողջիս վիճակը սրանից չորս օր առաջ: Սրանից ութ օր առաջ ընդհանուրիս ըստորագրութեամբ գրուած մի հեռագիր պատրաստուած լինելով մեծ Եպարքոսին ուղղեալ՝ ամէն վտանգ աչքի առաջ առնելով եւ միայնակ հեռագրատուն տարի եւ տուածս սպառնալիքին վրայ հեռագրատան տնօրէնը զիջաւ հեռագիրը զարնելու. հեռագրի մէջ ասուած էր այն ամենն ինչ գրուած էր բրօշիւրի մէջ «հայելով որ օրէնքը հաւասար է քրիստոնէի եւ մահմետականի

նի համար, սակայն 4—5 տարի է օսմանեան օրէնքը իբր հալածանաց եւ զրկանաց զէնք կը գործածուի մեզ նկատմամբ, քրիստոնեայ եւ նամանաւանդ հայ ըլլալնուս համար. Հակառակ օրինաց մենք թիապարտի պէս բանտարկեալ, աշխատութենէ եւ ապրելու միջոցներէ արգիլեալ կը պահուինք եւ բռնադատուած ենք մեր բանտա—բնակարանի վարձը վճարել եռապատիկ գնով. մինչդեռ մահմեդական բերդապետները միշտ փախստականներ ունենալով հանդերձ, օրէնքի իրաւունքէն դուրս շնորհներ ալ կը վայելեն; ոստիկանութիւնը մեզի բացօթեայ, անօթի, անդեղ եւ անբժիշկ պահելով մենէ քանի անձինք բանի կերպի մահացուցած է, եւ մեզ եւս մեռցնելու վրայ է փախստական մահմեդականներու յանցանքը մեզի քաւել տալով քանի որ Աքքա կայսերական կառավարութեան երկիրներէն է, կը խնդրենք օրէնքի անչառ գործադրութիւնը, եթէ չուզուիր ծանր անեղութեանց առիթ տալու»:

Թէպէտ Մեծ Եպարքոսը խիստ հեռագրով հրամայեց արձակ թող տալ մեզ բաց օդին, սակայն ոստիկանութիւնը այդ հրամանէն 3 օր վերջ հազիւ աննշան արտօնութիւններ տուաւ, եւ ոստիկանութեան պետի կարգադրութեամբ հեռագրատունը չի ընդունիր մեր հեռագիրներն վերստին բողոքելու Եպարքոսին թէ՝ իր հրամանը կատարելապէս չէ ընդունուել. հիմա օրական 3 ղրշ. է տրուած մեզ իբր սննդի վարձ

եւ հայցի վրն. այս երեք ղրուշով վերջապէս անօթութեան ճանկից ազատուած կարող ենք համարուել:

Սրանից մի քանի շաբաթ առաջ շատ չարչարանք քաշեցինք. ոստիկանութիւնը կամաւ փախցնել տուաւ այն երկու մահմետականները, որոնք ծեծած էին Դամասկոսի անգլիական հիւպատոսին, նմանապէս եւ երեք ուրիշ մահմետականներ, թէպէտեւ գոզքս բերդից դուրս ելք երթալու ազատ էին. այս բանը իր պատրուակ բռնելով մեզ շատ չարչարեցին եւ Պոլսի գրեցին հրաման բերելու մեզի իր թիապարտ պահելու համար:

Շատ շնորհակալ եմ ղրկած 25 ռուբլին համար. անցեալ տարի պարսկական հագուստով հանած լուսանկարս ուղարկում եմ ձեզ, հիմա քանի որ ձեր շնորհիւ միջոցներս ներում են լուսանկարս հանելով կը ղրկեմ մի երկու շաբաթ յետոյ: Ամենաջերմ եւ կաթոգին համբոյրս մեր պաշտելի Աւօյին, իր նամակը կը տամ կարդալու Զ. ին եւս եւ պատասխանը ի մօտոյ կը ղըրւի: Այսօր Կ. ից նամակ առի, գրում է թէ երեք ամիս յետոյ պիտի մեկնի դէպի Ռուսիա:

Սեղմելով ձեր թանկագին ձեռքը, Ձերդ

Գ. ՏՕՆԱՊԵՏԵԱՆ

12 25 95

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Աթէն 13—25 յուլիս 1895

Ամենաթանկագին Ընկերուհի,

Երէկուան օրը մեծ բաղդաւորութեամբ բակաւ ինձ համար եւ մեծագոյն բաղդաւորութեամբ վերջացաւ ընդհանուրիս համար: Այնքա՜ն անհամբերութեամբ սպասուած ձեր նամակը եւ միայն կարող եմ զգալ թէ որչափ խորին գոհունակութիւն պատճառեց՝ ազատելով զիս տանջող անստուգութիւնից: Մինչեւ երեկոյ խոր ուրախութեան ճառագայթ այդ նամակին լուսաւոր պահեց իմ մտատանջ էութիւնն եւ կէս գիշերին այդ քնքոյշ ճառագայթին յաջորդեց գերութեան խեծից ազատուելու փառաւոր արշալոյսը, որին այնչափ կը տենչար մեր տառապեալ էութիւնը. եւ այսպէս ձեր բաղձալի նամակի ստացումը լծորդուեցաւ մեր ազատութեան աւետիսին հետ՝ անմոռանալի յիշատակ մը դրոշմելով իմ մտքիս վրայ:

Այս գիշեր հեռագրատան պաշտօնեայն գալով ինձ իմաց տուաւ թէ՝ նոյն րոպէին հեռագիր եկաւ թէ կայսերական իրատէով ազատ կը յայտարարուին բոլոր հայ քաղաքական յանցաւորները: Կառավարութիւնը այս առաւօտ հաւանօրէն պաշտօնապէս հաղորդէ մեզ եւ ազատ արձակէ: Ես այժմ չգիտենք թէ այս ազատութիւնը հետեւանք է խնդրոյ լուծման եթէ ոչ արդիւնք այն բողոքներին, որ յիշած եմ միւս

նամակիս մէջ: Պէտք է այստեղ աւելցնեմ թէ Եպարքոսի հեռագրին մէկ պատճէնն էլ Պատրիարքին նշանակուած էր· միանգամայն մի ընդարձակ նամակ էլ Պատրիարքին գրեցինք մեր մանաւանդ վերջին օրերի դառն զրկանքների մասին, խնդրելով որ ամբողջապէս ծանուցանէ անգլ· դեսպանին եւ Բ· Դրան Աքխայի կառավարութեան այն բարբարոսութիւնը եւ մի երկար հանրագիր էլ գրեցինք Բերութի անգլիական ընդ· հիւպատոսին նկարագրելով այն խարդաւանութիւններ ու վայրենութիւններ որ ի գործ դրուեցան վերջերս մեզի ոչնչացնելու անվրիպելի նպատակաւ, յայտարարելէ յետոյ թէ մեր կեանքը վտանգի մէջ է, ի սէր անգլիական ազգին Մեծին Բրիտանիոյ պաշտօնական ուշադրութիւնը հրաւիրեցաւ այս դէպքերի մասին: Արդէն երկու օր առաջ Կ· Պոլսից հրաման եկաւ հեռագրով որ եթէ հայ բերդարգեալ հիւանդանալու ու մեռնելու լինի, եւրոպական բժիշկ եւս հրաւիրուի ռափորտին ստորագրելու: Դուք այնտեղ ինձանից լաւ կարող էք իմանալ թէ մեր այս ազատութիւնը երկուքից ո՞ր կէտին կարելի է վերագրել: Պաշտօնապէս իմանալուց յետոյ կը գրեմ:

Սիրալիր համբոյր Աւօյին:

Սեղմելով ձեր ձեռքը, Ձերդ

Փ. ՏՕՆԱՊԵՏԵԱՆ

Երեք ու կէս տարի եղաւ ձերբակալութիւնս եւ մատնիչս Թիւթիւնճեանի չարաչար մահուան հետ ես կեանք եմ տանում վերստին, հաւատալով որ Նազըմ բէյը նորա ներկայութեամբ ինձ գիտել տալու թէ բանտի մէջ պիտի մեռնիմ, ոչնչանամ: Ընդհակառակը պատահեցաւ:

***

25 Մարտի 1895

Պատուական Բարեկամուհի·

Մեր բարոյական յաղթերն այնչափ սաստկացել են փոխանակ նուազելու, որ չեմ կարող բացատրել ձեզ· արդէն տեղեկացրուած է ձեզ, որ Աքքայի հայ քաղաքական աքսորեալները իրենց կրած հարստահարութեան ու չարչարանքի համար խնդրագիր ուղղած են Կ. Պոլսոյ Պատրիարքին: Դատական նախարարը այս առթիւ պատասխանած է Հայոց Պատրիարքին թէ հրաման ուղղուած է Պէյրութի կուսակալութեան որպէսզի « Հայ աքսորականների հանգստեան ամէն տեսակ դիւրութիւն շնորհուի, եթէ առուգիւ կը *կարօտին օրապահիկի յաւելման, կանոնի ներած չափովը յաւելում լինի, ինչպէս նաեւ թոյլ տրուի ուրիշ յարմար գործով ու արհեստով զբաղելու »:*

Ինչպէս գիտէք Թուրքիոյ պատժական կանոնագրի համաձայն, աքսորականք եւ բերդարգելեալք բերդաքաղաքներում բնակելու, արհես–

ատավ գրավելու եւ օրապահիկ ստանալու իրաւունք ունին, իրաւունք որ վայելում են Թասասի եւ Աֆրիկեան Տրիպոլսոյ հայ աքսորականները, ինչպէս նաեւ բոլոր մահմետականները անխտիր: Աքքայի կառավարութիւնը մինչեւ աներեւակայելի բարբարոսութեամբ վարուած է անցեալ հայերուն հետ 4 տարիէ ի վեր: Չը նայելով մէկ ամիսէ ի վեր Դատական նախարարն յիշեալ հրամանը հեռագրած է Պէյրութի կուսակալութեան, սակայն ո եւ է բարեփոխում տեղի ունեցած չէ Աքքայի հայ աքսորականների վիճակի նկատմամբ:

Մատթէոս Գասպարեանք մայիս 11 թուականաւ եւ 163 համարաւ Դատական նախարարի Պէյրութի կուսակալութեան ղրկած հրամանին իմաստը գրած է Աքքայի հայոց եւ յոյս կը յայտնէ թէ Դատական նախարարի հրամանը արդէն գործադրուած լինելու է:

Աքքայի հայ քաղաքական աքսորեալները հետեւեալ պատասխանագիրն ղրկած են Գասպարքին մայիս 26 թուականաւ.

«Մեր խնդրագիրը խարդախուած է տեղական իշխանութեան կողմէ, որ մեր նամակներու համար մասնաւոր մանիչ – քննիչ մը հաստատած է, որովհետեւ մեր նախկին խընդրագիրը զեղծմանց, ջրկանաց եւ բարբարոսութեանց այնպիսի փաստեր կը պարունակէին որ նոյն հիման վրայ կարելի էր ոչ թէ խնդրել

այլ պայծառ մտածողոյց ընելով՝ պահանջել օրէնքի գործադրութիւնն, որ կառավարութեան մը արժանիքն եւ արդարադատութեան կշիռը կը պատկերացնէ իր մէջ: Շատ երկար կը լինի մի առ մի կրկնել տեղական կառավարութեան ընթացքը, սակայն ընդհանուր առմամբ խօսելով մեր խղճի վրայ կ'երդնունք, որ անբացատրելի բարբարոսութեամբ կը վարուին մեզ հետ, ամէն տեսակ ճնշումն, ամէն տեսակ հարստահարութիւն գործադրուած են եւ կը գործադրուին մեր վրայ եւ ամէն տեսակէ բարոյական տառապանք ջանացեր եղած են հնարել՝ զմեզ յուզել եւ վրդովեալ պահելու անվրիպելի դիտումով. եւ այս ամէն հաւաքական ջանահնութեանց միակ եւ անհերքելի նպատակակէտն եղած է աստիճանաբար հիւծմամբ սպաննել մեռցնել զմեզ. այս տեսակ մահացումը շատ ու շատ ցանկալի է քան եթէ կառավարութիւնը դատարանի միջոցաւ ի մահ դատապարտուած լինէր մեզ, մինչդեռ այս կացութեամբ յամր մահուան դատապարտուած կը համարինք զմեզ Օսմանեան կառավարութեան կողմէ. եւ այս չարչարանքը կը տրուի մեզ որովհետեւ հայ ենք եւ հայ քաղաքական յանցաւորի ամբաստանութիւնը կը կրենք: Ասկէ աւելի ուրիշ պատճառ ու բացատրութիւն չէ կարելի վերագրել այսպիսի կառավարութեան նպատակին ու վարմունքին: Քանիցս ուղեցինք ու ձեռնարկեցինք Վեհափ. Սուլթանին հասցնել այս զրկանքներն ու ա-

պօրինութիւնները, սակայն իշխանութիւնն խստիւ արգիլեց եւ նոյն արգելքը յայտարարեց հեռագրական վարչութեան, որ ըստ ամենայնի համաձայն է իշխանութեան հետ: Այսօր միւթէսարրիֆն առաջին անգամ ըլլալով, մեր վիճակն իր թէ քննելու եկաւ. հաղորդեցինք մեր զրկանքներն, ծայրայեղ ապօրինութիւնները. բացօթեայ մնալը, մեր բանակի վարձն մեր կողմէ վճարելն կրկնակի գնով. ցոյց տուինք այն խտրութիւնը որ կառավարութիւնը կը դնէ քրիստոնեայ եւ մահմեդական պաշտօնեաներու միջեւ եւ վերջապէս դատական նախարարի հրամանի գործադրումը խնդրեցինք:

Միւթէսարրիֆը պատասխանեց թէ «դուք մահուան արժանի մարդիկ էք, ուստի անկարելի է որ մահմետական բերդարդեաններու աչքով կարողանանք նայել ձեզ վրայ. ձեր վիճակի նկատմամբ չեմ կրնար ոեւէ բարեփոխութիւն ընել. Աստուծոյ աղօթեցէք որ ազատուիք. առանց ազատուելու հանգիստ կեանք չէք կրնար ունենալ այսուհետ»:

Միւթէսարրիֆի այս անդիւանագիտական եւ բուռն խօսքերը կարելի է վերագրել այն պարագային որ մեր միւթէսարրիֆը չէյխ մ՚է: Այս խօսքերէն կը հետեւի որ դատական նախարարը բնաւ այդպիսի հրաման մը չէ դրկած եւ արդէն նախարարը ինչպէս կը գրէ թէ հրաման ղրկած է որ մեր օրապահիկէ վրայ յաւե-

լուծն լինի քանի որ արդէն բնաւ օրապահիկ չէինք ստանար, բայց միայն մօտ 300 դրամ հաց ուտելով խառն, զոր Փէլլահները անգամ չեն ուզեր գնել եւ ասոր 15 փարայի փոխարինութեամբ: Իսկ եթէ նախարարը յիրաւի այդպիսի հրաման մը տուած է Պերութի կուսակալութեան, յայնժամ կը հետեւցնենք որ այստեղի կառավարութիւնը որ ցարդ չէ գործադրած Թուրք ազգութեան օրէնքն ու Սուլթանի իրատէն, այս անգամ եւս խուլ կը մնայ գաւառական նախարարի հրամանին: Սակայն կ'երեւի Կ. Պոլսոյ կառավարութիւնը սխալմամբ մեզ Թուրքիոյ հողէն դուրս քաղաք մ'է աքսորած, քանի որ հոս Կ. Պոլսոյ օրէնքն ու հրամանը չեն յարգուիր, ուստի կը խնդրենք որ Թագրիրով մը զեկուցանէիք գաւառական գործոց ս. նախարարին, որպէս զի իրենց սխալմունքը դարմանելով մեզ անդամներէ Թուրքիոյ հողին վրայ այնպիսի աքսորավայր մը, ուր տեղական կառավարութիւնը հնազանդէր Սուլթանի իշխանութեանը եւ ուր յարգուէր եւ գործադրուէր Թուրքիոյ գաւառական գործոց նախարարի հրամանը, որովհետեւ Աքքայի կառավարութիւնը կամ սա ոչինչ կը համարէ Թուրքաէրութեան օրէնքը եւ սա ոչինչ կը համարէ Սուլթանի իրատէն, կամ փոխադարձ համաձայնութեամբ կազմակերպուած է մեր նպատակաւոր կորուստը »:

*
**

ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

Հայաստանի կոտորածը Եւրոպայի լրագիրներին եւ մի կարգ դիւանագէտների յիշողութեան առջեւ բերել է Բուլղարիոյ կոտորածը. սակայն աշխարհ բնաւ միտք չէ բերում այն զարհուրելի կոտորածը որ մօտ 40 տարի առաջ Թուրք կառավարութիւնը ի գործ դրաւ քիւրդ Բէտրհան փաշայի ձեռքով Վանայ կուսակալութեան Տիար Տխուփ քրիստոնեայ լեռնականների ահռելի կոտորածը. այն ժամանակ 30,000 նեստորականներ կոտորուեցան եւ այն ժամանակ այդ բարբարոսութեանց զոհերի կտրուած ծծերը միայն 10–15 ջորիի բեռ եղան որք ալ դրուելէ յետոյ ղրկուեցան Ռուսիա ռուս կառավարութեան գթութիւնը հրաւիրելու համար այդ քամնելի զոհողութեան վրայ. ահա այն ժամանակն է որ Անգլիոյ եւ Ռուսիոյ ուշադրութիւնը, ի դէպս, գրաւում են այդ լեռնականները, որ այսօր անմերձենալի լեռներու մէջ ապաստանաւորուած են՝ փախուած նոյն սարսափելի եւ արդար վրէժխնդրութեամբ. բայց մահմեդական կրօնին, որպէս Բէտրհան փաշա նոյնպէս Բուլղարիոյ կոտորածի հեղինակ Շէֆքէթ փաշա եւ Սասունի Զէքի եւ Թահսին փաշաները նախկին եւ պաշտելի սուրբեր են Թուրքաց համար. մեղ եւս արդեօք չէ՞ կարելի այդպիսի կրօնք ու դաւանանք համարել որ մարդասպանը սրբայութիւն կ'երթայ:

Արխայի Տիֆամէր գիւղին մէջ սարիկան

գինուորները սպանեցին Սելիմ խոյն Սալիհ նիժ–մի անուն կաթոլիկ մը. շատ գիւղացիներ ձերբակալեցին մայրն որ Աքխա եկած էր իր որդւոյն ազատման համար բողոքելու, խեղճ կինը ասոր վրայ ձերբակալուելով բանտ դրուած է. գիւղը ոստիկաններ լեցուելով ամէն բարբարոսութիւն կը գործեն քրիստոնեայ գիւղացիներու նկատմամբ: Աքխայէն մի քանի երիտասարդներ փախան Եգիպտոս, զի ամբաստանուած են իբր յեղափոխական գաղտնի խումբի անդամներ որ Եգիպտոսի խաւարար թերթեր կը ստանային իբր թէ գաղտնօրէն:

Մեծ կարօտով բարեւում եմ սեղմելով ձեր ձեռքը: Ձերդ՝ ՎԱՂԻՆԱԿ

ՍՈՒԼԹԱՆԻ ԽԱԼԻՖԱՅՈՒԹԵԱՆ ԿԵՂԾԻՔԸ

Մեր ժողովուրդը, ընդհանուր առմամբ, այն համոզումն ունի թէ Հայը յարգուած ու գուրգուրուած մի տարր է յաչս Եւրոպայի, իսկ Թուրքն ատուած ու արհամարհուած: Այս անճշդութեան համար Եւրոպան յանցաւոր չէ, Եւրոպայի մէջ ճիշդ է, ատեն ատեն եղած է կարեկցական հով ի լուր հայ ժողովրդեան ջարդի, բայց մեր պատմութենէն կը տեսնուի թէ այդ՝ կարեկցական հովը գոյութիւն ունէր նաեւ Ռուբինեանց Հարստութեան միջոցին: Պարզ է սակայն որ չքաւոր, ծեծ ուտող եւ մուրացկան մարդը, ինչ ալ ըլլայ հաւատար յարգանք չի կրնար վայելել դիրք, հարստութիւն եւ ծանօթութիւն ունեցող՝ թէեւ ոչ-բարեհամբաւ՝ մարդու նման: Ազգերն եւս այնպէս են: Թուրքը Եւրոպայի աչքին մեծ եւ կարեւոր պետութիւն մ'է եւ նորա թագաւորը իբր կրօնապետ մահմետական աշխարհին:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, եւ մանաւանդ զինադադարէն յետոյ, անգլիական եւ յատկապէս Փրանսական մամուլի լեզուն մինչ շատ կծու էր Գերմանիոյ դէմ, անհամեմատ մեղմ էր Թուրքիոյ վերաբերմամբ:

1920ի սկիզբէն ի վեր մի առանձին Թրքանպաստ շարժում սկսաւ պատճառաբանելով թէ Թուրք ցեղի համեմատաբար գերազանց թիւր Փոքր Ասիոյ մէջ եւ մանաւանդ Սուլթանի խալիֆայութեան դիրքը յուշ մահմետականութեան, որոց մեծամասնութիւնը կ'ապրէին Փրանսական եւ անգլիական տիրապետութեան ներքոյ, եւ թէ հարկ էր նոյն կրօնական զգացումը յարգել, մինչդեռ կը յարգէին կաթոլիկներու զգացումը դէպի Հռոմայ Պապին ցոյց տուած իրենց քաղաքականութեան մէջ:

Ֆրանսական մամուլն միշտ Թրքապաշտպան եղած է, իսկ Անգլիոյ մէջ եթէ հայոց ի նպաստ կային երկու աչքի զարնող հանրային մարդիկ՝ Լորտ Բրայս եւ Լորտ Ռոպէրթ Սէսիլ, Թուրքաց ի նպաստ կային բազմաթիւ եւ շատ աւելի ազդեցիկ մարդիկ, որոց մէջ առաջին դերակատարն էր Հնդկաստանի նախարար Սամուէլ Մոնթակիւ, որ մինչեւ իսկ մամուլի մէջ պայքարի ելաւ Լորտ Ռոպէրթ Սէսիլի դէմ պատճառաբանելով Սուլթանի խալիֆայութեան փաստը եւ սպառնալով թէ Բրիտա

նական կայսրութեան մէկ չորրորդը մահմետական էին եւ թէ կառավարութիւնը խոստացած էր նոյն պաշտպանել Խալիֆան եւ իր կայսրութիւնը: Ցաւալին հոն էր որ Լորտ Բրայս Լորտերու ժողովին մէջ եւ Լորտ Սէսիլ փառլամէնթի մէջ իրենց յայտարարութեամբ եւ իրենց ու իրենց հետեւողներու ստորագրութեամբ նախապարագայեալին ներկայացուած Թուրքիոյ պաշտպանման աննպաստ յիշատակագրին մէջ կ'ընդունէին Սուլթանի խալիֆայութիւնը, բայց միայն կ'առարկէին թէ՝ խալիֆայութեան աթոռը կարող էր փոխադրուիլ Գոնիա կամ Բրուսա: Աւելի զարմանալի չէր, եթէ «Թայմս» եւ նմանօրինակ թերթեր իսկ զանս Սուլթան խալիֆային կատարեալ լռութեամբ հալածութեան նիւթ ըրած էին մահմետական աշխարհը չվիրաւորելու խնդիրը:

Եւ սակայն, մահմետական կրօնագէտներու կամ նոյն իսկ անգլիական համայնագիտարանի ընթերցումէն շատ դիւրաւ կարելի էր ապացուցանել թէ՝ Թուրքիոյ Սուլթանի խալիֆայութեան աթոռը եւ նորա կրօնական իրաւասութիւնը քաղաքական կեղծիք մ'էր եւ հակառակ նոյն իսկ Մուհամմէտի հրամանին եւ իսլամաց օրինաց:

Փետրուարի 25ի օրը որոշուած էր փառլամէնթի մէջ վիճաբանութեան՝ Սուլթանի քաղաքական եւ կրօնական իշխանութեան մա-

ուին: Մէկ կողմէ նախարարութեան էր լինելու խօսողն, որ մեծապէս ներշնչուած էր Սամուէլ Մոնթագիւի ազդեցութենէն եւ միւս կողմանէ, գլխաւորն էր Լորտ Ռոպէրթ Սէսիլ, որուն հարկ տեսայ օր առաջ յղել իսլամական կրօնի այն բոլոր փաստերն ու վկայութիւնները, որոնցով բաց ինքեան կը հերքուէին Սուլթանի խալիֆայութիւնը եւ ցոյց կը տրուէր թէ այդ կեղծիքը յերիւրուած էր Թուրք քաղաքագէտներու կողմէ լոկ քաղաքական նկատառումներով:

Լոյդ Ճորճ, այդ օրուայ ճառին մէջ խակապէս կրկնեց Սամուէլ Մոնթագիւի պաշտպանողականը: Առաջին անգամ լինելով այդ օրը Լորտ Ռոպէրթ Սէսիլ հերքեց Սուլթանի խալիֆա լինելու փաստաբանութիւնը: Նոյն ամսոյ 27 թուականաւ պատասխանելով ինձ, գրեց ի միջի այլոց հետեւեալ խօսքերը.—«Յոյժ «բազում շնորհակալութիւններ ձեր վկայութեանց համար, եւ շատ երախտապարտ եմ «ձեզ զանոնք ինձ հաղորդելնուդ համար»:

Այդ բոլոր փաստերը Սուլթանը խալիֆա չէ վերնագրով մի գրքոյկի մէջ հրատարակելով, 7,000 օրինակ տարածուեցաւ ամենուրեք: Նախարարութեան քարտուղարն Մարտ 8 թըւականով պատասխանեց թէ Գ. Լոյդ Ճորճ մեծ շնորհակալութեամբ ընդունած էր գրքոյկը եւ նկատողութեան առած: Արտաքին Գործոց գեր նախարար Թիլլի, Մարտ 11ին նոյն իմաստով

մի պատասխան տուաւ յանուն Լորտ Քըրզընի: Իսկ Երկրագործ. նախարարութեան Ատեանի մնայուն նախագահը, որոյ անձնական բարե–կամութիւնը կը վայելեմ, Մարտ 13ին գրեց.—
«Շնորհակալ եմ ձեր գրքոյկներուն համար,
«զորս սիրով յանձնեմ պատշաճագոյն անձանց.
«Ինչ որ դուք կ'ըսէք, յոյժ ճշմարիտ է: Սուլ–
«թանն այնքան խալիֆա չէ որքան դուք եւ ես,
«այդ ամէնն մի անզգամ եւ նորագոյն խարէ
«ութիւն է խարդախուած քաղաքական նպա–
«տակներու վրայ, եւ ինչպէս եղեր է որ աւելի
«առաջ եւ աւելի ընդարձակօրէն չէ հրատա–
«րակուած, չեմ կարող հասկնալ: Սատրիկ
«մտատանջ եմ ի տես բերող ընդհանուր գրու–
«թեան յատկապէս Հայաստանի մասին»:

Այդ գրքոյկի մասին նամակներ ստացուե–ցան նաեւ Ամերիկեան դեսպանէն, Քէնթըր–պըրիի արքեպիսկոպոսէն, Լոնտոնի եպիսկո–պոսէն Հնդկաստանի նախկին նախարար Լորտ Քիմըրլիէ, ինչպէս նաեւ «Թայմս»ի եւ «Մոր–նինկ Բօսթ»ի խմբագիրներէն:

Լորտ Քրիւ, Լորտ Քիմըրլի եւ Լորտ Քըր–զըն Լորտերու ժողովոյ մէջ սկսան հերքել Սուլթանի խալիֆայութեան իրաւունքն եւ մամուլի մէջ եւս այդ ուղղութեամբ գրու–թիւններ սկսան երեւան գալ: Բայց Թուրքիոյ բարեկամներուն ի գործ դրած եռանդն անհա–մեմատ մեծ էր եւ նոքա յաջողեցան Հնդկա–տանէն յատկապէս եկած Խալիֆայութեան

Պատուիրակութիւնը ներկայացնել Վարչապետին եւ յանուն Հնդկաստանի մահմետականութեան՝ իրենց դատի ծանրութիւնը լուսաբանել: Փարլամէնթի մէջ թէեւ ամենք խնդիր ըրին, որ Պատուիրակութիւնը չընդունուէր վարչապետէն բայց այդ առարկութիւնը մերժուեցաւ, եւ ընդունելութիւնը որոշուեցաւ տեղի ունենալ Մարտ 18ին:

Մարտ 17ին հետեւեալ նամակը գրեցի վարչապետի մասնաւոր քարտուղարին·

«Սիրելի Տէր,

«Շատ շնորհակալ եմ ձեր ամսոյս 8 թուա-
«կիր նամակին համար զոր բարեհաճած էիք
«գրել ինձ ըստ ցանկութեան վարչապետին,
««Սուլթանը Խալիֆա չէ» գրքոյկիս վերա-
«բերմամբ:

«Վաղն առաւօտ Հնդկական Պատուիրա-
«կութիւնը պիտի ընդունուի Վարչապետէն:
«Եթէ Պատուիրակութեան պետն Պր. Մա-
«համմէտ Ալի ճշմարիտ մահմետական է,
«պարտի գիտնալ թէ՝ Թուրքիոյ Սուլթանը
«ոչ աւելի խալիֆա է քան ինքն Մահամմէտ
«Ալին:

«Յուսամ երախտապարտ պիտի լինեմ ձեզ
«եթէ բարեհաճիք բերել հետեւեալն Վարչա-
«պետին ուշադրութեանը:

«Խրիմի պատերազմի նպատակներուն եւ
«դիտաւորութեանց մասին, անոր անխուսա-
«փելի դաշնակէն յետոյ՝ հակառակ Ն. Վ.

« Թագուհիի կամքին, Գահակից Իշխանն ուղ-
« ղեց մի յիշատակագիր Նախարարաց Դահ-
« լիճին, հետեւեալ նշանակիչ պարբերու-
« թեամբ.

« Պատերազմը հարկ է յառաջ տանել ան-
« կաշկանդ պարտաւորութիւններով հանդէպ
« Բ. Դուռը, (Օսմ. կառավ.), եւ հաւանօրէն
« պիտի յաջողուի ձեռք բերել կարգադրու-
« թիւններ աւելի համաձայն Եւրոպայի Քրիս-
« տոնէութեան ազատութեան եւ քաղաքակր-
« թութեան լաւ ըմբռնուած շահերուն, քան
« թէ Միւսլիմանի աղէտ, բարբարոս եւ բռ-
« նակալ լուծի վերադարձումը Եւրոպայի ամե
« նաբարգաւաճ եւ սիրուած մասին վրայ:
(«Կեանք Գահակից Իշխանին ր. եր. 521–5339:

« Բուլղարական կոտորածները, 1878ի
« Ռուս-Թրքական պատերազմը, 1894—1896ի
« Հայկական կոտորածները, Յոյն-Թրքական
« պատերազմը, 1914—1918ի մեծ պատերազմը
« եւ Հայերի բնաջնջումն ի Թուրքիա են ուղ-
« ղակի եւ անուղղակի հետեւանքներն այդ ա-
« ղէտ, բարբարոս եւ բռնակալ լուծի վերա
« դրութեանը:
« Այն մարդը, որ կ'երեւի փողն առաւօտ
« Մեծն Բրիտանիոյ Վարչապետին առաջ, կը
« փաստարանէ մի անգամ եւս վերադարձութիւնն
« այն իշխանութեան, որ անէծք մը եղաւ
« մարդկութեան, ինչպէս էդմոնդ Բըրք 120

«տարի առաջ կանխագիտեց Անգլիոյ Փառլա-
«մէնթի մէջ յետագայ բառերով.

«Այս վայրենիները ունին վատթարներն
«ի՞նչ բրած ունին Եւրոպայի ազգութեանց
«հետ բայց եթէ ախտել պատերազմ, սուր եւ
«արածութիւն նոցա միջեւ: Այն նախապար-
«ները եւ այն քաղաքականութիւնը որ պէտք
«տայ Թուրք ժողովրդեան ոեւէ կէտ Եւրո-
«պայի մէջ, պիտի արժանանայ ապագայից
«բոլոր բանադրանացն եւ անէծից: Այն ամէնն
«որ սուրբ՝ է կրօնի մէջ, այն ամէնն որ բարո-
«յական է եւ մարդասիրական, կը պահանջէ
«խորշումն ամէն ինչէ որ կը ձգտի ընդարձա-
«կել այդ անգութ եւ ապականիչ կայսրու-
«թեան զօրութիւնը:»

Մարտ 18ին, Մուհամէտ Ալի շատ փայլուն ճարտասանութեամբ եւ ընդարձակօրէն Լոյտ Ճօրճի առջեւ արտասանած իր ճառով ըսաւ թէ՝ Թուրքիոյ Սուլթանի կրօնական հեղինակութիւնն անսահման է ընդհանուր մահմետական աշխարհի վրայ, եւ թէ՝ ոեւէ անձգութիւն նորա խալիֆայական եւ պետական իրաւանց վրայ կարող էր վրդովել իսլամութիւնն եւ մասնաւորապէս ամբողջ Հնդկաստանը:

Վարչապետի պատասխանը կարճ էր եւ նպատակակէտին ուղղեալ: Երբ Մուհամէտ Ալի ուզեց վերստին խօսիլ, Լոյտ Ճօրճ սննա-կի զուտր ցոյց տուաւ Հնդկաստանի Խալիֆա-

յութեան Պատուիրակին եւ ինք միւս դուռնէն մեկնեցաւ քովի սենեակը:

Երեք օր օր յետոյ, Մուհամմէտ Ալի մի ժողով գումարել տուաւ Էքսթըր Հօլի մէջ եւ կատաղի սպառնալիքներ ըրաւ Լոյտ Ճորճի հասցէին ըսելով, թէ նորա իրեն ըրած նախատինքը պիտի համարուէր նախատինք Իսլամութեան դէմ եւ թէ Հնդկաստանի եւ այլ տեղերու մահմետականները ոտքի պիտի կանգնէին ընդդէմ Բրիտանական Կայսրութեան ի պաշտպանութիւն Խալիֆայի իրաւանց:

Այսպէսով քաղաքական հորիզոնէն անհետացաւ Թուրքիոյ բարեկամաց խալիֆայարանութեան ահեղակերպ խրտուիլակը:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԽՈՐԷՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ

1932ի Հոկտեմբեր 16ի կէս օրին մեկնեցի Խորհրդային Միութեան Ջերջինսկի փոքր նաւը նստելու, որ խարսխած էր Լոնդոն Կամուրջի նաւակայանում: Ինձ ընկերակցում էին անգլիացի կինս եւ նրա եղբայրը եւ կինը: Այդ րոպէին մտքովս անցնում էր թէ եթէ ունեցած չը լինէի այդ անսահմանօրէն հաւատար եւ անձնուէր կինը, տարիներ առաջ իջած պիտի լինէի ի գերեզման, այդ օր պիտի չունենայի ոտք դնել այդ նաւի վրայ դէպի Հայաստան ուղեւորելու երջանիկ երեւակայութեամբ:

Պաշտօնեաներից մէկը ինձ առաջ եկաւ եւ յայտնեց թէ նաւի մեկնումը յետաձգուած էր մինչ հետեւեալ երեկոյ, թէ ես կարող էի մնալ նաւի վրայ, կամ թողել պայուսակս ինձ յատկացուած խցիկում, եւ վերադառնալ հետեւեալ երեկոյ: Ես բնականաբար նախադասեցի վերջինը:

MRS. MARY TONAPETEAN

ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

Երբ հասանք տուն, գտայ մի հեռագիր Մարսիլիայ Առաջնորդ Գրիգորիս Եպիսկոպոս Պալաքեանից յայտնելով թէ ես ընտրուել էի պատգամաւոր Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրութեան մասնակցելու Հարաւային Ֆրանսայի Հայ հասարակութեան կողմից, եւ թէ պաշտօնական գրութիւնը հետեւում էր: Թէեւ զգացումով ես շատ հեռու էի կրօնասիրութիւնից, բայց այս երկրորդ անգամն էր որ կրօնասիրութեան այս մեծ պատիւը մատուցւում էր ինձ: Մինչեւ 1911 Եւրոպայի եւ Ամերիկայի հայ գաղութները իրաւունք չունէին մասնակցել Կաթողիկոսի ընտրութեան: Այդ տարի Ցարը արտօնեց որ Եւրոպայի բոլոր հայ գաղութները արտօնուէին մասնակցել ընտրութեան մէկ պատգամաւորով. նոյնը եւ Ամերիկայի համար:

Եւրոպայի հայ գաղութների ներկայացուցիչները իրենց Անգլիայ Մանչէսթըր քաղաքի ժողովում այդ պատիւը տուին ինձ: Այն արդարեւ մի պատիւ էր նրանով դալ Կովկասի քրիստոնէական մթնոլորտի մէջ, բայց ընաւ պարծենալիք պատիւ չէր նրանով տաք կոխել Խորհրդային հայի վրայ, որ հակակրօնաթեան փոթորկի տակ եկեղեցականներ, եկեղեցիներ, եւ եկեղեցասիրութեան զգացումներ քշուել տարուել եւ հիմնայատակ էին եղել բնաշունչ քամիներից:

1911ին եւ առաջ, կաթողիկոսական ընտ-

բութեան գէղերը եւ լաւերը տարածւում եւ թնդում էին ամենուրեք հայութեան մէջ: 1932 հոկտեմբեր 25ին երբ հասայ Մոսկվա, Նովո-Մոսկովեան հիւրանոցի ընդունարանում լսեցի երեք երիտասարդներ խօսելով հայերէն: Մօտեցայ նրանց: Մէկը թունդ կոմունիստ էր, այնպիսի համոզումով եւ յամառութեամբ, որ Ամերիկայից գնում էր Հայաստան թէ ինք կարող էր այնտեղի կոմունիստ վարիչներին եւ վարեայներին ուսել կոմունիստ դարձնել: Միւս երկուսը Երեւանցի էին, նոր եկած Մոսկվա ճարտարապետութիւն սովրել: Իմ հարցումին պատասխանեցին թէ Կաթողիկոսական ընտրութեան մասին նրանք բան չէին լսել. բայց Ամերիկահայը, որ ինձ թւում էր իր գիտութեամբ մի ադէս անձնաւորութիւն, մեծապանծօրէն ասեց թէ չարժէր խօսք բանալ այդպիսի փտած մի խնդրի վրայ. Ինձ բաւական տարօրինակ եւ զարմանալի երեւեց, որ մինչ Եւրոպայում եւ Ամերիկայում ամէն հայ տեղեակ էր այդ մասին եւ Էջմիածնից հրահանգներ էին ղրկուած պատգամաւորներ ընտրել, Երեւանից նորեկ երիտասարդներ, ընտ տեղեկութիւն չունէին:

Մեր երկաթուղի գնացքը դանդաղօրէն գնում էր Վրաստանի հանրապետութեան միջով, մի երկիր որի դաշտերը թեթեւամիտ եւ ծաղրելի էին համարում մեր խելացի հայերից Ցարի իշխանութեան ժամանակ, եւ որն

սակայն Ցարի անկումից յետոյ մեծ մարդիկ տուեց նրա անկեալ կայսրութեան երկրին: Այս մտածումով նայում էի այդ երեւելի զաւակների հայրենիքին, երբ գնացքը մօտենում էր նրա քոյր հանրապետութիւն Հայաստանի այրարատեան ձորերի գեղազարդ տեսարաններին: Եւ երբ գնացքը կանգ առաւ մի կայարանում, ատա անդ ձայներ հասան ականջիս « վերջապէս մեր Հայաստանումն էինք նորից« Զանազան մասնագիտութեանց շրջանաւարտ աշխոյժ հայ տղաներ էին, լի եռանդով եւ ոգեւորութեամբ, որ Մոսկուայից եւ Լենինգրադից վերադառնում էին Հայաստան դնել իրենց արուեստը եւ արհեստը իրենց փառաբանած ժողովրդի ապրելակերպի բարւոքման եւ նրա երկրի քաղաքակրթութեան համար: Նրանք այնքան հպարտ էին Խորհրդային Միութեամբ որ ցանկանում էին համոզել ինձ թէ ամէն մասնագիտութեամբ իրենց Միութեան հայրենիքը արդէն գերազանցում էր Անգլիային եւ Ամերիկային: Եւ թէ իրենց ձգտումն էր փոքրիկ Հայ Հանրապետութիւնը այս մասամբ հետեւէր Մայր Հանրապետութեան յառաջդիմութեան քայլերին:

Այսպէս, ժողովրդային մեծակի յառաջացման գաղափարի հասկացողութիւնը եւ նրա նպատակի գործադրութեան ձգտումը եւ հաւատքը այդպիսի մի նորահաս հայ սերունդի մտքի եւ հոգիի մէջ լաւագոյն կրօնն էր որ

կարող էր ստեղծանել եւ պահպանել, փոխանակ իրենց հայրերի ձեւական քրիստոնէական կրօնքին, որից մաքուր բարոյականին անգէտ, եւ զգացումով խորթ զուրկ էին երեւում: Տեսայ որ ոչ միայն անտեղեակ էին Կաթողիկոսական բնապաշտութեան մասին, բայց անտեղեակ էին Հայաստանի մայրաքաղաքից մի տասնեակ մղոն հեռու Հայ ազգի կրօնի Մայր Աթոռի, եւ արքեպիսկոպոսների անունների եւ գոյութեան մասին:

Այս ազնուութիւնը արդեօ՞ք թերութիւն էր թէ արժանիք էր Նոր Հայաստանի Նոր սերունդի բարոյական նկարագրին: Այս երիտասարդների համար արդեօ՞ք աւելի լաւ եւ մաքուր էր որ պիտի ապրէին իրենց այդ նոր կեանքին մէջ առանց իրենց հայրերի կրօնքին, առանց քրիստոնէական կրօնի՝ իր արտաքին ձեւակերպութիւններով, արարողութիւններով ծիսակատարութեան ամէնչով, եւ գունագեղ զգեստաւորութեամբ, եւ այս ամէնը յառաջ տարուելով լայնաբերան բացագանչութեամբ, կեղծաւոր երգեցողութեամբ, եւ երկայնաձիգ ձայնարկութեամբ:

Այսպէս տպաւորուեցայ կեանքով լեցուն այն երիտասարդներից երկաթուղիի գնացքում, եւ նրանցից որ հազուադէպ առիթ ունեցայ տեսնել Երեւանում:

Երեւանի կայարանում սպասում էր ինձ իմ յաւէտ հիւրընկալ անմոռանալի բարեկամս

բժշկապետ Յովհաննէս Յովհաննէսեան։ Երկրորդ օր ոստիկանութիւնից ծանուցուեց որ երթայի արձանագրել տալ անցագիրս, ըստ ժամանակի օրէնքին։ Էջմիածին կարելի չէր երթալ առանց արտօնագրի, ինչ որ տուեց ինձ, երբ սպասում էի Ներքին գործոց պաշտօնատան մէջ, երկու երեք անգամ թելեֆոն անելուց յետոյ։

Էջմիածնում նախ գնացի Կաթողիկոսական Տեղակալ Խորէն Արքեպիսկոպոսին, երեւանմեայ ծանօթ եւ բարեկամ։ Նա էր մի մարդ հաճելի եւ համակրելի իր քաղցրաբարոյ ընկերական ընտանութեամբ։ Զարմացայ որ տեղեկութիւն չունէր ո՞րտեղից էի պատգամաւոր ընտրուել եւ պատասխանեց թէ ոչ հեռագիր եւ ոչ պաշտօնաթուղթ էր իր ձեռքը հասել Հարաւային Ֆրանսայի հայոց առաջնորդից, եւ կասկածի տխրութիւն երեւեց նրա երեսի վրայ, մանաւանդ նա էր կաթողիկոսական մէկ ընտրելի։

Միւս ընտրելին էր Մագիստրոս Մեսրոպ արքեպիսկոպոս, որի հետ փոքր ինչ աւելի մտերիմ էի։ Երբ հազիւ ոտք էի դրել նրա բնակարանի դռնից ներս, բազմաթիւ ներկաների մէջից երկայնահասակ սպիտակախառն մօրուքով մէկը մէկանց բարձրացաւ եւ համբուրեց ինձ. Կաթողիկոսական երկրորդ թեկնածուն էր։ Մօտ 12–15 հոգի նստած ճաշակում էին

կարագով եւ մեղրով հաց, եւ փոքր բաժակներով սուրճ։ Ըստ որում կարագ եւ մեղր հազուագիւտ էին այդ ժամանակ ընդհանուր Միութեան մէջ, զարմանքով հարցրի թէ ո՞րտեղից էին ձեռք բերում Աւետեաց Երկրի այդ անձեռնհասանելի քաղցրահամ պանձերը։ Պատասխանը եղաւ թէ շատ ապրին գեղացիները· միշտ բերում են։ Յանկարծ մէկը միամտաբար թէ գիտմամբ հարցրեց ինձ թէ արդեօք ճի՞շդ էր թէ Անգլիայում ամէն բանի պակասութիւն կար, թէ անգամ գործաւորները եւ նրանց ընտանիքները սոված են, եւ ոմանք փողոցներում վայր են ընկնում եւ մեռնում։ Զարմանալով այս տարօրինակ հարցերի վրայ, բացատրեցի թէ անգամ գործաւորները եւ նրանց ընտանիքների անդամները որոշ գումարներ են ստանում ամէն շաբաթ կառավարութիւնից բաւականաչափ իրենց ապրուստի համար, եւ թէ սովամահութիւն բնաւ գոյութիւն չունէր, եւ թէ ամէն ինչ աժան եւ առատ էր ինչպէս հարուստի նմանապէս աղքատի համար։ Մի առժամանակ յետոյ գլխաւորը ոտքի ելաւ, եւ ասեց «գնանք, ժողովի ժամանակն է»· եւ ցըտեսութիւն առնելով մեկնեց իր հիւրասիրողներով։ Պատգամաւորներ էին, գիտէր որ ես եւս պատգամաւոր էի։ Սենեակում մնացի ես միայն, եւ Մեսրոպի սենեկակից եւ իմ պատանեկութեան ճեմարանի ընկեր էջմիածնի ճեմարանից, Բաղդասար արքեպիսկոպոս։

ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

Երբ, ապա, վայր իջանք, դրսում կանգնած էր ներսում տեսածս եկեղեցականներից մէկը, որ երեւի ինձ էր սպասում, եւ ինքն իրեն ծանօթացրեց, անուանելով Վրթանէս եպիսկոպոս, եւ հրաւիրեց ինձ երթալ իր սենեակը թրքական սուրճ խմել: Ես բնաւ գաղափար չունէի թէ ինչ էր պատգամաւորների տպաւորութիւնը երկու թեկնածուների նկատմամբ, նա սկսեց գովել Մեսրոպ արքեպիսկոպոսի նախամեծարութիւնը: Գրեթէ փոքր ինչ աւելի այդպէս էր նաեւ իմ տպաւորութիւնը: 1911ի կաթողիկոսական ընտրութեան նա եղաւ երրորդը կամ չորրորդը իր ստացած քուէներով, եւ չափազանց սրտնեղ էր որ չէր ընտրուեց: Պատու մայրը Ղարաբաղից եկել էր յուսալով տեսնել իր որդին Կաթողիկոս Ամենայն Հայոց: Երեկոյին գնացի իր մօտ, տրտում տխուր նստած էր, ձախակողմում ունենալով իր մայրը, որ սկսեց իր խօսքերը ուղղել ինձ: Ես բան չհասկացայ իր լեզուից: Որդին մեղմացնող ձայնով ասեց, «Մայրիկ Պետրոսը քու լեզուն չէ հասկանում»:

Երկու օր յետոյ այցելեցի նորընտիր Կաթողիկոսին: Առանձին էինք, զարմացայ երբ լսեցի իրենից թէ տեղեակ էր ամէն խօսակցութեան եւ ճառերի մասին որ տեղի էին ունեցել նախորդ երեկոյեան մասնաւոր խնճոյքին որ կազմակերպել էր իմ Ղարաբաղցի հիւրընկալ եւ Սինոդի անդամ Բարգէն վարդապետ, եւ

ներկայ էին Մեսրոպ եպիսկոպոս, եւ Բագրատ եւ Մաթէոս վարդապետներ, եւ պատգամաւորներից մի քանի նշանաւորները: Ոմանք յաւակնութիւն յայտնեցին ընտրութեան մասին: Նոր Կաթողիկոսը, Գէորգ Սուրէնեան յաղթանակով ասեց·

« Հա՛, ուրեմն դոկտոր Փափազեան, եւ միւսները ցաւում են որ ես ընտրուեցի: Իմացայ թէ Մեսրոպ եպիսկոպոսն էլ, երեսանց ինձ էր ուզում, սակայն իմ դէմ էր գործում, եւ աշխատում էր որ ինքը լինէր Կաթողիկոս »:

Չէի երեւակայում թէ Քրիստոսի հայ պաշտօնեաների մէջ կարող էին գտնուել այդքան արագընթաց լրատուներ եւ լրտեսներ:

Երկու վարդապետները որ ցայն վայր ներքին գործակից էին Մեսրոպին, եղան նոր Կաթողիկոսի աջ բազուկները, եւ բարձրացան արքեպիսկոպոսութեան:

Հայ ազգի կրօնապետը, ներշնչուած քրիստոնէական զգացումով, միշտ հեռու պահեց Մեսրոպին էջմիածնից որ չը տեսնէր նրա երեսը, եւ զուրկ մնար այդ հաճոյքից: Քանի եւ մէկ տարի յետոյ այս երեքը դարձեալ եղել էին դաշնակիցներ: Բայց այս դեռ չը գիտէի այս անգամ, եւ կարեկցութիւն էի զգում նրա նախկին անյաջողութեան համար: Նա անշուշտ ամէնի մէջ աւելի ուսեալ էր· բայց այնպէս չէր հանդուրժում իր մրցակցի ընտրութեան բարձրութեան: Նման շատ մարդոց, նա եւս

անկարող էր զսպել իր յուզմունքի հոսանքը, ըստ պարագայից. նրա երեսի վրայ և խօսքերի մէջ երևում էին բարի մեղմութիւն և նոյնպէս յուսահատական զուարթ, և բացայայտ կերպ, ինչ որ շատ լաւ յատկութիւններ չէին եկեղեցականի համար: Դիմագծերը և երկայն յոնքերը շատ նուրբ երևոյթ չէին տալիս իր դէմքին:

Եւ միտքս խորհրդածում էր թէ այս երկու բարեկամներից ո՞ր մէկին աւելօք արժէր տալ քուէս, թէև ինձ ընտրող մարմինը յանձնարարել էր քուէս տալ Խորէն արքեպիսկոպոսին և այդպէս գրել և հաստատել էին, բայց այնուամենայնիւ պատգամաւորը ազատ էր տալ իր քուէն, ում ինքն կարծէր արժանաւոր: Եւ մինչ մի կողմից ըմպում էի Վրթանէս եպիսկոպոսի թրքական սուրճը, և լսում նրա գովաբանութիւնը ի նպաստ Մեսրոպ սրբազանի, մտածումս յետ դառնում էր դէպի 1911ի ընտրանը, և նրա դառն յուսախաբութիւնը, և զգացումը զօրանում էր իմ սրտի վրայ, և ներշնչում ինձ կաթողիկոսական ընտրութեան քուէս տալ ի նպաստ Օրմանեան Մաղաքիային որ բոլոր հայ եպիսկոպոսների մէջ ամենագիտունն էր:

Մինչ այս ներշնչումներով շնչում էի, դուռը զարնուեց և ներս մտաւ մի վարդապետ, կարճահասակ, և դէմքը ծածկուած սև և թանձր մօրուքով, միակ ազատ մասը նրա

փայփայող աչքերի շրջապատն էր:

«Կառավարութիւնից մէկը դրսում ուզում է տեսնել պարոն Պետրոսին»:

Ներս մտաւ հսկայական կազմով եւ կեցուածքով մի անձնաւորութիւն, որի ընդհանուր երեւոյթի վրայ կարծես դրոշմուած էր զինուորականութիւն եւ հեղինակաւորութիւն:

«Դո՞ւք էք քաղաքացի Պետրոս Տօնապետեան:»

«Այո, պատասխանեցի, ես եմ»:

«Պիտի խնդրեմ, որ ինձ հետ երթանք մեր պաշտօնատունը»:

Կարճլիկ վարդապետը ընդհատելով եւ կարծես բռնկուած գոչեց·

«Ինձ նայեցէք, քաղաքացի, կարճ բոյով, երկար միրուքով վարդապետը, եթէ ուզում էք ես էլ պատրաստ եմ գալ»:

Մարդը չկորցրեց իր պաղարիւնութիւնը, միայն հանդիսաւորապէս ասեց·

«Արդեօք գիտէ՞ք ում հետ էք խօսում այդպէս»:

Վրթանէս եպիսկոպոս յանդիմանեց յանդուգն վարդապետին դուրս ելնել, եւ դառնալով անծանօթին ներողութիւն խնդրեց եւ ասեց

«Յուսամ շուտով կը վերադարձնէք մեր հիւրին»:

Այն սենեակը ուր մտանք, նստած էին ուրիշ երկու պաշտօնեաներ լուրջ հայեացքներով· նրանք անմիջապէս ոտքի կանգնեցան ի

ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

յորդորում ինձ ընկերացող պաշտօնեային, որ ամենայն քաղաքավարութեամբ հրաւիրեց ինձ նստել: Նա յայտնեց թէ ես չէի կարող մնալ էջմիածնում, թէ օթեւանքի մէջ տեղ նշանակուած էր ինձ համար եւ երեկոյեան ժամ 8ին նորանով պարտ էի վերադառնալ Երեւան, որ կայարանում մէկը պիտի սպասէր առաջնորդել ինձ իմ հիւրընկալ բարեկամի տունը, եւ հետեւեալ առաւօտ ներկայանայի Արտաքին գործոց Բիւրոյն, եւ թէ այժմ կարող էի վերադառնալ վանքը, եւ ուզեց որ իրեն յանձնէի անդրկովկասեան հպատակութեանս անցագիրը: Չը բացատրեց թէ ի՞նչ էր այս տարօրինակ ընթացքի պատճառը: Երբ մտայ վանք ճեմարանի ճանապարհով, գրեթէ դէմ յանդիման Մաղխասարի եւ Բողբոսի սենեակն էր, եւ տեսայ նրանք խումբով գալիս էին մինչ ես նրանց սենեակի առաջին աստիճանների առաջ էի:

«Ի՞նչ է պատահել, ի՞նչ է պատահել», հարցրեց Մեսրոպ Արքեպիսկոպոս, բացագանչելով:

— «Հրամայուեց որ այս երեկոյ վերադառնամ Երեւան, թէ չեմ կարող մնալ էջմիածնում»:

Ա՜ ա՜ ա՜ բացագանչեց, երկայն ձայնով, եւ միաժամանակ վեր բարձրանալով, առանց աւելի ես հետաքրքրուելու եւ վեր կանչելու:

Երկու երեք ժամ առաջուայ տաք համբոյր-

ները տարել էին: Այդ ամէն սուրբ հայրերը կուշտ փորով վերադառնում էին սեղանատը-նից, եւ ոչ ոք հետաքրքրուեց իմ սոված փորի վիճակով: Նրանցից ոչ ոք մնաց ցածում, եւ ոչ իսկ Թրքական սուրճը հրամցնողը:

Միայնակ քայլերս ուղղեցի Մայր Եկեղե-ցին շրջապատող պարտէզը: Մէկը մօտեցաւ եւ ասեց թէ Արքեպիսկոպոսը ինձ էր փնտռում եւ ուզում էր որ ես նրա հիւրը լինէի:

Պատգամաւորները աստ անդ ման էին գա-լիս պարտէզում եկեղեցու շուրջ, եւ ոմանք կանգնած խօսում էին միասին:

Երբ գնացի Կաթողիկոսական Տեղակալի մօտ, նկատեցի որ այլայլուած էր երեւում: Յայտնեցի իրեն ինչ էր կառավարութեան հը-րամանը. պատմեցի թէ իրենից բաժանուելուց յետոյ եղայ Մեսրոպ եւ Վրթանէս եպիսկոպոս-ների սենեակներում:

Ինձ թւում էր թէ մի ինչ որ բաներ պատ-նում էին նրա մտքում, բայց քաշւում էր ար-տայայտել: Սովորական ուրախութեան փայ-լը չէր երեւում երեսի վրայ. եւ տխուր էր. սպասաւորին ասեց որ պայուսակս կրէր եւ ըն-կերակցէր ինձ մինչեւ օթոմոբիլի կայարանը:

Գիշերուայ ժամ տասն եւ մէկը անց էր երբ հասայ բժիշկ Յովհաննէսեանի տունը:

Մի քանի հիւրեր բազմած բարեկամիս հիւրընկալ սեղանի շուրջ համեստ կերակու-րով զբաղուած էին, եւ ապշահար եղան երբ տեսան ինձ, եւ ես ինձ բաղդաւոր զգացի որ

ամբողջ օր սոված մնալուց յետոյ, վերջապէս սովամահ լինելուց փրկուելու կայարանն էի հասել:

Աւելորդ է ասել թէ ինչ եղաւ ներկաների կարծիքը, երբ պատմեցի եղելութիւնը, եւ ոմանք դիտեցին թէ ցարիզմը կործանելու նպատակն էր ջնջել բռնակալութիւնը, եւ հաստատել անհատական ազատութեան իրաւունքը, եւ ոչ թէ անհատներին դարձնել կամայական օրէնքի գերիներ:

Հետեւեալ առաւօտ գնացի նշանակուած պաշտօնատեղին: Բիւրոյի պետը կոչւում էր Ղարիբեան, այնտեղ եկաւ մի այլ պաշտօնեայ մի տոմար ձեռքում, եւ զանազան հարցումներ արեց եւ պատասխանները գրի առնելուց յետոյ գնաց դուրս: Հարցումների ոչ մէկից կարողացայ գաղափար կազմել թէ ինչո՞ւ արտաքսուեցայ Էջմիածնից: Ղարիբեան, որ շատ քաղաքավարի էր իր վարմունքով, յայտնեց որ ժամը երկուքից յետոյ վերստին գնայի իր սենեակը: Երբ ներս մտայ, նա ներս մտաւ իմ ետեւից, վերադառնալով հին ռէժիմի կէսօրուայ կերակուրից, եւ հրաւիրեց ինձ նստել, ապա ասեց.

—Այն անձը, որին տեսաք առաջին անգամ, մեր գլխաւորն է, եւ այսօր մեկնեց Թիֆլիս, պասպորտդ ասեց որ վերադարձնեմ. յանձնարարեց ինձ ասել ձեզ թէ բոլորովին գոհ է

ձեռանից, եւ ազատ կը վերադառնայ Էջմիածին, եւ մասնակցել ընտրութեան:

Երկարեց իր ձեռքը, որ սեղմելուց յետոյ բաժանուեցայ նրանից:

Երեկոյեան մեկնեցի օթոմոբիլի կայանը. կային շատ նոր պատգամաւորներ. եւ բոլորովին մութ էր երբ մտանք Էջմիածնի ներսի շրջանակը:

Այդ գիշեր տեղաւորուեցայ կառավարութեան հիւրանոցում: Հետեւեալ առաւօտ եկաւ Արսէն եպիսկոպոս Գլըճեան, որ լսելով եկած լինելս գալու անցս, եւ փոխադրեց ինձ իր բնակարանը: Նրա հետ առաջին անգամ ծանօթացայ 1911ին, համալսարանական էր, եւ ուսած իրաւագիտութիւն: Նախատուած էր նա Դաշնակցական կուսակցութիւնից, որովհետեւ հակառակ էր եւ դատապարտում էր այդ կուսակցութեան արտասահմանեան լրագրական եւ ճառային պայքարները ընդդէմ Խորհ. Միութեան, որպէս անմիտ եւ բախտախնդրական, թէ աշխարհի մէկ վեցերորդ մասի վրայ տիրապետող մի պետութեան ձեռքից պէտք է ազատէին Խորհրդային Հայաստանը, եւ տէր դառնային, ինչպէս նոյնպէս պաշտպանութեամբ ազատեցին Թրքահայաստանը, եւ նրա Թրքահայերը Սուլթանի ձեռքից, որով ակայն ոչնչացան բոլոր Թրքահայերը: Այսպիսի նկատառումներով նա ազգավնաս էր համարում

դաշնակցականների ընթացքը եւ ջերմօրէն եւ անկեղծօրէն պաշտպան էր Նոր Հայաստանի գոյութեան: Եւ իմ կարծիքով, Թորէն արքեպիսկոպոսից յետոյ, մնացեալ փոքրաթիւ եպիսկոպոսների մէջ միակն էր, որի համար կարելի էր ասել «Ահա մի մարդ, որի անկեղծութեան կարելի է հաւատալ»:

Առաւօտեան կարծեմ ժամը 10ն էր· բոլոր պատգամաւորները հաւաքուած էին Վեհարանի ընդարձակ սրահում, եւ զոյգ զոյգ շարւում էին Թեմերի հնութեանց կարգով:

Եւ երբ ամէնքս պատրաստ էինք, Թափօրը յառաջ շարժուեց դէպի Սուրբ Տաճարը:

Միայն պատգամաւորները արտօնեալ էին մտնել ներս, եւ եկեղեցւոյ դռները փակուեցան ներսից:

Ցարական իշխանութեան ժամանակ, բաց ի պատգամաւորները ներկայ էին լինում կառավարութեան ներկայացուցիչները, մէկն էր մշտական պրոկուրորը, առանց որի Կաթողիկոսի ժողովը , այն էր Սինոդը, կամ Գերագոյն Հոգեւոր ժողովը իրաւունք չունէր նիստ գումարել եւ որոշումներ առնել, եւ գործադրել առանց նրա հաւանութեան: Նրա Դամոկլեսեան սուրը միշտ Ամենայն Հայոց Կաթողիկոսի գլխին էր, եւ այդ դահիճը միշտ լինում էր մի հայ, որպէս զի հասկանար ամէն խօսք, եւ ճշդօրէն տեղեկագրէր իր կառավարութեան:

Միւսն էր մի շատ աւելի բարձր անձնաւորութիւն ղրկուած Պետերբուրգի հրամանու: Նըրանք նստում էին առանձին սեղանի առաջ արեւմտեան հասա սենի մօտ դէմ առ դէմ Կաթողիկոսական Տեղակալին:

1932ի ընտրութեան ժամանակ մենք չունէինք մեր մէջ մեր վրայ նայող պաշտօնական համազգեստներով Արգանեան աչքեր, բայց թերեւս կային եկեղեցական վերարկուների մէջ պատուած անպաշտօն Արգաններ:

Գարեգին-արքեպիսկոպոս ստացաւ մէկ քուէ, Բագրատ մէկ, Մաթէոս երեք, Մեսրոպ վեց կամ եօթն եւ Խորէն արքեպիսկոպոս 56 կամ աւելի, որ ջերմ ծափահարութեամբ ողջունուեցաւ որպէս Կաթողիկոս Ամենայն Հայոց:

Այնուհետեւ եկաւ Նոր Գերագոյն Խորհուրդի անդամների ընտրութեան կարգը:

Մեսրոպ, Մաթէոս, եւ Բագրատ յաջորդաբար յայտարարեցին, որ իրենց քուէ չէր տրուէր, որովհետեւ պիտի մերժէին անդամութիւն: Բայց պատգամաւորներից ոմանք իզուր խնդրեցին որ ընդունէին քուէարկութիւն. Նրանցից մէկն եղաւ Գարեգին եպիսկոպոս, որ յատկապէս թախանձեց իր խօսքերը ուղղելով Մաղխասեան Սրբազանին: Այս զանազան դիմումներին ի պատասխան, Մեսրոպ արքեպիսկոպոս բարկացած ձայնով բացականչեց.

« Այս մարգարէի ընտրութիւն չէր, այլ խուժանավարների ընտրութիւն էր . . . »:

Պատգամաւորները ապշած իրենց ուղղած այս զուեհիկ անարգանքից, պժգանութեան մինչեւ արձակեցին իրենց կոկորդներից, առանց բառ արտասանելու իրենց լեզուով. միայն Գարեգինը ոտքի կանգնեց եւ ձայնեց.—

« Խօսքս եւ խնդրանքս ես եմ անում»:

Յայնժամ սկսեց դրաման, որի չանթահար ազդեցութեան տակ կարծես խելակորոյս եկեղեցականը զգաց իր գետին մտնելը: Բժշկապետ Նուասարդեան, Թիֆլիսի Բարեգործական Ընկերութեան հիմնադիրներից մէկը, որի շնորհիւ անթիւ աղքատ պատանիներ օգտուել էին եւ կրթութիւն ստացել, կանգնեց իր աւելի քան ութսունամեայ ոտքերի վրայ, եւ ասեց դողդողուն բայց շեշտուած ձայնով.—

« Մեսրոբ Սրբազա՛ն, Մեսրոբ Սրբազա՛ն, աղաչում եմ քեզ, պաղատում քեզ, մտիկ արա ծերունի ձայնիս, ընդունիր անդամակցութիւնը, օգնական եւ գործակից եղիր մեր նոր Կաթողիկոսին, մեր Եկեղեցու այս դժուար օրերում: Մեսրոբ Սրբազան, յիշեցէք երբ իբրեւ աղքատ գեղացի տղայ, գեղացի հագուստով եւ ոտքից արեխներ հագած եկաք մեր մօտ եւ օգնութիւն խնդրեցիք: Մենք ձեզ օգնեցինք, ձեզ կրթութիւն տուինք, ղրկեցինք Գերմանիա համալսարան, եղաք մագիստրոս, վարդապետ, եպիսկոպոս, մեր Եկեղեցու ամենա-

բարձր հոգեւորական: Այս ամէն տառածներս յիշատակի համար, Մեսրոպ Սրբազան, աղաչում եմ, պաղատում եմ ձեզ, համաձայնեցէք մեր խնդրանքներին, եւ գործակցեցէք մեր նոր Կաթողիկոսի հետ»:

Բարոյական այս ամենածանր մարտերին տակ ինչ զգաց նա դժուար չէ երեւակայել: Ոտքի կանգնեց կէս թեքուած, եւ կոկորդի խորքից դժուարաւ լսելի դողդոջուն ձայնով ասեց·

—Պարոն բժիշկ, արիշներ կան, եւ աւելի լաւ է որ նրանց առաջարկէք տրուի Նոր Խորհրդի անդամակցութեան պաշտօնը . . .

Երեքն եւս ժայռի պէս մնացին ամուր իրենց որոշման մէջ, եւ չը գործակցին խաժանավարների Կաթողիկոսի հետ:

Ահա, սրտով եւ հոգւով ցոյց տուին թէ այսպիսի մարդիկ էին Հայ Եկեղեցւոյ, եւ նրա քրիստոնէական կրօնի մեծաւորները: Եւ ո՞ւր է այդ քրիստոնէութեան սրբութիւնը, որի բարձրագոյն վարդապետները այսօրւան ցածր են իրենց էութեամբ, բան իսկ իրենց սուրբ էջմիածնում:

Հետեւեալ օր նոր Կաթողիկոսի օծման հանդէսն էր: Վանքի պարտէզը լեցուն էր մեծ բազմութեամբ· արդեօ՞ք հազար թէ երեք հազար էին, հաշուադէտ չէի, բայց նկատեցի այն տեղ չը կային պատանիներ եւ թարմ երիտա-

սարգներ, ամէնը թւում էին լինել աշնանային ծառերի թարշամած տերեւների նման: Նոր Հայաստանի կեանքի նորատունկ կենդանի ծառերը բացակայ էին այդ կեանի վրայից:

Եւ սակայն Մայր Եկեղեցին այնպէս շափազանց լի էր, որ պատգամաւորները ամենամեծ դժուարութեամբ կարողանում էին առաջնորդուել իրենց նշանակուած տեղը մայր սեղանի հանդէպ, եւ ոմանք անկարող եղան, եւ մնացին խեղդուած հոծ բազմութեան մէջ:

Ուրեմն կրօնը դեռ չէր մեռել Հայաստանի հայ ժողովրդի սրտում, մտածում էի ինքնիրենս, տեսնելով այդ անհամար տարեց գիւղացիների ներկայութիւնը, եւ խորհելով թէ նրանց վերջանալով պիտի չը վերջանա՞ր նաեւ կրօն եւ քրիստոնէութիւն նրանց նոր սերունդի սրտերում:

Օծման արարողութիւնը շատ հանդիսաւոր եւ տպաւորիչ էր, արարողապետն էր աւագագոյն անդամն Մեսրոպ արքեպիսկոպոս, որ սուրբ մեռոնը բռնած օրհնաբանութեամբ ածում էր խուժանավարներից բերուած անարժան Կաթողիկոսի ճակատը, օծելով նրան որպէս Կաթողիկոս եւ Հայրապետ Ամենայն Հայոց. ոսկեփայլ եւ արծաթաշող շուրջառներով սեղանի վրայ, նոյնօրինակ դերակատարութեամբ նրան ընկերանում էին նրա նախկին ընկերները, եւ Արսէն, Գարեգին, Գէորգ,

Վրթանէս եւ Արիստակէս եպիսկոպոսները, յետին մնացորդները էջմիածնի միաբանութեան:

Այս բեմական տեսարանը տեւեց հինգ կամ վեց ժամ, եթէ ոչ աւելի:

Յետ արարողութեան, օծեալ Կաթողիկոսը շրջապատուած իր եկեղեցականներով, պատգամաւորների շարաններով եւ ժողովրդի ներկայացուցիչներով քայլեցին դէպի կաթողիկոսական մեծ սրահը, ուր կարգերով նստած ներկաները մի առ մի ոտքի կանգնելով մօտենում էին եւ պատկառանօք խոնարհած համբուրում էին Կաթողիկոսի աջը, եւ նա համբուրում էր խոնարհողի ճակատը: Առաջին համբուրողը եւ առաջին համբուրուողն էր Մեսրոպ Արքեպիսկոպոս, որ որպէս աւագ արքեպիսկոպոս, նստած էր Կաթողիկոսի մօտ ձախ կողմի վրայ, նրան մօտ էր Մատթէոս Արքեպիսկոպոս: Եւ երրորդը Բագրատ Արքեպիսկոպոս ներշնչուած իր կարճ ու հաստ մարմնի մէջ անզուսպ փոքրածաւալ ոգիով, մղուել եւ քաշուել էր դէպի իր խաղաղ խուցը, որպէս զի զերծ մնար Նոր Կաթողիկոսի օրհնըւած աջը համբուրելու տարփութիւնից: Եկեղեցականներից եւ պատգամաւորներից յետոյ, գիւղացիների գլխաւորներ, նոյն ձեւով մօտեցան եւ նոյն ձեւով հեռացան, եւ դուրս եկան սրահից· ես շարունակեցի մնալ, նայելով ան-

տարանին, մինչև որ ցայն վայր անտեսանելի մնացին 25 կամ 30 մարդիկ երկայն վերարկուներով: Նրանց վերարկուները բոլորովին գունաթափ էին հնութիւնից մեծ ու փոքր զանազան չափերի և ձևերի, և զանազան մութ գոյների կտորներով կարկատուած, նրանց միրուքներով պատուած խոժոռ վշտահար և խորշոմապատ դէմքերի մէջից երևում էին խոր ընկած տխուր աչքերը, և նրանց ոտների կոշիկները իրենց հնութեամբ և կարկատանքներով ոչ նուազ ողորմելի էին քա՜ն նրանց մարմինները ծածկող վերարկուները:

Նոքա հայ գիւղերի անեկեղեցի քահանաներ էին:

Թէև կաթողիկոսը արդէն համբուրել էր այդ թշուառ ճակատները, բայց նրանք կանգուն, ողորմութեան կարօտ աղքատ մուրացկանի կեցուածքներով, և մնում էին լուռ և անխօս:

Տեսարանը սրտաշարժ էր: Նրանց վրայից աչքերս դարձան օծեալ Հայրապետի վրայ. աչքերը թաց էին և արտասուքի կաթիլներ կաթում էին նրա երկայն միրուքից վայր: Եւ գրեթէ փղձկուն ձայնով ասեց.

—Զաւակներս, եղբայրներս, գիտեմ ձեր վշտերը, հասկանում եմ ձեր վիճակը: Մեր կառավարութիւնը բարի է. արդէն դիմել և

բացատրել եմ ձեր կացութեան համար, եւ յոյս ունեմ շուտով պէտք եղածը կը գործադրէ ձեզ համար, եւ այդ մխիթարութեամբ այժմ վե-րադարձէք ձեր գիւղերը:

Եւ մեծ սրահի մէջ ես մնացի միայնակ Կաթողիկոսի եւ մէկ սպասաւորի հետ:

Անօթութեան դէմ ցանկալի սնունդը ստա-նելուց յետոյ, գնացի նամակատունը, որ վան-քի արեւելակողմեան պարիսպներից դուրս, ճեմարանի պարտէզի վրան գտնւում էր, որտեղ գի տայի գրածս հեռագիրը Լոնդոնի «Թայմզ» հռչակաւոր թերթին, յայտնելով ընտրութիւնը թէ տեղի ունեցաւ 60 պատգա-մաւորների քուէներով ամէնը Խորհրդային Միութեան քաղաքացիներ, եւ իրենց կառա-վարութեան արտօնութեամբ: Իմ նպատակն էր ցոյց տալ անգլիախօս ազգերին թէ կրօնը իւր օրինական կանոններով գաղուած եւ հա-լածուած չէր Խորհրդային Միութեան մէջ, այն ձեւով, որ ձեւով որ ներկայացուել էր Անգլիայում, եւ այլուրեք: Թուղթը սեղանի վրայ դրած եւ ես շրջափակից դուրս կանգնած սպասում էի որ կիսափակ ներսում խօսակցող երեք անձերից գէթ մէկը պիտի բարեհաճէր հարցնել թէ ինչ էր իր պաշտօնը այնտեղ: Յե-տոյ մի արբէշն եկաւ, որտեղ ես էի եկել: Ծառաները անցնում էին մեզ, բայց իրենց խօսակցութիւնը յայտնապէս կարեւոր էր ի-

րենց համար, քան իրենց պարտականութիւնը, եւ մտածելով թէ թերեւս իրաւունք չունէի ձայն հանել եւ խանգարել նրանց աղմուկը, լռելեայն դուրս ելայ եւ հեռագիրը դրի գրպանիս մէջ, այնտեղից այլ եւս դուրս չը հանելու վճռականութեամբ, բայց միայն պատռելու համար:

Վհատեալ քայլերս տատանելով ուղղեցին ինձ կողքի կառավարական հիւրանոցը, որ սենեակների թիւը փոքր էր, եւ նրանց մերկ յատակները զարդարուած էին մէկ փայտեղէն աթոռով, եւ մի նեղ անկողնակալով, զուրկ իրենց հանգստաւէտութեան էական շնորհք-ներից: Ես բաղդ ունեցայ մէկ գիշեր միայն անցընել, եւ այն աւելի մտածելով քան թէ քը-նելով: Աստիճանների գլխում կանգնած էր Տաճկաստանցի հիւրանոցապահի կինը, որ իր հսկողութեան տակ էր պահում նոյնպէս սենեակների խոշոր բանալիները, որպիսիները տեսել էի Սպանիայում մի հիւրանոցում:

—Քաղաքա՛ցի, ո՞վ ընտրեցիք կաթողի-կոս. Դրսեցի՞, թէ ներսեցի, հարցրեց հայ կի-նը: Ըստ որում արդէն դրսեցի գոյութիւն չու-նէր նրանց մէջ, ուստի ասեցի·

—Ներսեցի ընտրեցինք:

Եւ որովհետեւ չը հետաքրքրուեց իմանալ

ո՞վ էր այդ բաղդաւոր ներսեցին, եւ հաւանո-րէն չը գիտէր եւ ոչ մէկի անունը․ ես եւս աւելորդ համարեցի ծանրաբեռնել նրա սահմանափակ միտքը ներսեցիի անունով:

Այդ երեկոյին Կաթողիկոսը պիտի ընթրէր եկեղեցական եւ աշխարհական պատգամաւորների հետ այն երկայնաձիգ սեղանատան մէջ, ուր իմ դպրոցական օրերում, մօտ 60 կամ աւելի եպիսկոպոսներ, վարդապետներ, սարկաւագներ եւ աբեղաներ օրը երեք անգամ յուսալից սպասում էին սեղանատան բարձրագոչ զանգին, որ երթային յագեցնել իրենց անհամբեր փորերը: Այժմ չը կար ոչ աբեղայ, ոչ սեղանեկի սարկաւագ, երկու վարդապետ, եւ մի քանի եպիսկոպոսներ: Մնացեալը մենք էինք, ամենք անհաւատ, ամենք կիսահաւատ, եւ ոչ մէկը կատարեալ հաւատացեալ, եւ եպիսկոպոսները վատթարագոյն: Բայց կրօնասիրութեան պատկառանքը ամենի երեսների վըրայ էր, եւ ճառարանների բերանների մէջ այդ համբաւոր ընթրիքի ժամանակ: Իմ աջին էր Գարեգին արքեպիսկոպոսի եւ Հայաստանի զինուորական դպրոցի ուսուցիչ Տիգրանեանի միջեւ, մի բարեկիրթ եւ համակրելի մարդ, եւ դէմ դիմաց բազմած էր Լիոնի պատգամաւոր Արշակ Ջօպանեան, հնադարեան ծանօթ նշանաւոր գրագէտ որի հանճարի կարողութեան մեծութիւնը երեւելի է իր համար:

ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

Այդ օրից յետոյ երեք օր եւս մնացի, եւ ամէն օր տեսայ Խորէն Կաթողիկոսին· ինքն եւս մնացած էր զարմացած իմ հին բարեկամների վարմունքի համար:

Կաթողիկոսը պատմեց թէ ընտրութեան նախօրեակին գիշերը շատ ուշ Երեւանից մի բարձր պաշտօնեայ եկաւ տեսնել իրեն, թէ Միութեան կառավարութիւնը կաթողիկոսական ընտրութիւնը համարում էր զուտ կրօնական, որի մէջ կառավարութիւնը փափաք չունէր միջամտել, եւ պատգամաւորները ազատ էին իրենց քուէները տալ ում որ իրենք արժանի էին համարում, եւ թէ նոյնպէս խօսք բացուեց իմ խնդրի վերաբերմամբ: Կաթողիկոսը յայտնեց նրան թէ ինքն ճանաչում էր ինձ 1903 ից ի վեր, եւ թէ երաշխաւորում էր ինձ համար եղած ամբաստանութեանց դէմ:

Եկաւ մեկնման օրը եւ դուրս եկայ այս սրբավայրից, երբէք չը տեսնելու վերստին:

Օթամոբիլի կայարանում արդէն հաւաքուած էին, Մալխասեան, Կանայեան, Զամինեան, Ծատուր, ամէնը հին ճեմարանականներ, եւ ուրիշ պատգամաւորներ: Եւ սպասում էին անհամբեր, յուզէա համբերատար եւ համբաքայլ չորս անիւներին, որ երբէք հաւատարիմ եւ ճշդապահ չէին իրենց ժամադրութեանց:

Կային եւ այլ մահկանացու քաղաքացիներ որ մեզ պէս սպասում էին հեզ համբերութեամբ· նրանց մէջ կար մի մանկահասակ կին

ծծկեր երեխան բռնած իր կուրծքի վրայ·

—Տեսանք որ դուք ամէնքդ էլ վանքից ե-կաք: Ի՞նչ արեցիք, տէրտէր օծեցի՞ք թէ ոչ վարդապետ, հարցրեց պարզամտութեամբ:

—Ո՞րտեղացի էք, հարցրի ես փոխադար-ձաբար, առանց պատասխանելու իր հետա-քրքրական հարցին:

—Վաղարշապատցի եմ· բայց Երեւանում ենք ապրում մարդիս հետ: Եկայ ծնողքս տես-նելու, հիմա վերադառնում եմ Երեւան:

Եւ մտածեցի: Երանի այն ժամանակին, որ հայ ժողովուրդը այս կնոջ չափ իսկ հա-կացողութիւն չունենայ Էջմիածնի կեանքի գոյութեան մասին, եթէ նրա հոգեւորականնե-րը այսպէս պիտի արդարացնեն լինել մերկա-պարանոց ճշմարիտ քրիստոնէութեամբ, եւ ճշմարիտ կրօնով:

Հայ ժողովրդեան գրագէտ եւ անգրագէտ ամբողջութեան անկեղծ եւ կեղծ կրօնասէրնե-րը, որ ընդհանուր առմամբ շատ լաւ կարծիք չունեն իրենց քահանաների եւ մանաւանդ վարդապետների վրայ, երբ կարդան կամ լսեն այս տողերը, աւելի հաւանական է որ քաշ-ուան լինեն, քան բարձրացնեն իրենց թեւերը առ Աստուած եւ անիծեն:

ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿԸ ԵՒՐՈՊԱՅՈՒՄ

Էջմիածնի Գերագոյն Խորհուրդի անդամներէն Գարեգին Արքեպիսկոպոս Յովսէփեան, 1935ին թէ° 1937ին եկաւ Եւրոպա, որպէս Կաթողիկոսական Պատուիրակ, պաշտօն ունենալով հանրային նուաստ հանգամանքը Էջմիածնի չէնքի վերանորոգութեան, որ արդէն 1932ին Վանքի ճարտարապետը հաղորդեց Կաթողիկոսը բնարոց պատրաստութիւններին թէ եկեղեցւոյ մի քանի մասերը փլանքի մէջ էին: Պատուիրակը սկսեց Բուլղարիայով թէ° Ռումանիայով, ամէն մի տեղում մնալով շաբաթներով եւ ամիսներով, քարոզներ տալով եկեղեցիների բեմերից, պատարագներ մատուցանելով, եւ կոմիտէներ կազմելով որ դրամներ հաւաքէին. ինքն անձամբ, որքան գիտեմ, բնաւ գլուխ չանցաւ հանգամանքութեան, որ-

պէս զի արդիւնքը աւելի նպաստաւոր եւ արժանաւոր ատաղձանի հանէր իր ստանձնած նպատակի համար:

Կարծեմ մէկ տարի կամ աւելի եղաւ մինչեւ որ իր կրիայի արշաւագնացութեամբ հասաւ Անգլիոյ մայրաքաղաքը: Ամեն ուրեք արած հանգանակութիւնը, նրա անգործնական եղանակի պատճառաւ արդիւնքն եղաւ անբաւական, եւ գումարները մնացին այս եւ այն անհատների ձեռքերում. կարծեմ եւ ոչ մէկ կոպէկ հասաւ Էջմիածին:

Զոր օրինակ, օրինակներից մէկը: Փարիզում հանգանակուած գումարը նա թողեց որ մնար Տիգրան Կամսարական հարուստ համարուած համակրելի մի անձնաւորութեան ձեռքում, մի անձ որ իր երիտասարդութեան փայլի եւ գեղեցկութեան օրերում աւելի հետաքրքրուած էր իր վարժարանի աղջիկով, քան իր վարժարանով: Գրեց մի վէպ, Վարժարանի Աղջիկը անունով եւ սիրում էր ամէն ծանօթի եւ ծանօթուհիի, Կ. Պոլսում, հարցնել— Արդեօք կարդացի՞ք իմ «Վարժարանի Աղջիկը»:

Այս հարցումը իմ վրայ այնքան լաւ տպաւորութիւն գործեց, որ աւելորդ համարեցի կարդալը: Բայց ծխախոտի վաճառականութիւնը դարձրեց նրան հարուստ, եւ հարստութիւնը դարձրեց նրան մեծ գրագէտ, եւ այս-

պէս, բազմացան նրա ընթերցող եւ ոչ-ընթեր-ցող հիացողների թիւը: Եւ երբ նա մեռաւ 2–3 տարիներ առաջ, Ամերիկայի մի հայ թերթի մէջ կարդացի նրա գրական հանճարի փայլը, որ երեւեց միայն Վարժապետի Աղջիկով, եւ գիսաւոր աստղի նման երկարեց մնալ չղջ-ղուն մինչ ի մահ:

Այդ, զարմանալի չէր, որ Կաթողիկոսի Պատուիրակը փախչէր յիշեալ հանգանակած գումարը, եւ մնար հանդիստ: Էջմիածնի մը-տանդաւոր պատերը այնքան տարիներ սպասել էին առանց փլչելու, կարող էին աւելի եւս սը-պասել:

Հաւանօրէն 1938ին էր կամ առաջ, երբ ի Փարիզ, ըստ սովորութեան, այցելութեան գնացի Հայոց Եպիսկոպոսին, Վռամշապուհին որի ծանօթ էի 1889ից ի վեր, երբ մի շաբաթ օր, յաւէտ յարգելի Մելքիսեդէկ Արքեպիս-կոպոս Մուրադեան, հակացարական եւ Ցարից մերժուած ազգընտիր Կաթողիկոսը, եւ յան-ժամ քաշուած Կ. Պոլսի Գատը Գիւղ թաղի ե-կեղեցիում, ասեց ինձ. «Տանիմ քեզ մեր սեն-եակը եւ ծանօթացնեմ մեր Ղարիբ Տէրտէրի հետ, որ նստած նշխարք է շինում վաղուայ պատարագի համար»:

Ղարիբ Տէրտէրը յետոյ աւելի ղարիբա-ցաւ փայլուն Փարիզի բնակիչ դառնալով: Կի-նը մեռաւ, եղաւ վարդապետ, եւ բարձրացաւ Եպիսկոպոսութեան: Բայց ինք միշտ փախ-

քում էր որ ինձ համար մնար այն հին օրերի Ղարիր Տէրտէրը:

—Ի՞նչ կը խորհէք այս մեր Գարեգին Սրբազանի մասին: Ես բացայ եկաւ դրամ հաւաքել Էջմիածնի նորոգութեան համար: Դրամները թափթփուած հոս հոն պանդուխտ անհատներու քով, եւ ոչ լոկ խորհեց հաւաքել տալ, գնել մի ապահով դրամատան մէջ եւ մեկնեց Ամերիկա: Այնտեղ Տիգրան Կոմսարականի մօտ աւանդուած կայ մի մեծ գումար: Կոմսարականն լաւ մարդ է, բայց այսօր կարող է լինել եւ վաղը աղքատ, եւ այդ գումարը պիտի կորսուի, կամ կարող է մեռնել, եւ դրամը ժառանգի ենթարկուի: Այսքան ազնիւ գործունէութիւն կարելի չէ երեւակայել:

Գարեգին Եպիսկոպոսի տարիներով եւ երկարատեւ թափառականութիւնները հասարակութեան նպատակներով, որոնք ապացուցանում էին նրա անձնուիրութիւնը կամ անփութութիւնը: Ես գիտեմ մի անձ, որ նրա հիւանդոցի ծախքը գրեթէ աւելի շատ նստեց քան Էջմիածնի նորոգութեան համար հանգանակուած գումարը, որ տակաւին հանգստանում է մի անձի ձեռքում, եւ գուցէ նրա ձեռքում էլ աւանդէ իր հոգին:

Ես գրեցի Նիւ Եորք Գարեգին Արքեպիսկոպոսին այս մասին, եւ միւսների մասին որ խորհէր եւ մի բան կարգադրել աշխատէր, այդ գումարը ազատէր անհատական ձեռքե-

րից. բայց յայտնապէս շատ ուշ էր մնացել: Նա պատասխանեց ինձ որ աշխատում էր, բայց պատասխան չէին տալիս նրա նամակներին, եւ յիշեց նրանցից երկու կարեւորների անունները:

Լուսաւորչի Եկեղեցւոյ նմանօրինակ անդամալոյծ կրօնաւորներ աշխատելու են կանգուն մնալ իրենց ոտների վրայ, մինչեւ որ մի նոր Գարեգին գայ էջմիածնից, եւ մի նոր նըմանօրինակ հանգանակութեան ձեռնարկէ հեռաւոր աշխարհներում:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

ԵՐԵՒԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ ԵՒ ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԻ ՏՈՒՆԸ

Տարիներից ի վեր երեւակայութիւնս սաւառնում էր Խորհրդային Հայաստան հասնելու փայլերով:

Կրտսեր եղբօրս անդրանիկ որդու բանաստեղծութիւնները եւս աւելի սաստկացրին այդ մեծափափաք թռչման թեւերը: Ես չը գիտէի թէ Յակոբ Տօնապետեանի հանդարտատես երեսի սրտում յուզւում էր բանաստեղծութեան ոգին: Յայնժամ նա ուսանող էր, Մոսկվայից անցաւ Լենինգրադ իր կրտսեր եղբօր հետ, յայտնելով թէ համալսարանական զարգացումը աւելի բարձր էր այնտեղ: Լենինգրադի աղէտաւոր պաշարումով, երբեւէ ուրիշ միլիոնաւորների աղէտալից դժբաղդութեան եւ ձայների լռութեան հետ լուռ են մնացել եւ այս

երկու երիտասարդ կեանքերի ձայները գուցէ, տաղ ու յուշտ:

Նրա գրկած երեք ապագրեալ տառնաւոր-ները լի կենդանութեամբ երգում էին Խորհր-դային Հայաստանը իր վերակենդանութեան տեսարաններով, դաշտերը եռուն գործօն մե-քենայար մշակներով, եւ արտերը կանաչազեղ ցորենի յօղուններով եւ բամբակի կոլիկներով:

Բայց երբ ես այնտեղ եղայ, եղանակը ձը-մեռնային էր, եւ բանաստեղծութեան կմախք-ները միայն կարող էին տեսանելի լինել ինձ համար: Սակայն եւ ոչ այդ ինձ վիճակուեց տեսնել:

Բայց մայրաքաղաքում տեսայ տաս անդ, բարձրացած կարմիր քարաշէն խոշոր շէնքեր, որպիսիները նախապէս երբէք տեսնուած չէին ամառը փոշեպատ եւ ձմեռները ցեխապատ-ած գետնի վրայ, եւ այլուրէք շէնքեր հիմ-նայատակ եղած, աջ ու ձախ բարձրացած ի-րենց աւերակների՝ անձրեւից խմորացած՝ հողաբլուրներով, ազատելով նոր եւ շքեղ շէն-քերի բարձրացման, եւ աւելի ուրիշ փողոցնե-րում, լայնութիւնը հազիւ երեք մեթր, գետ-նը ծածկուած անձրեւի լճակներով, որ ան-ցորդը քայլելու համար պարտաւոր էր լարա-խաղացի պէս տատանելով մէկ քարի վրայից, մեծ զգուշութեամբ ոտքը դնել յաջորդ հեռա-ւոր քարի վրայ եւ յառաջանալ իր վերկութեան կայարանը:

Եւ որովհետեւ ես հիւանդոտ եւ պառաւած մնացել էի Մոսկվայի Նովոմոսկովսկայա հիւրանոցում, եւ չունէի մի այլ պահապան երեւե-քննդրրոայի ձող գործածել այդ ժամերին բայլաշարժութեան համար, ի հարկէ ամենայ ապաւինում էի երկու կողմերի հաղաչէն պատկերի օգնութեան, եւ երբեմն աչքերս ամթաքում էին լճակների մէջ, եւ փառաւորապէս լողացնում աչքերս:

Ինձ համար մէկ անգամը բաւական էր ճանապարհորդել այդպիսի փողոցներից մէկի միջով: Այդ փողոցների բնակիչների համար այդ այնքան դիւրին էր, որքան դիւրին է լարախաղացի համար ցատկոտել իր պարանի վրայ:

Անտեսանելի քաղաքական սահմանամերմարմինները յստակօրէն ջնջել էին իմ հոգեկան հետաքրքրութեան զօրութիւնը: Երկու, երեք օր էր մնացել որ հեռանայի Հայաստանից, եւ նրա մասնաւորական հաստատութիւններից ոչինչ էի ձգել տեսնել, եւ ոչ իսկ առաջին հայ իրական թանգարանը, որ իմ բաղձանքներից մեծագոյնն էր, երբ առաւօտն այս հեռաւոր Անգլիայումն էի, երազելով Հայաստանի մասին: Զգացի զօրութիւնը, եւ իմ բնակարանայից փոքր ինչ դէպի վար մեծ փողոցի միւս կողմը յայն գնում եւ երկարաձիգ եւ լայնարձակ մարմարեայ աստիճաններով բար-

ձրացայ վեր, որ ձախակողմում երևեցան թանգարանի երևույթի նշանները: Այդտեղ պատահեցաւ ինձ տեսնել հին ժամանակի ծանօթ Ստեփան Լիսիցյան, որ գիտէի թէ այդ միջոցին թանգարանի կառավարողներից մէկն էր: Սովորական ողջոյններից յետոյ, խօսքը բացաւ իր ցանկալի բաղձանքի վրայ, որ ես արդէն գիտէի. Րաֆֆիի ձեռագրերի համար, որոց մասին քանիցս գրել էր Լոնդոն Արշակ Րաֆֆին, վիպասանի որդին, թախանձելով նրան, որ Րաֆֆիի մնայուն ձեռագրերը գրկէր նուէր Հայաստանի թանգարանին:

—Այս ե՞րբ պիտի գրկէ. նայեցէք բոլոր մեր հին հեղինակների ապակեպատ պահարանների համեմատութեամբ, Րաֆֆիինն է որ պարապ է մնում:

—Արշակը խնդրեց ինձ որ ասեմ ձեզ, շատ հոգ մի անէք մի օր կը գրկեմ:

Լիսիցյան ստիպուած էր բաժանուիլ և թանգարանից ուրիշ տեղ երթալ: Ներկայացրեց ինձ իր պաշտօնակցին և խնդրեց նրան ցոյց տալ ինձ թանգարանը:

Այս երիտասարդի անունն էր Խորէն Սարգսեան, հասակով միջակ, երեւոյթով լուրջ և ընթացքով ծանրաբարոյ: Այսպէս էր իմ գոյացած տպաւորութիւնը այն անձի նկամամբ որ ուղեկից եղաւ ցոյց տալ ինձ Հայոց պետական թանգարանը:

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Տեսած ըլլալով Եւրոպայի գրեթէ բոլոր մայրաքաղաքները, մանաւանդ Լոնտոնի Բրիտանական եւ Փարիզի Լուվր թանգարանները, նաեւ Նիւ Եորքի, բնական էր Երեւանի թանգարանը ոչ մէկ տպաւորութիւն կարող էր ունել իմ վրայ որպէս թանգարան: Բայց նրա տեսարանը թանկ էր իմ աչքերի տեսութեան համար, որովհետեւ ստրկութեան գերեզմանից ազատութեան կեանքի մէջ մտած իմ ազգի նորածին եւ առաջին թանգարանն էր. մի ազգի, որի որդիները չէին տեսել ուրիշ աշխարհներ, քան իրենց աշխարհը, ուրիշ թանգարաններ, քան գուցէ միայն իրենցը, եւ որի մեծութեամբ եւ վեհութեամբ բնական էր որ պարծենային:

Քաղաքացի Խորէն Սարգսեան յայտնապէս հպարտ էր իր թանգարանով, ուր երկար սրահի միջով ,եւ ուղիղ գծով եւ համաչափ հեռաւորութեամբ շարուած էին ապակեպատ քառակուսի պահարաններ, որոց վրայ գրուած էին մեռած հայ հեղինակների անունները եւ ներսերում նրանց ցուցադրուած լուսանկարները, ձեռագրեր, եւ գործեր: Աննշան բացառութեամբ, նրանք 1880ից յետոյ շրջանի գրողներ, որոց ամենքին ծանօթ էի անձամբ:

Ձախ կողմի վրայ, պատից յաջորդաբար կախուած կային մեծադիր նկարներ, կարծեմ ամենը անցեալ դարի հայ վրձինների գործեր:

ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

Ազնիւ առաջնորդս մասնաւոր հոգատարութեամբ մատնանշում էր ամէն մէկի անունները եւ ինչութիւնը: Նա կարծես շատ գոհ էր այդ հայկական գեղարուեստի երեւոյթներով, բայց ես անձայն կարծում էի թէ նրանց արժանիքը կայանում էր նրանց պաստառների լայնութեան, եւ տարիների երկարութեան մէջ, որոց մինչեւ նկարչութեան գեղարուեստը չէր յաջողած մուտք գործել:

Կարծեմ այդ տեղ, աւելի խորը կային ժամանակակից նկարիչների գործեր եւ ճախակրդմեան սենեակում, փոքր եւ միջակ չափերի զանազան տեսակի բազմաթիւ նկարներ, որոց մէկը գրաւեց ուշադրութիւնս, եւ հարցրի թէ ո՞վ էր նկարողը.

— Վերեշչագինն, նշանաւոր ռուս նկարիչը, պատասխանեց նա:

Ամէն ոք որ ծնել է Ռուսաստանում, եւ երկար ապրել է այնտեղ, եւ փոքր ինչ հետաքըրքրուած է նկարչութեամբ, գիտէ Վերեշչագինը, բայց նրա գործերը տեղ չեն ունեցել ոեւէ եւրոպական միւզէում:

Եւ Հայազգի Այվազովսկին, որ այնքան անուանի էր Ռուսիայում, մանաւանդ հայոց մէջ, նրա գործերը ցուցադրուեցան իր ողջութեան ժամանակ Նիւ Եորքում ծախելու նպատակով. ոչ մէկ կոլեկտոր, հաւաքող արժան համարեց գնել եւ դնել նրանց իր նկարների

յորքում: Նոյնը եւ Լոնդոնում, ուր մնաց որ տեղ գտնէին հանրային միւզէներում:

Ճշմարիտ գեղարուեստական նկարչութիւնը դժուարին է ճանաչել. ուստի գուցէ կային այլպիսի նկարներ հայ արուեստագէտների վրձիններով գեղարուեստացած, որ ես անընդունակ եղայ ճանաչել:

Երբ վերջացաւ ինչ որ կար տեսնելու, իմ բարի բարեկամը առաջնորդեց ինձ իր սենեակը կամ գրադարանը, ուր էր իր գրասեղանը . . . գրադարանները լի էին գրքերով: Այդ գրքերը իրենց կազմերով, չափերով եւ պահարաններով համեմատած, զոր օրինակ, Բրիտանական Թանգարանի գրքերի կազմերի, չափերի, եւ պահարանների հետ, էին որպէս սակաւթիւ աղքատներ աղքատ հագուստներով փոքրիկ լուսամուտներով աղքատ խրճիթներ, ինչպէս մեծ իշխաններ, հսկայ զօրավարներ եւ խրոխտ ծովակալներ ամենաշքեղ համազգեստներով եւ շքանշանով բարձրահասակ մի փառաւոր պալատի պատշգամներում:

Այս համեմատութեամբ էին գրքերը, որոց պահապանը համբերութեամբ ցոյց էր տալիս լաւագոյնները:

Բաժանուեցայ ձայնաւոր շնորհակալութեամբ եւ անձայն երախտագիտութեամբ, որովհետեւ նրա ընկերակցութեան եւ արտայայտութեանց արդիւնքը ներշնչեց ինձ մտածել եւ տալ ինձ գաղափար թէ ի՞նչ էին լաւա-

գոյն բաները որ ես որպէս մի պարզ անհատ, կարող էի կատարել իմ հայրենիքի մտաւոր կրթութեան այդ թանգ հաստատութեան համար:

Դեռ ես ոչ դուրս Թանգարանից, մի աւելի կարճահասակ քան միջահասակ մի թարմ երիտասարդ մօտեցաւ եւ համեստ ապաստանութեամբ ասեց, որ լսել էր իմ մասին, եւ յայտնեց թէ ինքն հայրենիքի նոր սկսնակ գըրողներից էր, եւ պիտի փափաքէր ցոյց տալ ինձ Հայաստանի Գրողների Տունը:

Ոչինչ պիտի աւելի ցանկալի լինէր ինձ համար անցնել Թանգարանից յետոյ, եւ յայտնեցի իրեն թէ որքան շնորհապարտ էի իրեն իր թանկագին աջակցութեան համար: Նրա մարմինը ցայտում էր ներքին հոգեկան ոգեւորութեան ազդեցութիւնից, եւ մի չորս հինգ րոպէ ճանապարհորդութեան ընթացքին տեղեկութեամբ հաղորդում էր մինչեւ Գըրողների Տան գոյութեան նպատակի նկատմամբ:

Որքան կը յիշեմ մի բաւական լայն եւ երկայն սենեակ էր. առաջին ակնարկով ետեւի կէս մասը ներկայացնում էր մի շփոթ տեսարան, եւ նմանում էր մի պահարանի, որ թըղթերի ծալոցներ կապած վիճակի մէջ կամ ներս էին բերուել, կամ պիտի հանուէին: Միւս մասը բոլորովին կարգաւորուած էր սեղաններով, գրութիւններով եւ սակաւ ինչ գրքերով: Մի

քանի երիտասարդներ նստած գրում էին, որոց իմ ուղեկիցը ներկայացրեց ինձ: Նրանց մէջ հեղինակաւորն էր երեւում մէկը, Թաթուլենց, որ ճանաչում էր ինձ անունով, եւ կարծեմ Ամերիկայից:

Գրողների այդ միասնեակ համեստ Տունը, յուսամ շարունակում է ապրել, եւ աստիճանաբար դառնայ բազմաթիւ սենեակներով մի պանծալի մեծափառ Տուն, ուր այդ մի քանի պարզ գրողների տեղ, այնտեղ ապագային երեւեն բազմաթիւ գրողներ, որոց գրուածները հիացնեն իրենց ժամանակի հայ ընթերցողներին, եւ որոց մտքերի ստեղծագործութիւնները պարծանքի եւ զարմանքի առարկայ լինեն աւելի հեռաւոր հայ սերունդի գրագէտների լեզուների եւ գրիչների համար:

××

Գրողների Տուն անուան գոյութեան հետ Խորհրդային Հայաստանի կառավարութիւնը դրեց իր երկրի գրողների խրախուսիչների կեանքը նիւթական անկախութեան, եւ նրանց արժանաւոր գրուածքների հրատարակութիւնը ապահովութեան պայմանների մէջ: Ուրիշ խօսքով, պետութիւնը գրողներին համարում էր մտքի եւ գրչի աշխատաւորներ, նա չէր վճարում նրանց իրենց աշխատութեանց ժամերի համեմատութեամբ, բայց իրենց կեանքի բա-

յոր ժամերի համար, այնպէս որ վարձատըր-ւում են որքան որ արժ են, եւ պէտք չունեն մը-տածել թէ ո՞վ պիտի տպագրէ իրենց գործե-րը, եթէ իրենք չունեն, որով պետութիւնն է տպագրողը եւ հրատարակողը:

Այսպէս, ինչ որ տեղեկացայ Գրողների Տան անդամներից. եւ եթէ այդ մի տեւական կացութիւն է, հայ գրագէտները պէտք է հա-մարեն իրենք իրենց աշխարհի ամենաբաղդա-ւոր մտքի մշակները ,նոյն իսկ համեմատելով եւրոպական գրողների բաղդին, եւ մանաւանդ համեմատած անցեալի անհետացած հայ գը-րողների, որոց լուսանկարները իրենց չքաւոր գործերով ցուցադրուած տեսայ Թանգարանի մէջ:

Գրողների Տան ստեղծումով, առաջին անգամն է որ հայ գրականութեան համար ըս-տեղծւում է արհեստով գրողների, այսինքն հեղինակների գոյութիւնը: Մինչեւ այդ ժա-մանակ, հայը չէր ունեցել արուեստով հեղի-նակներ, բայց թերեւս մէկը երկուսը: Միւ-սները ուսուցիչ զբաղմունքով, կամ այլ գործի մէջ, ունեցել են եւ կարողութիւն գրել մէկ, եւ հազուադէպ մէկից աւելի գրքեր: Որքան ես գիտեմ, տասն եւ իններորդ դարի վերջին քա-ռորդից այս կողմ, Ռուսահայոց գրականու-թեան մէջ արուեստով գրող եղել են Րաֆֆի եւ Շիրվանզադէ, բայց ոչ մէկը եւ ոչ միւսը իրենց գրիչներով յաջողեցան ունենալ նիւթա-

պէս անկախ, կամ նոյն իսկ համեստօրէն ապահով կեանք:

Ծիրմանդաղէ անձը ընկերական կեանքի մէջ ինքն իրեն սիրցնելու եւ հասարակական դարձնելու բարեմասնութիւնները, եւ աւելի այդ ձեւով անձնում իր կեանքի նուիրական ողբերը, քան իր գրուածքների ցանցառ եւ անհաստատ եկամուտներով: Եւ բաղդաւորութիւն էր նրա համար, որ իր վերջին տարիներում Հայաստանի կառավարութիւնը իր հովանաւորութեան ներքեւ առաւ դէպի ծերութիւն յառաջացող այս հին գրագէտին, մինչ նա տակաւին Փարիզում էր, եւ ի վերջոյ հրաւիրուեցաւ Երեւան:: Նա ապրեց եւ վերջացաւ որպէս իր գրասէր հայրենիքից սիրուած եւ յարգուած մի գրական հէր: Ի յիշատակ իր անցեալ գրական արտադրութեանց:

Րաֆֆի աւելի տարբեր էր իր գրական արւեստի կեանքով. նրա գրիչը ապրեց աւելի շարժման մէջ, քան թէ անշարժութեան մէջ: Թիֆլիսի Մշակ թերթը իր ընթերցանութեան ծաւալի եւ ջերմ ժողովրդականութեան համար բոլորովին պարտական էր Րաֆֆիին, որի մտքի եւ գրչի արտադրութիւնները շօշափում էին այլազան առարկաներ, եւ շարժում, յուզում եւ ոգեւորում էին երիտասարդ ընթերցողների դիւրագրգիռ մտքերը, եւ գինովացնում նրանց երեւակայութիւնները յեղափոխական զգացումներով, այնպէս որ այդ երա-

նելի ժամանակներում չէր տեղի ունենում մի ընկերական խնճոյք, որ լիալից կարմիր գինու կենաց բաժակներ կոնծելիս, Րաֆֆիի թանկագին անունը մոռացութեան տրուէր, և երբ այդպիսի համեստ և հարուստ կերուխումներով, ուսանող և վաճառական սեղանակիցներ լցնում էին իրենց փորերը զանազան ոգելիցներով և խորովածախառն փլավներով, անշուշտ չը գիտէին յաճախ ինչ ախուր տրամադրութեամբ և մտածութեամբ նրանց պաշտած ազգային վիպասանը կուլ էր տալիս իր կերածը և խմածը, «Մշակ»ի խմբագիր Գրիգոր Արծրունիի սեղանի առաջ, որ սեղանակից էր գրեթէ ամէն օր տարիներով, երբ իր կինն և երկու զաւակները, Արամ և Արշակ, հեռաւոր Պարսկաստանումն էին:

Եկաւ ժամանակ որ խզումը տեղի ունեցաւ վիպասանի և նրա շնորհիւ մեծ անուն առած խմբագրի միջեւ, և լուրերը սկսան տարածուել թէ խղճալի գրողը, որ «Մշակ»ի շնորհիւ մարդ եղաւ, կասեց նրա հետ և գնաց և ձգեց իրեն պաշտպանողական և բարժում մի խմբագրի ձեռքը, և ամբաստանութիւնը հրապարակուեց և «Մշակ»ում, և նրա կենաց բաժակները սկսան նուազել, և կորցնել իրենց երբեմնի գինելից ոգեւորութիւնը: Եւ նրա աստղը այլ ևս չունէր նախկին փայլը:

Քսան և հինգ տարի յետոյ, այս վիպասանի այրին, որ այլ ևս ապրում էր Լոնդոնում,

մի երեկոյ կարդաց ինձ Րաֆֆիի եւ Գրիգոր Արծրունիի միջեւ փոխանակուած նամակները որոց մէջ նա դառնօրէն գանգատւում էր նրա չամուսնացած կնոջ նուաստացուցիչ ակնարկութիւններից ճաշերի սեղանի վրայ, որպէս թէ ինքն մի ծրիակեր էր այնտեղ, եւ ոչ թէ իր արդար գրական աշխատանքի վարձատրութեան մի մասը, ըստ նախապէս եղած կարգադրութեան:

Ահա այնպիսի անարգանքի զգացմունքով ճնշուած էր տանում իր հոգը, այն ժամանակ երբ այդ մթնոլորտից դուրս միամիտներ նրա կենաց գինիներ էին խմում ցնծալից բացագանչութեամբ, որպէս յեղափոխական գաղափարի արծարծողը:

Ի՞նչ տխուր հիասթափում:

Երեւակայել աղքատ մի մարդ, որ իր գրիչով հարստացրել էր հազարաւոր գլխաթեք մտքեր եւ զինաւորել նրանց ազատագրական անկարելի յեղափոխութեան գաղափարներով:

Եւ Նոր Հայաստանի նոր գրողների բանաստեղծութեան եւ վիպասանութեան ազդեցութիւնից անշուշտ յառաջ պիտի գան ոչ Դոն Քիխոտներ եւ ոչ նրանց Սանխօ Փանչօները, որոնցից այնքան ծնաւ ռուսահայութեան մէջ, անգիտակցաբար, եւ որոց առաջնակարգ նմանները դեռ մինչեւ այս պատերազմի սկիզբը ճգնում էին շարունակել իրենց գոյութիւ-

նը: Բայց այս պատերազմի վերջով պիտի վերջանայ անշուշտ այդ գոյութիւնը:

Մոլեռանդացուցիչ գրականութիւնը, ըստ իր ձգտումների ուղղութեանց, առաւել կամ նուազ սաստկութեամբ յիմարացնում է իր ընթերցողների ուղեղները, քանի որ ուղեղների մէջ քիչեր կան որ անառիկ են եւ մնում են անվախ, եւ ընդհանուր մեծամասնութիւնը յիմարանում է այդպիսի մոլեռանդացնող գըրականութեան ազդեցութիւնից:

Մի ժողովրդի անկաշկանդ գրողները վըտանգաւոր եւ վնասակար չը լինելու համար, պէտք է հասած լինեն մի հասունութեան որ կարենան ճանաչել տարբերութիւնը ճշմարիտ ազատութեան եւ սանձարձակ ազատութեան միջեւ, որովհետեւ եթէ չը ճանաչեն, նոյնքան վնասակար են , որքան բռնակալութեան հրամանով շարժուող գրիչները:

ՅԱՒԵԼՈՒԱԾ

(Յետ մահու հրատարակութիւն)

ԵՐԵՒԱՆԷՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԵՐԿՈՒ ՆԱՄԱԿՆԵՐ ՈՒՂՂՈՒԱԾ ՏԻԿԻՆ Մ. ՏՕՆԱՊԵՏԵԱՆԻ

Հայկական Սովետական Սոցիալիստական
Ռեսպուբլիկա
Արտասահմանի հետ Կուլտուրական Կապի
Հայկական Ընկերություն

Քաղ. Երևան 11 Հուլիսի 1949

Հարգելի Տիկին Տոնապետյան

Մենք ստացանք ձեր հանգուցյալ ամուսնու կտակով մեզ ուղարկված Գրականությունը և հանձնեցինք Պետական Հանրային գրադարանին, որ առանձին բաժնում կենտրոնացված է հանգուցյալի մատենաշարը: Ուղարկում ենք ձեզ Պետական Հանրային գրադարանի վարչության շնորհակալագիրը գրականության ստացման մասին:

Արտասահմանի հետ Կուլտուրական Կապի Հայկական Ընկերության վարչությունն ևս իր կողմից խորին շնորհակալություն է հայտնում ձեզ՝ ձեր հայրենասեր ամուսնու կտակը սիրահոժար կատարելու համար:

Հարգանքներով՝

Արտասահմանի հետ Կուլտուրական Կապի
Հայկական Ընկերության Վարչության
Նախագահ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

ՀԱՅԿԱԿԱՆ Ս. Ս. Ռ.

Մինիստրների Սովետին կից

Կուլտուր – Լուսավորական հիմնարկների

Գործերի Կոմիտե

Ա. Ֆ. Մյասնիկյանի Անվան

Պետական Հանրային Գրադարան

Երևան, Տերյան փողոց թիվ 72

1 սեպտեմբեր 1949 թ.

Ազնվափայլ Տիկին Տոնապետյան

Լոնդոն

Հայաստանի Պետական Հանրային Գրադարանի Վարչությունը բախտ ունի կրկին հայտնել ձեզ իր երախտագիտության խորին զգացմունքները՝ օրերս ձեր կողմից ուղարկված մի քանի մեծածավալ արկղ ընտիր գրականության համար, որի ստացման իրողությունը հաստատում ենք սույն գրության կից ձեզ ուղարկվող ցուցակներով՝ 7 թերթի վրա:

շատակ եւ բարեբար Պարոն Տոնապետյանի

Ձեր հանգուցյալ ամուսնու՝ արժանահի– ազնիվ վարմունքը դեպի իր ժողովուրդը, ար–

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Ժամանակակից և թանկ է գնահատվում ոչ միայն գրադարանիս վարչության այլ և համայն հայ ընթերցասեր հասարակության կողմից: Վերոհիշյալ գրականության նվիրատվության ակտով էր ժողովրդին ծառայած լինելու նրա պայծառ ձգտումը, անկասկած, բարի օրինակ է լինելու սփյուռքի շատ ավելի հայերի համար, որոնք պետք առաջին մեր հայրենիքի կուլտուրայի շտեմարանը՝ Պետական Հանրային Գրադարանը հարստացնել նորանոր գանձերով մեր սերունդների համար, որոնց շրթները միշտ սիրով կարտաբերեն ազնիվ այրերու անունները:

Այժմ գրադարանիս Գարեն Տոնապետյանի մատենաշարը դարձել է գրքերի մի ամբողջ և արժեքավոր հավաքածու, որը զարդարում է գրադարանիս ֆոնդերը և հույս է ներշնչում դառնալու ավելի շքեղ ու կատարյալ:

Գարեն Տոնապետյանի գրքերի հավաքածուն ամբողջ և կատարելապես ապահով դարձնելու նպատակով գրադարանիս վարչությունը վճռել է կազմել դրանց գրադարանային առանձին ցուցակները:

Ընդունեք խորին հարգանքներիս հավաստիքը

Գրադարանի Դիրեկտոր
ԱՂԱՎՆԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՑԱՆԿ

Յառաջաբան 5
Յառաջաբան Առաջին Հատորի 11
Սուլթանի Սէլամլըքի աղօթքը 19
Դէպի Ներսէս Պատրիարքի բնակարանը 32
Սուլթան Համիդի երազային ճաշը 42
Տօնախմբութիւն Ազգ. Սահմանադրութեան 63
Յեղափոխութի՞ւն թէ ոչ–յեղափոխութիւն 75
Նիկոմեդիոյ հայ գիւղերը եւ Ստեփանոս Եպիսկոպոս Յովակիմեան 89
Ազգ. Երեսփ. Ժողով եւ դպրոց. հանդէսք. 115
Հայ մամուլը Կ. Պոլսում եւ Թիֆլիսում 122
Կոստանդին Խատիսեան Կ. Պոլսում 130
Յեղափոխութեան ծնունդը— Ռ. Խանազատ Կ. Պոլսում 134
Գամառ Քաթիպա Կ. Պոլսում 140
Պետրոս Ադամեանի վերջին օրերը 147
Խորէն Արքեպիս. Աշըգեան Պատրիարք 176
Մերժումն Սուլթանի առաջարկի 184
120 տարի առաջ— Յ. Էմին Հայաստանում 189
Ազատութեան տուները 195
Խրիմեան Հայրիկ 217

ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Հազար տարի առաջ — Յովհաննէս Կաթող. Հայոց առ Կոստանդին Կայսրն Յունաց 225
Հինօրի Հայերուն աստղագիտութիւնը եւ գուշակութիւնը 231
Մկրտիչ Փորթուգալեան դէպի Եւրոպա 241
Մինաս Չերազ եւս դէպի Եւրոպա 246
Յեղափոխական շարժումներ 255
Գում Գափուի ցոյցը 260
Իշխան Նիկողոմոս Ամատունի 270
Յակոբ Վարդ-Պատրիկեան 276
Արփիար Արփիարեան 280
Հայ բանտարկեալները Աքքայի բերդում 287
Ժնեւ՝ Դաշնակցութեան Կենտրոնում 299
Ընտրութիւն Գէորգ Ե. Կաթողիկոսի եւ Ազգային Պատուիրակութիւն 319
Լորդ Բրայս եւ Ամէն. Հայոց Կաթողիկոսը 331
Թովմաս Զօրեան Լոնդոնում 358
Աւետիս Ահարոնեան եւ Փարիզի Խաղաղութեան Վեհաժողովը 365
Միքայէլ Վարանդեան Հռոմում 398
Մարօ Նազարբէկեան 402
Սուլթանի խալիֆայութեան կեղծիքը 419
Ընտրութիւն Խորէն Կաթողիկոսի 428
Կաթողիկոս. Պատուիրակը Եւրոպայում 455
Երեւանի Պետական Թանգարանը եւ Հայ Գրողների Տունը 460
Երեւանէն Պաշտօնական Երկու Նամակներ ուղղուած Տիկին Տօնապետեանի 474

ԴԱՐԵՐԻ ՄԻՋՈՎ

ARMENIA AND ARMENIAN PEOPLE THROUGH THE CENTURIES

AN AUTOBIOGRAPHY IN ARMENIAN

BY

PETROS TONAPETEAN

VOL. II

PRISON AND FREEDOM

(Published posthumously)

1950

LONDON

Printed in France by Turabian Press, Paris

30 коп

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220034231

A I/34231